5853
918

3

891.99
Մ-93

ՄՈՒԶԱՅՔ
ԱՐԱՐԱՏԵԱՆ

Յաւղգարյս Ճեմարանէ Տեարց Եղիազարեանց
եւ Դասակակիցս արձակեն զառաջին զայս փունջ
Բանահիւսութեանց , Հրաւիրեալ զնոսա յայս
աղբիւր լուսաւորութեան , գալ աջակցել
'ի քերուբաքանդակ ճախարա
կութիւն տողաչափութեանց :

8124
Ա
994



1829 . 'Ի ՄՈՍԿՈՎ . ռմհը .
'Ի Տպարանի Օգոստեան Սեմենի .

ՀԱՅ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Գեղեցիկ է բարի առնել ժողովրդեան, բայց և գեղեցիկս խօսել ոչ է ինչ տգեղ ։

Սալլուստիոս.

Նկարչաց և բանաստեղծից հանապազ եղև իրաւացի իշխանութիւն յանդուգն խիզախելոյ յամ ինչ.

Ովրատիոս.

21942

Печатать позволяется:

Московскихъ Армянскихъ церквей Викарный Архимандритъ, Кавалеръ и Цензоръ *Михаилъ.*

Москва, 20 Октября 1828 года.

БИБЛИОТЕК
~~4652~~

* * *

Առ [illegible] ծնողս և [illegible] եղբարս,

'ի Ճեմարանէս․

Թէ ճշմարիտ է առածն հասարակաց, [illegible] և ընծայք պահէր պնդեալ են առաւել քան երջանիկ անուանել զաւ-գէս և պաշտօներս, հոգալով պատանեկանս դաստիարակու-թեան օժանդակաւ Սրբոյն Հոգւոյ 'ի վերայ Ճեմարանիս զոյգ ընդ դէս արդիւնաւորութեանց և պարգեւատուութեանց ։ Մա՛է 'ի նշան երախ-տագիտութեան անմոռանալի բարերարութեանց Մեծազնեայ Տեառդ, նոյն և 'ի մխիթարութի՛ւն հայրենասէր համազգեայց՝ ձօնի կալա կարգադրութե՛ան Ճեմարանիս 'ի փեղ արձանագրութ-եան զայս պէտք ազգ ազգ կենսաբանութեանց յառաջադրու-մեր աշակերտաց (յայտարարութեամբ անուանց յօրինողաց 'ի վերջի երկրաւորութեանց բանից), որոց եմապաւէ հեռաւորք ընթ-ացանակք կամ ընդունակ լեզուագիտական թերթեր բազում են առ մեզ 'ի զանազան բարբառս, առաւել առ ժամ մայր հայկական պատուէրա՝ յորոց առ ձեռին դնելն, եբրա աւետարանէք յառաջադիմութեան նոցա 'ի քերթողութեան, 'ի հայկաբանու-թեան, 'ի ճարտասանութեան, 'ի ոտեղծաբանութեան, 'ի պատ-մաբանութեան և յի՛ծաբանութեան . նոյն և 'ի զգացմու-թեան նոցա զերախտիս բարերարացն 'ի ծաղկագրել ընդ դեր բոլ 'ի պէտս մեծի Տեառց Աշխատութեանց՝ յայտնայլ ամս և 'ի ժամ բազմախօսելու, բայց առաւօր խորհրդով յառա-ջին դասու շարակարգելու ։ 'Ի վերջէ աղաւաղ ազգասէր հա-րազատաց 'ի համախմբու պատոյ ներդաշնակելութեանս, ուրե-անդն աղօթեք խնդրեսցէք յաջողեսցի ազգին զան զօրա-զօրաւորութեան Տեառն անուն Մեծազնեայց, զկատար-ել նորաստեղծութեան կարօտեալ ազգիս, և զարձանն ձօնա ընծայարձութեան անքուն մշակաց Ճեմարանիս ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Քերթուածք Տանջանաց .

ՔԵՐԹՈՒԱԾ · Ա ·

Շնորհաւորութեան ղափէ՝ Ճառախօսեալ յաշակերտաց յազգէ
րան յերեցախումբ հուրանէ ՚ի տան Վեհանեայց ։

Դիւցապատիւ Մեհազնեայ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ,

Քա՛ջ Հերոսք ահա ձեզ՝ ծագեցաւ առաւօտ ,
լուսատիպ շողշողուն՝ արուսեակ անաղօտ ։
Բենական լոյսն անձառ՝ ՚ի մահու անծանօթ ,
յարուցեալ պատառեաց՝ զմահուն կապ և յօդ ։
՚Ի յերկրէ ՚ի յերկինս՝ ուահ լուսոյ մեզ բանի ,
դասք զօրաց երկնային՝ ՚ի հանդէս աստ սիրուի ։
Սահման չի՛ք հրճուանաց՝ որդւոց նոր սիոնի ;
մե՛ծ առիթ հանդիսիս՝ որ այսօր կատարի ։
Տիեզերք ամենայն՝ նորահրաշ զարդարեալ ,
յարուք փրկողին՝ ՚ի գերչէն ազատեալ ։
Ոմն զուարթ ոմն զերգ՝ ՚ի յերկինս ամբարձեալ ,
վերօրհնեն քաղցրաձայն՝ զՔն̃ յարուցեալ ։
Սարսափին սմքացեալ՝ Թշնամիք սուրբ խաչին ,
արտասուաց արժանի՝ տանջանաց վիճակին ։

Յաղթութ՟ միածնին՝ մեզ պսակք ձօլս բաշխեն ,
իսկ նոքա վառ բոցով՝ յանշէջ հուրն պարփակեն ։
Այս վճար անփոփոխ՝ հաւատով յուսողաց ,
տրիտուր աներկբայ՝ ՚ի յուսոյն կասողաց ։
Քննականըն վճիռ՝ մեզ առիթ հրճուանաց ,
իսկ նոցա կորստեան՝ անվախճան կտտանաց ։
Երջանի՛կ մեր վիճակ՝ զի հաղորդ յարութեան ,
երանի՛ մեր հոգւոց՝ զի կցորդ ցնծութեան ։
Անպակաս ՚ի յուսոյ՝ սպասեալք յայտնութեան ,
ժառանգորդ իսկ գտաք՝ մեր ոգւոց փրկութեան ։
Հիւսեսցուք զնուէրս աղօթից գոհութեան ,
ամբարձցուք զաղաչանս առ աղբիւրն բարութեան ։
՚Ի ձեզ արդ զմեր բանից՝ զդարձուած մատուցեալ,
՚ի մի շունչ գոչեսցուք՝ Ք՟ս է յարուցեալ ։
Մե՛ծ ձեր գութ երախտիք՝ ով ծնողք հրաշացեալ,
մե՛ծ ձեր սէր և խնամք՝ ո՛ մեր հայրք վերօրհնեալ ։
Երկնաւոր մեզ պարգև՝ ձեր անճառ գթութիւն ,
նորոգիչ աշխարհի՝ հայրենեաց ճոխութիւն ։
Պահացոյց իմաստից՝ փառաց ձեր մեծութիւն ,
ապաստան եղկելոց՝ ձեր անուան յորդութիւն ։
Երփնորակ ձեր բարեաց՝ չի՛ք կոպար՝ թիւ քանակ ,
անպատում պարգևօք՝ լիացեալ մեք համակ ։
Լուսով ձեր բոցավառ՝ զխաւար մերկանամք ,
՚ի մուայլ աշխարհէ՝ յերկիր նոր սլանամք ։
Ո՞ կարէ զամբաւ թիւ՝ երախտեաց ձեր հաշուել ,
ո՞ վճար ընդ ձրից՝ ձեր որ մեզ վճարել ։
Ցուցեալ նո՛յն և ձօնեալ՝ շնորհապարտ ձեզ զոգիս ,
անձրևել աղերսեմք՝ զձեր ՚ի մեզ զերախտիս ։
Յովհաննէս Մելիքեանց յաստրախանեայ ,

ՔԵՐԹՈՒԱԾ · Բ ·

Շնորհաւորութիւն ծննդեան Քրիստոսի ·

Դիւցազնափայլ Իշխանապետք ,

Անզոյգ Բարերարք մեր ,

Ո՛վ զիմորդ գեղատիպ՝ փայլէ մեզ լուսավառ ,
գերաքուն լուսերփեան՝ հրաշալի այս ղամբար ,
փութացէք ո՛վ Մուսայք՝ քաղցրաձայն ’ի նուագ ,
զներբողեան յօրինել՝ գեղեցիկ և պայծառ :
Հալածեալ մեկնեցաւ՝ մառախուղ գիշերոյ ,
ծագեցաւ մեզ արփի՝ սքանչելի փայլ լուսոյ ,
հրավառ ցոլմանց՝ հուր սիրոյ Արարչին ,
յանդիման մեր բանի՝ քաղցրաբուղխ գետ ջրոյ :
Ահա՛ մեզ գաւազան՝ ’ի Յեսսեայ ծաղկեցաւ ,
մեզ ահա՛ արեգակն՝ անստուեր ծագեցաւ ,
ղամպար ջահ լուսատարր՝ բոցանիւթ փայլեցեալ ,
եւ համբուն ազգ մարդկան՝ ’ի մեղաց մաքրեցաւ :
Օրէ՛ն մեզ քաջադէպ՝ բերկրալիր առաւօտք ,
լիաձիր ծայրացեալ՝ խնդութ͞ե բերկրանօք ,
խնկարկել զվեհ Իշխանդ՝ զոյգ ՟Է վեհ Զաւակացդ ,
զմայլեալ գլխովին՝ տօնիս այս հրճուանօք :
Բանաստե՛ղծ Հոմերոս՝ գո՛վ անզոյգ հեղինակ ,
արի՛ ե՛կ ներբողել՝ զմեր Դիւցազն ’ի հռչակ ,
զգանձ բարեաց պտղածին՝ ստեղնաձիգ յանմահ կեանս ,
որ ազգիս մեր աղբիւր՝ յորդաբուղխ քաղցրօրակ :

Օդաբնեայ թագ փառաց՝ վեհազնեայց կազմեսցուք ,
պարծ 'ի պարծ ը՟ պսակ՝ փառաց ձեր ճախրեսցուք,
զնեկտար ներբողից՝ գովեստից խառնելով ,
զեռալոյս էն էից՝ արտասուօք մաղթեսցուք ։
Առաջին ճառագայթ՝ արեւու անստուեր ,
ծագեցաւ սաստիկ խոր՝ թափանցեալ 'ի սիրտ մեր ,
զհրճուանս անթարգման՝ քաջքաջ 'ի խորախոյս ,
եւ դիմօք լուսադէմ՝ բերկրանօք մեզ ասէր ։
Ո՛վ մանկունք տիրաձիր՝ փութացէ՛ք շտապաւ ,
նուագել սաղմոսել՝ արժանի նուագաւ ,
զհանդէս քաջութեան՝ Իշխանացս , որ անզոյգ ,
յոր լինիմք խոստովան՝ զչօրել սոյն գրչաւ ։
Ահա ձեզ հայելի՝ մեր սրտից հրճուական ,
եւ նուէր քաղցրամոք՝ հաճելի ընտրական ,
թերեւըս զգածիչ՝ կոկորդաց եւ քմաց ,
'ի խորհուրդ պատկերի՝ արեւու արփական ։

Մարգար Եօրալեան 'ի Տոկատոյ ։

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ Գ.

Շնորհաւորութեան Զատկի :

Ախրափայլ դասու դիւցազանց զուգաթու,

Բարերար վեհաղնեայ Տէր մեր :

Ժամանեաց ահա այսր առ մեզ նուագ բարեհամբոյր եւ ժամ ամենազուարճ, յորում երախտագէտ որբոց հարկ ամենաքաղցր կայ 'ի վերայ, բացեալ զերախտաւէտ շրթունս եւ ընդարձակեալ զշնորհակալու սիրտս 'ի գործարան լեզուի իբրու 'ի փող աւագափող հրաշացուցանել զմեծահանդէս աւուրս խրախունի, քանզի այսօր Ք̃ս յարեաւ 'ի մեռելոց, ապա այսօր յարիցուք եւ մեք յանդիման լինել Ձեզ իշխանիդ իշխանաց, եւ արտայայտել, զոր յանձին զգամք: Բայց նախ դու՝ ով Արարիչ երկնի եւ երկրի, բա՛ց ըզպատուհան 'ի կուրծս մեր, զի տեսցէ այսօր աշխարհ ա̃մ՝ զմեր սիրտ, թէ քանի՞ անթարգմանելի ուրախութ̃ լցեալ եմք, երբ տեսանեմք զայս լուսափայլ ալեօք իմաստուն զայրս հայրենեաց, որպէս զղեկավար ճարտար ղեկ 'ի ձեռին նստեալ հանդարտիկ 'ի խելս նաւու ազգիս :

Վասն այսօրիկ բարձրացեալ Արարատ, որ առ վերջին թագաւորաւն մեր Լեւոնիւ 'ի սուգ տրտմու̃ե եւ քուրձ զգեցեալ արկեալ կայր անմխիթար, ուրախ լեր այսօր եւ ցնծա՛, զի սքանչելիս արար Տէր ը̃ մեզ, մի՛ եւս ասասցես յաչս արտասուս ողբալով, ո՞ւր են թագաւորք մեր Տիգրան եւ Տրդատ այլովքն հանդերձ, զի յարոյց տ՛ր 'ի տանէս թորգոմայ Իշխան եւ Տ՛ր ազ գիս զդիւցազնափայլ տէրս մեր զայս , վաղվաղեմ բոլորել սմա պսակ յոսկւոյ և յականց պատուականաց , զի ուր նոքա կորովութ՟ մարմնոյ զաշխարհս սարսէին , սա կորովութ՟ մտաց յապուշ կրթէ զմեզ , ուր նոքա զինու զօրութ՟ զսահմանս տէրութե՟ ընդարձակեցին , սա զինու իմաստութե՟ և առաքինութե՟ զանհեթեթ միտս մեր բանայ , մինչև ը՟ Առաքելոյն՝ բանս մեզ հինգ լեզուաւ խօսել համարձակ ։ Այլ բա՛բէ տուժանացս , զի զի՞նչ ասեմք , ոչի՛նչ արժանի սմա ասեմք , և թէ բիւրիցս կրկնեմք , բիւր վրէպ ինչ կրեմք , զի հաւասարել ինչ ո՛չ կարեմք , զի ո՞վ զհոգին ոչ կարեն տեսանել մարմնաւոր տեսանելիք , նոյնպ՟ և զկիրս հոգւոյն ո՛չ կարեն ճառել մարմնական խօսելիք , վ՟յ յասըմ աւուր մեծի խրախամբք ո՛չ միայն արարածք ամ՟ , այլև՝ քարինք և որմունք տանս պարեն մեզ հանդիսակից իբրու զօրաւից մերոց զուրախութ՟ի յայտ ի՟ն առնելով

Արդ՝ ո՜վ համաժողով սիրեցեալք , օրհնեցէ՛ք զԻշխանս զայս , որ փառօք է փառաւորեալ , խնդրեցէ՛ք սմա կեանս երկարս , ը՟ որում լոյս է մեզ օր մի ՚ի կենաց սորա քան զլոյս աչաց մերոց , և դուք՝ ո՜վ լծակից եղբարք իմ և մանկունք նորոյս իսրայէլի , օրհնեցէ՛ք գովեցէ՛ք զՏէրս մեր զայս , ՚ի մի ձայն մաղթելով ՚ի հայրագութ խնամակալութե՟ սորա ։ Ողորմութ՟ի քո տ՟ր զհետ մեր եկեսցէ զամ՟ աւուրս կենաց մերոց , զի տեսցուք զվայելչութ՟ի տան քո լուսածագ յաւիտեանս յաւիտենից , և Դո՛ւ Դիւցազն մեծ արա ըզմեզ արժանի լսել զայս ձայն քաղցրանուագ , ծառա՛յք բարիք և հաւատարիմք , մտէ՛ք յուրախութ՟ի Տեառն ձերում ընդ հովանեաւ իմով ։

Առաքել Մարգանանց յառաջաբանող ։

ՔԵՐԹՈՒԱԾ · Դ·

Շնորհաւորութեան նոր տարւոյ ։

Դիւցածնունդ Իշխանապետք ։

Ծափըս հա՛ր և բերկրեա՛ զբերկրումն Հայաստան,
բոլորեա՛ ըզ նոր պա՛ր յայս պայծառ գերդաստան ։

Արի՛ տե՛ս ըզ նախնի քոյդ փառաց ըզ հանդէս ,
զմեր նախնեաց զդիւցազանց ըզ պատկեր աստ ե՛կ տե՛ս ։

Լո՛ւր բանից որդեգրացս և ձայնի համբաւոյ ,
ա՛ռ վըկայ զանցեալ ամ և տե՛ս ըզ ճրագ լուսոյ ։

Զձեզ կոչեմ Հերքուլեայք ախոյեանք անվեհեր ,
աստ եկա՛յք մատուցէ՛ք Դիւցազնեայցս ըզ նուէր ։

Ահա՛ մեք յուշ ածեալ զերախտիս բարութեան ,
հանդիսիւ ցուցանեմք զնոր եռանդն գոհութեան ։

Յայսմ աւուր զի գըլո՛ւխ և սկիզբն նոր տարւոյ ,
այսօր մեք սերտ հայցեմք ըզ պտուղս նոր բարւոյ ։

Լերո՛ւք հայր որպէս է՛քդ ո՛վ անզոյգ բարերարք ,
տո՛ւք կուրացս զլոյս աչաց բանաւոր դուք բուրվառք ։

Իսկ մեզ զի՞նչ գոյ գործել յայս պահու բերկրանաց,
եթէ ո՛չ առաքել զձայն առ Տէր մաղթանաց ։

Զի զՁեզ մի՛շտ Որդւո՛վքդ յողջո՛ւն պահեսցէ ,
պերճ զարմիւք պերճ պըսակ յազգի մեր հաստեսցէ ։

Պօղոս [illegible] [illegible] ։

ՔԵՐԹՈՒԱԾ Ե.

Շնորհաւորութիւն ծննդեան Քսի.

Սխրափայլ դասու դիւցազանց զուգաթու.

Բարեկա՛ր Տեարք.

Ահա՛ նորին Ադամ յերկնից սրբութեան ,
գայ դիմէ առ մեզ մարմնով կուսական ,
հանգուցիչն ‘Նոյ մերոց 'ի մեղաց ,
գայ հանգուցանել զմեզ զամենեսեան :

Օ՜ ի՞նչ քան զայս ազդու յաւուրս բերկրութիւն ,
տալ ոք զօրեսցէ մեզ 'ի ցնծութիւն ,
զի ընդ երկրայնոցս այսօր երկնայինք ,
պարաւեալ ցնծան ընդ մեր փրկութիւն :

Այսօր դասք զօրաց երկնից արքային ,
'ի վերուստ իջեալ յաշխարհ յայս խորին ,
զաւետիս հովուաց ձայնիւ օրհնութեան ,
և փառք 'ի բարձունս ա̃յ նոսա երգէին :

Այլ ընդէ՞ր է մեզ աստէն յերկարել ,
զեղեալ հրաշից զարմանաց զթել ,
զհուսկն ասացից ծնաւ նոր Արքայ ՝
զմեզ 'ի խաւարէ 'ի լոյս վերածել :

Ո՛չ թէ աստ մոգուցն աստղ 'ի մեզ ծագեալ ,
այլ քան զարուսեակն գեր 'ի վեր փայլեալ ,
երախտիք Տեարցդ տան լինել յանդիման ,
որ 'ի Ձէնջ և եթ են 'ի սիրտս հեղեալ :

Ընդ վայր մեղադրէր Մոմոս Հեփեստեայ ,
առ չդնելոյ յորդւոց ադամայ ,
'ի կուրծս պատուհան , զի յայտնի լիցին ,
խորհուրդք մարդկային հանապազօրեայ .

Անսուտ է փրկչին վճռոյ սքանչելի ,
Թէ անձն 'ի գործոց իւրոց ճանաչի ,
ոչ է անկ 'ի կուրծս հայել մարդկային ,
այլ ամենեցուն 'ի գործս բարելի .

Ուրեմն ով մե՛ծ մեր Իշխանապետք ,
'ի գործս և 'ի բանս լերո՛ւք դիտապետք ,
ուր մեք շուրջ զՁեօք պարառեալ հրճուեալ ,
ծննդեան Տեառն լինիմք կարապետք .

Եկա՛ք իմ եղբարք ձայնիւ ցնծութեան ,
զՄատաթի օրհնել քնարիւ դաւթեան ,
և զՇմաւոն ընդ Հեղեայ ազգիս ,
բարձր առնել յօրէս մինչև յաւիտեան .

Պօղոս Ոսփորեան յԵւդոկիայ .

ՔԵՐԹՈՒԱԾ · Զ ·

Շնորհաւորութեան ծննդեան Քր՟ի ·

Մեծամեծարար Հերոսք ·

անմահ Բարերարք մեր ·

'Ի սերկեան աւուրս՝ 'ի սքանչելահրաշ յայտնութե՟ Քի՟ Տն՟ մերոյ՝ խորհուրդ զարմանալի առընչակցութեան կայ մեզ առաջի 'ի նկատել ։ վերնոց երկնից՝ երկնաւորօքն յերկիր իջանել , և երկրի այսր ստորին յերկինս վերաբերիլ ։ Անտես անեղւոյն 'ի հրեղինաց՝ 'ի կերպարանս հողեղինի երևել , և մարդոյն երկրաստեղծ՝ 'ի պատիւ Ա՟ծութեան վերադասիլ ։ Փառացն ա՟ծավայելուչ՝ զոր կապտեալ մարդիկ յանկապուտ ա՟ծուէն՝ մինչ կռոցն զառածմամբ ձօնէին , վերադառնալ 'ի բարձունս , և բարձանց տալ մեզ փոխարէն զխաղաղութիւն երկնից ։

Ով սքանչելի տուր և առուե՟ արարածոցս ընդ Արարչին , և անհաս անքննին առընչակցուե՟ ա՟ծ ընդ մարդկան ։ ընդ որ հրաշացեալ վերին զուարթնոցն զուգազուարճ՝ բերկրութեամբ պարառեալ երգեն , փառք 'ի բարձունս Ա՟յ , և յերկիր խաղաղութիւն ։ Զպարգևեալն այսօր զառ 'ի յերկնից 'ի բարձանց զխաղաղութի՟ն տիեզերաց , ա՟ծարեալ այլք հոգեկիրք՝ 'ի պէսպէս նմանութի՟ խորհրդաւոր իրաց առեալ՝ բազմադիմի օրինակօք նախագուշակեալ դրուատեցին , ոմանք յաստղ Յակոբայ՝ և կէսք 'ի գաւազան Յեսսեայ օրինակեալ , այլ հրաշալին Պօղոս՝ Շնորհք անուանէ զայն, յասելն, Քանզի երևեցաւ Շնորհն աստուծոյ փրկիչ ա՟մ մարդկան ։

Այն այս շնորհք երկնաւոր՝ անտարակոյս եմք թէ ամ՟յն առ հասարակ պարգևեցաւ՝ որք միանգամ 'ի լոյս ա՟ծգիտութե՟ն անդր փութացան 'ի վայելել ։ Սակայն ես զդարձուած բանիս յայլ ի՟մն խորհրդաւոր ոճ՛ շրջեալ՝ հաւանիմ ասել, թէ Շնորհքս այս առանձին ի՟մն եղանակաւ հանգուցեալ բնակեցաւ 'ի սիրտս այնոցիկ, ուր եգիտ ո՛չ զստերջու՟ե, այլ զպտղաբերու՟ե բարեաց ։ Զի աստուածարեալն Դաւիթ՝ որ; հետամուտն էր 'ի գըտանել զայս, ո՛չ տաց քուն աչաց իմոց՝ կամ նինջ արտևանաց իմոց՝ մինչև գտից զնա, յեփրաթա՛յ գտեալ զայն խոստովանի, ահա՛ լուաք զնմանէ յեփրաթայ, և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց ։

Եփրաթա նշանակէ պտղաբերու՟ե, արդ զի՞նչ պըտղաբերագոյն և բեղմնաւոր բարութեամբ՝ քան ըզ ձերդ ա՟ծաշնորհ Մեծանձնու՟ե, զի ահա ա՟ծահաճոյ բարեացն ձերոց արգասիք՝ հանդերձեալ են յետ սակաւուց՝ անհետ առնել 'ի սրտից ազգիս զխաւար անգիտութեան՝ և առաջնորդել 'ի լոյսն վերին, այնպ՟, ո՟պ մոգքն երջանիկ 'ի բաց մերկացեալ յանձնէ զթանձրամած խաւար կռապաշտութե՟՝ առաջնորդեալ եղեն այսօր աստեղբն առ լոյսն Ճշմարտութե՟։ Շնորհն՝ որ երևեցաւ այսօր աշխարհի, և ելից զփափագ նախահարցն ամ՟յն՝ որք յադամայ հետէ անձկանօք սպասէին, մաղթեմք բնակել 'ի ձեզ անհրաժեշտ, մինչև լցուսցէ զազգիս մերոյ զփափագ բարութեան, որք ապաստան կան 'ի ձեզ ։

Դաւէլն օրտապաշեան 'ի Նախիջևանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ Կ.

Շնորհաւորութիւն Օդէ ։

Արքայապսակ Դիւցածաղիկ Մեհաղնեայ
մե՛ծ Իշխանապետք .

Անչափ մեծ անճառ՝ խնդուե՛ս համայն ,
'ի սիրտ տիրաձօն՝ որդւոց ադամեան ,
յայսմ մեծասքանչ՝ աւուր փրկչական ,
շողեալ լուսափայլ՝ յարեւուն ծագման ։
Արդարեւ չի՛ք չափ
զի գոգ անսահման ,
եթէ յուշ ածցուք
զընթացս բնութեան ։

Զի այսօր ահա՝ անցին վերացան ,
հողմք դառնաշունչ՝ հոգւոց տրտմութեան ,
թռեաւ սլացաւ՝ փեսայն փարելի ,
'ի տիպ փրկուե՛ն՝ համասփիւռ ազգի ։
Յերկրէ յարուցեալ
յերկինս թռանի ,
զվէմ թաւալեալ
'ի կողմ անդր մի ։

Այսօր տեսանի՝ յեղերս երկնի ,
ըախմանալ դասուց՝ զուարթնոց հօտի ,
ուր հնչէ՛ն զձայն՝ երգովք բերկրանաց ,
Է ազատութիւն՝ ազգաց և ազանց ։
Կան լեգէոնեան
գունդք յանդնդէն ,
Է փրկիլ գերեաց
'ի բանտէ ներքին ։

'Ի սոյն յայս խորհուրդ՝ և մեք ծովացեալ ,
սիրով փեսային՝ յերկրէ յարուցեալ ,
'ի դալ հասանել՝ յայս մեծահանդէս ,
աւուրս լուսոյ՝ յոյժ չքնաղատես ։

Փութացաք մատչիլ
այսրէն յոտս Ձեր ,
մեզէն յայտնելով
ըզ բոց սրտից մեր ։

Արդ ցնծա՛ բերկրեա՛ Ծնո՛ղ աննման ,
հայր անթիւ որբոց մանկանցս Արամեան ,
բոլորեա՛ զպսակ յայս նոր դերդաստան ,
'ի զարդ 'ի պատիւ Տանս Թորգոմեան ,

Աւետիս ձեզ մեծ
յայս օր փրկութեան ,
զի արդէն լուայք
զողջոյն յարութեան ։

Մանկունքս ծնեալ յարգանդէդ սիրոյ ,
դիմեալ ձագախառն յանկիւնս տան քոյ ,
չունին չափ կոպար հրձուանաց հոգւոյ ,
զի ունին զձեզ ողջ 'ի թագ գլխոյ ։

Գոչեն ցնծալից
կեցցէ՛ յաւիտեան ,
Տէ՛րդ մեր կեցցէ՛
ը̃ իւր դերդաստան ։

Թորոս Խաչատրեան 'ի Խարասաւէ ,

ՔԵՐԹՈՒԱԾ Ը.

Շնորհաւորութիւն Զատկի.

Վեհազնեայ Իշխանապետ,

Ողորմած Տէր.

Տրտմալից յայս սահման բարեբար տեսութեան,
Նշմարի՛ ձայն կրկին տարերաց խռովութեան,
և 'ի մեր սիրտ նո՛յնպէս տեսանի այդ արձան,
աղէկտուր խորհրդոց անցելոց տարաժամ։
Իսկ զ'սրդիս առաւօտ ծագեցաւ խնդութեան,
ծագեցաւ նոր արև նոր ճրագ արփական,
ժամանակն հոլովեալ 'ի մեր կեանս անխափան,
զերեկոյն փոխարկեաց 'ի պայծառ լոյս տունջեան։
Բայց կոթող կանգնեցաւ 'ի մեր սիրտ անլախձան,
յիշատակ վեհափառ Իշխանի մեծանուան,
զրկեցաք վայելել ազգովին յայն սեղան,
զրկեցաք ո՛չ 'ի ձրից, այլ յաջող գթութեան։
Նոյն և արդ ժամանեաց առ մեզ ձայն խնդութեան,
'կանխեսցէ առ ձեզ ձայն որդեգրացս բազմուն։
որք զրկեալ 'ի հօրէ մնացեալ յորբութեան։
զՁե՛զ կարդամք զՁեզ խնդրեմք հայր լինել հօր
փոխան։
Զձե՛զ կարդամք ո՛վ Դիւցազն Բարերարք միաբան,
ընդունիլ զմեզ 'ի ծոց ձե՛ր շնորհաց հայրական,
որք այսօր ընդ վերնոց աւետեմք միաձայն,
ձեզ զքան ցնծուն բերկրաւոր խորհրդեան։

Շնորհաւո՛ր եղիցի սուրբ հանդէս յարութեան ,
արարչին համայնից խորհրդոց յայտնութեան ,
որ այսօր յարուցեալ 'ի վիմէ սրբութեան ,
հրաւիրեա՛ց զմեզ 'ի սպաս ձեր Դիւցազն տ՟րունէ :

Ա՜յ ցնծացէ՛ք յայս բարբառ խնդութեան ,
որ եղև փրկու՟ն համայնից բազմութեան ,
յոր և մեք լիացեալ երախտեօք հայրական ,
աւետեմք զմեծ խորհուրդ Ք՟ի յարութեան :

Աւետիս ձեզ ասեմք աւետիս ցնծութեան ,
Դիւցածնունդ մե՛ծ իշխանք բարերարք ընտրական,
յաւելցի՛ն քաղցր կեանք անձի՛ն ձեր բարունէ ,
կողակցաց և քե՛րց ձեր ընդ բոլոր գերդաստան :

Յոր և մեք հայցեսցուք զշնորհս վերնական ,
տարածել յանձն ձեր զիւր պարգև տիրական ,
զի կեցջի՛ք մնասջի՛ք լի աւուրբք բարութեան ,
'ի պարծանս ուղղեգրաց մեծի տանդ Պաղարեան :

Պճնեսցի՛ վե՛հ այն յարկ բարձրանուն Ճեմարան ,
կանգնեսցի՛ 'ի յարձան յիշատակ անվախճան ,
զի անմահ 'ի ձեր փառս ճոխացեալ միանգամ,
ծափեսցէ ամէնուստ օրհնեալ տունն Պաղարեան :

Ներսէս յաջողբեանց յԷջմիածնէ ,

ՔԵՐԹՈՒԱԾ. Թ.

Շնորհաւորութիւն ծննդեան Քրի՟.

Սեհաղնեայ մե՛ծ Իշխանապետք.

Ո՞ւր և յո՞ յարձակել զմե՛ր տեսիլ հրճուական ,
՚ի հանդես մեծ աւուրս նո՛ր լուսոյ յայտնութեան ,
երբ առ աչս տեսանեմք ըղ նշոյլ ձոյլ աստեղ ,
վաղվաղեն ՚ի բեթղեհեմ երեք մոգք խնդութեան ։
՚Ի վերուստ յեթերաց ձայն յերկնից հրեշտակաց ,
զծագմանէ ազդեալ նոր արևուն մեր կենաց ,
առ որ յայս աւետիս յայս բարբառ բերկրուե՟ ,
ազգք համայն զուարճացեալ աւետիս տան միմեանց ։
Նոյն և մեք դաստակից մեծ նոցին ցնծութեանց ,
խրախուսեմք յայս տաճար յայս հանդես պանծանաց ,
նորոգ մեր ցնծուե՟ դիմել յոտս Սեհաղանցդ ,
շնորհապարտ հեղուլ զմեր ճանաչումն երախտեաց ։
Ունիմք ինչ ընտրական ՚ի նուէր ձեզ բերել ,
Զի արժանեաց զբարուե՟ փոխարէնս վճարել ,
բայց ՚ի մեր գծագրին խոր սրտի ձեր բարիք ,
կայ մնայ մեզ աղօթս առ Աստուծն առաքել ։
Լուսափիւռ ո՞ մեր Տեարք կարմրածայր զձեր ցայտ ,
ծաւալեալ ը՟ հորիզոն վերդ լուսոյ ճառագայթ ,
նըշողիւք շշաւաւիղ ՚ի պարծանս մեր ազանց ,
փթթեսջի՛ք յարգասիս անտերունչ այս մանկանց ։

ԳՐԻԳՈՐ ՄՈՐՈՎՊԵԱՆ ՅԵՐԵՒԱՆԵԱՅ ։

ՆԵՐԹՈՒԱԾ . Գ .

Շնորհաւորութիւն նոր տարւոյ .

Անզուգական բարերարուհի գերածայրեալ,

Իշխանապետք ,

Այն ինչ նոր փայլեթովն յեթերաց յայտնեցաւ ,
հին այն դար հոլովեալ տա՛ր ՚ի բաց սլացաւ ,
շողեալ սատ քաջալոյս հին սահման ընդհանուր ,
՚ի մեր հարց աւանդեալ յայս հանդէս պանծացաւ .
Ո՞ւր Հռովմ ո՞ւր Յոնիա զհինն իմա՛ զնորն բե՛ր ,
կատարել զյոբելեան Դիւցազանցս յայս տօն մեր,
տեսցեն արդ ըզ մատաղ մուզայից ջոլորել ,
Վեհազնեայցդ անթարգմին երախտեաց զնուէր .
Յեգիպտոս մահարձանք երկնամբարձ արքունեաց ,
նա՛ Հռովմ Յունաստան քարոզ իւր հին նախնեաց ,
իսկ նոր մերս Հայաստան զերախտիս ձեր անզոյգ ,
կորիցէ նախ քան թէ կորուսցէ յիւր մտաց .
Յանմոռաց յիշատակ գրեսցէ յաւիտեան ,
յիւր արձան ՚ի սրտի զձեր բարիս անսահման ,
՚ի ցոյց տես յաջորդաց նախադահ կոչելոց ,
և յապշումն մեր նախնեաց մեր հարանց ընտրելոց .
Ի՞ւ իւրք ազգ հայոց ՚ի սկիզբն կործանման ,
զայս երկիր որ օտար իւր եգիտ ապաստան ,
Ձեօք եղև վկայեն ազգ համայն , Ռուսաստան ,
նոր երկիր հայրենի մեր ազին հայկական .
Դամբարանք թէ Տաճարք Արքանոցք թէ Դպրոց ,
ո՞չ ՚ի Ձէնջ կանգնեցան ՚ի յօգուտ մեր Հայոց .

994

Ճեմարանս յորում այս նոր մուզայք բնակին ,
Ձեր ձեռաց Ձեր մատանց են գործուածք մեծագին:
Շնորհաւո՛ր ձեզ նոր դար նուագե՛մք միաբան ,
Շնորհաւո՛ր նոր կաղանդ բազմաշխատ մեծ Իշխան
Ձգեսջի՛ք զթեւ կենաց անսպառ բերկրութեամբ ,
՚ի ձեր կեանս լցցին կեանք որդեգրացս ցնծուն :

Աղաջան Քեթխուդեանց ՚ի Տփխիսայ :

ՔԵՐԹՈՒԱԾ · ԺԲ. ·

Շնորհաւորութիւն ծննդեան Քրի ·

Վեհազնեայ մե՛ծ Իշխանապետ ,

Ողորմած Բարերար մեր :

Բազմադարեան ամօք յառաջ նախապատմեալն ՚ի Մովսիսէ՝ գուշակեալն ՚ի մարգարէից աստղն Յակոբայ՝ եւ յաղթող առիւծն յազգէն Յուդայ՝ անըստուեր Ճառագայթն ածուէ հօր՝ որ ՚ի վերջին աւուրս հանդերձեալ էր ՚ի մարմնի ՚ի մէջ հողեղինացս երեւել , էջ այսօր առ ՚ի յերկնից ՚ի բարձանց յանպատում ածուէն փառաց ՚ի ստորինս յայս խոնարհեալ յաշխարհ , էջ՝ զի զխաղաղութիւն երկնից յերկիր ՚ի մարդիկ իջուսցէ՝ եւ զերկիրս երկրաւորօքս հանդերձ բնակելոյն ՚ի բարձունս միոյն Ճշմարտին Այ ՚ի փառաբանութի վերագրեսցէ , Է որ հրաշացեալ հրեղինաց զօրացն վերնոց երգաբանեն , փառք ՚ի բարձունս Այ , եւ յերկիր խաղաղութի :

Խաղաղութեան այս երկնառաք՝ ընդ անպարագիր եւ թեւանն համօրէն Տիեզերաց առ հասարակ թէպէտ պարգեւեցաւ, այլ առանձինն եղանակաւ զկայ առնել բնակեցաւ համայն Աստուածութիւն ՚ի քաղաքն Բեթղեհեմ ։ Բեթղեհեմ որեւ Եփրաթայ՝ նշանակէ տուն հացի՝ մի անգամայն եւ առատութեան եւ պտղաբերութեան, բայց առ մեօքս զի՞նչ առատագոյն ՚ի մասին բարեգործութեանց քան ըզձիրախնամն ձեր Գերդաստան, եւ զի՞նչ աւելի պըտղաբեր աստուածայինն բարի սերմանց քան զերանաշնորհ անձն Վեհազնիդ ։

Վ՟յ յայսմ իսկ գերապանծ եւ սրբազան աւուր ՚ի ձահ վարկանիմք գալ ընդ առաջ եղանել ձեզ անմահ Բարերարաց, քանզի ձեօք բացան մեզ դրունք իմաստութեան եւ դուք ածիք զմեզ ՚ի մատախլապատ խաւարէ ՚ի լոյս ամենայն գիտութեան ։ Բայց ի՞ւ կարասցուք հատուցանել զփոխարէն, որոց իբրեւ զվտակս կարկաջահոս առոգանէք զմեր դաշտաց հովիտս. ի՞ւ հնար իցէ մեզ որդեգրացս, ոչ իւիք, բայց եթէ անմռունչ պաղատանս վերառաքել առ ապէնիազն Աստուած հայցել ՚ի նմանէ, չկարճել զթելս անդին կենաց ձեր, այլ անջինջ գծագրեալ ՚ի տախտակի երախտագէտ սրտից մերոց՝ մնալ յաւիտեան ՚ի սփոփանս որբոց եւ այրեաց, յորս ՚ի տիպ տարացուցի գերարատօրալից ցնծութեամբ սիրտ ՚ի բերան արարեալ երգեմք, Շնորհաւոր լիցի նոր տարիս, եւ հրաշափառ Ծնունդ եւ Մկրտութիւն Յիսուսի Քրիստոսի, պարառեալ անհուազ բարօրութեամբ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ ։

Յովսէփ Նուպարեանց ՚ի Գրիգորիուպօլսոյ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԺԲ ։

Շնորհաւորութիւն տօնէ Աղայ Յովհաննէսայ Աշնազարեան,

Պարագլուխ Պայազատաց

Անզուգական Երախտաւոր մեր ։

Զայն հոգենուագ յերկնից խորանաց ,
դասք երկնախմբից հնչեն լուսազգեաց ,
՚ի պատկեր ազդու անտերունչ որբոց ,
նազելով առ մեզ բանիւք հաշտութեանց ։
Խրախոյս բերկրանաց ժառանգք Սիովնի ,
հարե՛ք ներդաշնակ յաշխոյժ նուագի ,
զի բորբոք հոգւոյ տենչանաց պասքեալ ,
յօթեան վերին պսակ բոլորի ։
Քանզի յայսմ աւուր երկինն ՚ի յերկրի ,
տիպ հարսնարանի սուրբ Եկեղեցի ,
յեօթնարփեան խորհուրդս փայլեալ փառազարդ,
՚ի Յովակիմայ ծափէ ՚ի տօնի ։
Յոր ՚ի խրախոյս որդիք քո երկանց ,
վեհից բարձակից Իշխան գերապանծ ,
հոլոնեալ բղխել զաղբիւր խոր սրտի ,
հեզիկ նուագել զհանդէս քոյդ փառաց ։
Այլ աստ պէ՛տք լեզուաց աստ ճառք ՚ի տողել ,
զանթարգման հրճուանս սրտիցս ՚ի վայել ,
զի ճեմէ Մեհազն ՚ի յալիս չքնաղ ,
լուսանիւթ փողով մեծաձայն երգել ։

Բանիւք բայ հեղիկ 'ի պայծառ տօն Ձեր ,
կեանք մեր և պսակ յերկինս հրաւէր ,
ցնծալից շրթամբք 'ի քաղցր գովեստ ,
ասեմք Շնորհաւո՛ր տօն Ձեր բարեբեր ,
Ո՛ն ապա մատի՛ք ե՛ղբարք միաբան ,
յաւելուս 'ի ծափ յԻշխանին անուան ,
ձայնեսցո՛ւք առ Տէր գերարտօսր աչօք ,
պահել զտուն Մեհիս նոր աբրահամեան ։

Պաւէլ օրապաշտեան 'ի Նախիջեւանայ ,

* * *

ՎԵՐԹՈՒԱԾ · ԺԳ ։

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Յովակիմայ Աղէապարեան ։

Անմահից բարձակից աւագագործ Բարերար ,

Ողորմած Տէր մեր ։

Զէ նա այնչափ գերերջանիկ յիւր բաղձալիս ,
որ շատանայ 'ի լսելիս ունել բարիս ,
այլ նա յաւէտ պերճ վայելէ զայս ձիր 'ի սիրտ ,
որ առ աչաց ունի որում տարփայ յոգիս ։
Մեր ապաքէն յաւուր տօնի Մեհաղնէիդ ,
ծանրի կշիռ անմահութեան ըստ հանդիսիդ ,
քանզի անգին ըզ Պիւցածինդ յաչս համայնից ,
իբրու լուսին որ յիւր յաւուրս ձեմէ յերկնիդ
Այո՛ մեծ է օրհնեալ այս օր Մեհիդ անուան ,
զՊիւցապսակդ 'ի գեղգեղելչի՛ք մեզ սահման ,

զի սուրբ մայր մեր Եկեղեցի քեւ կա՛նդաղեալ ,
զՅովակիմայ տօնէ այսօր տօն քաղցրաձայն ։

Հինն Յովակիմ ծնող արմատ նոր սիովնի ,
մեծ նախահայր աղբիւր առատ սուրբ օրինի ,
նորա Յովակիմ ազգալոյս աստղ յետնոց Հայկայ ,
գոգ համօրդին ծայրափառեալ թագ յօրինի ։

Դուք ժամանեալ մեք վայելեալ յայս Ձեր մեծ տօն ,
կղկալթեն սիրտք ծափեն ոգիք որոց լոյս դոն ,
զաւակք թոռունք շուրջ զսեղանովդ զերթ ձիթենիք ,
ազգերամ Հայք Է՛ որդեգրացդ խոստման յայս ձօն ։

Դարձի՛ր յառեաց Հայր մեր բարի խնամատար ,
դարձի՛ր և տե՛ս 'ի դէմս որդւոց զուարճարար ,
ոյք 'ի պատիւ քոյդ երեսաց անմահական ,
ձօնեն զսիրտս 'ի պատարագ խնկապատար ։

Մատերո՛ւք արդ վաստակակի՛ցք իմ սիրական ,
մեծ Դիւցազնիս շնորհաւորել զտօն մեծ անուան ,
ուղերձել միշտ առ ա͞ծ բան զերգ մաղթանաց ,
զի մի՛ շիջցի լոյս համասփիւռ արեգական ։

Կեա՛ց յաւիտեան կեանք մեր և լոյս թա՛գ պար͞ծնց ,
կեցցե՛ս կեցցե՛ս յամս անվախճան յանդորրիս ազգաց ,
կացցէ՛ արև կենացդ անմուտ իբր առ Յեսուաւ ,
զի ծագեսցէ ազգիս և մեզ ըղ լոյս փառաց ։

Թէոդորոս Խատփամեան 'ի Խարբերդէ ,

ՔԵՐԹՈՒԱԾ: ԺԴ.

Շնորհաւորութեան թուղթ Աղայ Յովհաննէսայ Նշանաւորեան,

Գերաստիճանեալ Իշխան

անզոյգ Բարերա՛ր մեր,

Ո՛վ հրաշափառ հանդիսի մեծի աւուրս, և բերկրապատար խնդուե՛ համայնից, որ ցանկայաքն ուխտիւք խնդրուածոց՝ եկն եհաս քաջաքաստիկ, կոյր սակս իակ երախտագիտ որդեգիրք քո ծայրացեալ ծովացեալ յանսպառ հայրագութ խնամոց Ձերոց, իբր յամենավտանգ աղբերէ բարուե՛ց, եկաք յանդիման լինել անզոյգ մեր Բարերարիդ, և շնորհաւորել զշնորհազարդեալ տօն Ձեր մեծահանդէս: Բայց զի՞նչ աստանօր և զո՞ր զուգակշիռ անկշռելի երախտեաց Ձեր նուիրել գոհունի: Ապաքէն առ արժանապարտն ձեզ փոխարինել զորիտուր երախտեաց, կարի իսկ 'ի ձ՛ահ գայր մեզ նախ զանբաւ բարերարութիս Ձեր զուգաթուել, զոր գետօրէն հեղու աղբիւրդ հայրենեաց յորդիս հայրենեաց: Բայց ո՞ր հրաշաբան լեզու զօրեսցէ զանպատում երախտեաց ձերոց արգասիս 'ի համար բերել, որ անցեալ զանցեալ է ըստ չափ, և ելեալ ըստ քանակ, նա՛ զի և չի՛ք ինչ կարիք զքաջափայլեալսն քան զարեգակնայինն ցոլացուն ճառագայթից մատնանիշ ցուցանել՝ որոց աչս տեսանելեաց ունիցին: Ապա համառօտ անցեալ միով բանիւ 'ի վճար բանիս, Յեսու զօրավար մեծ իշլեան բանակին, ստնակապեաց զմեծ լուսաւորման երկնից, զի մի՛ շրջան աւեալ՝ ստուերածս զգործով արկցեն՝ զոր յօդուտ ծնեան ժողովըրդեանն աւնէր ։ Զնորին բան և մեք կրկնեսցուք աստ առ մեծ Լուսաւորդ մերում ժամանակի, կացցէ՛ Արեգակնդ հանդէպ գաբաւոնի, և Լուսինդ հանդէպ ձորոյն եղոնայ, մինչև վանեսցուք զթշնամիս հոգւոյ և մնաց մերոց 'ի միջօրէի անստուեր բարերարութեանց քոց ։

Յովհաննէս աճեմաղամեանց յաստրախանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ․ ԺԵ․

Շնորհաւորութեան տօնի Աղայ Յովհաննու Յովակիմեան․

Անմահաձիր պարգև բարութեան,

Բարերար Տէր մեր ․

Բաբէ լուսածագ աւուրս հրաշից տնօրէնուէ, էբրև զի ցանկալի քարոզի յծակոյս մատուցեալ ման կանցս նորոյս սիովնի, սքանչելարմատ շաւաւիղք պանծացեալ տեսանել զայս երկնագումար հանդիսի յաբեթեանս գրոհի 'ի նմանօրինակ հովիտ օրհնուէց, 'ի հոգւոյն ս՟բյ դալարանագեղ ծաղկամբք շընորհաց զարմանալի յարդարեալ, բայց քանի՞ն ես բարեդէպ յիմաստասիրել յաւագամեծար յարգանս նախանձայոյզ բարեաց որդւոցս լուսոյ, յորոց է՝ որ իբրու որդի հարազատ զքև պարառեալ, ձայնէ առ Հայրդ. օ՛ն համբուրեա՛ զիս 'ի համբուրից շրթանցդ, զի իւղ անոյշ հեղեալ է անուն քո, և է՝ որ հետևող հանդիսացեալ հետոցդ մեծագործութե՟, հաղորդս առնէ զանձն քումդ բերկրանաց սրտի ։ Չէ՛ ինչ փոյթ, զի ակն արևու յոաին իւր ոչ ինչ նորահրաշս կատարէ յընդհանուրս յարևելից յարևմուտս ծագեալ, այլազգ իմն ծագէ 'ի վ՟ր մեր, բերելով առ մեզ զօր ուրախարար և երջանկութի, զի զի՞նչ արդեօք տուաղեաց այսր զծառայս ձեր, եթէ ոչ վերնոյն տիպ հարսնարանի մայր ս՟բ Եկեղեցի, ո՞վ զսակաւաթիւ զայս հօտ բանաւոր հօրինեալ երամեաց յայց ձերդ Վեհազնութե՟, եթէ ոչ յորդորեալ համբաւ յոբելեան տօնախմբութե՟ Ձեր, և զո՞ր նորանուագ փառաբանութե՟ յայսմ վայրի չածեն փափկաձայն, քաջայայտ ինքնին, յօրինակ ձագուց աղաւնեաց երամովին թռուցեալ ձագախառն իութացան յայս յարկ պանծալեաց՝ բերելով բերանով զշիւղ գոհութե՟ սրտի ընդարձակութե՟, անանման Դիւցազնիդ աւետել 'ի մի շունչ 'ի մի ձայն զոր յանձին են բաղձանք, նոյն և ցանկասիրեալ տալ վերնոյն զաւանդ մաղթանաց՝ ընդունել զողորմութի շնորհաց, հայցել յամենակալէն զզօրութի հոգւոյ և կեանս հազարաւոր ամաց անզուգական Իշխանիդ, 'ի պարծանըս գովելատից ազգիս՝ հանդերձ համօրէն ընտանեօք մշտնջենաւորել ձեզ, նոյն և զյորդորումն սիրոյ անընդհատ գթոյ Ձեր յանձինս իւրեանց ։

Դաստեր օրիորդեան 'ի Նախիջևանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԺԴ ·

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Յովհաննու Յովակիմեան ·

Պայազատազարմ մեծ Իշխանապետ ,
Ողորմած Տէր մեր ,

Մատերո՛ւք ո՛ մանկունք Արամեան սերնդոց ,
զննեցէք դուք ը̅ իս ՚ի յակճիւս խորհրդոց ,
զի՞նչ այն ո՛վ որ զմեզ ած ձգեաց յայս տեղի ,
յանդիման մերկանալ զզգացումն մեր սրտի ։

Բայց ո՛վ ոք լուռ ը̅ հանդէս զանց առցէ ,
Թէպէտ և գլխովին անձայն ոք նա իցէ ,
ո՞չ ձեր սէր ո՞վ Տէր մեր քան մագնիս մեզ յարդի ,
Ձեր շնորհք երախտեաց քան հօր մօր սիրալի ։

Ձգեսցի արդ յերկար խօսուն այս մեր լեզու ,
ընկալցի ՚ի գովեստ զարքային վեհ շնորհատու ,
գոհասցի շնո՛րհ կալցէ փոխան մեծ այսր աւուր ,
յորում զքեզ ողջ պսակ պահէ ցարդ փառաւոր ։

Տեսչուի̅ն պարգևեաց քեզ զայս օր գեղեցիկ ,
արի՛ Հայր որք մանկանցս զգեցի՛ր դու քաղցրիկ ,
զզօրուի̅ն մեծութեան ՚ի յերկնից ընծայեալ ,
զպատիւ և զփառս յորդեգրացս այսոցիկ ։

Օ՜ի այսօր ՚ի վերուստ զօրութ̅ն ձայն հնչի ,
մկրտիչն Յովհաննէս փրկչին մեր Յիսուսի ,
՚ի յերկրէս աստ ՚ի վեր ձայն փառաց առաքեալ ,
՚ի դառնալ ՚ի լեռնէ արևուն աշխարհի ։

Դու արև մեր կենաց շողշողեալ 'ի դարուս ,
Հոմանուն առաքինոյն Յովհաննէս աստղալոյս ,
բուրեա՛ զհոտ համբուրից 'ի շրթանցդ քաղցրամօք ,
'ի բերանս որոց են գոհութեան խրախոյս ։
Տօն Վեհիդ յարգելի այժմ և միշտ փառաւոր ,
'ի մի ձայն գոչեմք մեք եղիցի՛ շնորհաւոր ,
պերճ՝ կենօք պերճ՝ շարժիւք ը̄ կենաց կցորդեդ ,
յերկարեա՛ զմուտ աւուրցդ 'ի շաւիղ լուսաւոր ։

Թէոդորոս Խատատճեան 'ի Խասգիւղէ ,

ՔԵՐԹՈՒԱԾ . ԺԱ .

Շնորհաւորութեան տօնի Աղայ Յովհաննու Յովակիմեան .

Ասպետափառ Վեհ Իշխանապետ ,

Ողորմած Տէր ,

Ցնծումն անսահման 'ի մեր սիրտ տարածեալ ,
զմեզ երգով քաջաձայն այսր ածէ հրաւիրեալ ,
բա՛բէ ո՛վ հանդիսիս , ո՞ւր զարդիս Աղկիդէս ,
ելանել յընդարձակ յայս տեղի յասպարէզ ։
Տեսանեմք աստանօր զառաջինն Հայաստան ,
պար առեալ զմանկամբք յանկոպար բերկրումն ,
յոր կրթեալ մեր յապուշ 'ի կատար խրախճանաց ,
յարդարեալ գեղգեղեմք զձայն սիւգ նուագաց ։

Օ՜ իարդ մեզ զՎեհազնիդ տեսանել զմեծ տօն ,
լուել և ո՛չ ըզ սիրտ մեր բերել ձեզ 'ի ձօն ,
փոխածեալ այլ յայլմէ թօթափի զօրութիւն ,
ցուցանել զմեր սիրտ զեռանդեան ջերմութիւն ։
Ներկրուէ՞ այսր առիթ տեսանել զձեզ առողջ ,
ցայս գլուխ նոր դարու 'ի տօնի ձեր ամբողջ ,
դու մեր թագ պարծանաց դու կենաց մեր արև ,
յոր յառեալ ձգեմք լոյս և պարծիմք միայն քև .
'Ի քեզ բերես զգեղապանծ զօրինակ հիմնադրի ,
ո՛չ զանուն եթ միայն , այլև զգործ սխրալի ,
պարգևես անտերունչ այս մանկանց աննախանձ ,
ստանձնեալ գեր զչափ զերախտիս գերապանծ ։
'Ի համբար լիապանծ թաթաղուն մեր մնաց ,
իբր ոսկւոյ զերախտիս մթերեմք Ձեր բարեաց ,
փոփոխէ ժամանակ զբնութիւն տարերաց ,
բայց 'ի մեզ ո՛չ երբեք զգոհութիւն երախտեաց .
Օ՜ քեզ ունիմք 'ի կեանս մեր 'ի քեզ լոկ զմեր յոյս ,
յայլ ոք ո՛չ գտանեմք 'ի քեզ եթ զմեր լոյս ,
փթթեսջի՛ր կեա՛ց բերկրեա՛մ Ո՜ իշխան Նարեկար,
պաճուճեալ ծաղկեամ զոստս յօգուտ մեր խնամատար,
Մեր սիրտ աչք 'ի յերկինս հանապազ ամբարձեալ ։
զանսասան խնդրեն քեզ 'ի վերուստ կեանս պճնել ;
որով միշտ յարազուարճ բերկրուք 'ի զարդար ,
ծաղկեսջի՛ք յամայր ամն բարգաւաճ՝ փթթե՛լ յար .

Գրիգոր Մուրատճեան յերեւանեայ ,

ՔԵՐԹՈՒԱԾ . ԺԲ .

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Խաչատրոյ Յովհաննէսեան .

Ազնուածնունդ Իշխանապետ ,

Ողորմած Բարերար մեր .

Աւարան գոգ ոսկի՝ երփնագեղ բոյս վարդից ,
եւ ղամբար գերարփի՝ հանճարոյ իմաստից ,
իւ՞ ըզկայծ Դիւցազինդ՝ արծարծել բաւեսցուք ,
կամ զհուր բոցակեղ՝ բորբոքել զօրեսցուք ։
Որ վրձին գունեռանգ՝ գեղերփնել մարթասցի ,
որ հռետոր ճարտասան՝ քաջ ծաղկել զօրասցի ,
զանհամար արդասիս՝ մեծամեծ բարութեանց ,
անմռաց տարրացեալ՝ ՚ի պսակ պարծանաց ։
՚Ի տոհմէ քաջ վեհից՝ անմահից դիւցազանց ,
պայազատ վեհափառ՝ ՚ի կաճառս քաջազանց ,
շառաւիղ ընձիւղեալ՝ ՚ի մեծէն Արամայ ,
բարունակ պտղածին՝ ՚ի տանէ Թորգոմայ ։
Արուսեակ նախընթաց՝ նոր դարուս գերակայ ,
վառ ճրագ ՚ի խաւար՝ նորահրաշ ցոլանայ ,
խաղաղիկ զուարթերես՝ առեալ մեզ ըզնուագ ,
երգեսցուք ըզ դրուատ՝ Իշխանիդ ՚ի հռչակ ։
Ուր եմք մեք զի՞նչ առնեմք՝ վարանեալ գլխովին ,
զծնօղս զհայրենիս՝ մոռացեալ բնաւին ,
բայց աւաղ զի՞նչ ասեմք՝ ահա մեզ քաջ ծնօղք ,
քաղցրագութ բարերարք՝ խնդակաթ խնամողք ։

Զուարճ՝ գարուն լուսադէմ՝ մօտալուտ մերձենայ ,
'ի թեթև արագ թևս՝ թռանի դիմէ գայ ,
եւ ահա հոյլք թռչնոց՝ մերկացեալ զտառապանս
զգենուն զհանդերձ՝ ցնծութեան 'ի բերկրանս :

Օդ պայծառ մեղմասին՝ քաղցրահոտ մեզ բուրէ ,
խնկելի բալասան՝ համասփիւռ ծաւալէ ,
թուփք ծաղկանց վարդենեաց՝ 'ի սըգոյ հոլանեալ ,
նորապերճ՝ զարդարին՝ հրճուալից ըզմայլեալ :

Նօթճեն մեզ թէ գարուն՝ անցանէ և գընայ ,
եւ աշուն հողմակոծ՝ փոթորկեալ մերձենայ ,
զի՞նչ ապա սխալին՝ արդ գարուն ծիծաղի ,
ծառք պտղովք ուռճանան՝ և պարտէզ մեր զմայլի :

Արդ 'ի ճահ վարկանիմք՝ դուզնաքեայ խուն բանիւ ,
եւ հրաշէկ բարեմոյն՝ ցոլացեալ վառ սրտիւ ,
'ի պայծառ ձեր Տօնիս՝ դրուագել զձեր պատկեր ,
որ բազմօք արգասեօք՝ իրաւի պտղաբեր :

Վերածել ընդ եղբարցս՝ զպաղատանս մեր առ տէ՛ր ,
զի ևս հասուսցէ՝ սոյն տօնիս շնորհաբեր ,
կալարո՛ւք նախախնայծ՝ ըզ պտուղ անպխտան ,
կալարո՛ւք քաղցրուէ 'ի տրիտուր բարութեան :

Ահա ձեզ խուն նուէր՝ անվճար մեր պարտեաց ,
բերկրամիտ՝ ուղերձեալ՝ ո՛չ ըստ չափ երախտեաց :

Մարգար Խօրասանեանց 'ի Մոսկովայ :

ՎԵՐԹՈՒԱԾ · ԺԹ ։

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Խաչատրայ Յովակիմեան ·

Անկշիռ Բարօրութեանց Գանձարան ,

Բարերար Տէր մեր ,

Ընդէ՞ր մեզ յաւուրս յայս յարկ պանծանաց ,
դիմել տեսանել համբուն Իշխանաց ,
անտի 'ի վերուստ յաթուոց երկնից ,
թէ չէր մատուցեալ հանդէս հրճուանաց ։
Խաչիւ պսակեալ Խաչատուր Հերոս ,
շնորհօք խաչելոյն ստանձնեալ տիտղոս ,
քաւաթեւ շնորհօք յաշխարհ Թորգոմեան ,
անաչառասփիւռ Գետ առատահոս ։
Ո՛չ լոկ Յունաստան իմաստնոց երկիր ,
ո՛չ 'ի Հռոմ եթ սոփեստից ջոկիր ,
յԱրարատ իսկ մեր ընդ հուպ փթթեսցէ ,
զիմաստնոց դրախտ արդեանց Գետոյդ ձիր ։
Արդէն առ ոտիւքդ 'ի մեծս հանդիսի ,
նախախնայծք ձրիցդ առ ական դիպի ,
դիտեմք աներկբայ այսգոյն դամարձակ ,
արտաքոյ հրաշից չեղեւ մի՛ լիցի ։
Ա՛շակերտակիցք հա՛պա սիրտ 'ի վեր ,
զի այսօր այ՛ն օր զոր արար տէր ,
անդուլ մաղթանօք յաթոռոյ բարձանց ,
անմահ կեանք Մեհիս հայցեսցուք նուէր ։

Յովհաննէս Եղիայեան յաստրախանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · Ի ·

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Խաչատրոյ Յովակիմեան ·

Անաչառասփիւռ անսպառ աղբիւր բարեաց ,
Ողորմած Ինքնիշխանապետ ,

Աստանօր հրավառ ցանկութի՟ւք մեր լցան ,
տրտմութիւն թախծութի՟ւք առ 'ի մէնջ մերժեցան ,
մառախուղք աղետից 'ի սրտից փարատեալ ,
հոգիք մեր պտղաղարդ սուրբ սիրով զուարճացան ։

Արդ անցին հեռացան ամպք վշտաց հեծութեան ,
ծագեցաւ նորազուարճ մեզ դարուն խնդութե՟ ,
դառնաշունչ փոթորիկք զնստեալ տրտմալից ,
ժամանեաց նոր արև մեզ մանկանցս Հայկազեան ։

Նոր զեփիւռք քաղցրասիկ մեղմագին մեզ հնչեն ,
'ի հրճուանս անթարգման զմեր հոգիս զմայլեն ,
ծաղկազարդ երփնագեղ 'ի պարտեզ բանաւոր ,
հոտ անոյշ խնկենեաց բերկրութե՟ մեզ բուրեն ։

Ո՞վ զինարդ հրաշագեղ այս հանդէս փողփողէ ,
կամ քանի՞ ցնծութե՟ զհոգի զսիրտ հրճուէ ,
ո՞ր դըրիչ քաջավարժ 'ի նկար 'ի պատկեր ,
ո՞ր լեզու բանեղէն պերճախօս գունեսցէ ։

Ո՞ւր ես արդ լուսաճեմ փայեթո՛ն երկնաբուն ,
փութա՛ աստ 'ի Տօնի Իշխանիս փառազուն ,
յո՛ն կաց տո՛հմ Հայկայ 'ի կայթիւն ծափաձայն ,
ընդ պսակ դաբնիդեայ բոլորեա՛ դու համբուն ։

Ո՛ մուզայք ձայնեցէ՛ք քաղցրաձայն նուագել ,
զգովեստից ներբողեան յօր տօնիս յերիւրել ,

քաջակիրթ Հոմերոս կամ այլ ոք պերճաբան ,
մատիցէ զաննման զՏէր մեր դրուատել ։

Նորահրաշ սքանչացեալ 'ի զարմանս մեք կրթիմք ,
այլ յայլմէ գո՛գ եղեալ գլխովին վարանիմք ,
Ի՞ւ արդեօք մարթասցուք զերախտեաց ձեր վճար ,
Ո՞ւր կամ զո՞ր Ձեզ նուէր տրիտուր նկրտիմք ։

Քանզի միտք խակակութ մեր խամրեալ բթանան ,
քաջադէպ իմաստից յաջող դիւտք հեռանան .
խուն բանիւ որբ որդիքս փութացաք յայս հանդէս ,
Ձեր տօնի ըղնուագ վերօրհնել մերովխան ։

Գեղեցիկ շառաւիղ ուռճացեալ յարմատոց ,
Բարերար աննման Հայկազարմ դու որբոց ,
ընկալջի՛ր 'ի հաճոյս զայս նուէր աղքատիկ ,
զոր սիրով Ձեզ ձօնեմք փոխարէն վաստակոց ։

Ո՛ն եկայք ո՛վ եղբարք 'ի ժամուս պարծանաց ,
հատուսցուք Դիւցազին ըղպարտիս երախտեաց ,
կանխեսցո՛ւք աղօթիւք առ այն լոյս անմատոյց ,
յանստուեր միշտ ծագել զայս արեւ մեր կենաց ։

Գաբրիէլ Օտապաշեան 'ի Նախիջեւանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ ԻԱ.

Շնորհաւորութիւն տօնէ Աշոյ Խաչատրոյ Յովհաննէսեան.

Դիւցապատիւ մեծ Իշխանապետ.

Բարերար մեր.

Երկուստեք հնչի բարբառ աւետեաց.
երկուստեք այսօր ողջոյն մեզ կենաց,
ամենուստ օրհնեալ է մուտ Թափորիս,
Եւ աստ 'ի յերկրի, Խաչիւ 'ի յերկինս։
Անդ զի այսօր դասք վերին սիովնի,
յօծման սուրբ Խաչի կան 'ի հանդիսի,
ոմն քնարիւ տաւղօք դայլայլեն,
այլ ոմըն 'ի փող յաւաչ գեղգեղ սիգ։
Երգեն նոքա զի՞նչ, զյայտնութիւն հրաշիւք,
զյետադարձ խաչին լուսափայլ շողիւք,
նորին ճառագայթ ղամբարեալ այժմոյս,
'ի Ձեր գլուխ հանգեաւ յերկնից սրբալոյս։
Իսկ աստ սոյն մուզայք նոր Հելլիկոնի,
յոգի ամոքեալ ծափեն յայս տօնի,
բայց ո՞ այն իցէ արարէ՛ք զգօն,
որ այս Մուզայից տայ կեանս և կրօն։

Խաչատուր գոհար Իշխան վեհապանծ,
խաչիւ տուրք ձօնեալ Հայր տնանկ մանկանց,
ծնունդ անմահից ծաներուք բնաւ,
հօր իւր զուգաթոռ պարծանաց պսակ։

Դրախտ տիրատունկ ուսմանց իմաստից ,
բողբոջեալ ծաղկեալ ոստովք պտղալից ,
Նոր լուսով կենաց պճնեալ 'ի ժամոս ,
որբոց և այրեաց լոյս տո՛ւր 'ի դարուս ։
Արձակեալ զսաղարթս ծաւալդ աննման ,
Ճոխացո՛ զտուն Եղիազարեան ,
Նո՛ր մեր մեկենաս Զեզ զի՞նչ ձօնեսցուք ,
բաց կենաց յանձանց զոհեալ 'ի կնդրուկ ։
Ո՞ խաչ քաւաթև բաղկաց Յիսուսեան ,
պահեալ զՄեկենաս ազգիս Արամեան ,
տո՛ւր կեցցէ անմահ , զորբս կեցուսցէ ,
ժամանեալ յալիս մեզ Տէ՛ր մնասցէ ։

Թէոդորոս Կապամճեան 'ի Կարնուէ ։

ԶԱՐԹՈՒՆՔ . ԻԲ .

Շնորհաւորութեան տօնի Աղայ Խաչատրոյ Յովհաննէսեան .
Խաչապսակ Ասպետափառ առաջին Իշխանապետ
Ամենողորմ Տէր մեր .

Օրէնք են է որոց որք լծով բռնածի ,
են օրէնք թարց որոց և աշխարհ ո՛չ կանգնի ,
երանի՛ երջանի՛կ ո՛չ միայն որ գիտեն ,
այլ որոց հոգւով չափ զոր գիտեն կատարեն ։
Դու մեր Տէր լուսափիւռ վարդ ծաղկեալ պտուկան,
զլնամո՞ց ոչ պահես արդեօք փառս աննման ,

ծով սիրոյ Հայր բարեաց զՔեզ կացոյց Էնն Ա.Ծ ,
'ի քէ՛ն լոյս կենդանի ծագեսցի մեր կենաց ։
Երանի՛ զի բանաս ընդՔո աջ գթութեան ,
երանի՛ զի 'ի պէտս Դու որբոց բարութեան ,
զաշխատանս զվաստակ ստանձնեալ միշտ անխոնջ ,
խնամովք պսակել զնոսա յաւիտեան ։
Մեր ահա՛ ժամանեալ 'ի թափօր Քո տօնի ,
ծագելոյ 'ի յերկնից լուսափայլ սուրբ Խաչի ,
զօրեսցուք ինչ արդեօք լռութեամբ անցանել ,
պարտ մեր ո՞չ է զձեզ երգով ձահ դրուատել ։
Խաչաձև չորքանկիւն 'ի չորս կողմն մեր ազգի ,
գետ շնորհաց ծաւալեալ իբր յեդեմ դրախտի ,
քաւաթև քերովբէ անմահին թիկնաթու ,
ոսկեանիւ լուսոյ կառք ոսկեվառք կենդանի ։
Ընծայեմ մեզ հաւատ Դու հերոս դիւցազգի ,
'ի Քեզ մեր յոյս և սէր խաչազարդ ոսկեծղի ,
ը̃ Քո ձեռն սպասեմք ընդունել զաւետիս ,
Քև յաւէտ պարծեսցուք և Դու մեօք բերկրեսցիս ։
Ողկեա՛ մեր Մեկենաս դու փառօք բարձրացեալ ,
հորդեմք մեզ զՔեզ շաւիղ ե՛կ առ մեզ զուարձացե՛լ ,
ը̃ չքնաղ ընտանեացդ նորոգեալք զօրութիւն ,
կեա՛ց Արև մեր կենաց զի տեսցուք բարութիւն ։

Ռափայէլ Կէսպէան 'ի Նախիջևանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԻԴ ·

Շնորհաւորութիւն տօնէ Աղայ Խաչատրոյ Յովհաննէսեան ·
Գերապատիւ մեծ Իշխանապետ ·
Ամենողորմ Բարերար մեր ·

Հրաշափառագոյն աւուրս հանդէս, և պատճառք բերկրութե՟ բովանդակ հաւատացելոց, զի այսօր ճառագայթափայլ պանծացաւ պարծանքն մարդկային ազգի կենարար ս՟բ Խաչն փրկութենակատար, որ երբեմն զ՟մ կապանս չարութե՟ խաւարասուզոր իշխանութե՟ն, զոր վայելեալ մայրս անարատ Հայաստանեայց Եկեղեցի աւետաձայնէր ուղղեկացն, Խաչն կենարար եղև մեզ փրկութի՟, սովաւ լուսաւորեցաք ամէքեան, բայց երախտագիտ ուղղեգիրքս յառաքելականն յաւեալ հրամանատուութի՟, զհոգևորս ը՟ հոգևորս համեմատել, քաջագեղեցիկ համարձակախօսութ՟ իշխեմք այլ ևս խորհրդածել յաւուրս տօնակատարութե՟, թէ ո՟պ Խաչն, նոյն և Անուանակիրդ Խաչի լուսանորոգեալ պայծառազարդեցիք զմոլորապայման բանաւորութի՟ մատաղաբոյս մանկանցս Հայկասերունդ տոհմիս բիւրազգի գրագիտութ՟, յոյր սակս անբերօղ առատուե՟ս զուգաձայնեմք համբարբառ, իւղ անոյշ թափեալ է Անուն քո տէ՛ր, և հոտ իւղոց քոց քաղցր քան զամ՟ խունկս, ըստ որմէ զհետ քո ՚ի հոտ իւղոց քոց ընթասցուք, սիրեսցուք զստինս ազգասիրութե՟դ քան զգինի, և բարձր արասցուք զանուն Տ՟ռ ՚ի միասին: Ընկա՛լ ո՜ անմահ Բարերար մեր՝ զայս նուէր անկեղծաւոր գոհու՟է զոյգ ընդ սրտից երախտաճանաչ որդեգրացս, որք միաբարբառ աղաղակեմք, օգնեա մեզ տէ՛ր վասն փառաց Անուան քո ։

Յովակիմ Սագինեանց ՚ի Մոսկովայ ․

* * *

ՔԵՐԹՈՒԱԾ․ ԻԳ․

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Ղազարու Յովակիմեան ․

Գերամեծար Իշխանապետ ․

Ամենողորմ Տէր մեր ․

Հոսանք գետոց քաղցրու՟է և ալիք աղէխարշ տրտմու՟է զմիմեամբք յարձակեալ ծփեն և ծեծեն ըզ սիրտ որդեգրաց Ձեր, ո՜ Գիւցապատիւ Տէր, կոհակք տրտմու՟է, զի զայսչափ ժամանակ չունէր մեր փափագ ՚ի բարեյաջող նուագի մատուցանել տիրամեծար Իշխանիդ զպատարագ օրհնու՟է ՚ի հոգի խոնարհ, ՚ի նոյն և զփութով բաժանել պսակէդ գլխոյս բարեաց օթևանիդ՝ լայ և հառաչէ վրէպ յերջանկապարգև Տէառնէդ ։ Իսկ յորձանք քաղցրու՟է, զի ըզ ցանկու՟ն իւր վայելէ, զ՟ փափագեալն իւր նազելի անձամբ միացեալ և զտօն նորա սրբանուն երկնաւորօք գերահռչակեալ, յորոց և յօժան պատրաստի բոլորովին հանդիսայարդար ՚ի շնորհաւորու՟ն ։

Գերօրինակ գութ մարդասիրու՟էդ, որով յերանելեացն վերածիս դաս, յորոյ յանձինս որդեգրաց զաշխոյժ սիրոյ տարփանաց ՚ի քնար սրտից մեծարել զարժանամեծար Տ՟րդ մեր , զօրինակդ բիւրազգի բարեաց , քանզի յամի բարձեալ բերելով զպատկերն ըմա՟նուէ՟ խանդաղատանաց պատուական Ծնողի Քո և մեր , պարտաւոր առնես և արասցես յառյապայն ըզ նուաստախոհ մանկունս ՚ի գոհու՟ն հոգւոյ ընդարձակուն , ապա տուր հրաման ո՜ Տէր Կայսերամեծար , յողորմու՟ն քո յուսացեալ գեղեցիկ համարձակութ՟ մատչել յաղօթս առ բարձրեալն յերկարել ՚ի բարօրու՟ն մեր զդար ցանկալի կենացդ , զի լաւ է մեզ օր մի յաւուրց կենացդ քան զլոյս աչաց մերոց , զի ապաւէն ասխ մեր յամի, և առ ՚ի քէն հայցեմք զթեւարկութեան նպաստ՝ թէպէտ և ՚ի բացեայ առնիս ՚ի մէնջ ՚ի տրտմու՟ն հոգւոյ , սակայն մի՛ առներ ՚ի բաց յորբոցս զգութ ամբաւածաւալ սիրոյդ , ե՟ ցանկու՟ցս սահման և ըստ բաղձանացս կոպար անցեալ , քանզի դու ես պարծանք զօրու՟ց մերոց , և պաշտպան անայցելու որդեգրացս ՚ի բովանդակ ազգիս ։

Գրաւէր օտարազգեան ՚ի Նախիջեւանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԻԵ ·

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Ղազարու Յովակիմեան ·

Դիւցազնափայլ Ազնուածնունդ
մեծ Իշխանապետ ·

Յեռալոյս 'ի սեանց կառուցել մեծի տանն Յովկիմ,
զմին նշմարեմք գլուխ այս պարու Հերոս գերակայ ,
վեհ Իշխնպտ այսօր ծագեցաւ աստ յերկնից այժմիս
որ տօնիդ յարգի զքոյդ ղամբարել գլուխ սրբալոյս ։
Ահա ծաղկազարդ կամք և անկիւնք տանս վերօրհնել,
ըղձմբ զգենուն այսօր ցնծուն 'ի քէն պարգևեալ ,
մտանեն ահամ քո աստ առաջի ազգ և սիրելիք ,
բերեն հրճուանօք զպտուղ տօնի նոր սիրոյ հեզիկ ․
Մեղ լեր արդեօք դբնիդյ խորհիլ 'ի քո գլուխ պսկ,
յոլիմպ յուղարկել 'ի պարս ընտրելոց դիւցնց քղք
անձահ բնաւին զվարատելի դաբնիս քեզ բերել ,
Թող այլք հաճեսցին ումև կամեսցին զայն մտուցնել ։
Զի մեզ գերակայ պրգևել դիւցազն յարմոյ քաջաց,
ոչ անուամբ միայն բիւրուր արդեմբք անմահ եթերց ,
մեզ զիարդ ապա զանմահն յարգասիս կամել պսակել ,
աստ մահկանացու դաբնիս 'ի պսակ նմա բոլորել ։
Մեր պսակ պատիւ յայս աւուր կոչման անուանդ յրդի,
են խոր գոհուն բերկրուն անձառ սրտից ցանկալի ,
զի պիտոյ են քեզ մեր պսակ ջնջին մեր երգք փանաքի,
մինչդեռ զարքայի կապես 'ի քո գլուխ պսակ եզակի ։

Բայց այցե՛ն սաղմոս տացե՛ն օրհնութի՛ւն 'ի ձայն քաղցրու՛ն
այս մուզայք մատաղ նոր ձեր Պարնասի անուանդ
կոչման ,
փող հարե՛ք ապա յայս նշանաւոր յաւուր տարեկան,
տօնիւ մեծասքանչ փառաւորուն վեհիս բիւրուց ընտրական ,
Բարձրասցի՛ս 'ի փառս կեցցես յաւիտեան արդիւնակատար ,
ծաղկեսցիս աւուրբք օրհնեսցի անունդ Տէր մեր
բարեբար ,
Հե՛ղ զբարութիւնդ 'ի վերայ ազգիս ամենակարօտ ,
նոյն և յորս կայ գահիդ յանդիման յայս բանական հօտ
Կացցե՛ս մնասցե՛ս ըստ աւուրց Նոյնի յազգէ մինչև
յազգ ,
'ի պատիւ ազգիս որոց քեզ ողջոյն պերճ փառաց տան
դասք ,
Թէ և հեռացեալ , այլ յուշած զմէնջ կա՛լ հոգ պաշտ
պանեա ,
այժմ առ յապայն զայս մաղթեմք 'ի քէն՝ Ո՛ պարծանք Հայկայ .

Ներեփա Եղլեսղեան 'ի Խորասանէ .

ՔԵՐԹՈՒԱԾ · ԻԶ.

Շնորհաւորութիւն տօնի Աղայ Պաղարու Յովակիմեան ·

Դիւցազնափայլ Ազնուածնունդ

մեծ. Իշխանապետ ·

Ոսկական անքատակ մեր անձանց բարերար ,
արժանի դրուատոց գթառատ խնամատար ,
ահա այժմ եկն եհաս մեզ վայրկեան ցանկալի ,
յոր տօնել մարթասցուք զքոյդ հանդէս բերկրալի ։
Հրաշափառ Տօնդ այսօր տայ առիթ դիմելոյ ,
առ ձեզ և ձեզ զսէր որդեգրացս յայտնելոյ ,
զի իբրու բորբոքեալ անաղօտ արեգակն ,
միշտ վառեալ կան 'ի մեզ Ձեր շնորհք անքանակ ։
Ձեր անզոյգ բարութիք գետօրէն մեզ հեղեալ ,
շնորհք սէր երախտիք որով եմք պաճուճեալ ,
ստիպեն զմեզ սիրով զոհ Մեհիդ նուիրել ,
և զփառս Ձեր անուան յընդհանուրս ծաւալել ։
Անջատեալ յընտանեաց 'ի տանէ հայրական ,
'ի Ձեզ եթ գտաք զհայր զդայեակ մայրական ,
Ձեօք բացան խաւարեալ պատուհանք մեր մտաց ,
Դուք եղէք մեզ աղբիւր իմաստից գիտութեանց ։
Քաջուք հոգացայք որդեգրացս եղկելի ,
անձրևեալ յանխնայս զխնամս ըստ ուետնի ·
հայրախնամ սրտագէան զՁեզ յերկրի մշակեաց ,
պարգևել 'զղձալի զայս վիճակ տնանկաց ։

Կեա՛ց յերկրի և զիւրաւ վե՛հ անուանդ ժառանգեա՛ ,
ըղձերմունս քարոզեց յազգ մարդկան սերմանեա՛ ,
մեք յաւէտ զբազուկս 'ի յերկինս ամբարձեալ ,
մաղթեսցուք կեանս անկէտ Իշխանիդ պանծացե՛լ .

Սղէա ԷԷԾԱՆԷԷԿԷԱՆ 'Ի ՄՈՍԿՈՎԱՅ .

ՔԵՐԹՈՒԱԾ. ԻԶ.

Շնորհաւորութիւն տօնի Նոյն Պօղոսի Յովակիմեան .

Ազնուածնունդ Իշխանապետ
Ողորմած Բարերար մեր .

Գովեսցեն զբարձրեալն երկրայնոցս բերանք ,
հնչելով կաթոգին ձայնիւ զերգ խրախճական ,
զի այսօր բարեբուղխ մեզ աղբիւր հոսեցաւ ,
Դիւցազնիդ ձայն տօնի ծաւալեալ սփռեցաւ .
Ըստ որմէ որդեգիրքս զերկրութիւն մեր սրտից ,
հուպ անցեալ նուագել 'ի տօնիդ ցնծալից ,
մատուցեալ ընդ առաջ հանդիսիս յասպարեզ ,
նուագել տաղանդեաւ ըղձալից խնջոյս :
Դիւցազուն հերոս մեծ անկշիռ երախտեօք ,
անհամար հայրական ու անանկս պարգեօք ,
պճնեցեր զանուն Ձեր 'ի գովեստ և 'ի փառս ,
յոր այսօր հանդերձ քոյ ընտանեօք պերճ խնդաս .
Քոյ հրոյն ազգասեր 'ի Ձեր սիրտ բորբոքեալ ,
նոթձեաց զայս առնել զորբ ըղմանկունս երանել ,

որոյ սակս յեռանդէ զՁեր շնորհս արծարծեմք ,
պատարագ գոհութեան Դիւցազնից նուիրեմք .
Յորոց կայ կարկամի մեր բերան անարժան ,
առ զդարձ կարողել տալ ձրից աննման ,
որոց չափ բազմութեան ոչ եղաւ ոչ համար ,
զոր թուել մի առ մի է ՚ի վեր քան զմեր կար ,
Յարարչէն համայնից ջերմ հայցեմք մաղթանօք ;
բարեկեանք ձօնել Ձեզ հանդերձ վեհ ընտանեօք ,
անաղօտ նշուլել ըղձլապտեր Ձեր կենաց ,
՚ի ջահել զխաւարուտ ազգիս և որդեգրաց .

Պօղոս Բէժանբէկեան ՚ի Մոսկուայ .

* * *

ՔԵՐԹՈՒԱԾ . ԻԲ .

յԱստուածատուրէ Գէրբաստանն Լշխաղորեանց .

Յորժամ կաց հայեաց Արմատ Հայկազանց ,
՚ի պտղաբերեալ յորդիս այս երկանց ,
ո՛ւր արդեօք այժմիս ցնծութեամբ յանգչին ,
ի՞մ արժանացեալ վիճակի բախտին ,
ո՞չ յաղջամղջին յանդունդս մնոտեաց ,
՚ի դաշտ լուսափիւռ յեթերս երկնայնոց .
Մի՛ ննջեր զարթի՛ր գնա՛ յայրարատ ,
տե՛ս զբարեկից զանտառս բացատ ,
ուր դատարկութիւն ախտ ամօթալի ,
տիրէր ամենուստ անդէն յորդառատ ,

տեսցես անդանօր այգիս բարելի ,
փթթեալ ծաղկեցեալ ծաղկօք քաղցրալի ։
Բայց բա՜բէ զանձամբս հիացումն պատէ ,
ուստ յիմում ճառի զեղու. կաղէ ,
զի բանան ահա հանդէպ իմ աչաց ,
այն դրունք նախկին հին ժամանակաց ,
յորս սոպուռէք իբր ալիք ծովու ,
ունէին 'ի կապ զմիտս մարդոյ ,
մերկացեալ համակ , որ ինչ մարդկային ,
չերեւէր այլ ինչ , բայց գազանային ։
Ապա աշխոյժ քաջ բանաստեղծական ,
գերազանց ոգի այժմ և յաւիտեան ,
առ քե՛զ ձայնեմ աստ յանձին պարտասեալ ,
հանգի՛ր 'ի յերգ իմ այժմեն մերկացեալ ,
զի ուր քոյդ ճաճանչ աչաց խաւարելի ,
իբր արեգական յայտնեալ ցայտեսցի ,
անդէն նոր լուսովդ համակ փայլեսցես ,
զանքննին 'ի ճառ քննութեան արկցես ։
Բա՛յց զվարագոյր աղջամուղջ մտաց ,
բա՛ց զի քննեսցեն խելք մահկանացուաց ,
ո՜ զխաւարին հայոց մնայր մթութեան ,
'ի լոյս անստուեր փոխէն գիտութեան ,
յայտնեա՛ց յայտնեսցի՛ն գործըք գերազանց ,
որք են ընդհանուր հրաշք տիեզերաց ։
Ո՜չ մեք երբեմն 'ի թանձրամածեալ ,
'ի մութ խաւարի աստ անդ թափառեալ ,
դառն արտասուօք զանձինս ողբայաք ,
և ընդ մեր վիճակ նզովս կարդայաք ,
մերկանդամ իբրու որդին անառակ ,
'ի հօտի սովեալ հաց որոնէաք ,

ո՞ր իյէ երկիրն ուր լոյսն ագանի ,
յո՞ր ականց աղբիւր Գիտութեան բղխի .
Բայց շնո՛րհ երկնից 'ի ձայն ցնծութեան ,
գտաք աստ զՏուն Եղիազարեան ,
որք տեսեալ զսուգ տանս Արմէնի ,
փութացան լնուլ զփափագ մեր սրտի ,
անցեալ քան զչափ բաշխեն համայնից ,
զլուսաւոր գանձ զգոհար իմաստից .
Նորն այն Մովսէս դիւցազն Յովհաննէս ,
կանգնեալ զճեմարանս զայս մեծ քաջապէս ,
փրկէ զիսրայէլ 'ի փարաւոնէ ,
ցուցեալ ճանապարհ յերկինս աւետէ ,
Յովակիմ՝ իշխան Յեսու պանծալի ,
լնու զբաղձանս ոգւոց ծարաւի .
որոյ Զաւակունք ջանիւք ճգանօք ,
պսակեն զՀայս գիտութեան փառօք ,
բորբոքեալ սիրով յազգ իւր խաւարեալ ,
իբր 'ի կարկեհան փոխեն շողշողեալ .
Հի՞մ՝ ապա մեզ այժմ 'ի Մուսայց տանէն ,
բաղձալ դիմել 'ի հուշակեալն յաթէն ,
զի այս Ճեմարան քաջազն Իշխանաց ,
գեր քան զհինն աթէն գտեալ գերազանց ,
անզոյգ Հեղինակս իմաստուն սոփեստս ,
ազգ ազգ Գիտութեանց պատուական Արհեստս ,
յինքն տաւաղեալ բերկրալից դիմօք ,
գագաթ բարձրացեալ սիգայ պարծանօք .
Վասնորոյ և դուք մանկունք հայկազեան ,
լուեալ զձայն փողոյ տանն Ղազարեան ,
թողէ՛ք այդր զձեր խաւար բնակարան ,
փութացէ՛ք յայս նոր նահանգ Գիտութեան ,

ձեզ սատ պատրաստեալ եղբարք ազգակից ,
դաբնեդեայ պսակ 'ի Հաստչէն ընաւեց ,
դիմեցէ՛ք փութով սատ 'ի վայելել ,
յանդին և յանզոյգ ձիրս Պիւցանեից ,
Ո՛ի իւ՞ մարթացեն մնալ միտք մարդկան ,
անհետաքրքիր առանց ցանկութեան ,
յորժամ յանդիման լուր աչաց փայլին ,
բիւրաւոր բարիք Պիտուեց անդէն .
որք միշտ անյապաղ իբր դաստիարակ ,
ստիպեն զմեզ ջանիւք բացարձակ ,
յարձակիլ փութով գտանել հոգւով ,
և սեփականել անձին սուրբ սիրով ։
Իսկ դուք ո՞ մուզայք երգիչք Պառնասեան ,
ընկալեալ պարգևս 'ի լոյս անպայման ,
փութացէ՛ք տաւղօք երգօք տամնաղի ,
ալէլուել զայս Իշխանս հանդիսի ,
զի ի՞ւ զօրեսցուք մեք հատուցանել ,
զայս պարտս անվճար շնորհեալ մեզ ձրի ,
բայց եթ բանալով զպատուհան սրտի ,
ընծայել նոցա զպտուղ բարելի ։

Արկէս խորանանեան 'ի խորանաւէ ։

⁂

ՔԵՐԹՈՒԱԾ . ԻԹ.

Յածաղոյգ եղէար Սեհանեայ փեարց Եղէապարեանց .

◆

րահանգողք հողեկան վարժուեց աղքանալեանս դրոշի , կոթողք անմահուե՟ հողեկցորդ եղբարք , հաստարմատ տունկք կենդանուե՟ , սոփերք հողեմատեանք , և սիւնք հաստատուե՟ հիմանց տանս Թորգոմայ , նշոյլք անթարգման մեծամեծարար բարերարուեց ձեր ը՟ ա՟մ տիեզերս հրաշազարդեալ շրջափայլեն լուսապայծառապէս , յորոց անջնջելի յիշատակարան անմահապարգև Նեմսրանս , բիւրակերպեան ծաղկամբք դիտուեց փթթեալ բողբոջեալ , կաթնասուն ստեամբք ջամբեալ դիեցուցեալ մանկանց զճաշակ մ՟բուե , զթխուրաթեք խորհուրդս հասուցեալ հմտեցուցեալ , և զանբանական միտս մատաղատունկ մանկանց բժշկաբաշխ աջով երասանակակոծեալ , ը՟ որմէ և անթիւ գըթուէք առատապարգև տեարցդ , անկշռելի համայնահաս ողորմուէք ձեռաց , անհասանելի բանական մըտաց , դերածայրեալ քան զչափ և քան զկոպար , 'ի վեր քան զերկիր և անդր քան զծով , յոր կարկի լեզու մեր և գրիչ , ըմբռնեալ կասեալ դեգերեալ , զի 'ի նախանձ անկշիռ բարուեց բերեալ արժանի արարեք զմեզ կաթին և ռետնոյ քաղցրուե՟ հոգւոյ , կենդանաստեղծեալ զմեռելապատկեր միտս մեր ը՟ պատկերի ա՟յ 'ի մարդ կատարեալ , առ որ յօձան հայթայթանաց 'ի սակաւաձեռն տրխուր խնամոց , հոգեշարժ քնարիւք ներբողել բարեբանել զՀովիւսդ ունայնասովոր հօտիցս Հայկազեան , յաւերժել , Կեցցե՛ն կեցցեն անզուգական բարերարք մեր , կեցցեն մնասցեն յամս բիւրաւորս զօրէն արեգական լուսաւորեալ զաշխարհս Հայոց արփիափայլ ճառագայթիւք իւրեանց , կեցցեն անսասան յորդւոց յորդիս , յազգէ յազգ յաւերժայիշատակ ընտանեօք , 'ի ծաղկունս ծիրանեօք, 'ի լուսաբորբոք և յանշէջ լապտերս յերկրի , 'ի փառաբանութեան անուան իւրեանց և 'ի պարծանս Արամեան ազգիս։

ԱՂԱՉԱՒՈՐ ԷՄ ՄԻՐՃԷԱՆ 'Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ։

ՔԵՐԹՈՒԱԾ . Լ.

Երգ Մովսէսի

Յետ անցանելոյն ընդ ծով կարմիր .

(Ելք . ԺԵ)

Երգեցէ՛ք հզօրին որ փառօք փայլեցաւ ,
Հրամայեաց անդնդոց սուզան կառք արք անբաւ ,
Ո՛ Ած դու Տէ՛ր իմ անվախճան անսահման ,
Դու եղեր դու լիցիս և դու ես իմ պաշտպան ,
Տէ՛ր գլխոյս ա՛ռ ընկալ զգովեստ հոգելից ,
Զգովեստ հարց իմոց զօրհնութիւն զոհ սրտից ,
Զի ով այն կործանօղ սոսկալի մեծ մարտից ,
Եւ ով այն հատանօղ ըզգլուխ հպարտից ,

Նա Արքայ արքայից Տէր մահու և կենաց ,
Նա ասաց և սուղաւ խումբ մերոց թշնամեաց ,
Ո՞ւր քո զօրք ո՞ւր քո փառք խստասիրտ անօրէն ,
Ո՞ւր քո կառք զօրութիւնք քո պսակ ոսկեղէն ,
Ո՞ւր են խումբք ընտրելոց քո ազգին հատուածոյ ,
Հալեցան իբրու մոմ առաջի Աստուծոյ ,
Ընկղմեցան խոր յանդունդս 'ի կարմիր ծով ալեաց ,
Բազուկ տեառն 'ի մի՛տ առ զչարուն քո պատժեաց ,
Ո՛վ աջ Տեառն Աջ հզօր 'ի ժամուս սքանչելի ,
Զօրութեամբ փայլեցար 'ի խորհուրդ սոսկալի ,
Քո միայն ձայն եհար զթշնամիս երկիւղիւ ,
Բարկութիւն քո եկուլ ըզնոսա մեծ ահիւ ,
Դու ցասմամբ շնչեցեր 'ի ծով անդր 'ի յամպոց ,
Հերձան ջուրք պաղեցան և ալիք 'ի խորոց ,
Իբրու որմ ամբարձեալ հաստատուն կանգնեցան ,
Ընդ աջմէ յահեկէ պարուրեալ վերացան ,
Թշնամին ե՛կ ասէ երթիցո՛ւք և հասցո՛ւք ,
Ե՛կ առցո՛ւք ըզաւար ե՛կ հարցուք փշրեսցուք ,
Յագեա՛ սո՛ւր իմ յարեան թշնամւոյ ապիկար ,
Տիրեա՛ դու ձեռք նոցա զօրութեամբ չարաչար ,
Զայս ասաց թշնամին , շնչեցեր զհողմ քո ,
Բացան խորք անդնդոց ալեսաստ յորդ ջրոյ ,
Սուզան անդ մահահեղձ թշնամիք մեր կենաց ,
Ո՛ւր ա՟ծք կռապաշտից , ո՛ւր ա՟ծք այլազգեաց ,
Անդ բագինք սնոտիք յիւր շքեղ մթութեան ,
Ելցեն քեզ ընդ առաջ Տէր Տերանց յաւիտեան ,
Սուապարիշտք հողեղէնք միշտ ծառայք կուռութեան ,
Յայտնեսցեն յաչս մեր 'ի կրկին տեսութեան ,
Ո՛վ իցէ նման քեզ Տէր Ա՟ծ բարերար ,
Սքանչելի ես փառօք հրաշիւք մեծարար ,

Դու զքո ձգեցեր զբազուկ զօրաւոր ,
Եւ երկիր մեր եկուլ զթշնամիս յանցաւոր ,
Դու հեզ քաղցր աստ եղեր առաջնորդ 'ի շաւղի ,
Յարքունին քո որդւոց գտեալ քեզ սիրելի ,
Յարեաւ լուր ընդ տեղիս ամենայն քո անուան ,
Ազգք հզօրք սարսափմամբ քո ձայնի արդ անսան ,
Բարկացաւ Փղշտիմ յիւր 'ի շուք մեծութեան ,
Եւ երկունք ընկալան բնակիչք Եդովմեան ,
Յայն ժամու ցնորեցան և իշխանք Մովաբայ ,
Հալեցան ամենայն բնակիչք Քանանայ ,
Առաքեմ առ նոսա զքո երկիւղ 'ի վերուստ ,
Կարկառեմ զբազուկդ վրեժխնդիր 'ի հեռուստ ,
'Ի համայն տիեզերս պակուցեալ սասանեալ ,
Թափեմ ահ և երկիւղ 'ի հոգիս վիմացեալ ,
Իբրու ժայռք 'ի լերինս 'ի սկզբանց բևեռեալ ,
Կիմասցին անզգայ և անշարժ դժգունեալ ,
Մնասցեն չարասիրտք 'ի վայրս հեռաւոր ,
Մաշեսցին յանձկութեանց վրիժու միշտ անզօր ,
Ժողովուրդ քո ընտիր սիրելի 'ի սրտէ ,
Երբ յերկիրն խաղաղիկ նոցա այժմ գնասցէ ,
Առաջնորդ լե՛ր նոցա միշտ աջովդ պահպանեալ ,
Օ՜ի փառօք ծաղկեսցի՛ աճեսցի՛ ճոխացեալ ,
'Ի լերինն քո պայծառ սուրբ ծաղկօք զարդարեալ ,
Ապրեսցի 'ի խորանս սրբութեանց երանեալ ,
Քո բազուկ քո խնամք 'ի մէնջ մի՛ հեռասցի ,
'Ի պատիւ և 'ի փառս յաւիտեան մեր ազգի ։

Աղեքսանդր Եւդոկիմեան յԱստրախանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ. ԼԲ.

'Ի Հարուածն Եգիպտացւոց.

(Երեմ. ԽԶ.)

Առէ՛ք զաղեղունս զսայրասուր դեղարդ ,
զրահու քօղարկեալ զլանջս զինազարդ ,
հրափետուր 'ի գլուխ դիք ձեզ սաղաւարտ ,
բացէք դրօշակս զքաջութեան աւանդ ,
առնազէն վառեալ հանդոյն փոթորկի ,
ալեսասատ հարէք զզօրս ոսոխի ,
դարձուցէք 'ի կուրծս նոցին զսուսեր ,
մտեալ յայն ջոկն մահահրաւէր ։
Բայց զի՞նչ զարհուրեալ զձեզ նշմարեմ ,
յետս նահանջիլ քաջաց յետս ընդդէմ ,
ծածկեալ 'ի դիմաց անմեհեր զօրաց ,
զինուոր համայն ընդ զօրավարաց ,
խուսէ և ո՛չ յետս հայիլ դէթ զօրէ ,
ամենուստեք մահ երկիւղ տարածէ ,
զերկիր գլխովին արեամբ արբուցեալ ,
ձեզ առաջնորդէ երկիւղ հալածեալ ։
Ո՞ւր նժոյգք թեթև զձեզ փախուսցեն ,
զի՞նչ վահանք ձեռաց ապաստան տացեն ,
զի հարցէ դաշնակ զգրահս պղնձի
և կամ զերկաթեայ զսաղաւարտ գլխի ,
իսկ 'ի հանդիպել թշնամւոյ գնդին ,
զօրք ձեր զարհուրեալ 'ի փախուստ դարձցին ,

յեզր Եփրատայ հարուածովք ջարդեալ ,
իբր յարդ մանգաղաւ յերկիր անդ անկցին :

Ո՞վ է սա 'ի դաշտ մարտի սաւառնեալ ,
յորդառատ գետոյ ուղխից նմանեալ ,
առեալ 'ի հովմանց զհարկ արժանի ,
անցանէ ընդ եզր խորոյ սահմանի ,
ծածկէ զծործորս լերամբ կոհակաց ,
հասեալ 'ի գագաթ բարձրաբերձ լերանց ,
զկարծր ամբարտակս հարկանէ տապալ ,
ծովու զծոց փոքր իւր հաւասարեալ :

Օ՜ պատկեր Եգիպտոս գետոյ ցուցանէ ,
զօրաց նորին գունդ զծով անդամ պատէ ,
իբր աւազ առափն ծովու տարածեալ ,
ոնպէս լեգէոնք սփռեալ ծաւալեալ ,
ձայնեաց նա երթայց զերկիր ծածկեցից ,
զթշնամեաց քաղաք յումպ կործանեցից ,
սրտմտեալ զնոսա սրոյ ճարակ տաց ,
Ո՞վ զայնս փրկեսցէ յիմոց 'ի ձեռաց :

Յեր առաւօտու արփւոյն բոցավառ ,
ո՛ Եթովպացիք լերուք զինավառ ,
ո՛ Լիբէացիք ճախրեալ դիմեցէք ,
'ի դաշտ Մրեսի անդր փութացէք ,
իսկ դուք Լիդացիք մի՛ կայք դադարեալ ,
աղեղք լայնալիճ մինչ չեն թուլացեալ ,
զվիրագն 'ի բարձանց յերկիր կոխեցէք ,
ամպովք ձեր նետից զնոսա պատեցէք :

Եհաս առ ժամայն օր վրէժխնդրութեան ,
յորում Բարձրեալն եւ յայց քննութեան ,
փայլակնածաւալ սուսեր 'ի յերկնից ,

կերիցէ զզօրս նոցին չար գնդից ,
կարմրերանգ արեամբ լիով յագեցեալ ,
բանակ թշնամւոյն ը̃ բուամբ նուաճեալ ,
լիցի պատարագ անմահ Տեառն երկնից ,
առ ափն եփրատայ գետոյ ուղխալից ։

Դուստր Եգիպտոսի յահէ սարսափեալ ,
ե՛րթ ՚ի գաղտագ փութով խուճապեալ ,
զի ՚ի տխրագին թշուառ վիճակի ,
ո՛չ գտցես դարման աստ քում՝ աղետի ,
վհկութ̃ վշտաց ո՛չ զօրես օգնել ,
զգլուխ քո վիրօք եթէ տեսցես ծածկել ,
կատաղեալ ներքուստ զձեռս ճմլեսցես ,
զդիդ գիշատեսցեն արծիւք սրատես ։

Ազինք տեսանեն զքոց սուգ դիմաց ,
յերկիր ծաւալին ձայնք հառաչանաց ,
զգլուխս իւրեանց մարդիկ շարժէին ,
՚ի միմեանց միջի զքեզ նախատէին ,
զքո գոռոզութ̃ի փոշի քո կոխեաց ,
զփառաց քոց ճաճանչ մէգ նորին պատեաց ,
դարձոյց յանապատ զերկիր լուսազգեաց ,
զքաղաք քո փարթամ՝ կիզեալ հրդեհեաց ։

Յարութիւն աւագէանց ՚ի Նախիջևանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԼԲ ·

'Ի հարցմանէն Այ առ Յովբ ·

(Յովբ · ԼԸ ·)

Ո՛վ ես դու որ նանիր 'ի տրտունջ զԱստուծոյ ,
քանքարատես քրթմնջեալ զնորուն խնամոյ ,
լո՛ւր ձայնին թէ որչափ 'ի նախանձս սոսկալիս ,
առ Յովբն այն երջանիկ սպառնայ 'ի յամպոյ ,
Ընդ մրրկաւ անձրեւաւ կարկտիւ փայլելով ,
և ձայնիւ իւրով մեծ զորոտումն խզելով ,
ահագին բարբառով զերկինըս վկանդէ ,
պատասխանի տալ ինքեան 'ի հանդէս զնա կոչէ ,
Ժողովեա՛ զմիտս քո պնդեալ զմէջսդ լե՛ր այր ,
պատրաստեաց 'ի լսել զհարցուածս արարչի ,
Ո՞ւր էիր մինչ հիմունս երկրիս այս հաստատեալ ,
անսասան կանգնեցի 'ի կեդրոն աշխարհի :
Ո՞ւր էիր 'ի բաշխելս զլոյս ճաճանչ ջինջ արփւոյ ,
'ի դնելս զլուսին յաղջամուղջ գիշերոյ ,
'ի ձուլել ձեռամբ իմ անկարծուստ զբիւր աստեղս ,
Ո՞ւր էիր 'ի կապելս զօդն թոյլ է հողոյ :
Ո՞ արդեօք զծովն մեծ յիւր ափունս պարփակեաց ·
և խորոց անդնդոց սահման եդր շուրջ կանգնեաց ,
ո՞ եբաց զպատեալն մուայլիւ զխորխորատ ,
զմթին մէգ ձեռամբ անդուստ տա՛ր ո՞ մերժեաց ,
Կարացե՞ս զարեւուն զդնացս ընդհատել ,
զարտօրայս ցամաքեալս անձրեւօք առոգել ,

նաւորդաց պարգևել զհողմ յաջող անկարծուստ ,
և յանքոյթ վայր խաղաղ զյուսաբեկն ազատել :

Ընդ բազմուղի անզննին ճանապարհս զանազան ,
անցե՞ր դու ը՟ յատակ ծովուց ջուրց խորութեան ,
բարապանք դժոխոց սարսեցի՞ն զքեզ տեսեալ ,
կամ թէ դու իմացա՞ր զչափ նոցա լայնութեան :

Կուտակեալ փոթորկաւ զթխատիպ ամպս 'ի վեր ,
զօրեցե՞ս զարեգակն ըսքողել որ յեթեր ,
կամ լիցե՞ս խելամուտ զթափանց օդ թանձր առնել ,
զանձրև ը՟ փայլական յանդոյից սառեղանել :

Զահաւոր կայծակունս ո՞չ ես սաստ փայլեցի ,
յերկնահաս սիրտ լերանց զահ և դող յարուցի ,
զքառաթիւ ծագս երկրի շարժեցել զերդ փետուր ,
յերկրածնաց սիրտ հոգի զիմ ցասումն արբուցի :

Ո՞յ արդեօք հանճարով այն թռչուն յօդս ճախրէ ,
տարածեալ զթև ը՟ հարաւ ակնարկէ ,
որ վերուստ զիւր զզոհ տեսանէ 'ի սուր ակն ,
զթռչունս այդչափ սուր դո՞ւ ստեղծեր , ո՞ բլշակն :

Արթացե՞ս մաքառել ը՟ բեհմովթ գազանի ,
որոյ տուսն իբրև ձիգ ուղղաբերձ բուն նոճի ,
ոսք երկաթ կողք պղնձիք զօրութին 'ի սրտի ,
խորտակեա՛ թէ կարես զգլուխ նորա վիթխարի :

Հայեա՛ց արդ յովկիան 'ի վիշապն լևիաթան ,
արարեալ խաղալիկ հրեշտակաց իմ , որ կան ,
վերացո՛ թէ զօրես զնա կարթիւ 'ի ջրոյ ,
կամ դի՛ր դու զպախուրց յանձռունին 'ի բերան :

Դու փունջեղն ցոլմունք բորբոքմանց ծաւալին ,
բերանոյն քոյ և շանթք հրաբորբոք անկանին ,

նորա անձն կայծակունք , զօրութիւնն 'ի փողի ,
զօրեացէ՞ ոք ը՟ այս մարտնչել վիշապի ։
Ի կանգնելդ զկարկառ ընդարձակ աշխարհի ,
յըստեղծելդ 'ի հողոյ զմարդ ը՟ իմ պատկերի ,
է՞ր արդեօք բանականդ լուռ կայիր զերդ պաձար ,
զի զքեզ յայնժամ գէթ այլազգ ինչ հնարէի ։
Արդ խորհեալ մահացուդ քո դատմամբ զայս համայն ;
զզօրութիւնն արարչին ձևացո՛ յանդիման ,
տա՛ր վշտաց համբերեա՛ կա՛լ զյոյս առ Աստուած ,
յոգի զուարթ անթախիծ ժտեա՛ միշտ զխնդրոյն բան ։

ՍՏԵՓԱՆ [illegible] 'Ի ՆԱԽԻՋԵՒԱՆԱՅ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԻԳ ·

Նկարագրութիւն Աստուածային Շնորհաց ։

Բազմապատիկ փայլատակիւն լուրջ կարմրերփեան ,
ոլորեալ յամպս շողշողեցաւ հրաշազան ,
եռապատիկ զհետ որոտ հոլովակի ;
ճայթմամբ սաստիկ բացեալ հնչեաց սոսկմամբ 'ի լի ,
հոլանեցան սահանք օդոց համածաւալ ,
կարկուտ անձրև տեղան յերկնից ճոխ կայլակեալ ,
իսկոյն որոտ լռեաց ընդ որ և խաւարութիւն ,
և սփռեցաւ ամենուստեք անդորրութիւն ,
մատն Աստուծոյ զծիածան ջինջ կենարար ,
յամպս խոնաւ նկարագրէ յերփն հրաւառ ։
Ո՛վ մարդ լո՛ւր ինձ 'ի յաջողուածս ամբարհաւաճ ,
'ի մէջ հոգոց վհատութեան միշտ անձնահաճ ,

ընդ տեսչութիւն տրտունջ լինիս յանձնապաստան,
կամ ՚ի ծածուկ թախծիս յօրհաս քո յաւիտեան,
հայեաց և տե՛ս զխաղաղութեան նշան պայծառ ,
է մէջ երկնից յերկիր ծագեալ հրաշափառ ,
զի մինչև ցե՞րբ Որդի մարդոյ է երկրի համայն ,
ո՛չ հաշտեսցի ինքն ըստ ինքեան միանգամայն ,
քեզ այս նշան լիցի աւանդ խրատատու ,
որում սրտիւ ՚ի յաւիտեան լե՛ր յանձնառու ։
Թո՛ղ ճախրեսցէ հոգիդ անմահ սաւառնացեալ ,
բարձրագոյն քան զորոտ զփայլակն ջինջ նշուղէլ ,
՚ի բնակարան երկնախմբից յայն անաղօտ ,
զի՞նչ թուեսցի յայնժամ Երկիրս մշտակարօտ ,
՚ի մէջ բազում լուսնոց արփուց ճաճանչափառ ,
նոր աշխարհաց երկրի անհուն գեղեցկափառ ,
բո՞րբէ իբրու շամանդաղ մանր յերկիր անկեալ,
որոյ անզօր և թոյլ շողիւն ստուերացեալ ,
՚ի ջինջ փայլման Լուսնոսի անդ ընկղմի ,
կամ ՚ի յամպս երկնից կապոյտ սոսկ շիջանի ։
Եւ զի՞նչ արդեօք Հերոսք երկրի քաջախրախոյս ,
զորոց բոլոր ազանց երկրի լուրջ բարեյոյս ,
ձայնէր անլուռ փառքն անվախճան մեծաբարբառ,
յաւուրս իմոյ անգիտութեան որ անհանճար ,
այն ինչ միայն գունդ երկրային իմաստասիրէր ,
համարեցի ահա աստուածք երկիւղաբեր ,
ահա զաւակք որոտընկեց այն Դիոսի ,
իսկ իբրև զաչս մտաց ՚ի լեառն ամբարձի ,
անդ զիմ Ա՟ծ որոտընկեց ակնարկեցի ,
անդ երևեալ ցուցաւ ինձ մարդ մահուան դերի ․
Այնպէս աւա՛ղ ընդէ՞ր վաստակք և տառապանք,
ընդէ՞ր մարմնոյ մահ սոսկալի և չարչարանք ,

Թագաւորեն յայսմ փոքրիկ հիւղի անզօր ,
որ անուանի 'ի մէնջ Երկիր սին անցաւոր ,
իշխե՞ն արդեօք ո՞չ հեծութիւնք անզօր շրթանց ,
յայնր վերայ սողեալ որդւոց մանրիկ ժժմանց ,
զոր մեք կոչեմք ստեղծեալ էակ մ՟դ Բանական ,
իշխե՞ն արդեօք ընդ որոտումն այն կայծական ,
որ դղրդէ զհաստատութիւն եւ եթերաց ,
առ սուրբ աթոռ Տեառն հասանել անդ լուսազգե՛ց·
‘Նահանջեցէք ո՛ Յոյնք Ճարտար լալ աւաղել ,
և առաջի բարձանց երկնից յիմաստ պարծել ,
զուգ ձեր ունայն է լոկ մանկան մտաղածին ,
իմաստութիւն ձեր կուրութիւն բոլորովին ,
ո՞վ զօրեսցէ արդեօք 'ի մէնջ յական քթթել ,
զբովանդակ ծագս աշխարհի քաջ նշմարել ·
'ի հիւլէէ ցՍերովբէս լուսաբնակ ,
կամ հասանել մտօք յԱ՟Ծ յէն անքանակ ,
որոյ հանդէպ տարիք ընդ դարս հազարաւոր ,
են ո՛չ այլ ինչ , բայց եթէ օր մի անցաւոր ։
Արդ զննեցէ՛ք զբնութիւն իմաստասէրք ,
յերկիր անկեալ են հատք սերման այն պտղաբեր
ո՛չ ծնանին 'ի նմանութիւն ծառոյ տնկեալ ·
Թէ ո՛չ մատչին 'ի փտութիւն ապականեալ ,
ո՞վ ճանաչէ զշղթայ գործոց բաշխաց վերնոյն ,
զներգործութեանց և զպատճառաց միահաղոյն ,
ո՞վ զօրեսցէ զայն քաջ քննել , զի պղպջակ
գտեալ յեզեր ջրոց ծովու լայնակայլակ ,
ցուցցէ զշաւիղ առ քննութիւն խորին մտաց ,
զիա՞րդ զհուր շիջուցանել զերկնատարած ։
Միայն բարձրեալն գիտէ Ա՟Ծ որ անսահման ,
ընդէ՞ր սաղարթ թափի ծառոց զարմանազան ,

և կամ Լուսոյ հրաբորբոք Լուսնա լերին ,
անդ գետոյն բղխէ կիզեալ յերկրէ յերկին ,
թ՚ է՞ր կործանի ձեւամբ մանկան դեւահասակ ,
բոյն փոքրագոյն թռչնոց երկնից քաղցրանուագ ,
կամ թէ ՚ի հող և ՚ի փոշի իսպառ դարձեալ ,
անդ անկանի մեծն Նեղոս փառազարդեալ ,
բայց մեզ ձօնեալ է զօրութիւն միայն գիտել ,
զի ամենայն որ գոյ այնպէս պարտի տեւել ։

Զինչ բարի գործէ բարին միշտ զօրաւոր ,
սակայն և գոյ մարդ յաշխարհի յայսմ անցաւոր ,
Է որ չարիք գոն ՚ի յերկրի ՚ի հոլաթև ,
սակայն և գոյ մարդ յաշխարհի տէրապարգև ,
գոյ հանգունակ և գործ բարի առաքինի ,
փականք դժոխոց դրախտի առ մեզ են ցանկալի ,
համայն գործոց ճահողութիւն արժանաւոր ,
ահա՛ կշիռ բարեաց չարեաց աղատաւոր ,
Ո՞չ թարց այնր հրեշտակին անգամ այն լուսաձեւմ ,
ո՛չ իսկ զօրէր լինել երկնից հաճոյադէմ ։

Հարեանցեալ թո՛ղ հեռասցին ամպք թախծունք ,
Ո՛վ մահացու ՚ի քո գլխոյ թշուառական ,
և ճառագայթ յուսոյ հեղիկ ճաճանչափայլ ,
ծաւալեսցի ՚ի վերայ քո երփն շողշողեալ ,
՚ի մի՛տ առ զայն զքո վիճակ բարեբաստիկ ,
որ սպասէն քեզ ՚ի յերկինս ահաւանիկ ,
առ վայրկեան մի արագընթաց ո՛չ աւելի ,
հրաւիրեալ ես յայս աշխարհ տաժանելի ,
զի կեանք երկրիս առաւօտու է արշալոյս ,
անմահութեան քո սուրբ հոգւոյ արփիալոյս ։

Յարութիւն Աստգէանց ՚ի Նախիջեւանայ ։

Ալիշան

ՔԵՐԹՈՒԱԾ · ԼԳ ·

Վիճակագրութիւն Մարդոյ ։

Չնչի՛ն մա՛րդ զի՞նչ է քո կեանք ,
  Հայեա՛ց գտցե՛ս մի լոկ վայրկեան ,
Ծագեցար 'ի լոյս աւուր
  անդէ՛ն կորեար դու առ ժամայն ,
Ընդ յանե՛լ 'ի խաւարէ՛
  օրհասականդ ըզ քեզ կոչեաց ,
'Ի մտանե՛լ ըզ քեզ միա՛յն
  տառապանաց և փորձանաց ,
Իբրու լո՛կ ստուեր մարմնո՛յ
  զոյգ ընդ լուսոյ և դու անցցես ։

Երբ խաղե՛ող աւուրք կենացդ
  միշտ աղմկեալ և տանջանօք ,
Իբր տերև միշտ փոթորկեալ
  վի՛ճակդ անձին ամենահոդ ,
Մարտնչի՛լ ինքն ընդ ինքեան
  'ի բուռ վիշտըս տառապանաց ,
Սուզանիլ առ տարաբախտ
  յալեկոծեալ 'ի ջուրց ալեաց ,
Յայնս դու քեզէն աւթե՛ս
  զահեղ ըզմահ արժանահաս ։

Ի թո՛յլ քո՛ւմ տկարութեան
  անպաստան և աղիկար ,

Տարածիս հանապազօ՛ր
ո՜վ դու նժդեհ օտարական ,
Զի՞նչ են քո իմաստք և խե՛լք
կամ զի՞նչ քոյին սուր ճանաչմունք ,
Եթէ ոչ շնչմունք հողմոյ
յահուր կենացդ ճա՛հ հետևմունք ,
Ո՞ւր գտցե՛ս փանաք փոշի ,
ըմբոստ ընդդէմ քում արարչիդ ,

Դու յանդուգն մտածութեամբ
մինչ՝ի յերկինս ճախրել ճգնիս ,
Եղևի՛նդ գետնատարած
ստոր ամպոց նստել խորհիս ,
Բայց խլեալ արմատաքի՛
խաւարասէր որդանց աւար ,
Ո՞ւր զարդիս արմատն քո՛
յայսմ հետէ մի՛ փքանար ;
Չէ՛ քեզ ճա՛հ հպարտանալ ,
ծանի՛ր զկեանսդ անուանագնաց ։

Այն յոյս տե՛ս ըզքեզ նենգեաց ,
շինէի՛ր տուն քեզ սեփհական ,
Աւ վաղիւ զորմունս նորի՛ն
տեսցես աւեր ինքնակործան ,
Ընդ նոսա ոչ գտցի՛ն ոչ
քո սնոտի խորհուրդք փոշեաց ,
Ո՜վ որդեդ խաւարախորդ ,
ստուերակեաց սուտկերպարան ,
Եւ րոպէ մի կատարեալ
չէ՛ սեփհական քեզ ստացուած ,

Զանձնդ քո ծաղկազարդե՛ս
՚ի հանդերձանս խրախճանաց ,
Բայց ՚ի զուր , զի տիեզե՛րքս
են տաղաւարք կրից արտասուաց ,
Դու ՚ի կեանսդ ե՛ւ բարեկե՛ց
ոչ լինիցիս աստ երջանիկ ,
Ջանացի՛ր , բայց միշտ լիցի՛ս
մոլորութեանց գործ խաղալի՛կ ,
Բնութեամբ ցմահ քարշե՛ս
ըղձքո շղթայս արդելական :

Բո միայն դագաղն հանգի՛ստ ,
որ ընծայէ զանդորր հրճուանս ,
Գերեզմանդ է քաղցրիկ քո՛ւն ,
կեանքդ է ընդ ախտըս մաքառումն ,
Իսկ օրհաս առ մեզ անտե՛ս
և անզգայ մեծ բռնաւոր ,
Աներև բարօրութեան
պարիսպ պատուար կամ խախտաւոր ,
Չքութիւնն է քոյդ բաժին ,
իմա մարմնով , այլ ո՛չ հոգւով :

Զի՞նչ դու աստ կաս որոնե՛ս
՚ի խորս կրից թակարդակապ ,
Փութացի՛ր , դարձի՛ր ՚ի չի՛ք ,
զքեզ մոռացեալ երկնից շահապ ,
Շանթ նորա ՚ի քեզ միայն
ունի լարեալ զաղեղ զնետ ,
Անիծումն ըստ արժանեացդ
՚ի քո գլուխ թափի յաւէտ ,

Ապաստան , որ քեզ մնայ
դառնապղտոր բաժակ մահու ։

Մա՛րդ նանրո՛յ ո՞չ գիտիցե՛ս
՚ի սիրտ յոգի կուրաստեղծեալ ,
Թէ զազիր որդն ես անյայտ
՚ի գէճ՝ հողոյ գոյաւորեալ ,
Նա՛ արծիւն բարձրաթռի՛չ
որ մինչ յերկինս քաջիկ ճախրեալ
՚Ի վեր քան զամպագագա՛թ
ըզմառախուղս վերաթեւեալ ,
Առաջի Ածութեան
որդն անտես արհամարհի ։

՚Ի քո ցաւս հանապազօ՛ր
դու զԱյ լինիս գանձատ ,
Արարիչդ ո՛չ է պատճառ ,
դու ինքն զքեզ չարեօք տանջես ,
՚Ի քո բախտ զքեզ յաշխարհէ՛
իւր բարութեամբ անկագործեաց ,
Տրամութիւն համբուրե՛ս լո՛կ
՚ի բաժակէ՛ն ուրախութեանց ,
Մի՛ թէ յա՛յն գտանիցի
երջանկութիւնդ Ածատուր ։

Զարթի՛ր դու թափեա՛լ ուղեղ
հայեա՛ց յայս դուռն երկրատարած ,
Ամենայն էա՛կ զգա՛յ ,
փառս ընծայէ իւր արարչի ,
Ամենից գծագրեալ կա՛յ
ծիր շրջանակ իւր ընթացից ,

Մինթէ դու կարդեա՞լ իցես
 բնութեան տէր սահմանադիր ։

Զուարթութիւնք քո բովանդակ
 երեւոյթ են առ աչս եթ ,
Զէնք մնաց քեզ փառըն այն
 ՚ի յօրհասէ տուեալ ՚ի պէտս ,
Զօրացի՛ր պնդեալ զմէ՛ջս
 և ամենայնն լինի յաղթեալ ,
Վախճան քո է միշտ սրե՛լ
 զուշ իմաստից բանականիդ ,
Սակայն դու իբրեւ մանուկ
 միշտ արտասուս հեղուս յումպէտս ։

Զօրացի՛ր , զոսոխդ առ ոտս ,
 ուժես կոխել օգնեալ վերուստ ,
Երկնային երանութի՛ւն ,
 նոյն և դժոխք կան ՚ի ձեռին ,
՚Ի քո սակս բացեալ դրո՛ւնք
 արքայութեան սուրբ տաճարին ,
Դու ձեռամբ կոտորեցե՛ս
 զգերանդի մահուան դաւին ,
Գերեզմանն է ճանապարհ
 առ հանդերձեալ կեանս ստդործոյդ ։

Սարգիս փէփրանճեանց ՚ի Նախիջեւանայ ։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ · ԱՆ ·

’Ի հաստատած ինչ Կուրասէաւ Գրատան Մելքոնեան ,
ուր Նշան պատմէ ծննդեան իւր և ընկողին ·

Ո՛նայ ես հանդէտ պայծառ էակի ’ի քուն ընծայել,
Յորում շփոթին զգացմունք երբ յառնէ
յանկարծ զարթուցեալ ,
Հազիւ հազ բացի զաչս իմ այն ինչ յապուշ կրթեցայ,
Ուս գետնախշտեալ ’ի լուրջ դալարուջ
տեսեալ հիացայ ,
Ցօղեաց փափկուն անդ քաղցրատարափ յիմ
մարմին տեղեալ ,
Սարսեցայ ընդդէմ հրացայտ արեգի ցոլմամբ
շողշողեալ ,
Տեսանեմ հայիմ յերկինս լուսապատ քաջ
ակնապիշեալ ,
Յայն հաստատութիւն կամար լայնատարր
կապուտակացեալ
Յանկողնոյ իմմէ դալարւոյ ընդոստ հրոսեցի
յանկարծ ,
’Ի յերկուց ոտից ձօձէր իմ մարմին ուղիղ
քաջապանծ ,
Հանդէպ իմ աչաց լուսով վառէին ջինջ
արփիարձակ ,
Բլուրք և ծործորք անտառք և լերինք
անդէն ընդարձակ ,

Զիս զմայլեցին ։ Այն ինչ յալեսաստ ալեաց
թափանցիկ
Յունկըս մերձեցան խոխոջք ջուրց գետոց
քաղցրաշարժ հեզիկ
Յեզերս գետոց կենդանիք անհուն , աստ անդ
ոստէին ,
Կէսք լցեալ զդաշտս և կէսք սաւառնեալ յօդս
ճախրէին ,
Ուր մինչ որոտայր անտառ 'ի կանչմանց թռչնոց
դայլայլիկ
Լցայ բերկրանօք ։ Յորոց զգացմունք այնք
հետաքրքիր
Ետուն ինձ վստահ զաչս իմ արձակել և յիս
սխրալիր ։
Հարցաքննեցի ցանձն իմ զփառաց իւրոց հրաշագան
Ջոքայ և դարձայ լցեալ զմայլմամբ անդէն անսահման
Ո՜վ եմ ես արդեօք ուստի՞ ստեղծեալ կամ զիա՞րդ ծնայ ,
Յերկրէ՞ թէ յերկնից , յայլմէ՞ թէ յինէն
խորհեալ հիացայ ,
Հարցի զգացմանցս , ոտք իմ պողոտայ խնդրէր
ճահաւոր ,
Լուայ զշչիւն օձից յիս ինքեան յառեալ ահաւոր ,
Լեզու իմ կարկեալ բաւս ինչ յօդելով թոյլ
արտասանէր ,
Զորս դիտէի լեզուս զնոցին անուանս բարբառէր ,
Ո՜վ Արփի հրավառ անդէն գոչեցի բարերար երկրի ,
'Ի քէն ծաւալին ճաճանչք լուսափիւռ
սփռեալ հրաշալի ,
Երկիր օթեւան մարդկան , համակ քո չքնաղ տեսուն
Յօդէ 'ի յիմ սիրտ զփառս վայելուչ և զերկրուն ,

Դուք անտառք թխպեալք լերինք ձիւնապատ
դուք բարձրակատար ,
Դու գետ համասփիւռ , դուք դաշտք ծաղկազարդ
կանաչ գեղափառ ,
Դուք համայն էակք , զորս աստ տաւաղեալ
դիտեմ ակն յայտնի ,
Կեալ և ներգործել շարժել և խաղալ աչացս
առաջի ,
Ասացէ՛ք խնդրեմ , մի՛թէ է թէ գիտէք ստոյգ
ճշմարիտ ,
Ո՞վ զիս աստ կացոյց , և ո՞վ ետ զկեանս ինձ
պերճափթիթ ,
Զի՞ չե՛մ ես յինէն այլ ծայրագոյն ոմն զօրուն հզօր
Որ անճառ շնորհօք ած զիս յանէից 'ի գոյ
փառաւոր ,
Տալով ինձ զկեանս եցոյց զզօրուն իւր ինձ անքանակ,
Զիա՛րդ որոնել գտանել զաստիճն զէութեն էակ ,
Սա որով ես կեամ զգամ և լսեմ հայիմ հրաշադեմ
Որ արար ինձ զայս փառս անսահման զոր այժմ
ճանաչեմ ,
Լռեցին էակք ։ Լոկ ես զգնալ անդ զանդիտէի ,
'Ի խիտ դալարուոջ յառոյգ գեղ երկնից խրախ
դիտէի ,
Ընկողմանեալ իմ 'ի ստուեր խիտ ընդ խիտ
անտառաց թխպեալ ,
Անդ 'լուրջ ընծայէր ինձ նինջ սիրաշարժ
'ի վերուստ աղդեալ ,
'Ի կակուղ շոգւոց ճնշեալ բովանդակ յօնք իմ
նորափառ ,
Աչք իմ կապեցան ։ Բացան 'ի ծագել արփւոյն
լուսավառ ,

Ծանեայ զպակասիլ իմ աջոյ կողից որ յինէն բղխու ,
Տեսի յօրինեալ Կին ինձ ընկերիչ Եւա կոչեցաւ ,
Նա ետ իմ աչաց տեսիլ հրաշակերպ անչափ սխրալի ,
՚Ի սիրտ իմ զեղան նորայն աննման շարժմունք նազելի
Տեսի ես զնա յաչացըն փայլէր ցոլմունք բոցավառ ,
Որոյ քաղցրունք խոր ընկղմեցին զհոգիս անկոպար ,
Զարթի՛ր ինձ ասաց , դու հայր , իսկ ես մայր
մարդկան յաւիտեան ,
Զարթի՛ր և հայեա՛ց յայս մեր բնակարան մաքուր
ճեմարան
Պերճ փառօք պճնեալ ։ Փութա՛ զի պարտէզք ճոխ
մեզ սպասեն ,
Արդիւնք բերք ծառոց , ծաղիկք և պտուղք անդ
զմեզ խնդրեն ,
Ասաց և կալաւ զձեռս իմ մաքուր համբուրէր մեղմիկ,
Շրջեցաք ընդ դաշտն բիւր բարեօք լցեալ
անձամբ խաղաղիկ ,
Ոտիւք նորաստեղծ հազիւ հազ անցեալ ընդ խիտ
ընդ անտառս ,
Սայթաքեաց , յարեաւ , եցոյց զգագաթ լերին
բարձրափառ ,
՚Ի շրջանակի պատեալ զծաւալք լուրջ բոլորջախտ
Ընդ միշտ շրջափիւռ զով վայելչադէմ յուռթի
ծաղկափթիթ ,
Բարգաւաճ ծաղկօք բեղմնալից պտղովք հուպ այնր
անտառի ,
Համայն զոր ծանեայ թուէր ինձ դրախտ ճոխ
առատալի ,
Տէ՛ր ամենազօր շուարեալ գոչեցի յոդի խնդագին ,

Դու քո քաղցրութ՟ ետուր ինձ օգնիչ զայս սուրբ ամուսին,
Յեսակս ամ՟ չի՛ք սմա նման կենդանի կայտառ,
Ես զնա սիրեմ նա զինեւ փարի ո՟ք սիրով արդար,
Պարտ է միշտ առն զհայր եւ զմայր վ՟ն կնոջ թողուլ,
Երկոցունց լինել մի մարմին մի սիրտ, ո՛չ երբեք զատանուլ,
Ընդ մեք զիրերօք փարեցեալ հոգւով դերկախառնեցաք,
Վարելով զկեանս գոգցես հրեշտակաց, բայց . . ։

Իսահակ Խօճայեանց ՚ի Շուշւոյ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԼԶ ·

Պատկերագրութեան արքայեան Առաքինութեան ·

Երգեսցէ՛ իմ այս քնար
զերկնածիրդ Առաքինութիւն,
Զանճառման պարգեւդ երկնից
պարգեւօղ մեզ զերջանկութիւն,
Դու միայն Լոյս ես հոգւոց,
դու տրտմելոց Ուրախութիւն ։

Գործք ձեռաց մեր անարդիւնք
եւ ընդունին վարձ եւ վաստակ,
Յարգին ոչ առ Դատողին
թէ չզգենուն ՚ի քէն դիպակ,
Դու միայն կապես ՚ի գլուխ
նոցա յերկինս Թագ եւ Պսակ,

Արեւո՛ւ ոսկւով, գանձուք
զքեզ չունելով մատնի դիւաց,
Ղազարո՛ս քեւ զարդարեալ,
հանգչի 'ի դասս հրեշտակաց,
Դու միայն սուրբ Ո՛ոխութիւն
ե՛ւ աստի ե՛ւ անտի կենաց.

Երջանի՛կ, երանեալ է,
որ ստացեալ զքեզ ունի,
Թէ՛ և հաց մուրայցէ կամ
'ի փաղարեան Յուլ տանջեսցի,
Դու միայն Ուրախութիւն
պարգեւես և՛ս 'ի գեհենի։

'Ի ծովու յայսմ աշխարհի
կոհակք, ծփանք անթիւ վշտաց,
Ուր հոգւոցս նաւ կարկատուն
կործի անղեակ մոլորագնաց,
Դո՛ւ միայն ղամբարափայլ
Նաւահանգիստ ազատ յալեաց։

'Ի խաւար Ճանապարհի
ընթացից յայս կենցաղ կենաց.
Ուր յաջմէ և յահեկէ
դարանք գողոց աւազակաց,
Դո՛ւ միայն ես Առաջնորդ,
տանիս ուղիղ յերկինս փառաց.

Թէ մարդկան կեանք յաշխարհիս
զինուորութիւն է ըստ Յոբայ,
Սաղաւարտ սուսեր զրահ
վահան ասպար դու ես նոցա,
Դո՛ւ միայն քակես զամուրս
նետք մուխք Չարին քեւ նանրանայ.

Որչափ որք գիտուն իցէ
զերթ սաղոմոն ու արիստոտէլ ,
Թէ՛ և որք կոյս լինիցի
իմաստուն և ունող լապտեր ,
Դո՛ւ միայն Յուղ ես և Լոյս
'ի հարսանիսն ածես ընկեր :
Օթևանք բազումք յերկինս
'ի տան հօր մեր յարքայութեան ,
Ուր աստղ քան զաստղ փառօք
փայլեն ստդործոց արդարութեան ,
Դո՛ւ միայն ես Չափ ու եղէգն
ըստ որոյ չափէ զվարձս Աստուած :

Յովսէփ Արքեպիսկոպոսին յԱրղութեանց :

ՔԵՐԹՈՒԱԾ . ԽԲ .

Խանդք հոգւոյ առ սուրբ Աստուածութիւն .

Տէ՛ր էակութեանց անման անվախճան ,
աշխարհի անհուն հաստիչ անսահման ,
աղբիւր բարութեան 'ի յաւիտենից ,
Հայր ամենախնամ մարդկան բանական :
Դու կրես զկեանս յինքեան բովանդակ ,
'ի փառս բազմաց երկնից լուսաբնակ ,
կայանես զերկրութիւն 'ի սէր թաթաղուն ,
տաս կաթիլ շնորհաց յարտասուս համակ :

Յինքեան անշարժ միշտ 'ի յաւիտենից,
քեւ ուղղին աշխարհ և շարժմունք երկնից,
անտես անուրեք էիցս համագոյ,
անեղ ստեղծիչ արքայ արքայից ։

Լոյս երջանկութիւն Հոգի աշխարհի,
տէ՛ր ամենիմաստ Աստուած սքանչելի,
ո՛վ արդեօք սրտիւ փափուկ զգացմամբ,
կոչել ինչ զօրեաց զքեզ արժանի ։

Սակայն դու հզօր երբեք ոչ կասիս,
վրէժխնդիր լինել պատժել թշնամիս,
բայց զի տկար են թոյլ առնես չարեաց,
քեզ թշնամի ո՛չ տեսանես զորդիս ։

Հեղուս 'ի նոսա ըզշնորհս բարի,
անխայեմ յարիւն նոցա դառնալի,
կորիցէ խաւար 'ի լոյս յաւիտեան,
և չարք զգասցեն զսէր քո հայրական ։

Ո՛ սէր հիացմամբ մեք յամենայնի,
'ի պահու դիտման գթոյդ սխրալի,
հանդէպ կենդանի սրտիւ եռանդեան,
գահիդ անկանիմք սուրբ Աստուածութեան,

Գործեն զքո ձեռս բարի և արդար,
զառ յորդիս ձգեալ 'ի հօրէդ անճառ.
ալէլու տան քեզ, գոչեն համապազ,
գո՛յ Աստուած, աշխարհս՝ է նորին տաճար ։

Սամուէլ ճէրքէզեանց յաստրախանայ ։

ԲԱՐԵԳՈՐԾ · Ա.

'Ի նոյն խորհրդածութիւն ·

Մեծութիւն դու անվախճան
անկէտ անե՛զր օրհնաբանեալ ,
էակաց շարժողութիւն
ինքնին անշարժ փառաւորեալ ։

Ժամանակ դու անկանես
ո՞ յերկս դէ՛մն Աստուածութիւն ,
բայց անդէ՛մ անպատկեր կաս
ե՛ս , եղիցես , էիր բնութեամբ ։

Ո՛չ ունիս տեղի պատճառ
զքեզ իմանալ ո՛չ ոք կարաց ,
մի հոգի՛ 'ի մի բնութեան
աղբիւր առատ դու ես Ա՛Ծ ։

Էակք համայն զքէն կա՛խին
յամենեսին ես բնակեալ ,
զամենայն դու խնամես
աջովդ հզօր միշտ պահպանեալ ։

Ո՞ր կարա՛ց զովկիանոս
խորին չափել միտք բարձրագոյն ,
և թուե՛լ զշար աստեղաց
այս է քո եթ կարողութիւն ։

Ո՛վ է ժպրհի՛ զքեզ ոք քննել
'ի մեծութեան քում կորնչի ,

օրինակ ինձ 'ի յանդունդըս
ժամանակի քթթել մ' ական ։

Օ էութիւն այս աշխարհի
սահմանաւոր դու կոչեցեր ,
բայց զայս ես յաւաջ քան զտալըր
'ի քեզ միայն դու հիմնեցեր ։

Դու ես լոյս 'ի մեզ ծագիս
անձամբ յանձին բընակեցեալ ,
ես , երբ դու յաւիտեան
յանձնէ անձամբ միշտ շատացեալ ։

Համարե՛ս զաւուրս կենաց
էակաց զոր հոգեւորես ,
զսկիզբն զվախճան միաւորես
զկեանս 'ի մահուն դու պարգեւես ։

Որպէս շանթք հրով ցայտին
և ճաճանչմունք 'ի քեն ծագին ,
յաղջամուղջ աւուր ձմեռան
միշտ հոլովին և շրջշրջին ։

Հըրային բոցք եղեման
նոյնպէս աստեղք յերկինս ծագին ,
շողշողմունք ընդ գոյութեան
նոյն և շարժմունք կամօքդ լինին ։

Բիւրք բիւրոց մեծ լուսաւորք
անչափութեամբ վառեալ փայլեն ,
կենարար շողս արձակեն
և զօրինացդ զկարգ պահեն ։

Նոյն հրացայտք ղամբարք լուսոյ
աստեղաց պա՛րք լուսոյ էակք ,

՚ի կուտակս ծփեալ ալեաց
առաջի քո տիւ խաւարեալ ։

Օի՞նչ աշխարհ յանդիման քեզ
լայնասահման մեծաքանակ ,
ո՛չ այլ ինչ թէ այնք թէ ե՛ս
բայց հիւղ երկրի փոքր արարած ։
Ոչինչ ե՛մ բայց յիս փայլիս
ամենամեծ բարութեամբ քով ,
յիս զքե՛զ նկարագրես
որպէս արեգ ՚ի սակաւ ջուրս ։

Ոչինչ եմ բայց զգամ կեանս
՚ի քեզ հոգի իմ միշտ յուսայ ,
ունկն դնէ քննէ խոկայ
էի եմ ես , և Աստուած կայ ։
Թէ դու գոս և կարգ բընութեան
մեծաբարբառ զքեն վկայեն ,
բարութիւնք քո յիս հեղեալք
զոյգ ընդ հոգւոյս զքեզ բարոզեն ։

Ես շաղկա՛պ բնութեանց էից
ես եմ վերջին քոյ աստիճան ,
միջակէ՛տ եմ կենդանեաց
գիծ սկզբան Աստուածութիւնդ ։

Ե՛ս մարմնով ՚ի հող փտիմ
հրամայեմ մտօք բնաւից ,
ե՛ս արքայ և ե՛ս ծառայ
ե՛ս փոքր որդն , ե՛ս և Աստուած ։

Եւ ուստի՞ եմ ստեղծեալ
այսքան գոլով ես հրաշալի ,

անյայտ չէ, զի ոչ յանձնէ ,
զի անկար է գոլ յինքենէ ։

Ստեղծուած քոյ եմ Ա՛ստուած
իմաստութեան քո արարած ,
դու արքայ հոգի հոգւոց
տուօղ բարեաց աղբիւր կենաց ։
Այե՛լ է ճշմարտութեան
որ և զանդունդս մտօք զննէ ,
իմ անմահ է էութիւն
զի իմ հոգի մահ ո՛չ ունի ։

Եւ զի ես մահուամբ դարձայց
է՛դ էակաց անեզրական ,
՚ի քոյին անմահութիւն
մշտափայլուն լուսոյ նման ։
Անվախճան անճառ անհաս
զքեզ երգել ես ո՛չ զօրեմ ,
զի միտք մեր ապիկար է
մինչ զստուեր քո նկարագրել ։

Բայց եթէ փառաբանել
տկար մտօ՛ք զքեզ արարածք ,
պարտին միայն զուրախական
հեղուլ զարտօսր սուրբ եռանդեան ։

Յովսէփ աղէքսանդրեանց ՚ի Մոսկուայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԼԹ ·

'Ի ԿՈՐՈՒՍԵԱՆ ՄԱՐԳԷԱՅԵՆ ՍՈՓԷ ։

Զարթո՛ զուխեզերս ո՞ հնչիւն նուագ ձայնիւս մեղկա-
ցեալ,
Հնչեա՛ տասնաղի 'ի Դաւթեան քնար քաջ բարձրա-
ձայնեալ,
Ընսասցե՛ն արքայք, լռեսցե՛ն աղինք կուրացեալք յոգի,
Լուեսցէ՛ երկիր, ունկն դիցէ այսց բանից զգալի,
Հոգի՛ն որ սիրով ջեռուցեալ ազդէ 'ի սիրտս թա-
փանցել,
Յաշխարհէս լքեալ, զՃշմարտութիւն զոր փութամ
մերկել։

Ահա՛ ողբալի մարդիկ յուսալով 'ի զօրութ՟ն հզօր
բազկին քաջուն, անձին Ճոխութ՟բ մոլեալ աստանօր,
'ի փառս բաղդին սնապարծ շարժին 'ի հպարտութ՟ն,
բայց ափսոս ժամուն առ՞ող նորանշան աւուրնահազին
յոր ահեղ մահուամբ մոլորեալ 'ի կեանս յափշտա-
կեսցին,
դատապարտել յայն տանջանս սոսկալի՝ յանշէջ գե-
հենին։

Զի՞նչ յայնժամ լիցի՛ս ասա՛ դու ո՞վ կո՛յր իշխան
աշխարհի,
Յի՞նչ արդեօք կամ ո՞ւր փառք և պերճութիւնք քո
անդ յանկեցին,
երբ մահն հատցէ՝ ըղձել պերճ կենացդ ձեռամբ
Նարոպին,

Երբ ծառայք ընկե՛րք որդիք ընտանի՛ք 'ի քէն բաժանին ,
Երբ ձայն գուսանաց ողջոյնք ովսաննայք այն Ռաբբի Ռաբբիք ,
փոխին 'ի տխուր ցաւ , լաց , և սոսկումն ուր մատնիլ ունիք ։

Օ՜հ՞ յանդգնի՛ք ո՞վ կաշառակեր ագահք ատելի,
հոգւով և մտօ՛ք յիմարեալ յարծաթ յոսկի սնոտի ,
մոռացա՞յք արդե՛օք ալեկոծեալ մի՛շտ սին փայլմամբ ոսկւոյ ,
Թէ այսօր աստ կայք , վաղն 'ի ծոց հողոյ և անդ 'ի բոց հրոյ ,
Ո՞չ տեսիք զմարդն աննման փառ՛օք ծաղկեալ մեծաձիր,
բարձրապարանոց սիգութ՟ փշրեալ անկաւ 'ի յերկիր։

Հայեցարո՛ւք աստ քանի՞ չարութ՟ լցեալ ցնծութ՟ ,
յափշտակելո՛վ զորբոց զաղքատաց զինչս գողութ՟ ,
վիճակ արկեցեալ բաժանեն յինքեանս անյագ փափագմամբ ,
բայց ո՞ւր մնացին այն ա՟ծք երկրի՛ 'ի ժամուն սոսկմ՟բ ,
Թէ ոչ 'ի շիրի՛մս ուր սարսափելի՛ խաւար յարակայ,
զոսկերս և զհոգի՛ նոցին ահուելի՛ ծածկե՛ց այժմ ահա ։

Մարդիկ սնոտի՛ պատուով և շքո՛վ աշխարհի պատրեալ ,
արտաքոյ քաղցր ներքուստ թունալի՛ բանից անսացեալ ,
բարձին զյիշատակս սուրբ Ճշմարտութ՟եց զերթ փուշ հոսեալ,
Նա՛ իբր անասուն ամեհի գաղա՛ն անզգայ արբեալ ,

Թողլով արձակի՛ք ոստոց չարուն յամառել մեղաց,
Օ՜ չորքոտանեայց վարըս աղտեղի՛ ընտրեցին անձանց ։

Վասն որոյ սատանի՛կ եղև կործանումն նոցին առաջօք ,
բայց զեղծեալ նոցա՛ բանականութի՛ դեռ լի յանցա նօք
ծածկել է զերե՛սս հին վարադուրա՛ւ ախտին չարեօք ,
յոր սակս և մա՛հն ահիւ սարսափմա՛մբ եղեալ յանդընդոց,
իբրու քաջ հովի՛ւ հովուեսցէ զնոսա իբր զհօտ չնչին
մուծցէ ը̃ իւր յայն դժնդակ վիրապն յանասնոց խըմբին ։

՚Ի նանիր է այժմ այդ քո յուսահա՛տ ապաշխար սրտի
և արտասուքդ յոր պարանոցաթա՛ղ ընկղմիս յոդի ,
ձայնես անդ լալով խնդրես զԱ՜Ծ երկնի և երկրի ,
զի մի՛թէ ՚ի յամպս կա՛մ ՚ի խոր յանդունդս գտանել կամիս
զանպարագրելի՛ զանճառ արարի՛չն համայն աշխարհիս ,
էանց ժամանակն յոր ՚ի ներքս ՚ի քե՛զ որոնել պա՛րտ էր։

Բայց այժմ չքացի՛ն քոյդ հրաշորրո՛ք սիգափայլ անուանք ,
բարձցի՛ տէրութիւդ անկցի՛ն երկրայի՛ն միտք քո չարակամ;
որով նեղէի՛ր միշտ զարդարուի՛ վարուք զազրալի ,
եհաս ահա քե՛զ ժամն այն վերջի՛ն խիստ դատաստանի ,
յոր սարսափելի՛ Տ՜ուն հրաման խստութ՜ք լցցի ,
քեզ յա՛ր պապակի՛լ ՚ի խորս դժոխոց հոգւովդ թինալի ։
Արդ ծանի՛ր զքեզ , ժողովեա՛ զխորհուրդս զմտա՛ւ միշտ ած ,

Թէ իբրու առի՛ւծ սաստիկ գոչելո՛վ որ մահուդ սառած ,
բացեալ է զկոկորդն կլանել ահի՛ւ զքեզ դողացուցէ՛ր ,
զի սա՛ է անհո՛ւն անկէտ Ճանապա՛րհ տիեզերց տուէ՛ր ,
յոր Ճո՛խ և աղքա՛տ , յիմար ւ իմաստո՛ւն կայսր և արքայն ,
մի՛ շաւղօք և 'ի մի՛ հետս որոշեա՛լ անսայթաք գնան ։
Այժմ առ քե՛զ ձայնե՛մ , ո՛վ Ճշմարտութի՛ւն պարգև երկնաւոր ,
քե՛զ ասեմ որ մի՛շտ ուղղիչդ ես չարեա՛ց աստ բազմատեսակ ,
Ը̄է՞ր ես ծածկեա՛լ ը̄ վարագուրա՛ւ անդէն 'ի մթա՛ն,
Ե՛ւ մի՛ երկնչի՛ր մատի՛ր 'ի լնո՛ւլ զսիրտս մրդկան ,
զի յօրն վերջի՛ն երբ մահկանացո՛ւք յարիցեն յատեան ,
զերծցի՛ն 'ի չարեա՛ց , ընկալցի՛ն զպսա՛կ կենացն անվախճա՛ն ։

Սարգիս Խորասանեան 'ի Խորասանէ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · Խ ·

Զուարճալի կրթութեան Քերականութեան [illegible] պատերազմ Մասանց Բանի ընդ միմեանս վասն նախագահութեան ․

Զիմանալի սահմանս երկրին կոչեցեալ Քերականութեան, կային ութ Տիրապետք, և 'ի սկզբանէ անտի յայտնուե այնր մինչև ցաւուրս մեր՝ յաջորդք այնց տիրապետաց իշխէին իւրաքանչիւր սեփհական կալուածոց իւրեանց, և միաբան զօրուք օժանդակ լինէին իրերաց յուղիղ արտայայտել զխորհուրդս մարդկային մտաց ։

Բայց քանզի չի՛ք ի՛նչ աշխարհիս անյեղլի հաստատուն, 'ի մէջ այսոցիկ մտաւոր էակաց ծնան վէճք վասն նախագահուե, թէ ո՞ 'ի նոցանէ զառաջինն ունիցի զտեղի ։

Իշխանաւորն Բայ սկսաւ խօսել զիրաւունս, զոր ունէր յայլս, թէ առանց իւր անհնար է իմանալ ուրեք ինչ խօսս, թէպէտև ներկայ իցեն անդանօր ամ մասունք, որք զխօսս բոլորեն, և թէ նոյն ինքն ստուգաբանուն յորջորջմանս Բայ, նշանակէ խօսք, ձիրք խօսից, ասացուածք, բան Լտ, որ ցուցանէ թէ ինքն ինքեամբ միայնակ կարէ բաղկացուցանել զբան ։

Աւա՜ղ զի՜արդ ինքնահաճեն իշխանք, աղաղակեց անդէն Անունն, ո՞չ աւասիկ ամենեցուն դիւրիմաց է բանս, [illegible] [illegible], իսկ ո՞ւր իցէ աստ Բայն ։

Յայնժամ պատասխանի ետ Բայն, փոխանակ լըւելոյ՝ զխրատուսն իմ հաստատես, յոր կարեմ ես առաջի առնել զվկայս, ոչ միայն զվաղեմի հրահանգիչս մեր զգերամեծար Հելլենացիս, այլ և զՀռովմայեցիս, որ յայսպիսի դէպուածս դնեն զբայս է ներ գործութ և ասեն, երկիրն է բոլորակ, թէպէտ և պերճունի Հայկաբան քաջախօսութե ոչ ներէ լինել ինձ 'ի նմին տեղւոջ ակն յանդիման, բայց ամենայն որ միանգամ քաջակիրթն իցէ 'ի Տրամաբանական գիտութիւնս, գիտէ հաւաստի թէ անդ կամ ես, թէ ոչ ներգործութ, գէթ զօրութ։ Ա՛ռ քեզ օրինակ 'ի ձեռըս զլեզուս Եւրոպացւոց, ուր գտցես զիս 'ի բարբառնոցին աննահանջելի կարեւոր, զոր օրինակ 'ի բանս La terre ronde երկիր բոլորակ, չի՛ք ինչ իմաստ, զոր յիմաստալից առնել պարտ է ասել, La terre est ronde, երկիրն է բոլորակ։

Լուարուք ինձ պարոն Բայ, կրկնեաց անդրէն Անուն, գիտէ՞ք իսկ դուք, թէ կեալ անուամբ հանճարոյ քանի՞ վայելուչ իցէ մարդկան, և յայս սակս միաբանութին Քերթողաց ետ ինձ զնախագահութի, նա զի եթէ ոչ յինէն տուեալ լինէր՞ և իցէ իրի Անուն, զի՞նչ ապա ունէիք կոչել զայն իր։ Եւ այս է պատճառ, զի ամենայն առարկայք, որ միանգամ ենթադրեալ են մարդկային զգայութեց և մտաց, պարտին ունիլ Անուն ինչ, եթէ կամիցին քաջայայտ բացածանոյց լինել յաշխարհի, և ոչ այսչափ միայն այլ և ամ հանգամանք և որակութք առարկայից իսկ գան 'ի յայտնութի և 'ի ծանօթութի մարդկան ազգի։

Առանց իմ գրէ թէ ոչ ոք կարէր 'ի մարդկանէ և ըզքեզ ճանաչել : Որքան յոլով են իմ պաշտամունք մինչև բազում անգամ յանձեռնհաս գտանել իմ, զԳերանունն փոխանակ իմ առաջեմ 'ի գործ :

Գիտեմ Տէր իմ ողորմած, պատասխանի ետ Բայն, մարդոյ որոյ չի՛ք ինչ երևելի աստիճան պատուոյ, առացեալ լինի սովորաբար, դու Տէր ես անուանն, թէպէտ գիտեն ամենեքեան կոչիլ նմա Յովհաննէս, Պետրոս, կամ այլով յատուկ անուամբ, սակայն այսու իսկ ո՛չ այլինչ իմանամք, բայց թէ զոր զանուն իւր չարար բարեհամբաւ և գերահռչակ 'ի ձեռն մեծ ինչ պաշտօնատարութե̃, իսկ այլ ո̃ւմ իրաւանց քոց չունիմ ինչ ներհակել : Բայց եթէ դու ըզ Գերանունն առնես քեզ օժանդակ, ապա և առիս Ընդունելութիւնն գործել զգործ Բայի, միանգամայն և զԳերանուան, կարեմ և ես ասել, թէ Մակբայն է մակդիր կէ յօդուած ինչ 'ի Բայն, որոյ վասն և կոչեմք սովորաբար Մակբայ կամ 'ի վերայ բայ :

Յետ այսոցիկ վիճմանց Անունն ազդ արար իւրում սահմանակից դրացւոյ Գերանուանն 'ի ձեռն նամակի իւր գրելոյ յայս պատճէն :

Վերապատուեալդ 'ի քերթողաց Գերանուն, վեհանձն կարեկցութե̃ ձեր փոյթ 'ի պահպանել զ'ի մերում միջի զընդհանուր խաղաղութի̃, խրախոյս աներ կեան մատուցանէ մտաց իմոց, թէ ո՛չ յապաղեսջիք ը̃ հասանել լոյս առ ձեզ, ո̃ւմ փութով զմէջս պարպնդեալ արագ արագ գալ հասանել առիս, ո՞ր զի խորհուրդ 'ի մէջ առեալ զօրեսցուք զդէմ ունել յանդուգն արշաւանաց Բայէն, որ միաբանեալ ը̃ ոխերիմ թշնամեաց իմոց պատրաստեալ է յարձակել յիմ վերայ պատերազմաւ ։ Աւելորդ վարկանիմ այստանօր յիշատակել ձեզ զազգակցութի՟ եւ զհամամիտ բնաւորութի՟ մեր առ միմեանս, զոր գիտեն ամենեքեան եւս եւ մանկունք, որոց Ճանապարհ արարեալ իցէ յեր կիրս քերթողաց ։ Նա թէպէտ եւ փոփոխական հանդիպեալ եմ տէրութե՟, բայց 'ի սրտեռանդն ձեր յարդութեան անփոփոխ մնամ խոնարհ ծառայ ։

Ընկալեալ Պօէրհաավէն զայս նամակ փութացաւ վաղվաղակի գունդ կազմեաց յիւրոց զօրաց եւ յուղի անկեալ եհաս փութանակի առ Անուան, եւ եգիտ զն՟ս զի վիճէին ը՟ միմեանս սաստկա՟պ վ՟ս աւագութե՟ ։

Ապա խօսել սկսաւ ը՟ Անուան այսպէս ։

(Պօէրհաավէ) Եթէ աւագութի՟ն իցէ հաստատել յայն զի յառաջադաս քան զայլս կարգեսցի ոք, աւասիկ ես բազում անգամ յառաջոյ կամ քան զանուն՟ն, որ բացայայտ երեւեսցի յընթեռնուլ ձեր զառաջին զայն պատգամ Մովսիսեան, Նա էն փէր Ա[illegible]ծ քա ։ Նյն աստանօր ո՞չ ահա զէս կամի նշանակել, ո՞չ ապա քէն Պօէրանուն իցէ այն ։ Ահա եւ 'ի հրովարտակաց գիրս Պօէրանունս Մէք գտանի նախապատիւ եղեալ ո՟պ եւ 'ի դատաստանական բանս յաճախ գրի, վ՟յ ասացէ՛ք ո՞ւմ անկանիցի յառաջնութի՟ ։

(Անու.) Պաշտօնեայք դատարանաց յայն սակս դընեն զմեզ 'ի միասին, զի վճռեալ բանն լիցի պարզ եւ բացայայտ, եւ մի' ինչ խառնեսցի մթութիւն ։ Իսկ Աստուածաբանք, Փիլիսոփայք, Ատենաբանք եւ Բանաստեղծք շատանան միով եւ եթ 'ի մէնջ, որ եւ դիպեսցի անխտիր, սոքա են ը՟ մեծի մասին զԱնուան դնել միայն յառաջին անդ. պարբերութե՟, եւ 'ի հետեւեալն

՚ի կիր արկանել զԴերանունն, միթէ մարթ ի՞նչ իցէ նմ՞ դնել զքեզ ՚ի բանս առանց յիշատակի Անուան, և միթէ դու այնքան ապերա՞խտ լիցես, մինչև չճանաչել զտուեալն յինէն քեզ զօժանդակութի՟ հոլովելոյ: Ո՛չ նկատելով զմերձաւոր արենակցութի՟ իմ ը՟ քեզ, և խորշելով զօգուտն հասարակաց, թէ ուր ո՛չ ստիպեն զիս կարիքն իմ կալ անձամբ, դու կայցես անդ ՚ի տեղի իմ, կա՛լ այժմ զջատագովութի՟ իմ, որոյ աղագաւ և ընկալցիս յինէն ՚ի վարձ զերիս Դէմսն, զոր չունին այլ Մասունք, բաց ՚ի Բայէն միայնոյ:

Դերանունն հաճ և հաւան կացեալ ը՟ բանս հաստատեցին ՚ի միջի զդաշն անքակտելի միաբանութեան:

Բայց մինչդեռ Անունն զուխտ միաբանութե՟ դաշն ը՟ դրացւոյ իւրում դնէր, Բայն ինքն յանկուցեալ զԸնդունելութիւնն հրապուրէր զնա համոզական բանիւ, օրինակ զայս,

Բարեխնամ Տեսչութին՟ պերճացոյց զքեզ, ո՛վ ամենապատիւ Ընդունելութի՟ այսպիսի իմն ձրիւք, մինչև կարող լինել քեզ, ՚ի քեզ բովանդակել միանգամայն ըզ Բայ և զԴերանուն: գեղուղէ՛շ ընձիւղ խմումն հրափայլ սիրոյ, նոյն ինքն հրաշատիպ մասնեան ծննդաբանութե՟ քո ցուցցէ քեզ անտարակոյս թէ առաջին սկզբնապատճառ քումդ յանդոյեց ՚ի լոյս գալոյ ո՛չ ոք է, բայց միայն ես Բայս, երևելի հեղինակք կամելով սակաւ բանիւք բազում իմաստս նկարագրել յօճ գերապանծ, ՚ի տեղի Բայի և Դերանուան զքեզ ՚ի կիր արկանեն ՚ի զարդարել զիւրեանց բանահիւսութի՟: Շքեղացուցէ ապա սկզբնահայր քումդ լինելութե՟ զիրաւացի կողմն իմ, յայտ է քեզ բազմախնդիր վէճն 'ի դարուց բազմաց ծագեալ է մէջ իմ և բարձրայօնն [illegible] :

Օիջեալ Ընդունելութեան 'ի սիրաթախանձ բանս [illegible] , ետ պատասխանի այսպէս ,

Բարւոք ճանաչեմ զիմ երախտիս զորս 'ի բնէ անտի մեծաւ կարեկցութեամբ ցուցեալ էք ինձ , բայց այսուամենայնիւ պարտ և արժան է ինձ արդարութիւն առաջի առնել ձեզ և զայն եռանդն կարեկից բարեկամութեան , զոր 'ի հերունհետէ ցուցանէ ինձ [illegible] , ոչ արդեօք 'ի նմանէ գտեալ է իմ զյաջողուն փոփոխելոյ 'ի զանազան [illegible] և 'ի [illegible] , ապերախտ ապա լինէի , եթէ համարձակէի ընդդէմ կալ բարերարի իմում , զօրավիգն լեալ անհաշտելի թշնամեաց նորա , առնուլ ընդդէմ նորա սուր , և հալածել զանխոնջ բարերար իմ : Հաւատացէք ինձ զի քաջ գիտեմ և զայն թէ ի՞ կամ որով միամ առ ձեզ երախտապարտ , քանզի դուք էք , որ շնորհեցիք ինձ զՍեռ և զՏեսակ :

[illegible] մասնէ շահեալ [illegible] զԸնդունելութիւն , հրապուրեաց զոմանս յիւրոց ընկերաց [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , ծպտեալ դիմակաւ և 'ի կերպարանս [illegible] պատրել զնա դաւով , վասն որոյ եկեալ սգ կացին առաջի [illegible] և սաստ փորձելով ՝

Ժամանակ է արդ հնձոց , կամի՞ս զի բերցուք քեզ [illegible] , [illegible] , [illegible] : բայց նախ զգործիս , [illegible] և [illegible] որովք շինեալ զշտեմարանսդ ժողովեսցես անդ [illegible] , զի 'ի դէպ ժամու բաժին հանցես անտի [illegible] ,

Յնծացաւ [illegible] մեծապէս ընդ բանս նոցա և ասէ այո սիրելիք իմ , դուք որ էք , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , մերձաւոր խնկ էք իմ , և ո՞ այլ լիցի ինձ ցաւակից, եթէ ոչ դուք, որք՝ ժողովեցուք փութով զհունձս, մինչ Հօրան չէ կոչեալ զբերս իմ.

Ի սմին յայսմ ժամու պատահեցաւ անդ Ճանապարհորդ ոմն, որ յանցանելն իւր այն ուշ դնէր անցիցն ումեմն որ ինչ յերկիրն քերթողաց գործէր, նոյն ժամայն 'ի վեր եհան սա զդաւաճանութիւն նոցին, աղաղակեաց և ասէ դա՛ւ է դա՛ւ է, ո՜ պատուելի Յունան, մի՛ հաւատայցես նենգաւոր շրթանց դոցա, զի բառքս Ճաճանչ հնչոյ, փոխանակ դերբայի է աստ եդեալ, իբրև թէ Ճաճանչ է հնչելոյ: Ոչէր նշանակէ բայ, և 'ի լինել անուն, պարտի հոլովիլ էէր, էէրոյ: Ուէլ երրորդ դէմն է բայիս, ուէլամ: Էլ, գամ բայի հրամայական է, և առ 'ի լինել անուն, պիտոյ է հոլովիլ էլ, էլէ, էլք, էլոյ: Հօրան, հարկանեմի կատարեալն է 'ի կրաւորական սեռի, ուրեմն ծանի՛ր զի առ 'ի պատրել զքեզ եկեալ են սոքա:

Ծանրացասումն եղեալ Յունան ի այսպիսի նենգաւոր դաւաճանութիւն նոցա, ետ հռչակ հարկանել պատերազմի ընդդէմ Բոյէն:

Կասկածեալ Բայէն միայնակ զդէմ ունել Յունան և իրազգաց եղեալ մտաց և խորհրդոց իշխանացն հոլովելոց կամ փոփոխականաց, սկսաւ այնուհետև զանփոփոխ Տերունց խորհրդածել, 'ի սոսա պարտ է ինձ դնել ասէ զամենայն յոյս իմ, զորոցունց ո՛չ ոք կարէ ըղմտացն հաստատութիւն խախտել, և կամ զամենայն զպատրուակեալ հնարս իմ առաջի Յունան մերկապարանոց կացուցանել, թէպէտ Սոչէոյն մարթի փոփոխել երբեմն զիւր վերջաւորութիւն յածանցել իւրում, բայց ո՛վ է զարդիս 'ի մարդկանէ այնքան հաստատուն 'ի խորհուրդս, որ ո՛չ խախտեալ 'ի սովորական իւր եղանակէ փոփոխեսցի, եթէ ամբարձցի 'ի գերապանծ ինչ աստիճան առաւելութե՟, զայնպիսին արդարև ը՟ քաջակորով դիւցազունս դասելի է։ Ապա յիրաւի դասեցաւ Մակբայն 'ի թիւս անհոլովից կ՟մ անփոփոխելեաց, զի չիք ինչ 'ի նմա հոլով կ՟մ փոփոխումն։

'Ի տարուբերել Բայն յայսպիսի վարանմունս մըտաց՝ զաչս ամբարձեալ ետես, զի քանակ զօրաց կատաղի յարձակեալ իջանէր 'ի մերձակայ լեռնէ անհնարին փութով, որոց գալարափողք ահագին շառաչմամբ հնչէին, ահ, բահ, բա՜հ, վա՜յ, իբր։ 'Ի ձայնէ փողոցս թէպէտ ծանեան հանդիսացեալ գաւառապետք թէ Միջարկութիւնն է որ գայ 'ի ժողով անդր նոցա, բայց ոչ գիտէին թէ զորո՞յ կողմն ունիցի. զԱնունն, թէ զԲայն, վ՟յ երկոքին սոքա առաքեցին ը՟ առաջ նորա նուիրակս, զի գուն գործեսցեն ինքեանց նիզակակից առնել զնա, այլ բարձրայօնն Միջարկութիւնն յուսացեալ չգիտեմ յինչ իւր՝ անարգանօք արձակեալ զպատգամաւորսն, շտապ տագնապաւ եհաս 'ի ժողով անդր, և անխորտակելի յոխորտանօք ասէ սպառնաձայն ցհանդիսականս,

Առ ի՞նչ իցեն այդ ամ՟ կագ և կռիւ ձեր, ընդէ՞ր է ձեզ առանց ընդ իս խորհրդակցելոյ պատերազմ հռչակել, վ՟ է՞ր ոչ և զիս յառաջագոյն 'ի խորհուրդ ձեր կոչեցէք, և ուստի՞ է այս զի դու Անունդ մէն միայն իբր գլուխ եւ պետ համօրէն գաւառացըն ամբարձեալ վստահացիս զայսպիսի մեծ և կարևոր գործ ինքնագլուխ վճարել, մի թէ սինլքոր ոմն իցեմ ես 'ի համօրէն գաւառապետսն Դերթողաց աշխարհիս ։ Բայց ա՛ղէ ասա գիտիցե՞ս արդեօք դու խօսել 'ի լատին բարբառ, աշխատ լե՛ր ինձ թարգմանել զբառս Præpositio պռէպօզիցիօ ։

Պատասխանի եւ Անունն, 'ի բովանդակ լեզուաց Քերականութիւնս զորդիս թարգմանեալ է այն Նախդիր, այլ մարթ է եւս թարգմանել զայն Նախադրութիւն առաջադրութիւն, կամ ընդդիմադրութիւն ։

Յայնժամ ասէ Նախադրութիւնն, տեսե՞ր արդ այժմ թէ զիա՞րդ և ստուգաբանութիւն անուան իմոյ ընդ քոյդ իսկ վկայեալ հաստատէ, թէ ինձ յաւէտ արժան է նախադաս և նախապատիւ քան զամենայն մասունս խօսից լինել, և այս բացայայտագոյն եւս երևի 'ի սովորական եղանակս խօսից, զի ոչ ոք է 'ի մարդկանէ, որ ասասցէ Գնաց արքայն առ ։ Խօսէց Եղիային ընդ ։ այլ միշտ ասելի է Գնաց առ արքայն ։ Խօսէց ընդ Եղիային ։ և եթէ միաբանիլ եւս կամիցիմ ընդ բայիս, տակաւին յառաջոյ նորին դնիմ հանապազ զիս, առանձնել, ընդադրել, առաջադրել, եւն ։ Այլ ո՞ Տեարքդ Անուն, Դերանուն, և Ընդունելութիւն, միթէ ո՞չ և դուք բազում անգամ իմով զօրավիգն օժանդակութեամբ վարիք 'ի խօսակցութեան, ուր յայնժամ միայն զզօրութիւն իմ լքանեմ, յորժամ սերտ կապակցեալ զիս ընդ ձեզ կացուցանէ զմի բաղդրեալ ձայն ։ բայց եթէ ոչ միաբանեցայց ընդ ումեք, յայնժամ ունիմ իշխանութիւն խոնարհեցուցանել զձեզ յիւրաքանչիւր դիպուածս ընդ հաճոյս կամաց իմոց ։ Ո՞չ աւանիկ ես եմ որ կազմեմ զհայցական, բացառական, և զայլ Նախդրաւ հոլովս, թողում յիշատակել աստանօր և զայն, զի զբազումս 'ի ձէնջ 'ի կարևոր ժամու ընդ պիտանաւորութեան 'ի զանազանս հոլովս

Եւգինէ ինձ պահանջեմ, որպէս զիա՞րդ կամք իցեն ինձ ։

Յայնժամ աղաղակեաց Բոյն յոխորտաձայն,, բաւական է արդ, դադարեա՛ց ’ի խօսելոյ, զի՞նչ է այս զոր լսեմ ’ի քէն, զիա՞րդ զքէն կախեալ կայցեն Տրական եւ Ներգոյական հոլովք, ո՞չ աւանիկ ընդ իմով իշխանութեամբ են նոքա, ե՛կ քննեսցուք զայս բացայայտ օրինակօք, երբ ասեմք, Մերձեցաւ ’ի ծովն, Եաղատենեկայ ’ի ծովն, յերեւաւ Նորա Բժանէն, փրամօրընեն ընդեմայերեւաւ Նորա Լա, ո՞չ ահա ակներեւ տեսանի յօրինակացդ, թէ նախդրաւ հոլովքն զիշխանութենէ իմմէ կախեալ կան, զի յառաջին բանսն են Տրական, եւ յերկրորդսն Ներգոյական, եւ այս կախեալ կայ զհաճոյէ իմմէ, վասն զի Բոյն ունի իրաւունս տրամադրել զհոլովս զի արդ եւ հաճոյ իցէ ինքեան ։ Որպէս կամի Բոյն, զի հայել առնուցու Տրական, որպէս Պետրոս հայեցաւ ’ի նա, ո՞չ ոք է որ կարասցէ զսահմանն իմ փոփոխել եւ ասել, հայեցաւ զնա, ահա այսքան է զօրութիւն եւ իշխանութիւն Բոյին ’ի վերայ հոլովական մասանց ։

’Ի բանից աստի մեղմացեալ Նախադրութիւնն եւ աղաչեալ զնոսա ժամանակ շնորհել ինքեան, մինչեւ բարւոք խորհեսցի թէ զորո՞յ կողմն արժան իցէ նմա ունել, ել արտաքս ’ի հանդիսէ անտի ։

’Ի նմին ժամու եմուտ առ նոսա Մակբայ եւ սկսաւ խօսել օրինակ զայս ։

Ես եմ որ հակիրճ բանիւ ցուցանեմ զզանազան պարագայս գործողութեանց եւ յաճախ լինիմ զպաշտօն ածականի գոյականաւ հանդերձ վարելոյ, որպէս փոխանակ դնելոյ, յայժմեան ժամանակիս, կարեմ ասել այժմ, Նարեն, հարկ է ինձ առաջի ամենեցուն յայտ յանդիմաւն ցուցանել, թէ ոչ բնաւ մոռանամ զտեղի ծննդեան իմոյ, և յիշել թէ նոյն իսկ ածականք բազում անգամ ծառայեն Մակբայից ։ Դարձեալ յուշ լիցի ձեզ և այն, զի 'ի յաճախ քննութեան 'ի կիր արկանեն զիս ազգ բանաւորք 'ի բանս հարցաքննութեան, յորում վայրի զզօրութիւն մեծ յանձին իմում երևեցուցանեմ, քանզի 'ի բարկանալ ուրուք մեծաւ սրտմտութեամբք, թէ զիարդ դու եղեռնաւոր յանդգնեցար զայս ինչ անցս ընդ իս անցուցանել, իմ ո՛չ մասնիկս բաւական է զիմ իմաստ բանին ընդ հակառակն դարձուցանել, և զկատաղի սրտմտութիւն նորին առ ժամայն շիջուցանել ։ Որքան չարիս գործեալ կարծեսցի ոք, զո՛չ իմ 'ի դիմի կացուցանեմ, յայնժամ եղեռնագործն այն ո՛չ չար երևի այլ բարի, այսքան սքանչելի է իմ ույժ և զօրութիւն ։ Սակայն 'ի վերայ այսր ամենայնի տակաւին ես ոչ իշխեմ բանս ինչ ածել ընդդէմ իրաւանց, զոր ունիք 'ի վերայ համօրէն մասանց խօսից ։

Յայսպիսի զրուցաբանութիս ծանեաւ Անունն թէ Մակբայն չէ ինչ պնդեալ զհետ աւագութեան, կարի՛ ուրախ եղև յանձն իւր, ուստի և յուսադիր արար զնա թէ ունելոց է նա երբեմն և զզօրութիւն Նախադրութեան և յայնժամ կառավարիչ լինելցի դիպուածոյն ընդ կամս իւր, և այսպիսի համոզանօք յանկոյց զնա յիւր կողմն ։

Ապա սկսաւ 'ի կարգ դնել զամենայն, որ ինչ 'ի նպատակ առաջադիր գործոյն էր ձեռնհաւոր, քաջ գիտելով թէ Բայն կերպարանել կարէ 'ի բազմադիմի տեսակս կամ 'ի տրամադրութիւնս, վասն կարգեաց ընդդէմ Ներգործականին նորա զԳոյականն անուն, ընդդէմ Կրաւորականին զածականն, ընդդէմ չեզոքականին զԲայականն, և տեսեալ եթէ ընդ սեռին հաւասարեցաւ ընդ նմա, խորհեցաւ ուշ դնել այն 'ի Հոլովմն, դիտելով չափ թէ զնոցանէ կախեալ կայ զգերազանցութի՟ն իւր, խորհեցաւ վասն ունելոյ իւր զինն Հոլովմունս, վասն զի Բայն ունի զերկս միայն [illegible]: այլ խնամով ևս յուզեալ եգիտ զի ուղղական և կոչական հոլովք գրեթէ ոչ երբեք կորուսանել ունին զգերազանցութի՟ն իւրեանց, առաւել քան զամ ուրախ եղև ը՟ս առատութե՟ Հոլովադասութե՟ց իւրոց, որոց թիւ հասանէր գրեթէ ցտասն, ուր բայն ունէր զերկս կ՟մ զչորս Խոնարհմունս միայն, բայց ընթերցեալ զքերականական մատեանս, տրտմութի՟ կալաւ զնա, 'ի տեսանել զգերազանցել բային քան զինքն Եղանակօք և Ժամանակօք:

'Ի հասանել ժամադրեալ աւուրն` կարգեցան երկու բանակք մտաւոր էակացս 'ի պատերազմ վիճի, աստի Անուանն իւրովք կուսակցօք, և անտի Բային ընդ զինակցաց իւրոց, և ձգեցաւ արիւնայեղց պատերազմն յառաւօտէ ցմուտս արեգական:

Յառաջնում բաղխման անդ ո՟մ Բայք կորուսին զառաջին դէ՟մ հրամայականին, չզօրելով առնել անձանց [illegible] 'ի [illegible], ոմանք ևս զրկեցեալ 'ի յոնկ յանդից ը՟ս սեռին, ը՟ս ժամանակին և ը՟ս խոնարհման, կոչեցան, Օարտուղիք և Պակասաւորք:

Անունն եմուտ 'ի սուգ դառնութե՟, տեսեալ թէ բազումք յընկերաց իւրոց կորուսին զթիւս, ոմանք զեզակ՟անն, որ՟պ, աւետիք, կեանք, խնդք, օրէնք, ևն, և այլք զյոգնականն, որ՟պ, լոյս, սէր, երկիւղ, ևն, բազումք ևս յանուանց մերկացան իսպառ 'ի կարողութե՟ խոնարհելոյ 'ի վերայ երեսաց յորսայս, կ՟մ հոլովելոյ յերեսաց կողմանէ, և կոչեցան Նախդրաւ հոլովելի·

Յեկ՟րդում Ճակատամարտի Դերանուանքս, սոյն, դոյն, նոյն, ո, իրերաց, միմեանց, իմոյին, ձերոյին, կորուսին ոմանք զԹիւ, և այլք զհոլովս ինչ ։ 'ի բանակի Ընդունելութեան եղեն՝ որ կորուսին զժամանակ, այլք զսեռ, և ոմանք զհոլով ։

'Ի վախճան պատերազմին է բովանդակ բանակն հնչեցին ձայնքս, վա՜յ, ո՜հ, աւա՜ղ, եղո՜ւկ, և ամենեցուն սոսկացեալ յերկիւղ մահու ըմբռնեցան զարհուրագին, արհաւիրք և սոսկմունք ոչ ներէին զայլ ինչ արտաբերել բաց 'ի բառիցդ, յորոց իբրև սըր տալԹափ սարսափեցան ամենեքեան, 'ի մէջ երկուց բանականացն անցեալ Միջարկութիւնն գոչեաց մեծաձայն, վա՜շ վա՜շ զօրութե իմոյ, հուսկ ուրեմն ես յաղԹեցի ամենեցուն ձեզ, և ամենեքեան դուք պարտիք հնազանդիլ ինձ, զի ես եմ առաջնածին ձայն մարդկային բնութե, անխօս մանուկն ինև ծանուցանէ զցաւս իւր, 'ի խօԹանալ ուրուք ինև ցուցանէ զվիշտս, 'ի մեռանիլ մարդոյ բարեկամացն եկեալ փոխանակ յերկար պարբերութեց խօսից, աւա՜ղ աւա՜ղ, եղո՜ւկ, որով մի բառս լնու զտեղի բազում խօսից, սակայն 'ի վե՟ր այսր ամի չպահանջեմ 'ի ձէնջ աւագութի, գիտելով քաջ Թէ ոչ կայ այն յունել զառաջին տեղին, վա՜յ դուք ո՜ն էհա՜յ հա՜պա արարէ՛ք խաղաղութի է իրեարս,

'Ի խորհել անդ պատերազմականացն զդաշանց խաղաղութե, անդէն 'ի վերայ եհաս ՇԱՂԿԱՊՆ իւրով փոքու գնդաւ, և միաւորեցեալ զուարԹագին դիմօք ասէ, Ողջո՜յն և խաղաղութի ընդ ձեզ՝ գերապատիւ իշխանք քերԹողական վայրաց, առէ՞ք արդեօք զփորձ կարողութե իմոյ, տեսէ՞ք զիարդ 'ի մեկնիլս 'ի ձէնջ, պատերազմ և կատարած մահուան ծագեցաւ 'ի ձեռում միջի, և չգտաւ ոք բաց յինէն 'ի յօդաւորել զձեզ ը՟ իրեարս շաղկապաւ սիրոյ, զի ուր չէ՛ք զօդաւորիչ սէր, ամենայն ինչ խառն 'ի խուռն խուժանօք շփոթի 'ի պայքար, յայս սակս ամենայն ոք ո՞մ ուրեք զիս փափաքէ ունել 'ի միջի, Տէրունե՛ք քաղաքք, գերդաստանք, և ընկերունե՛ք առանց իմ չզօրեն կալ յերկար յոտին, կալարու՛ք ապա և դուք զիս առ ձեզ՝ համբուրիւ խաղաղութե՟ զօդեալ ընդ իրեարս, զի միաբան գործակից լիցուք մարդկային լեզուախօսութե՟ յարտայայտել զխորհուրդս բանական մտաց, 'ի չքնաղաբան հագներգութե՟ դիւցազանց, և 'ի պատկերագրութե՟ յաւերժալոյս պսակաց անթառամ փառաց հրաշազնին տաճարի լուսաբնակաց, ուրանօր քերթողահարքն Իսահակ և Մեսրովբ, Եղիշէ և Ներսէս, Գրիգոր և Սարգիս նմանեօքն հանդերձ ահեղահրաշ արեգակնափայլութ՟բ նշուլազարդեն ըզտիեզերս բովանդակ :

Հաւանեալ ամենեցուն այսց իրաւացի համաձարաբանութե՟ց եդին ուխտ խաղաղութե՟ ընդ իրեարս 'ի դաշն սիրոյ, և ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս :

Յովհաննէս Երէցփոխեան 'ի Տոկատայ :

ՔԵՐԹՈՒԱԾ · ԽԱ ·

Յառաքինութեան Ողորմութեան .

Ո՞ւր ուրեք գտցի՛ քան զքեզ սրբագոյն ,
ո՞ Ողորմութի՛ւն վերին բարեաց բոյն ,
որ ինչ գեղեցի՛կ յերկինս և յերկրի ,
պսակ և պատի՛ւ առ քեզ է և քոյն ։
Ո՞ կարէ առանց յափշտակութեան ,
նկատել 'ի թագ քո գեղեցկութեան ,
ո՞ր խաւար անդունդ ոչ արփիասցի ,
'ի լուսոյ աչաց քոց ցոլացութեան ։
Շփոթ աղմուկ ե՛ս և այսոց փաղաղ ,
ո՞չ ժպտանօք քո՛յ փոխին 'ի խաղաղ ,
որոտմունք և ամպք երկնային ցասմունք ,
քոյ ձայնիւդ զմե՛զ բերկրեն իբրու խաղ .
Ուր դու բնակի՛ս փայտ խանձող ծաղկի ,
սահանք բարութե՛ան յերկնից մեզ թափի ,
անառակ որդի՛ պոռնիկ և աւազակ ,
'ի քթթել ական 'ի հրեշտակ փոխի .
Մայր քո Սէրն սուրբ յոր Աստուած բնակի ,
'ի սրտէ յաղեաց զքեզ ծնանի ,
Սէրն զքեզ յաթոռ փառաց պսակէ ,
գահ և գաւազան առ աջոյդ բերէ .
Ուստի՞ սփոփանս աղքատք որբք այրիք ,
մխիթար յումմէ՞ բանտեալք մերկ գերիք ,

Հիւանդք պարտապանք ատենից մատնեալք
բաց 'ի քէն յումմէ՞ առնուն սպեղանիք ․

'Ի թագաւորաց տերանց իշխանաց
երբ բազմիս 'ի սի՛րտս լուսով քոց փառաց ,
քանի՞ երջանի՛կ լինին ժողովուրդք ,
հոգւով մարմնով լի՛ գանձուք բիւր բարեաց ․
Աթոռ կայսերաց բեմք դատաւորաց
ո՞չ քեւ հաստատի՛ն 'ի պարծանս ազգաց ,
նա՝ զողորմութի՛ւն ո՞չ զզոհ կամիմ
ո՞չ ինքն Աստուած կանխաւ զքէն ձայնեաց ․
Զյովնան 'ի կիտէ՛ն զՊետրոս 'ի բանտէն ,
զանառակ որդի՛ն 'ի խոզից հովուէն ,
տէ՛ր զկիսամահն 'ի յաւազակաց ,
ո՞չ սամարացի՛դ ազատէր քեզէն ․
'Ի դատաստանի՛ մարդկան ւ Աստուծոյ ,
բարձրագլուխ և՛ անանց ամօթոյ ,
կապել իսկ զձե՛ռս ամենազօրին ,
ո՞չ դու եթ պարծիս պարծանքդ Աստուծոյ ․

Աշակերտն ճեմարանեանց 'ի Տփխիսոյ ։

* * *

ՔԵՐԹՈՒԱԾ ԽԲ.

Առ Աշխոյժ Ոգի Բանաստեղծութեան.

Յանտառախի՛տ լերանց սահմանք կատաղած որ ,
գետահոսե՛ն բուռն խոխոջմամբ 'ի վի՛հ ծործոր ,
ի՞բր որոտմա՛ն 'ի կողս ժայռի՛ց քարակարկառ ,
մինչե՛ն վե՛մք շաչե՛ն անտա՛ռք հսկայափառ ,
յանհուն ծովե՛ դարուց խորի՛ն համատարած ,
սաստկասարսուռ հոսանք ահե՛ղ ժամանակաց ,
այնգոյն դիմե՛ն 'ի յայս հովիտ կենաց հրոսեալ ,
այսպէս մահու՛նք խիստ մրրկաւ ձիազինեալ ,
զգաւառս յամպս վերականգնեալ մառախլապատ ,
սքօղեալ դաղե՛ն յանդունդս աւու՛րց գիշերապատ ։

Ուր ամբարձման քաղաքք վսե՛մ դեղապարոյր ,
բազմածրար անտառք զովեա՛լ հողմահամբոյր ,
ուր տէրունի՛ք էի՛ն , այժմ անդ կոյտ ծաղկափայլ ,
մամռոյ լօռուտ բորբոս ձգի՛ խառն ձիւնափայլ ,
և ուր բանակ հոյլ ամբոխի՛ց ծաւալեցան ,
պամբարանաց արդ աւերակք տրտմակերպեան ,
յաղթողակա՛ն ուր հնչեցա՛ն փողք հուպ ընդ հուպ,
հողմ կատաղի՛ ոռնայ ուժգի՛ն աշխարհածուփ ,
ուր կառուցեալ տաճար փառաց լուսակատար ,
'ի դալարի՛ սողայ ընդ վե՛մս օձ թունավառ ։

Արաթեւեա՛ն ուր Ախոյեանք քաջք անվեհեր ,
զանձ կուտելով ճոխ սահմանաց հրոսանուէր ,

ընդ շարս մթի՛ն խոր անդնդո՛ց երազեցի՛ն ,
վստահադէ՛տ յամուր պատուար յանդգնեցի՛ն ,
վի՛հ խորխորատ անդ ձիւնալի՛ց վայրենաբնակ ,
քարապատուար հողեալ յերե՛սս ջրակուտակ
շառաչէ , շո՛ւրջ զանապատի՛ւ անշէն դիտեալ ,
յանկարծածի՛ն խոռոչ հեռւի՛ ընդոստ բացեալ ,
բացեալ զդե՛մն տխուր ընդ ամպս խաւարամած ,
հայի պայծառ յարփի փայլի՛ւն ամօթախած :
Ո՜ աշխարհ ձո՛ր ջերմահովի՛տ ծանրաբեռնեալ ,
դամբարանաւ ազգաց ազանց տարածանեալ ,
Ի՜ փրկեցայք դուք , և կամ ո՞ւմ աշխարհ համակ ,
բուրէ զխունկ սբ̄ օրհնութե՛ան մի՛շտ անքանակ ,
որո՞յ լեզո՛ւք 'ի սբ̄ ծաղկանց մեղրագործէ ,
'ի մահուանէ՛ յանմահութի՛ւն զէս վերածէ ,
Ո՞ր իցէ այն Հոգի ահե՛ղ ամենազօր ,
կանգնել դարո՛ւց տալ հրաման մի՛շտ ահաւոր ,
Ո՞ 'ի գեղգե՛ղ սիւգ դայլայլի՛կ հրաշաքերուք ,
զո՛ւնկս ազգա՛ց կախարդէ գո՛գ անդէն առ ումպ :
Ո՞չ ապաքէն դո՛ւ Բանաստեղծ Բերթողութիւն ,
ձայն հոգեշարժ այ սուրբ հագներգութիւն ,
ոչ արդեօք դո՛ւ Ներշնչութիւն եթերական ,
որ 'ի միայն ժամանակաց յաւերժական ,
զգործս անզո՛յգ օրէնսդիր վեհականաց ,
զԹագակալաց զԴիւցազանց և զԲերթողաց ,
հուսկ ապա մե՛զ փողահնչե՛ս հրաշանուագ ,
մահու կանգնե՛լ բանաբարե՛ս դէմ յաղթանակ ,
կենաստեղծե՛ս զհերոսս ննջեա՛լ 'ի տապանի
նորակենդան , յուսկեծորան շար տողանի ,
Ո՜ աշխարհ ողջո՛յն որոտմունք դու փոթարակէ ,
մաուն օրակո՛ւլ զլա՛յն գաւառս քօղաբորբէ ,

ծուխ արձակեալ յարիւն խայթե՛ն բոցք շանթակէզ
յոլորածո՛ւխ սողոսկի Մա՛հ զարհուրատես ,
իսկ քո արծուի՛ լայնամագի՛լ զազանակուր ,
սաւառնեալ յօ՛դս զթեւս մրրկա՛ւ նորափետուր ,
յանհուն աստե՛ղս յոտից ներքո՛յ անթարթ դիտէ,
յարշալոյս ա՛յգ ծիրանածա՛գ խաղայ ձախրէ ,
անդ՝ ուր ոչի՛նչ հողմն հնչե՛լ վստահանայ ,
ոլորտաձա՛խր օդապարի՛կ սուր խոյանայ ։
Նա՛ ժամանակ որ յընթացս ո՛չ իւիք կասի ,
յաւիտեան ի՛ւր դարուք ՚ի քե՛զ դահավիժի ,
անտառք լերի՛նք շինուածք ահե՛ղ բարձրաւանդակ
առ քեզ ուղի՛ղ ազատաքա՛յլ ուահ ընդարձակ ,
էակք համա՛յն յերկի՛նս յերկրի՛ խնդակատար ,
առ քո բարբառ հրաշազրո՛յց մեծամեծար ,
խոնարհադէ՛մ առ քեզ դիմե՛ն յափշտակեալ ,
ւ ՚ի տրիտո՛ւր զդափնիդեա՛յս պսակ բերեալ ,
զգանձ դարո՛ւց աւագագո՛րծ փառածայրեալ ,
քեզ եթ ձօնե՛ն արփայագնա՛ց վերաձեմեալ ։
Դու Բանաստե՛ղծ Քերթողութի՛ւն զերթ միջօրէ,
տաս հրամա՛ն ճշմարտութե՛ան զսիրտ զմայլէ ,
և աղջամո՛ւղջ շուրջ զնովա՛ւ նսեմական ,
զգարնանափո՛յլ զաւուրց զգենո՛ւ դէմս բերկրական,
դու վարդ ծաղի՛կ արարածո՛ց խրախճանական ,
քաղեալ յերկնի՛ց դարաստանէ յայն մետուղփեան
ծաղկազարդե՛ս զաշխարհս յաւէ՛րժ դու անքանակ
ասես և ջի՛նջ արեգք վառի՛ն արփիարձակ ,
զարմանազան նազե՛ս աշխա՛րհք նորաստեղծեալ ,
ձայնիւ քնարո՛ց քաղցրանուագ ներդաշնակեալ ,
Տաս հրաման դրունք դժոխո՛ց որոտագի՛ն ,
բանան ահի՛ւ քո յանդիման ահեղագի՛ն ,

ծովք բազմաչեան շուրջ զնովաւ. անդ ջեռուցեալ,
լեռնապխի սերտ պարսպօ՛ք բոցակիզեալ,
քեզ 'ի յերկրի՛ իբր առագաստ խորախ հոլանեալ,
բանան զշաւի՛ղս հրակայլա՛կ յար արծարծեալ,
տաս հրամա՛ն և քօղ դարո՛ւց անցողական,
յայտնատեսի՛լ հանդէպ դիմա՛ց քոց հրաշաղան,
լուսագծեա՛լ բացափայլէ՛ սքանչելափառ,
գաղեալք յայտնի՛ն մեռեալք յառնե՛ն կենդանափայլ։

Ո՞չ գիտէ՛ եթէ Հե՛րոսք քաջամարտիկ,
Թարց նուագա՛ց Բանաստեղծի՛ց կորնչէի՛ք,
'ի վաղնջո՛ւց էի՛ք յերկրի՛ դուք մոռացեալ,
ինքնակործա՛ն 'ի խաւարի՛ գիշերացեալ,
յանկարծահաս արձակ կողմո՛ւնք լայնասահման,
և կործանեա՛լ քաղաքք անթի՛ւ երջանկաղան,
հոսանք գետո՛ց արիւնաբո՛ւղխ ալեաց բղխեալ,
անկեալ պարի՛սպք քաղաքք հիմա՛մբ անդ տապալե՛լ,
'ի դամբանի՛ բիւր գերեզմա՛նք բարձր ամբարձեալ
տօնակատար են յիշատա՛կ անմահացեալ։

'Նա՝ կենդանեա՛ց շաւի՛ղք աւուրց են հանգունակ,
զօրէ՛ն թողո՛ւլ զիւրեա՛նց կնի՛ հետք բովանդակ,
յորոց 'ի ձե՛ռն մա՛րթ հմայե՛լ զազգն երիկայ,
Թշնամի՞ անդ տիրեաց արդեօ՛ք թէ քաջ հսկայ,
պարզէ զնոսա Ներբողութի՛ւն որոշակի,
զմի՛ն վարձէ՛ անմահութե՛ամբ զուարձալի,
անմահութեամբ, բայց բարելի զմիւսն պատժէ
պատժէ զի յո՛չ ինչ մեծութեա՛նց նա սարսափէ՛,
իբր որոտո՛ւմն փայլի յոսո՛խս թշնամասաստ,
'ի քարանձաւս և 'ի տաճա՛րս ոսկեպատուաստ։

Ուր 'ի խարդախ հիդրայ դիմէ՛ եօթնագլխեան ,
Ճշմարտաբան լինի 'ի խօ՛սս եռալուսեան ,
զնենգութե՛ան քօղ պատառէ՛ դարմանակալ ,
զառաջեաւ մե՛ր յակըն ածէ՛ զազգ բռնակալ ,
եղեռնագո՛րծ պատրի յուսո՛վ վարկպարազի ,
զօղել կարծէ՛ յայնմանէ 'ի դամբարանի ,
բայց 'ոչ երբէ՛ք խուսափեսցէ՛ նա անդանօր ,
այլ 'ի կոթո՛ղ նախատանա՛ց միշտ Ճահաւոր ,
հրաշանկա՛ր արձանացի՛ արիւնազանգ ,
խո՛յս տուր գաղի՛ առ թշնամի՛ բազմավտանգ ։

Յոհանէ Եօճայեանց 'ի Պօլսոյ ։

ՎԵՐԹՈՂԱԾ · ԽԳ ·

'Ի գովանայէն Լեա Բարկութեան ։

Բարկութիւն է մոլեկան
ունակութիւն դիւագումար ,
յանկանիլն 'ի սիրտ մարդկան
այրէ իբրու հուր դիւրավառ ։
Ո՞յց արդեօք կամ ո՞րպխեաց
համադատեալ քատակեսցուք ,
որո՞վք զի՞արդ զայս անշըլ
ախտ չար հոգւոյ մերկացուսցուք ։
Ծփի միշտ աշխարհ համայն ,
հողմավար 'ի կորուստ մատնի ,

զայրագնեալ նովին 'ի ծուխս
շրջամոլիկ տապի այրի ։

Բարկացող հրաբորբոք
սուսերամերկ սպառազինեալ ,
յօշատէ զբարի զչար
զարժանն և ոչ առ ձեռն գտեալ ։

Յօդս թևոց հողաթևէ
միշտ 'ի չարիս վերաթևեալ ,
սլանայ որպէս արծիւ
յեղերս երկնից վերամբարձեալ ։

Բանական իմաստութեան ,
որէ պատկեր տիրականին ,
խաւար ածէ կուրութեամբ մտաց
ը՟դիմացեալ սուրբ հրամանին ։

Ոչ խորհի յուղիղ կշիռ .
իբր իմաստակ խելագարեալ ,
չգործէ ըստ պատշաճի
'ի միտս թանձր կուրաստեղծեալ ։

Ոչ տրոհէ զհամեստն և զո՛չ ,
զբարեկամն 'ի թշնամւոյ ,
մուծանէ յամենեսին ,
'ի զէն 'ի քէն զժանտախտ հոգւոյ ։

Այսպէս միշտ յանկարծածագ
սրտմտութիւն նորա վառեալ ,
ձեռնարկէ մերկել զսուր ,
վրէժ խնդրել վնասողին ։

Զածէ ակն դիմամարտիլ ,
մինչև առթել մահ իւր անձին ,
'ի լսել զվնաս առ ինքն

Հրանայ սիրտ վառի բոցով ։
Տեսանել զաւթօղ չարին
այրի հոգին հրով դիւաց ,
Թափեն աչք զհուր զջուր
փայլատակեալ կատաղանաց ։
Երեսաց դէմք շառագնին ,
դողան շրթունք բաբախեն կուրծք ,
ռնգունք ծուխ արձակեն ,
խաւարին միտք կարկին զրոյցք ։
Այսպէս մարդ Տիրապատկեր ,
հաւասարեալ չար գազանաց ,
բառանջէ որպէս ըղցուլ ,
փաղարխեան չար տանջմանց ։
Մինչէ գոգցես աւխուծ ,
մահ սպառնայ իբրև վիշապ ,
խածանէ որպէս զշուն
զընկերութեան լուծեալ զկապ ։
Մոռացեալ զԱստուած զհոգի
զօրէնս զպատիւ առ ոտս կոխէ ,
կրճտեալ զկիղծ ատամունս
չարաթոյ զինքն զընկերին տայէ ։
Այսպիսեօք կենդանագրի
պատկեր նորին զերթ դիւական ,
Թէ բուժել ջնա կամիս
տուր հայելի ակն յանդիման ։
Թէ կանուխ թէ անագան ,
չապաշխարեալ յախտէս դաժան ,
հասանէ փութանակի
՚ի խոր յատակս թշուառութեան ։

Խաչատուր Եւէմրղեանց Աստուածատուրեանց ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԽԴ ·

Ներբող՝ երգ Աստուածաբանութեան ․

Յաստուծո՛յ տաղերգութիւնք ,
 Թող յԱստուծո՛յ դարձցին 'ի ծոց ․
Դու Տէ՛ր ե՛ս լիցիս հաստիչ
 ամենայն այսց արարածոց ։
'Ի փառօ՛ք յաւերժափայլ
 պաճուճեալ քո՛յդ յաւագաստի ,
'Ի հաստատ հիման որքում ,
 որ անսասան է օրհասի ․
'Ի բարձու բարօրութեան
 կարողութեան 'ի խորհրդի ․
Յըղդալի՛ յայս մեր աշխարհ ,
 յանտես երկինս յայնմ աշխարհի ։
Ընբաւ քո՛ իմաստութիւն
 իբր արեւու ջինջ լոյս փայլի ,
Օ ամենա՛յն ինչ դարմանէ ,
 պահպանէ և յինքեան ունի ։

'Ի միջի՛ մառախուղի
 և 'ի մա՛յլ անդունդս միգաց ,
Մեր այս կեա՛նք միշտ անշարժ կայր
 իբրև զծո՛վ զուրկ յեղերաց ։
Կամ իբր խո՛ր ովկիանոս
 անծայր և յե՛ւր ընթացս փոյթ ։

Հուսկ ապա ասաց Բարձրեալն ,
և ճեղքեցաւ միջի ծածկոյթ ։
Գոյացան հրեշտակք բիւր ,
և խորխորատք երևեցան ։
Տարերաց իսկ մեքենայք
խորհրդաւորք անդ շարժեցան ։
Եթէ թիւ չափ և շարժմունք ,
թէ ծանրութիւն որակութիւն ։
Առժամայն մատեան յընթացս ,
ապա ծնաւ Աշխատութիւն ։

Ընդհանուր Աշխատութիւն
ծագեաց 'ի սուրբ Տեառն դահէ ։
Եւ խորհուրդ զոր այս աշխարհ
երբեմն ունէ՛ր 'ի սկզբանէ ։
Չէ՛ այլ ինչ , թէ ոչ մեր կեանք ,
և պատուիրմանք միայն Հաստչի ։
Զի համայն երևելիքս
աշխատութեամբ հանդերձ ծաղկի ։
Զի նա է՛ հոգի և մայր
ժամանակի՛ բոլորովին ։
Թէ աշխարհ , թէ արարածք
նոլաւ միայն ծաղկազարդին ։

Զի՞նչ իցե՛ն ընտիրք նորա ,
կամ զի՞նչ ծաղկեալ գանձըք նորին ,
Բայց եթէ՝ ուղիղ կանոն ,
որով երկի՛նք երկիր հաստին ,
Կարգ բարի՝ որում նուագք
ձայնից երգոց նախանձաւոր ։

Համբերութիւն որ 'ի մարտի
  խռովութեանց անխախտաւոր ,
Տեւողութի՛ւն մեր ամենայն
  աղտեղութեա՛նց ջնջան սրբի՛չ ,
Փորձառութիւն՝ որ անցելոց
  եւ ներկայի՛ց արդար քննի՛չ ,
Ո՛վ եւ դու Կ՛ամակցութիւն ,
  որ ես կապ յօ՛դ գործո՛ց բանից ,
'Ի նոյն եւ՛ հոգւոց երկնից
  եւ լուսեղէ՛ն քերովբէից .

'Ի չորի՛ց ծագաց երկրի
  չորեքի՛ն հո՛ղմք զօրէ՛ն դիտի ,
Ազգե՛ն ձե՛զ , ո՜վ մահացու
  թագաւորք եւ՛ մարդի՛կ երկրի ,
Ասե՛ն , լո՛ւր ահա անդուլ
  չորք եղանա՛կք տարւոյ , գարո՛ւն ,
Թէ՛ ամա՛ռն , եւ թէ՛ ձմեռն ,
  աշխատ լինի՛ն իբր եւ աշո՛ւն .
Զի՞նչ իցէ՛ օր եւ գիշեր ,
  զի՞նչ առաւօ՛տ եւ երեկոյ ,
Զի՞նչ տարւո՛յ փոփոխութի՛ւնք ,
  որք անցանե՛ն հետ զհետոյ .
Բայց եթէ՛ Աշխատութի՛ւն
  յարալածո՛ց օգուտ կարգեալ ,
Յարարչէ՛ն ամենեցուն
  'ի ծուլութեա՛նց զմեզ բժշկեալ ,
Զի նոցո՛ւն աշխատանօք
  ւ 'ի բարեբե՛ր նոցա դիմաց ,

Ծանիցե՛ս զքո Աշխատանս
ո՜վ հողածի՛ն դու արարած ։

Աշխատանքն զտիեզերս
զօդեաց յօդի՛ւ ընկերութեան ,
Բորբոքեաց զպատերազմ
'ի մէջ չարւո՛յ և բարութեան ,
Զչար կի՛րս զսպէ սանձիւ
լեալ հակառա՛կ պիղծ բաղձանաց ,
Եւ մեղա՛ց լուծ խորտակէ՛
մաքուր սրտի՛ւ խղճմտանաց ,
Յամենայն վայրի նա է
կրթիչ մտա՛ց զգայութեանց ,
Նա եղե՛ ծնօղ դայեակ
երջանկութեա՛նց հարստութեանց ,
Զի ուր չի՛ք աշխատութիւն ,
անդանօր մե՛ր հոգի մարմին ,
Իբր արծի՛ւ առանց թևոց
կնաբարո՛յ վատին մեղկին ։

Աշխատանքն հոսեալ զկաթիլ
զապառաժ վէ՛մըս ծակոտէ ,
Թափանցէ՛ 'ի խորս լերանց
ըղձէ՜ աղբի՛ւրս ցամաք փոխէ ,
Յանդաստանս անպտղաբեր
և քառակի՛ու պտուղ բերէ ,
Զչար մարդի՛կ բարի պտղովք
մաքուր վարո՛ւք միշտ զարդարէ ,
Քաղցր առնէ՛ քնքուշ հօր մօր
առ զօրօրո՛ց շարժել մանկանց ,

Զզգացմունս զարթուցանէ .
անձն զթի՛ւ գերդաստանաց ,
Նա մարմնո՛յ առողջութիւն
կենաց անձի՛ն մեր պահպանիչ ,
Եւ նա մե՛զ յամենայնի
խորհրդատու մխիթարիչ ,
Նա եղբա՛յր առատաձեռն
ամենայն ը՛զնա սիրողաց ,
Պարգեւի՛չ ուրախութեանց
Թագ ընձեռէ՛ յետ յաղթութեանց ։

Ո՞վ իցէ՛ Ատլանտ արքայ
բարձեալ 'ի գլո՛ւխն զգունտ երկնից ,
Ո՞չ արդեօ՛ք Աշխատութիւն
բարձող բեռա՛նց սիրտ հսկայից ,
Ո՛ անդի՛ն աշխատութիւն
յերկնից տուեա՛լ մեզ օրհնութիւն ,
Դու մեզ փա՛ռք , պատիւ , հանդիստ
դու ցնծութի՛ւն զուարճութիւն ,
Դու ծնա՛ր զգիտութիւնս ,
դու արհեստի՛ց եղեր դտակ ,
Երջանի՛կ զմեզ արարեր
լցեալ զաշխա՛րհ բարեօք համակ ,
Ի ծո՛ւլէ՛ 'ի ցամաքէ
մեզ հանապա՛զ ընծայ բերես ,
Թէ զոսկի՛ , և թէ՛ արծաթ
ամենեցո՛ւն դու պարգեւես ,
Կթոտեա՛լ երկրագործին
սիրտ և բազո՛ւկ քև զօրանայ ,

Կատաղէ՛ ալիք ծովու
  նաւավարա՛ց քեւ հեշտանայ ,

Ո՛չ Յունա՛ց , ո՛չ Ասորւոց
  նշանագի՛ծք զբարբառ Հայոց ,
Թարգմանե՛լ զօրէին ինչ
  ’ի պիտանեա՛ց հոգւոց մարմնոյ ,
Տագնապէ՛ր սուրբն Մեսրովբ
  առ ճիշտ գիրը՛ս մեզ գտանել ,
Յուսահա՛տ յետ բազմադէմ
  հնարից զիրա՛ն կարծէր անել ,
Բայց դու սո՛ւրբ Աշխատութիւն
  զօրացուցեա՛լ յերկնից ըղձա ,
Արի՛ կա՛ց , ասես ցնա
  է՞ր լքանի՛ս ջա՛ն դիր փութա՛ ,
Ա՛նց ընդ ծո՛վ , ե՛րթ ընդ ցամաք
  հա՛րց փորձ արա՛ դէտ իմաստնոց ,
Խոստանամ քեզ յաղթութիւն
  թէ յաղթես դո՛ւ լերանց բլրոց ,
Այսպէս վա՛ղ պսակեցիք
  զազգ մեր փառօ՛ք անմահաբար ,
Մեսրովբ քե՛ւ դու մեսրովբաւ
  ձեօք մեք առ ձե՛զ բերեմք ‘Նեկտար ,

Առ լուսո՛վ ճրագի միշտ
  ’ի ճեմարա՛նըս գիտութեանց ,
Թէ կտտի՛ն գլուխք և միտք
  և աչք մանկա՛նց աշակերտաց ,
Թէ ուսմո՛ւնք Հայոց Մուսաց
  Գաղղիացւո՛ց Գերմանացւոց ,

Կակաղե՛ն զբերան զլեզու
 Թոթովախօ՛ս նոր տղայոյ ,
Թէ՛ Մուզա՛յն ո՛չ պարգեւէ
 Թիւ չափ քանա՛կ Բանաստեղծին .
Ափրոդի՛տ թէ զլանայ
 զՁեւս իմաստի՛ց Ճարտասանին ,
Թուանի՛ սուրբ Աշխատանքն
 յերկնից ՚ի սի՛րտ աշակերտաց ,
Բարբառե՛լ վեցեակ լեզուօք
 առնէ մանկա՛նց յունկս ծերոց ,
Նետք թուի՛չք ՚ի կապարճից
 ներշնչութեա՛ն հոգւոյն խանդէ ,
Բանաստե՛ղծն եւ Ճարտասան
 զերթ բունաշո՛ւնչ փայլակն ցայտէ .

Ո՛վ ցուցի՛ց քեզ այլ հրաշք
 մանուկ ընկե՛ր իմ՝ նազելի ,
Հայեա՛ց տե՛ս անդ առ ոտըս
 Ալպեան լերա՛նց զարհուրելի ,
Աննիբա՛ղ ընդ բիւր զօրաց
 կամի ՚ի Հռո՛մ գնալ յաղթել ,
Բայց Ալպեա՛ն լեառնըն ասէ ,
 չտամ՝ քեզ ա՛նցք , կասի՛ր մատչել ,
Աշխատա՛նքն անդէն եկեալ
 զվհատեա՛լս յանդիմանէ ,
Ո՞ւր կայք դո՛ւք , ի՞մ սպառէք ,
 հի՞մ ամօթ զձե՛ր դէմս չծածկէ ,
Այս լերի՛նք դրախտ են ձեզ ,
 եկա՛յք զիմ՝ հե՛տ , տաց ձեզ ջեմել ,

Թէ յաւա՛ղ քան զձեզ ո՛չ ոք
 չէանց է՛ այն , չէ՛ փոյթ զննել ,
Ասաց և՛ կալաւ զձեռս
 զօրաց , տարա՛ւ յայնկոյս լերին ,
Երթ պատմեա՛ ասաց Հռովմայ ,
 Թ’ աշխատանօ՛ք լերկի՛նք հարթին :

Արի՛ տե՛ս դու Հայաստան
 ըզնո՛ր այգի՛ս նուրբ գիտութեանց ,
Որք ծաղկի՛ն Աշխատանօք
 արփիափա՛յլ տա՛ն Ղազարեանց ,
Մուզայք օ՛ն , պճնեցէ՛ք արդ
 ըզբարձրացեա՛լ մեր զԱրարատ ,
Սուրբ զաթո՛ռ Էջմիածնի
 յօրինեցէ՛ք մեզ նոր դրախտ ,
Անմահ մե՛ր Վարժապետիս
 պատրաստեցէ՛ք թագ և պսակ ,
Որով մի՛շտ մարզի՛մք յուսմունս ,
 անձա՛ռ լուսո՛յն լեալ ընդունակ ,
Հա՛յաստան , փոխան բարեաց
 Բարերարա՛ցս կանգնեա՛ զարձա՛ն ,
Մե՛ք յԷէ՛ն խնդրեսցուք յար
 հոգւոյ սոցա՛ զօրհնութեան բան :

Սարգիս տիգրանեանց ՚ի Նախիջեւանայ :

* * *

ՔԵՐԹՈՒԱԾ · ԽԵ ·

'Ի գոյութեան Աստուծոյ, ծանուցեալ նաև 'ի վայրենի մարդկանէ ։

Ամենուստ մեզ տեսանի յակն Տեառն նշան,
Ամենուստեք նշմարի միշտ Էն վերնական,
Ո՞ր է եակ՝ որ յայս դրախտ ստեղծական,
Ո՛չ ճանաչէ զիւր ճշմարիտ Տէր գերբնական,
Ուր և գտաւ 'ի յաշխարհի բնութիւն մարդկան,
Անդ և պատիւ փառք Աստուծոյ քարոզեցան,
Թէպ՟ բլուրք գետք ծովք լերինք յոյժ բարձրաբարձ
Զատուցանեն զարարածըս ողջ 'ի միմեանց,
Բայց մի սիրտ մի հոգի զգացումն անփոխական
յԷէն տուեալ են մարդկայինըս բնութեան ։

Անդ 'ի փապարս՝ ծնեալ 'ի լեառըն հողմաշունչ,
Վայրենի մարդն շամբուշ 'ի բոյնս իժ դառնաշունչ
'Ի հրաշէկ մըթնոլորտըս արեգական,
Կեայ և ապրի մերկանայ զկեանս հանգստական,
Իբրև ստուեր 'ի լերինս աստ անդ տատանեալ,
Որպէս որդն է երկրաւ սահեալ զուարճացեալ,
Զննել անզօր ըզզինչութիւն էից բնութեան,
Մուտ առնէ յայս անկարծ թատրոն աշխարհիս տան
Ուր առարկայքս սքանչելեաց հրաշատես,
Հրամայեն՝ հարցանել ցինքն՝ ո՞վ ո՞ւր եմ ես ։

Զնա տարակոյս պաշարեալ յայս բան քննական,
Ածէ 'ի հոգս զննել զանձն ինքն յինքեան,

'Ի ճանաչել զհաստիչ հոգւոյն գերբնական ,
Եւ զնպատակ ստեղծման իւր և զվախճան ,
Միտք նորա սիրտ առ ափշութեան առ հրաշալիս,
Շանթահարին գայթ 'ի գայթի յոտնկելիս ,
Ուր և դարձցի զայլ ինչ զիւրեաւ ոչ տեսանէ ,
Բայց թէ զհրաշս գործուածք ձեռաց նն՟ արարչէ,
Անդ սբ՟ սիրով եռանդեան առ նա բորբոքեալ,
Զանձանօթ զայն Բարի սիրէ յափշտակեալ ։

Ըզմայլեալ յիւր յոգի անչափ այն բարութեամբ ,
Զմիտս ամբառնայ խորամուխ յայն ծով քննուբ՟,
Ընդ աչս տեսեալ զզարդարանս երկնից երկրի ,
Զծով ցամաք զբոյս զտունկ բիւր կենդանի ,
Անթիւ աստեղք կամար երկնից օդէք թռչուն ,
'Ի մոլորակս զՓեբոս հրավառ միշտ շողշողուն ,
Սքանչացեալ է գեղեցկութիւն այնր ափշուբ՟ ,
Իբրև զած՟ պաշտէր զԱրև մոլորութեամբ ,
Բայց և նորուն փայլ ճաճանչիւք կուրաստեղծէր,
Յերկիր բերէր զտեսիլ աչացն խոնարհեալ ։

Բայց ւ աստանօր այլ նորահրաշ մեծ տեսարան ,
'Ի միտս նորա ծնանի զխորհուրդ գեր քան զբան,
Զի ամենայն բնութիւնք 'ի հրաշս են բոլորեալ,
Ո՞ւր եմ արդեօք ձայնէր նորոգ սքանչացեալ ,
Ո՞վ իցէ այն երջանիկ տէր երանութեան ,
Որոյ յայս տուն բղխի աղբիւր ինձ բերկրութեան,
Ընդ որո՞յ այս իշխանութեամբ աշխարհ դալար ,
Եւ կամ վասն է՞ր այնչափ չքնաղ երկնից կամար,
Ո՛չ գոյ այլ ոք բաց յինէն աստ գուցէ և այլուր,
Ես միայն կամ յիմ խորհրդոցս շաղեալ յանուր,

Ես աստ եմ բայց՝ յորժամ որպէս՝ ոչ ինչ գիտեմ
Ո՞վ եմ ես կամ, ուստի՞ վասն է՞ր, զայս մտածեմ ։

Աստ եմ այժմ բայց ո՞ւր էի 'ի սկզբան ,
Եւ ո՞վ արդեօք էած եբեր զիս յայս սահման ,
Յո՞րպիսի ես չքնաղ 'ի զարդս եմ պաճուճեալ,
Ո՞վ ինձ լինել հրամայեաց այսպէս պճնեալ ,
Լսեմ զձայնս արարածոց պէսպէս երգոց ,
Բայց ինձ անյայտ նոցին են ձայնք պարուց բիւրոց ,
Ընդէ՞ր առիս գան կամ քծնեն ամենեքին,
Տեսեալ նոցա զիս միանգամ այս առաջին ։

Զի՞նչ են եակքս ո՞ւմ պատկանին ո՞վ տէր սոցա ,
Ո՞վ կերակրիչ, յումմէ՞ վասն է՞ր ո՞վ զայնս հոգայ,
Ես չիմանամ թէպէտ զէիցդ զսկիզբն վախճան ,
Գիտեմ միայն թէ ո՛չ ծնայ վասն իմ ինքեան ,
Որպէս կարեմ յանկարծակի յական քթթել ,
Լսել զգալ շարժել գործել հասու լինել ,
Եւ զառարկայս պարզ և յայտնի ամբողջապէս ,
Եւս մի անգամ տեսանելով բացատրոհել ,
Ո՞վ ետ ինձ զայս երջանկութիւն վայելչական ,
Ո՞ւր նա յինէն կայ թագուցեալ անտեսական ,
Ի՞նձ է տուեալ տիրապետել այսց բարութեանց,
Զի 'ի սոսա զիս տեսանեմ միշտ գերազանց ։

Քեզ պատշաճի պատասխանել անդ Բնութիւն ,
Քեզ ետ Աստուած զայս ամենայն արարչութիւն ,
Ծանի՛ր գիտեա՛ զքո պատիւ խոհեմութեամբ ,
Թէ այսոքիւք զքեզ վարձատրեաց լի բարուք ,
Ընկա՛լ զթագ զգաւազան տիեզերաց ,
Վասն քո եթ են բազմութիւնքս այսց կենդանեաց,

Մո՛ւտ 'ի կողմունս և 'ի սահմանս իմ պետութեան,
Տիրապետել խաղաղութեամբ երկրիս համայն ,
Նա և պսակ փառաց երկնից երջանկութեան ,
'Ի քո գլուխ իսկ պճնեսցի 'ի յաւիտեան ։

Կեա՛ց անփոփոխ 'ի բարի գործս առ քո ընկեր ,
'Ի չար մեղաց փախի՛ր հեռի մի՛ զոք խուէր ,
Բայց և գիտեա՛ թէ աստ տեղի խաղաղութեան,
Ձի՛ք քեզ բնաւ և ո՛չ ոտիցդ հանգստարան ,
Բարի գործոցդ աստղ լուսարփի յերկնից խորան,
Պայծառասցի 'ի տան լուսոյ երանութեան ,
Ուր անմահից դասք համախումբ հրեշտակաց
Քեզ սպասեն պճնել փառօք երջանկութեանց ,
Ունայն է այս ո՛վ բանական աշխարհ համայն ,
Փոխեալ աստի տեսցես զԱստուած յարքայութե՛,
Միայն թէ դու լիցիս բարի գիտուն խոհեմ,
Ճանաչեսցես և պաշտեսցիս զԱյն երկնաձեմ,
Տե՛ս մի՛ քո չար գործովքդ զնա՛ դառնացուցեալ,
Ածցես յո՛չ կամն 'ի բարկութիւն զքեզ պատժել ։

Խրատեալ այս բանիւք Բնութեան այն մարդ վայրի,
Եւ զննեալ զինքն զանձին վիճակ և զաշխարհի ,
Ձօնեալ զիւր սիրտ խոնարհ 'ի զոհ Հօր վերնական,
[illegible] հոսէր զարտօսր յաչաց առ գոհութեան,
Բայց այսոքիւք ո՛չ լիացեալ բաղձանք նորա ,
Յանկայր յայտնի տեսանել զայն վեհ առարկայ ,
Զի վկայէր հոգին նորա 'ի միտս յայտնի ,
Թէ չէ հնար առանց նորա կեալ յաշխարհի ,
Առ նա ուղղէր զիւր գործ և կիրք զտիւ և գիշեր,
Գո՛յ ճշմարտիւ ԱԾ , հանուրց նա քարոզէր ։

Աւետիք Տատէճեանց 'ի Կոստանդնուպօլսոյ ։

ՔԵՐԹՈՒԱԾ ԽԶ.

Յարատեւութեան Ճշմարիտ Բարեկամութեան ։

՚Ի խաւարի գիշերային և մառնամուտ ,
յանապատի գազանաբնակ յապառաժուտ ,
՚Աժդեհ անբախտ զճանապարհ իւր կորուսեալ ,
Թափառ շրջի սաստկասարսուռ զահի հարեալ ,
հետապնդեալ ահիւ սրտի ընդ երկիւղի ,
դիպին նմա յիւրաքանչիւր քայլափոխի ,
յորձանք տատասկ դարևանդք վիհք անդնդախոր ,
զիւրև լսէ զձայն գազանաց ահեղաւոր ,
՚ի յերկիւղէ հերքըն գլխոյն ՚ի վեր ցցուին ,
քրտունք յերկիր բոլոր մարմնոյն վայրահոսին ։

Այսչափ թշուառ նա փորձանօք յոյժ վաստակեալ ,
տեսեալ զկոկորդ հանդէպ աչաց մահուան բացեալ ,
ո̊ր ցնծութեամբ փոփոխաքայլ ՚ի սիրտ յոգի ,
ընդ ոստս ծառոց դիտէ զլոյս հրոյ խրճթի ,
դիմէ անդր զերկիւղ թողեալ ընդ արհաւրաց ,
աւ բերկրութեան ցօղէ զարտօսր ՚ի լուրջ աչաց,
հասանէ փոյթ յայն անապատ ախորժական ,
զնշան շինի անդ տեսանէ բնակութեան ,
՚ի նուաղեալ սրտէ զերկիւղ վանէ ՚ի բաց ,
զտուայտութիւնս մոռանայ դիպեալ չարեաց ։

Լուսով հրոյ հոգեհաստիչ զուարթարար ,
լնու զհոգի զզգայութիւնս լիակատար ,
ըղհանդերձ իւր անձրևօք լի տոգորեցեալ ,

խրախ կախէ յոստս ծառոց սփիւռ արկեալ,
'ի թարշամեալ շառաւիղաց կրկուտ քաղէ,
զքաղցրերանգ հուր յայնցանէ կիզեալ վառէ,
և յապաստան 'ի գաղանաց շրջապատեալ,
զհրաբորբոք պարիսպ խուուց անդէն կանգնէ,
և ինքն հանդէպ 'նորին զուարճ՝ սրտիւ գառեալ,
քաղցրատարափ և կենսաբեր քնով ննջէ:

Օ այսպիսի ճիշտ զուարճութիւն խրախական,
զայս բերկրութիւն ճաշակեսցէ հրճուողական,
որ 'ի յայսմիկ յանկարծաթուիչ կենաց հովտի,
զԲարեկամ գտցէ ինքեան քաջ հաւաստի,
այս բարեկամ որ անխարդախ հոգւով ընտրեալ,
'ի թէատրոն այսր աշխարհի ընդ մեզ բնակեալ,
մեզ ուղփաճէմ զերջանկութեան շաւիղ բացցէ,
զանկեալս 'ի սգոյ և յաղետից բարձրացուսցէ,
ակն յանդիման չար փորձանաց մեզ դիպելոց,
զիւր անվեհեր մեր փոխանակ զլանջ դիցէ:

Ո՛ սուրբ Բարի Կամելութիւն հոգենշոյլ,
յերկնից ձօնեալ մեզ ձիրք անդէն ոսկիաձոյլ,
չէ՛ ահաւոր օրհաս անգամ թէ'ւ սրտմտեալ,
քո կապանօք անխզելի սրտից պնդեալ,
զի Բարեկամք զմիմեանց աղէտս զոյգ ստանձեալ,
զերկիւղ զյոյս զուարճութիւնս բաժանեալ,
զգաղտնիս սրտի զուգակշիռ զկեանս անգամ,
'ի մի զերկուս ձուլուն յոգի յօժարակամ,
առաւելուն երջանկութեամբ որ անդրադարձ,
զթել աւուրց բարեբաստիկ կենաց իւրեանց:

Բայց յո՛լ երկրի տարաշխարհիկ և մոռացեալ,
ձ Բարի Կամք փայլին քո դէմք ջահազգեցեալ,

յայսմ աշխարհի բազմավրդով և խաւարչտին ,
քո արձագանք և լոկ համբաւ առ մեզ լսին ,
և այս անուն մեզ սխրափայլ երջանկառիթ ,
դարձեալ 'ի չէն է նենգութեան այժմ մահառիթ
'ի ձեռն մեղաց ժանտահամբոյր և յանցանաց ,
որք արտաքին դիմօք են քաղցր մեզ մահացուաց
փայփայէ մեզ պատրուակաւ զդէմն ծածկեալ ,
ապ' եթէ ոչ եղբայրասպան Կայէն կարծեալ ։

Ո՞ւր այժմ թադեայք ո Ովրեստէսք սերտ մտերիմք
ո՞ւր այժմ գտցուք զՊիւլատէսս հեզիկ ուշիմք ,
եղբայրացեալ դուք զկեանս ձեր հարևանցիկ ,
'ի զոհ միմեանց մատուցանել վաղվաղէիք ,
դուք գերեցիք զդառն վճիռ բռնաւորին ,
և արհաւիրք ահեղ մահուան ոչ կարէին
զկապանս ձեր Բարի Կամաց սիրոյ խզել ,
երկիւղ մահուան դրունք դժոխոց զձեզ տրոհել ,
ամենայն ինչ թարց նախանձու լցեալ զսիրտ ձեր
կեալ մեռանիլ վասն եղբօր ձեզ կեանք թուէր ։

Եւ արդ մի՞թէ յերկրի 'ի ծագս լայնասահման ,
չի՛ք գէ՛թ կայծ ինչ սէ՛ր անխարդախ Եղբայրուե՞ ,
ո՛չ երբէք ։ Օ՜ ի տարագրեցեալ յառագաստից ,
յոսկենշոյլ 'ի գերագահ շքեղ բանտից ,
և տատանեալ յաքսորութեան յոլովասաստ ,
'ի վրանս հովուաց պարզակառոյց և անպատուասատ ,
Եղբայրութիւնն եմուտ հանգչել անդորրութ̃ ,
ը̃ Սերտութեան յայտ է և ընդ Պարզմտութեան ,
քաղցր և ախորժ 'ի Կողակիցս այս մեծ բարի ,
հանդերձեալ է կեալ և մնալ յայսմ աշխարհի ։

Քանի՞ ախորժ է ինձ երկիրս այն ամայի ,

ուր ո՞ Եղբայր 'ի մանկութեան մեր տարփալի ,
մեք զմիմեանս սիրով փոփոխ անդ փայփայեալ ,
զմայլէր հոգին Եղբայրութեան բոցով վառեալ ,
ուր մեր կենաց գարնանային աւուրբք պայծառ ,
և սէր ծաղկէր և զօրանայր 'ի մեզ հաւասար ,
մինչ ժամանել նոցին 'ի կարգ աւուրց հասեալ
եղեն խսպառ չար օրհասիւ հետապնդեալ ,
'ի փոփոխման չար պատահմանց անջրելի ,
որ չափազանց յոյժ քան զաղէտ և զբարի :

Քանի՞ցս եղեր ըմբիշ ը̃դէմ մահու ժանեաց ,
պաշտպանելով քո սիրելի Եղբօր կենաց ,
վերջին հացի էիր կարօտ դու պատառին ,
զի մի՛ տեսցես յաղքատութեան զիս դառնագին ,
արհամարհեալ զհանդիստ կենաց և զհանդէս ,
միայն զշահուցս փառաց զքեզ աշխատ առնես ,
խմոյս յուսոյ սպասես պտղոց քաղցրաճաշակ ,
վասն իմ վշտաց հոսես զարտօսր քաւավտակ ,
դիմես ը̃իս յերկիւղ և 'ի մահուան մագիլ ,
'ի պատրաստի ես զիս փրկել , նա՛ մեռանիլ :

Եւ զի՞նչ օգուտ , զի զողջութիւն ձիրք եթերաց ,
և զքո կենաց զթել նրբացեալ յաշխատանաց ,
'ի զոհ եղբօր Բարեկամիդ քև նուիրեալ ,
կարես այժ քաջ յերկարել զօրացուցեալ ,
ը̃ հորիզոն տարաշխարհիկ և անբողոք ,
Ճակատագիրն անյագ մարդկան հաւաչանօք ,
վաղվաղէ զիս ծածկել 'ի խոր միայնակեաց ,
Լե՛ր հնազանդ ո՞վ սէր եղբայր այնր օրինաց ,
զի բաժանման քեզ շահաբեր ինձ տխրամած ,
ո՛չ զօրեցից յանդիման կալ , այլ տրտմեցայց :

Թո՛ղ զիս այսրէն, բայց ո՞ւր թողցես յայսմ ամայի,
զի՞ս արդեօք զի՞ս թողուլ կամիս ո՞վ սիրելի,
յանտանելի ձանձրոյթ սրտի խորայոյզ լեալ,
ամենուստեք զտառապանս զչարիս տեսեալ,
և ո՛չ ուստեք 'ի բովանդակ յայսմ աշխարհի,
աչաց իմոց յոյժ նուաղեալ արտասուօք լի,
ո՛չ գտից ո՛չ զբերկրութիւն և ո՛չ զլոյս,
շրջապատեալ իմ ընտանեօք հատեալ 'ի յոյս,
որպէս նժդեհ ես որբացայց անմխիթար,
և 'ի վշտաց նուաղեցեալ անկայց իսպառ ։

Եւ դու ե՛ղբայր անդ 'ի ժողովս խառնակութեան,
ո՛չ եղիցիս կարծեմ դարձեալ յառանձնութեան,
ո՞ւր մտերիմ յայնժամ գտցես քեզ բարեկամ,
սահման աւուրց մեր թագուցեալ է յարաժամ,
թէպէտ մեր կեանք է վաղանցիկ պատրողական,
բայց սէր աշխոյժ Բարեկամին հրճուողական,
ընդնա բիւրիցս առաւելուլ ճարակ ձօնէ,
սիրտ զգայական սիրտ բնութեան քաջ տեսանէ,
զի զբարութիւն երկար կենաց յաւէրժ փարթամ,
առնէ մարդկան ներկայութիւն Եղբօրն մի ժամ ։

Արդ թո՛ղ եղբայր զմեզ ո՛չ երբեք անջատեսցէ,
ո՛չ ինչ 'ի կեանս մեր 'ի միմեանց բաժանեսցէ,
հնձեսցուք այժմ զսերմանիս սիրոյ սրտի,
թո՛ղ զմեզ երկիր հայրենական աւուրց նախնի,
որ զմեզ ծնեալ 'ի գոգ քաղցրիկ իւր ընկալաւ
գգուեաց սիրով և պաշտպանեաց իւր ստուերաւ,
ընկալցի փոխ 'ի գոգ իւրոյ ասպարիզի,
և հանգուցեալք 'ի մի յերկրի յորովայնի,
կացցուք 'ի մի 'ի դագաղի անդէն գառեալ,
և յետ մահուան զսիրտ ՟Բ իրեարս զուգաւորեալ,

Այն տեղի մեր փոշի ունայն ոսկերք համուր,
ծածկեսցի խոր յաչաց մարդկան մահուան յանուր,
սիրով աշխոյժ անդ առ միմեանս բոցակիզեալ,
'ի յաւիտեան սէր մնասցէ փունջ բոլորեալ,
և Թշնամին ծածուկ եղբայր չար խարդաւան,
մերձիլ ձեւօք իւր անլուայ և անարժան,
'ի մեր դագաղ ոչ զօրեսցէ հուպ անկասկած,
խեթք բունաւոր և կշտամբանք խղճի մտաց,
մեր ուրուականք տխպարք տեսիլք սաստկասարսուռ,
'ի բաց անտի զնա վանեսցեն իսպառ սպուռ։

Յայնժամ սիրով սերտ առ միմեանս կրթել յապուշ,
'ի մահարձան մեր եկեսցեն եղբարք ընքուշ,
'ի հաստատել զխոստմունս սրտի սէր սխրափայլ,
անկեղծ սիրոյ բարեկամաց իւրեանց սիրեալ,
այս անդրադարձ բոց ախորժակ սիրելութեան,
զվէմ թափանցեալ մեր դագաղի սահմանման,
զմեր յարուսցէ փոշի ողոք կենագործեալ,
և մեր ստուերք ելցեն 'ի վեր, և ոլորեալ
'ի գլուխս նոցին քաղցրիկ սիրով ձոխ ընդրկեալ,
ընդ ամպս երկնից խրախ ձախրեսցեն սաւառնացեալ,

Յարութիւն Աւագեանց 'ի Նախիջեւանայ

ՔԵՐԹՈՒԱԾ · ԽԷ ·

'Ի մեծութեան ամենակալին Աստուծոյ ·

Արքային երկնից և աշխարհի Տեառն.
պարեցէ՛ք հրեշտակք 'ի ձայն ցնծութեան ,
ծովք և ցամաքք մեծ , երկինք և երկիր ,
տուք միշտ ալէլուս նուէր գոհութեան :

'Ի ձեռին նորա վիհ խաւար գիշեր ,
նորա փառք պատիւ և լոյս անստուեր ,
տայ կենդանութիւն համայն էակաց ,
արդար են օրէնքն , սուրբ է յարգ կամաց :

Յորժամ եկեսցէ ժամն փրկութեան ,
և յորժամ երկրիս մեր հասցէ վախճան ,
լսելի լիցի ձայն Ա՛ծորդւոյն ,
և պայծառ տեսիլն փայլեսցի յայնժամ :

Նովաւ երկիր և երկինք շարժեսցին ,
նովաւ էակաց հատուցմունք տացին ,
անշեղջ անլսող գլխատ մեղաւորս ,
արկցէ յանել բանտ 'ի գուբ խաւարին :

'Ի բոցաճաճանչ նորին երեսաց ,
հալչին իբր զմոմ և հիմունք լերանց ,
այրին կորնչին մինչև յաւիտեան ,
դասք ամբարշտաց արք չարադաւան :

Վերջին թշնամի Մահն չքանայ ,
Բնութիւն բոլոր յայլ տիպ ձևանայ ,

Թափանցիկ կամար և հաստատութիւն ,
Լերինք զգենուն զնոր զօրութիւն ։

Պար առնու Սիոն բազում բերկրութեամբ ,
սիրտք երկիւղածաց փայլին ցնծութեամբ ,
ամենայն ուրեք սէր սուրբ նշմարի ,
ամենայն արդար առ Տէր յարձակի ։

Սիրեսցեն զԱստուած գեր քան զամենայն ,
գովեսցեն սրտիւ զնա մի միայն ,
'ի նմա գտցեն զիւրեանց դիւր սրտի ,
մոռացեալ զաղէտս երկրիս նանրութեան ։

Կանգնեսցեն ապա նմա սուրբ Սեղան ,
բերեալ պատարագ Սուրբ Սուրբ օրհնաձայն ,
բուրուառ բանաւոր աղօթք ընտրելոց ,
հոգիք արդարոց տաճար տէրունեան ։

Երանի որ աստ ունի սրբութիւն ,
անգիտից գաղտնեաց մաղթէ թողութիւն ,
նա լիցի Տեառըն աստէն բնակարան ,
փայլեսցէ անդ զերթ արև յաւիտեան ։

Մկրտիչ Շահինեանց 'ի Փարիզ ։

ՔԵՐԹՈՒԱԾ. ԽԸ.

՚Ի յարութիւն Քրիստոսի փրկչին մերոյ,

Յարեաւ նոր Մեսիայն ազատիչ աշխարհի ,
Ձե՛զ ասեմ տիեզերք երգեցէ՛ք Արարչի ,
՚ի հովտէս ՚ի յեթերս , ՚ի թռիչս խանդ հոգւոյ ,
Ձայնեցէք օրհնութիւն ՚ի նուագ տասնաղի ։

Թո՛ղ զարդիս երգեսցեն դասք զօրաց երկնայնոց ,
զբարութիւնն արարչի՛ հաղորդեալ երկրայնոց ,
Թո՛ղ սիրով յարիցե՛ն մաքուր սիրտք համայնից ,
գոհանալ զնմանէ՛ արտասուօք ցնծալից ։

Ամենայն արարած է՛ երկնաւս ծանիցէ ,
զայն էակ , որ զնա՛ գոյացոյց յոչնչէ ,
զի այժմէն գովեսցի՛ Աստուած մեր աստուծոց ,
լինիցի պաշտեցեա՛լ յամենայն սուրբ անձնէ ։

Նո՛յն լիցի փառաւո՛ր և փրկիչն աշխարհի ,
որոյ սէրն անդադա՛ր յարարածս բորբոքի ,
որ զկեանս , զփրկութի՛ւն ՚ի ձեռաց դժոխոց ,
մահալոյծ քաւութեամբ պարգևեաց սիրելեաց ։

Նորազուարճ՝ քեզ ասե՛մ ո՛վ հոգի բանական ,
զի՛նչ էիր դու երբեմն զի՛նչ զարդիս յաւիտեան,
բռնագրաւ մահարձել , այլ այժմոյս երջանիկ ,
որոյ վասն լե՛ր դու մի՛շտ զնմանէ գոհաբան ։

՚Ի բարձանց աթոռո՛յ աստ առ մեզ առաքեալ ,
զձեռագործ յանցանաց հիմնովին կործանեալ ,

բանն անեղ հաշտեցո՛յց զարարած է արարչին ,
լուսանիւթ երջանի՛կ զմեզ 'ի կեանս հանդերձեալ ։

Ընդ անդունդք դժոխո՛ց տարտարոս 'ի սարսուռ ,
չար ոգին պիղծ դիւա՛ց ազգ ժպիրհ և յահուր ,
արիւներանդ պսակաւ , յոր աչաց կայծք փայլին ,
բանսարկուն սադայէ՛լ , գլուխ դիւաց չարագին ։

Ընդ օձիւք ժանտագո՛յն հանապազ շուրջ պատեալ ,
մահ նիւթէ 'ի մութ թե՛ս մինչև ցամպս վերացե՛լ ,
ունայն օդ , դողայ դունփ , տարտարոսք դղրդեն ,
է անյագ իւր ակամբ զամենայն ժողովեալ ։

Ընդ ետեւս ազգ մարդկա՛ն զիւր Փրկիչ և գոչեաց ,
փրկեա՛ զիս զարարած քո՛ յայս չար տանջանաց ,
ծագեա՛ յիս զլոյս փառա՛ցդ որ թուի ինձ մատաղ ,
զի մերձեալ կա՛մ արդէ՛ն մահացուս յիմ դագաղ ։

Օ՜ այս աւէր ազգ մարդկա՛ն որոյ ձայն սրտակաթ ,
իբրու նետ թափ անցեալ է շառաւիղ ճառագայթ ,
եհաս , անց ընդ աստղալից բարձր երկնից աստիճան
է ուղիղաճեմ ծագս ամպո՛ց մինչ 'ի դահ սիրակաթ ։

Վամանեաց յաթոռ Տեառն որոյ վասն վստահ յոյս ,
'ի փայլման ծիրանի՛ և պայծառ իբրև լոյս ,
բախուէ՛ ճախր էա՛ւ ձիրք երկնից ինքնաձեւն ,
հաշտ առնել ընդ արարչի՛ 'ի մեղաց տուեալ խոյս ։

Արդ հայեա՛ց , նա ասա՛ց , զարթուցեալ 'ի քնոյ ,
'ի քնոյ յանցանա՛ց , ոչ 'ի քնոյ ննջելոյ ,
ամբարձ սա զաչս 'ի վե՛ր և ետես զխնդութիւն ,
ճաշակեաց 'ի կայթիւն բաժակ սուրբ 'ի մրրոյ ։

'Ի փայլել նշուլի՛ց արևու ճաճանչեալ ,
տես զորդին Աստուծո՛յ փառօք անդ պսակեալ ,

ետես նոյն զի երգե՛ն արարածք զգոհութիւն ,
զի յախտից 'ի վշտաց մարդ եղեւ փրկեցեալ ։

Դրօշակ 'ի ձեռին 'ի գլուխ փշրեցեալ ,
Ահ դժգոյն ուժաթափ , կայ անդէն ընդոտնեալ
զի մահուամբ Քրիստոսի՛ Աստուծոյ փրկագործ ,
շարժահիմն սուզաւ խոր աննորոդ ջլորեալ ։

Բայց զարդիս ո՞ր տեսի՛լ երեւի մեր աչաց ,
զի զաշխարհ տեսանեմք բազմեալ 'ի գահ փառաց,
անարատ արդ անձինք սուրբ հոգւովք իւր հանդերձ
փրկեալ կան 'ի դիւաց ւ 'ի նոցուն կապանաց ։

Ընդ առաջ Քրիստոսի՛ սուրբ անձինք ելանեն ,
և նմա ըզմաքուր զիւրեանց սիրտ ընծայեն ,
'ի նոր գան յառագաստ փառաց և ցնծութեան ,
իսկ առ մեզ մահացուս խնդալից զայս ասեն ,

Օրհնեցէ՛ք զարարիչն , սիրեցեալ եղբա՛րք մեր ,
մոռացէ՛ք ըզնախանձ կալարուք միշտ ըզսէր ,
զի արդէն չար օրհասն ժանտ շաւղօք յանցանաց ,
'ի զաշխարհ փորձելոյ եղիցի դադարեալ ։

Տու՛ք զփառս Աստուծոյ յերգս ձեր գոհաբան ,
զի և նա յարիցէ 'ի ձեր սիրտս փրկական ,
'ի միջի կատարեալ ձեր սրտի խնդութեանց ,
ծաներու՛ք , թէ քանի՞ բարի է Փրկիչն այն ։
Այսօր մեզ ամենայն ինչ չքնաղ երեւի ,
սիրտ հոգի միտք համայն փոխարկեալ 'ի բարի ,
ամենայնն 'ի սաստիկ բերկրութեան մեզ ասեն ,
եհաս ժամ երջանիկ հողածնացս ցանկալի ։

Պօղոս Էճէռլեանց յԱստրախանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԽԹ ·

Աշակերտք Ճեմարանիս շնորհաւորեն զգալուստ Սրբազան
Արք Եպիսկոպոսի և Ասպետի , Յովհաննէս ար-
ժանընտիր Առաջնորդի Վիճակիս :

Ո՞ւր այս յո՛ մեր տեսիլ ո՛չ դարձաւ 'ի դիտել ,
Ո՞ւր արդեօք այս մեր միտք ո՛չ ճախրեաց 'ի գիտել ,
մերթ յայսկոյս 'ի Հարաւ 'ի շաւիղ հեռակայ ,
մերթ յայն նիշ 'ի Հիւսիս մերձ առ դուրս թ' ահա գայ :

Բայց այն ինչ առ խարխափ 'ի խնդիր շրջէաք ,
բացան աչք տեսաք լոյս յորմէ զուրկ թխպէաք ,
թէ ի՞ւ այս , զի Արփին ծագեցաւ յայս յարկ տան ,
յեղերաց Վոլգայի 'ի ծագաց Մասքթեան :

Ո՞ մանկունք ո՛ Մուղայք աստ բարձէ՛ք ձեր ըզձայն ,
աստ զլարս քնարից կազմեցէ՛ք քաղցրաձայն ,
սմա եթ 'ի ծափիւն գեղգեղել մեղեդի ,
զի Սա՛ հայր հոգւոց մեր Հովուապետ մեր Ազգի :

Օ՛ այսորիկ ո՛ Տեսուչ զոր ունիս դու զորդիս ,
տեսեալ Ձեր մա՞րթ իցէ չխայտալ ինչ յոգիս ,
որք անձայն 'ի մարմնի մեծաձայն 'ի սրտի ,
զՔոյդ երգեն գեղգեղեն զգալուստ խնկելի :

Մեծ է Ձեր այս նոր մուտ յայս նոր յարկ դիտութեան ,
մեծ և մեր ծափաձայնք սրտառուչ խնդութեան ,

զի ո՛ զո՛ այնպէս բուռն ցանկացաւ տեսանել ,
որպէս մեք լուսափայլ զՁեր դէմս անարգել ։

Ո՛չ այս այն դրախտ զոր ’ի սկզբան աստ տեսեր ,
տե՛ս զիա՛րդ ծիծաղի ծառազարդ պտղաբեր ,
ցօղ սորի՛ն զուարթացման Մեհազնեայս երախտիք ,
երկնաչափ աճեցման Ձեր մաղթանք խնկելիք ։

Ո՛վ աստ զայս Մուղայիցս յարգեսցէ զնոր խումբ ,
փոխեցան չի՛ք Մեսրովբ չի՛ք Սահակ սրբակումբ ,
Դու նոցին փոխանորդ արժանի ընդ արդեանց ,
տու՛ր մեզ զքոյդ օրհնութի՛ւն , ցոյց զքո սէր գերազանց ։

Եւ զգեցցի՛ն մեր անձինք զնոր հոգի գիտութեան ,
զի ’ի քեզ գոյ հեղեալ փառք պատիւ օծուե͞ն ,
քո շրթունք օրհնաձի՛ր բանալի՛ք մեր կենաց ,
անձրեւեա՛ հոգեշունչ զի տեսցուք զլոյս փառաց ։

Ճախացի՛ր Դէտ արթուն հաւատոյս Հայկազանց ,
արածեա՛ զգառինսդ յարգաւանդ դաշտ բարեաց ,
զի նոցին չափ կոպար գոհութեան եւ սիրոյ ,
չի՛ք բնաւ բորբոքեալ դէպ առ Ձեզ գեր հրոյ ։

Յարիցէ՝ նոր մեր խունկ աղօթիցս առ Աստուած ,
պահեսցէ՝ զՀովլիւդ յամայր ամն լուսազգեաց ,
օրհնեսցէ՝ պերճ փառօք ամաց յամն բիւրաւոր ,
զի յեդեմ ճախրեսցուք ընդ թեւովդ լուսաւոր ։

[illegible] [illegible] ’ի [illegible] ։

* * *

ՔԵՐԹՈՒԱԾ · Ծ ·

՚Ի գալուստ Գերերհաւուտ Միքայէլ Ծայրագոյն
Վարդապետի Սալլաթեանց ,

Դիմադիր կշիռ երկուց տարերաց ,
ցուցիս անկարծուստ զխորհուրդ սքանչելեաց ,
զի մինչ էր գիշեր խաւար համասփիւռ ,
Դու մեզ ծագեցար Արփի մակացուաց ։

Այն ինչ յարևելս դեգերեալ մտօք ,
խնդիր լինէաք Աստղոյդ լապտերօք ,
անկարծ յարևմուտս Ղամբար լուսափայլ ,
ծագեալ բարձրացար պսակեալ փառօք ։

Զի՛ք ուրեք քան զայս չքնաղ Ճեմարան ,
չի՛ք որ քան զձեզ Սոփեստ հմտական ,
քանի՜ երանեալ մանկունքս Հայկայ ,
քև աստ ժառանգեալ զգանձ գիտութեան ։

Քեզ ահ՛ նուէր անզօր բերք մտաց ,
քեզ պսակ լրիւ մեր վառ բաղձանաց ,
Թող Քև բղխեսցին հոսանք իմաստից ,
փթթել զծաղկունս յանդ ազգիս մանկանց ։

Մարգար Եօրալեան ՚ի Մաղքոչայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԾԱ ·

Աշակերտք շնորհաւորեն զտօն Միքայէլ Ծայրագոյն Վարդապետի ։

Առաջին մեզ Հայր կարգեալ յԱստուծոյ ,
քարոզիչ անզոյգ գործոց բարձրելոյ ,
այսօր ծագեցաւ մեզ լոյս բերկրանաց ,
հրճուել մեզ Քոյին տօնիւ աւետեաց ։

Քո պարգև սիրոյ անչափ երախտեաց ,
քո անդուլ խնամք 'ի մարդս գիտութեանց ,
բորբոքեն 'ի սիրտ մանկանցս հրատ ,
կանխել Ձեր առաջ ոստովք ձիթենեաց ։

Արի՛ք ո՛ Մուզայք որդիք Թորգոմեան ,
կազմեալ բերկրանօք զտաւիղ Դաւթեան ,
բարձէ՛ք ծափաձայն յերգ Որփէոսի ,
վասն կենաց Հօրս զնուագ օրհնութեան ։

Օ ի եհաս ահա՛ ժամն բաղձալի ,
որում ուղեկանք նոր Հելլիկոնի ,
'ի վաղուց կանխեալ մնայաք յակձիւս ,
ցուցանել զհանդէս շնորհագիտ սրտի ։

Օ ի՞նչ մեզ գեղապանծ քան զօրս հանդիսի ,
յորում 'ի կայթիւն հոգւոյ և մարմնի ,
պսակեալ փառօք զնորոյս Մեսրովբայ ,
գլուխ մեծիմաստ տեսանեմք յայտնի ։

Բանիւք ապա հեղ ո՛վ բարերար Տէր ,
Հայր և Հեղինակ լոյս զուարճաբեր ,
վայելեալ յանչափ խնամոդ գոչեմք ,
Քո տօն շնորհաւոր ամենորաբեր :

Ընկա՛լ առ ՚ի մէնջ պաշտպան մուղայից ,
Դէտ արթուն և քաջ Ղամբար իմաստից ,
զայս աղքատ նուէր ՚ի ձայն գոհութեան ,
անձրևեալ ՚ի մեզ զցօղ օրհնութեան :

Ժամանեա՛ բարեաւ յալիս ծերութեան ,
ցայտեա՛ ՚ի մեր միտս զլոյս իմաստութեան ,
Քո աջ ՚ի գլխոցս մի՛ բարձցի երբէք ,
զի Քև զարգասցին միտք մեր մանկական :

Պօղոս Էջուալճեանց յԱստրախանայ :

ՔԵՐԹՈՒԱԾ · ԾԲ ·

՚Ի նահատակութեան տօնին Վարդանայ վասն
՚ի Քրիստոս հաւատոյ :

Աւանդն սուրբ Սէր հայրենեաց քաղցրայորդոր ,
չի՛ք յաշխարհի բարիք քան զքեզ մեծ գեղաւոր ,
ըստ որում եցոյց սիրտ Վարդանայ հայրենասէր ,
երբ վառեցաւ բոց քո ՚ի նմա հրաշապատկեր :

Թովչութեամբ քո յայր այլ փոխեալ նա մնացաւ,
զկին զընտանիս զծնողս զորդիս փոյթ շտապաւ,
արծուատեսիլ ձախրէր 'ի թեւս սուրբ հրեղէն,
հրոսանուէր կապեալ ընդ մէջ զսուր զզէն.

Յարեալ փառօք յարեւու զիւր շքեղ խորան,
եւ բարձր 'ի վեր ձեմել փեսայ նորակենդան,
փող հարկանէր խրախ յաշխարհ Արարատեան,
զի բամեսցին գունդք յասպարէզ մեծ Արեսեան,

Որոտաձայն կոչէր զերամ իւր պատուական,
յանուն Խաչի սուրբ վառեսցին անդ միաբան,
խրախուսէր զնոսա բանիւք արիութեան,
կալ հաստատուն 'ի սուրբ հաւատս եռալուսեան.

Առիւծօրէն դիմէր Վարդան 'ի դաշտ մարտի,
զի խորհեալ էր զբարեաց միայն իւր գրոհի,
ածէր զմտաւ զվտանգ զաղէտ սարսափելի,
որ սպառնայր բառնալ զհաւատ զեկեղեցի.

Մերթ նկատէր յազգն իւր անմեղ 'ի զուր կուփել,
և մերթ հայէր 'ի սիրտս չարաց որ ուրացեալ,
խոր թախծութ՟բ ընոյր զիւր սիրտ յայս տուայտման,
փրկել արեամբ վճռէր պնտէր զազգն Հայկազն.

Ետես զՎասակ զայր անօրէն որ մոլորեալ,
կալաւ զկողմն չար թշնամեաց զօրօք դրժեալ,
ետես զանկումն շատ անմեղաց 'ի յայս կրկէս,
ամբարձ յերկինս զմաղթանս սրտի իւր յողջակէզ.

Առ քեզ Ա՟Ծ բանքս աղօթից արտօսրալից ՝
փրկեա զազգն իմ 'ի թշնամեաց կորստակից,
թող ես մեռայց ազգն իմ կեցցէ 'ի յաւիտեան,
թող եղիցի մահն իմ միջնորդ սուրբ հաշտու՟ե.

Դու ապաւէն զքեզ խնդրողաց հզօր պաշտպան ,
արդ աղաչեմք լե՛ր 'ի ժամուս մեզ օգնական ,
մի՛ մատնեսցես 'ի բարբարոս ձեռս անմաքրից ,
զսրբութիւնս սրբոց զսեղանս զտուն աղօթից ։

Սարսափեսցին աստ հեթանոսք զարհուրադեմ ,
և արգելցին յըղձից չարաց որ քեզ ընդդէմ ,
ծանիցեն թէ դոյ Ճշմարիտ Աստուած բարձանց ,
գտցեն չարքս ըստ արժանեաց զկորուստ անձանց ։

Օ՜ իարդ զանուն նաշաբանել քո պանծալի ,
ո՜վ քաջ Հերոս մեր զօրեսցուք ըստ արժանի ,
զի թափ անցեր ընդ հուր և սուր 'ի մեր սակս ,
ետուր զկեանս քո յողջակէզ Տեառըն հաճելի ։

Անուն արդիւնք քո անմոռաց յաւերժական ,
արձանասցին յազգի մերում միշտ անվախճան ,
քո սուրբ հաւատք քո Ճշմարիտ սէր հայրենեաց ,
բոլորեցին 'ի քո գլուխ զթագ պարծանաց ։

Մարտան Յովհաննէսեան յԱստրախանոյ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԾԴ ·

Յարարչութեան և 'ի կորուստ Ադամայ և Դրախտին.

Երգեմ յիմ քնար 'ի բան հիացման սրտի յազդարան ,
զիա՞րդ յոչէից 'ի գոյ փոխեցաւ համայն ազգ մ՟դկան,
զիա՞րդ եկաց նա 'ի փառս Դրախտին դարուց 'ի ըսկըզբան ,
կամ զիա՞րդ անկաւ ո՞րպէս բարձրացաւ յիւր փառս նախնական ։

Քանի՞ բարձր էր մարդ զիա՞րդ անկաւ յայս կեդարու վրան ,
ո՞րպիսի նմա հանդերձի դեռևս գերագոյն կոպար ,
իցէ՞ կարողել գծագրել զմարդոյ տիպ նմանահան ,
զի՞նչ էր կամ է արդ և լիցի նորին հանդերձեալ կեանք դար։

Մեծավայելուչ սփիւռք այս դաշտաց շողշողին փայլին ,
զօր արարածոց անզօր միտք գովել առ աղբեր' կասին,
այլ դու գերաբուն Հաստիչ էակաց համայն յոչէից
հե՛ղ առատութեամբ 'ի լուսոյ քո յիս զկայծ իմաստից ։

Տո՛ւք տեղի զարդիս թողէ՛ք հանճարեղ դասք Մուսայից ,

ելանել 'ի վե՜ր լինել ձեզ կցորդ 'ի շաղկապ խօսից,
համբարձեալ զմիտս 'ի վեր քան զկամար երկնից աստեղաց ,
հնչել 'ի սրինգ զարարչին ներբող համայն էակաց,

Ընդ աթոռ փառաց Յաւերժականին յանչափ բարձրութեան ,
'ի յաւիտենից անկէտ անվախճան հաստի անսասան,
ուր խորք անդնդոց կատաղիք դիւաց կանգնին յանդիման ,
անտառք և ծործորք ծովլ գետք և լերինք մերձ են և դողան։

Դասք թևասքօղեալ անմարմնոց պարուց վերին պետութեան ,
յաւէժ նուագեն յիւրեանց զմայլման զերգ երանական ,
Սուրբ Սուրբ սաբաւովթ սբ՟ տէր յերիս դէմս ան դէմ անանջատ ,
ստեղծիչ էակաց խնամող նոցունց փառօք անըհատ։
Յանսկզբնական խորոց անդնդոց ինքնեղ բարուե՛ց ,
հեղու յար 'ի մեզ զանսպառ աղբերս ուղխից լիուե՛ց
'ի կամար վերնոց և յազգ մեր մարդկան 'ի պար հրեշտակաց ,
զշարժումն զյօդ և զանքոյթ ընթացս անմոլար շաւղաց
Համբարձի՛ր մտօք թէ հնար է քեզ յաթոռ բարձր յայն ,
տե՛ս զի թափանցէ 'ի ծովս յանդնդս և 'ի ծագ հե՛յն,
յաջ իւր զէակաց անհամար թուոց ունի զմատեան ,
զոր ուշիմ ճարտարք քննել և հաշուել միշտ անկարացան ։

Գծագրե՛լ տողին գոյից բնաւից թիւ չափ և կշիռք,
Ծիր շաւիղ ծագումն շարժմունք և ընթացք և նոցին պատճառք ,
՚Ի կամար վերնոց լուսաձոյլ կայից գումարք սրբղն,
յայսոսիկ գաղտնիս է աղօտ նայիլ ո՛չ զօրեն ցանկան ։

Հողագունդ երկրիս անդէն նշմարի լերամբք ամ՛ ,
իբրու աննշան նշանախեց փոքր գոյիւք յոգնազան ,
քաղաքք տէրութիք շինութիք անշէնք Տուն յանդիման ,
և մարդիկ հզօր իբրու կէտ գծի յարարածս համայն ։

Ածոց երկրիս փառք անուն պատիւ զեղուն յորդագին
երևոյթ ցնորից նորին առաջի յաւէտ վարկանին ,
զի նա զառաջին զէակս համասփիռ ստեղծ յոչէից,
որոց նմանակ չի՛ք ՚ի գործ ձեռաց մարդկան բնաւից։

Արարչագործել զմարդս յազատութեան յիւր խորհուրդ վճռեաց ,
՚Ի հողոյ զմարմին զհոգին յո՜յ տալ նմա ասաց ,
տե՛ս արդ սքանչացի՛ր է անճառ խառնումն սոցին սքանչելի ,
յայնմ բարդի լոյս խաւար կեանք և մահ յոգին ՚ի մարմնի ։

Հայեա՛ց յարարիչն զիւր առատ պարգև զլիութիւն շնորհաց ,
հեղու ՚ի գլուխ նախնոյն Ադամայ հոսմամբ աղբերաց,
վտակօք նորին Եւայ և Եդեմ կենդանեօք բոլոր ,
և վայրք դրախտին պերճ վայելչութիք լցե՛լ ծովացան ։

Անդ ծառք ոսկեզօծք անթարշամ ծաղիկք պճնին րախմանս ,

անմահից պտուղք պտկին ուռճանան յորդ աղբերք խաղան ,
ծաղկին անդ շուշանք յասմիկ վարդ մեխակ ոսկերճ՝ տեւուրք զարնան ,
վիհք սառնամանեաց անտի մեկուսի սարսուռ ցրտոյ կան։

Ցնծա՛ ո՜վ Ադամ արմատ և ծնող մարդկային ազգի
բերկրեա՛ , զուարճացի՛ր քումդ ՚ի մաքրութեան ՚ի փառս դրախտի ,
քեզ նոր օգնական Եւայ կին մեզ մայր յարարչէն ձօնի ,
քեզ կեանք անարատ բարձրագոյն իմաստ վիճակ անձկալի ։

Այլ մեզ զի՞նչ հնար զդրախտին տողել զզարդ հրաշազան ,
զիա՞րդ ակներև զայն որ առ մեզ չի՛ք առնել յանդիման
այժմիկ առաւել ողբալ է արժան յողբ մեծակական,
զարտասուս հեղուլ առ կորուստ նորին յեիցս անդրմիան

Ադամ անկանի ՚ի դրախտէն փառաց մեծ վայելչուէ ,
՚ի վիշտ դառնաղէտ յերկիւղ ՚ի թշուառ կեանս վտարական ,
յորմէ և հոսանք խոր թշուառութեա՛ց ՚ի նորին սերունդս
զորս մահացուաց բերանք աւաղել չեն ինչ բաւական։

Բանին նմա դրունք լայնարձակ շաւղաց դառնագին մահուան ,
ընդունի զՏեառն անսուտ բերանոյ զանդարձ հրաման
դառնալ վերստին ըստ պտղոյ մեղացն ուստի առաւ յայն ,
զմարմինն հողոյ զհոգին առ ԱԾ յանձնել յաւիտեան ։

Յաւէժ կատարի բան Տեառն յԱդամ յիւր սերունդս համայն ,
խոնարհին 'ի հող յորմէ և ստեղծան ծնունդք մ՟րդկան
կատ՟րի անշուշտ և բան իմաստնոյն եթէ որք արդ կան,
մերկ եկին յաշխարհ անդրէն և 'ի նոյն մերկանդամ գնան ։

Բայց արդ սփոփեա՛ց Ո՜վ Ադամ ահա՛ բան Տեառն բերանոյ,
յարիցէ Զաւակ 'ի տանէ Դաւթի որդւոց քո որդւոյ,
զքեզ ամբարձցէ 'ի քոյդ պերճ՝ փառաց բնիկ հայրենի ,
բարձցէ զանիծից զմեղաց միջնորմն զփուշ յանցուածոյ ։

Յովսէփ Ներսէսեանց յԱստրախանոյ ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԾԴ ·

'Ի լուսաւորութեան Ազգիս Հայոց ·

Ո՜ւր արդ զօրութիւնք անշունչ հաստուածոց ,
Ո՜ւր արձանք կանգնեալք 'ի պատիւ կռոց ,
քանդեցան իսպառ յերկիր կործանեալ ,
կորեան յերեսաց Տեառն զերթ մոմ հալեալ ,
զի փախեաւ խաւար չար մոլորութեան ,
հայեցաւ առ մեզ Տէր մեր օրհնաբան ,

տանս Հայկազեան ժամ է հրճուանաց ,
քանզի ծագեցաւ մեզ լոյսն փառաց ,
այլ մի՛ յաւիտեան անցցէ Հայաստան ,
զբաղդին ձեռագործ բաժնին կորստեան ։

Քանզի յերկնային վառեալ զօրութեանց ,
զինու Արքային անվախճան փառաց ,
Գրիգոր հոգելոյս հալածիչ չարեաց ,
ազգիս Արամեան պսակ պարծանաց ,
շարժեալ 'ի գրգիռ հոգւոյն անվեհեր ,
մատչի 'ի բանակ քրմաց օձասեռ ,
ընդ ե՞ր Է լծով ազգ իմ Հայկածին ,
գտցի տակաւին դիւաց մոլեգին ,
'ի հուր և 'ի սուր զանձն իմ մաշեցից ,
միայն թէ զեղբարս անտի փրկեցից ․

Անդէն 'ի յերկնից ձայն ահաւորի ,
սաստիկ հնչի յունկս Սրբոյն Գրիգորի ,
թէ քաջալերեա՛ց ա՛ծ ընդ մէջ գօտի ,
ամփոփ կալ 'ի քեզ զմիտս և զոգի ,
քանզի քև միայն ինձ հաւատարիմ ,
զիս ծանուցանել կամիմ քոյդ ազգի ,
քև զիմն կանգնել յերկրի Հայաստան ,
զԽաչ քառաթև նշան փրկութեան ,
փայլեսցէն 'ի տիպ պայծառ արևու ,
Քո ազգ իմ Կրօնք անուամբ ահարկու ։

Գրիգոր հրաշաբան քաջութեամբ սրտի ,
յարձակի ընդդէմ չարին բանսարկուի ,
սաստէ նա 'ի գունդս դիւաց մոլեգին ,
և դեք մի ընդ մի անկարծ հալածին ,

մտանէ 'ի տուն կռոց պաշտօնէին ,
և կուռք սարսափմամբ յերկիր կործանին ,
մոգք և պա՛տք նոցին դիմեն առ արքայ ;
կորեան մեր ա՟ծք , յօգնութիւն փութա՛ :

Այս ասէ ծառայ Տեառըն եմ Աստուծոյ ,
փախերուք յինէն 'ի խորս դժոխոյ ,
զի մի՛ այլ տեսից յիմում աշխարհի ,
զնշոյլ ձեր դիմաց հօտի բանսարկուի ,
Ո՛վ արեգ պայծառ Հայր լուսաւորիչ ,
բովանդակ ազգիս այցելու փրկիչ ,
«Դու սպառեցին դասս կռապաշտից ,
«Դու լոյս յայս աշխարհ իջցէ հոգելից ,
Թէ 'ւ հայր 'ի հօրէ մարմնով սպանաւ ,
գէ՛թ որդին յորդւոյ հոգւով ողջացի :

Անդէն որոտմունք յերկնից գոռացին ,
հերձաւ ընդ մէջ ամպ աստեղք եւացին ,
սուրբ Խաչ ամպաձոյլ յերկնից լուսերփեան ,
էջ 'ի Գրիգորի գլուխ փրկական :
ձայն եղև առ նա թէ ազգ Հայկազեան ,
յայս նշան գտցէ զիւր կենաց պաշտպան ,
յայդ միշտ պարծեսցին զսա պաշտեսցեն ,
և գովին զլոյս իմ փառաց տեսցեն ,
այս իմոյ շնորհաց կնիք Տէրունեան ,
պահեսցի 'ի սիրտ նոցին յաւիտեան :

Ո՞ւր այժմիս խաւար ո՞ւր մոլորութիւն ,
յամենայն տեղիս սուրբ Ճշմարտութիւն ,
լան մոգք զկորուստ փառաց և կենաց ,
խնդան Գրիգորեանք յայս ձայն աւետեաց ,

սուգ առնուն իշխանք ներքին անդնդոց ,
իսկ Տրդատ ցնծայ Հայր իւրոց որդւոց ,
չքացան չարիք յերկրին Հայաստան ,
ծագեցան բարիք և վարք սրբութեան ,
սուզաւ սատանայ 'ի գուբ կորստեան ,
յարեան հաւատոյ Հարք արդարութեան ։

Ընտրեալ յարարչէ լեառն Արարատ ,
օթարան սրբոց խորան անարատ ,
բարձրացո՛ զգագաթդ ընդ Նոյաբընակ ,
խնդա՛ բերկրութեամբ սրտի ընդարձակ ,
Ո՜վ Արփի պայծառ ծագեա՛ զքո լոյս ,
յոսկեղէն գլուխ սորին սուրբ և կոյս ,
զի կացցէ մնասցէ ը̃ դարս ,յաւիտեան ,
յաղգիս Ձոխութեան արձան անսասան ,
Թո՛ղ ա՛զդ արասցէ Ազգաց ամենայն ,
Թէ Հա՛յք են որդիք լուսոյ տունջեան ։

Եւ դու ո՛ օրհնեալ երկիր Հայաստան ,
զգեցի՛ր զփառս զզգեստ սրբութեան ,
փո՛ղ հար 'ի գլուխ յայս աւուր կոչման ,
մատո՛ զաւետիս Աբգարու մեծ տան ,
ցանկութիւն այն զոր ունէր 'ի սրտի ,
լցաւ արդ ահա՛ ողջամբ անթերի ,
յայտնեա՛ զի Ազգ մեր կանխաւ կռապաշտ ,
այժմ է հոգւով Ճիշտ Աստուածապաշտ ,
հայեա՛ց 'ի բարձանց յերկնից խորանաց ,
յազգ քո Քրիստոնեայ սրբութեամբ կենաց ։

Խնդացէ՛ք և դուք Ո՜վ Ազգ Հայկազեան ,
տո՛ւք փառս Աստուծոյ հաստչին բնութեան ,

խնդացէ՛ք ընդ բախտ կենաց ձեր անդէն ,
զի գտի՛ք զգանձ , գանձ Աստուածային ,
բղխեցէ՛ք արդէն դուք զարդարութիւն ,
զխաչ յանձին բարձէ՛ք երկնից զօրութիւն ,
փութացէ՛ք զինու Խաչին սքանչելի ,
'ի ծով թէ 'ի սուր 'ի մահ սոսկալի ,
կանխեցէ՛ք սիրով առ ձեր Հայրենի ,
նա ձեզ օգնական այժմ և միշտ լիցի ։

Մարտիրոս Տուփոլեանց 'ի Պոլսոյ ։

ՎԵՐԹՈՒՂԾ · ԾԵ ·

Յահեղ դատաստանն Աստուծոյ 'ի վերջին աւուր ․

Արդ ծածկեցարո՛ւք երկինք և երկիր նախկին խաւարաւ ,
եհաս ժամ վերջին յորում լցցի գիրն վերձայնել կանխաւ ,
ահա՛ ժամանակ որ յանկարծ զթևս իւր փոյթ մերկանայ ,
և օրն պայծառ յաղջամուղջ մթին 'ի գիշեր դառնայ ։

Սարսափին երկինք սպառի և լոյս պայծառ Արևու ,
վէմքդ պատառին երկիր տապալի տեսլեամբ ահարկու
աստեղք թօթափին լուծանին կապանք հիմն էակաց,

նոյն և տիեզերք տարրականք համայն տարերք խըռովին ։

Երկինք և բլուրք ամբարտակք 'ի խորս ծովու ընկղմին,
Հողմունք մրրկիկք ալեսաստ կոծեալ 'ի մարտ ըմբըռնին,
ովկիանոսք ծովք զսահմանս իւրեանց եզերաց թողուն,
կատաղեալ ալիք մրրկեալ յամպս հրով ջեռանին ։

Ահա՛ արդարադատ Աստուածն գայ զերկիրս դատել,
արդարոց զվարձ իսկ մեղաւորաց պատիժ վճարել,
ձայն Գաբրիելեան փողոյն ահաւոր հնչեսցի յայտնի,
յարարածս համայն արտաքոյ ներքոյ երկիւղ նշմարի ։

Զարթի՛ք ննջեցեալք 'ի գերեզմանաց և 'ի քնոյ մահուան,
արի՛ք ձեր յերկար յապականութեանց կացէք յանդիման
անցնիւր ումեք ընդունել պատիժ կամ վարձ արժանի,
էանց մութ գիշեր այժմ՝ է առաւօտ գործք ձեր յայտնեսցի ։

Անդ Որդի մարդոյ 'ի ծիածանի ընդ զօրս հրեշտակաց,
զարդարեալ փառօք զկապանս մահուան գայ 'ի լուծանել,
նմա ընդ առաջ ելանէ Սուրբ Խաչն փառք բարեսիրաց,
կարգի դատաստան գիր կենաց բանի զարդիւնս մեր ծանել ։

Ո՛ փառք աշխարհի սնոտի պատիւք եհաս ձեր վախճան
սլացաւ իբրև ծուխ յարդ և գին ձեր արդէն յաւիտեան,

յայնմ ատենի այն Ա՟ծակարգ դատաւորն մարդկան ,
խնդրէ ոչ զձեզ այլ զանձն արդար և սիրտ սըրբաղան ։
Ո՛մ աչք անաչառ զխորհուրդ զգործ կշռեալ ճիշտ արդար ,
դրունք Եդեմայ վասն արդարոց գտանին յարդար ,
նոյնպէս չարուին ծնունդ դժոխոց իջեալ ՚ի գեհեն,
զվարձ արժանի գտանէ անդէն մշտնջենական ։

Երկինք նորոգին դրախտ զարդարի փառօք պսակէ,
օթևանք բազումք պատրաստին սրբոց խնդութեամբ լցեալ
պարառեալ հրեշտակք նուագեն հեշիկ զերդ անմահական ,
սուրբ տէր զօրութեանց արդար ես և սուրբ դու միայն գոլեալ ։

Գաբրիէլ Երէցփոխեան ՚ի Մոսկուայ ։

* * *

ՔԵՐԹՈՒԱԾ · ԾԶ ·

Հրաւէր

Առ Հայկազեան Մանկունս այլեւայլ քաղաքաց, թողուլ զխաւարութեան աշխարհն, և գալ 'ի Ճեմարան Տեարց Լազարեանց յուսումն Գիտութեանց,

Ուրանօ՞ր արդեօք խմբեալ գտանիմք դասակի՛ց մանկունք ,
Եւ ի՞նչ թողուլ մեզ զազգ և զընտանիս զծնողս փափուկ,
'Ի մԵդե՞մ արդեօք յերկնաճեմ գաւառ դրախտ տիրատունկ ,
Դաս դաս բոլորեալ արածիմք 'ի դաշտ ուր են սե՜ր սերմունք ,
Ըմբէ աստ այն երկիր աւետեաց պարարտ գեղգեղեան
Որ բղխէ զկաթն զմեղր քաղցրութեամբ միշտ յորդահոսան
Ա՛ստ սիւնն լուսոյ ամպն հովանի ուղեցոյց սրբոց ,
Իբրու ծխածան երփնազեղ պատեալ զգլխով հոգւոց,
Ա՛ստ աստղն մոգուց առաջնորդ 'ի կեանս սուրբ բազ մահիաց ,
Որ ուրոյն մեկին ծագէ քեցելով փարատեալ 'ի բաց ,
Ո՛չ միայն զմեր մնաց կուրութեան խաւար մթութեան ,
Այլ և զմեզ լուսով յորդ արփաւորէ Աստուածպաշտութեամբ,
Օ՜ ի՞նչ է մեզ ապա զի՞նչ է այլ մանկունս պա՜պ բղքաց,

Զի՛նչ նոքա 'ի տան զի՛նչ մեք 'ի վայրիս առնեմք փոխադարձ ։
Վա՜յ առ ձեզ ուղղեմք զմեր ձայն մանկո՛ւնք մերազգի
Որք դատարկ 'ի տան յայլեայլ քա՛ղքս կայք 'ի խաւարի
Անկե՛լ դպրութե՛ մերս Հայաստանի շքեղ Դարաստան,
Ահա՛ կանգնեալ կայ յազգասեր Տերանց յօտարին սահման ,
Իմաստից ատեան դամբարձակ ուսմանց Տանս Արեւելեան ,
Նորոգ կառուցե՛լ Հայկական Աթենք 'ի մեծ Ռուսաստան ,
Եկա՛յք ծարաւիքդ 'ի յանապատիդ ձեր ամայացե՛լ ,
Եկա՛յք աստ բղխե ձեզ ջուր 'ի վիմե՛ սրտից հեշտընկալ ,
Վէմ պատառեսցի՛ գետք ձեզ խաղասցե՛ն իմաստից անճառ ,
Արբջի՛ք խնդութեամբ լցցի ձեր ծարաւ յագուրդ անսպառ ,
Ելէ՛ք 'ի միջոյ սուտ աշխարհի և ձեր ազգականաց,
Թողէ՛ք զխաւար սիրեցե՛ք զլոյս հոգևոր բարեաց ,
Ասա ո՛չ քաղցիջիք ո՛չ ծարաւեսջիք լիացե՛լ համակ,
Ո՛չ տեսջիք զստուեր ինչ պակասութեան լցցի ձեր փափաք ,
Մխիթարեսջի՛ք լուսափայլ մօք 'ի վայրիս ծաղկե՛լ,
Զգանձ իմաստից յարգել յուսուցչաց 'ի հանճար ծնեալ ,
Ա՛սա են Ազգապետք ընտիր Դիւցազնեայք Եղիազարեան ,

Որք ըղձեն զհաց ոչ մարմնաւոր եթ այլ բանական ,
Զաղքատս անյարկ յիւրեանց տանէն տուն 'ի յարկ գիտութեան ,
Մերկաց զզենուլ քաղցելոց ուտել պարգևել փութան ,
Եկայք յայս Տաճար տեսանել զհրաշս հաստչին համայնից ,
Եկայք 'ի վերայ ձեր աստ հանգիցէ՛ հոգի անմահից ,
Հոգի հանճարոյ հոգի խորհրդոյ և իմաստութեան ,
Հոգի զօրութ՟ հոգի գիտութ՟ Ա՟ծպաշտութեան ։
Գիտասջի՛ք մանկունք զի տգիտութ՟ին կնիք անբանից ,
Զձեր կուրացուցէ զմիտս բանական զհոգի իմաստից
Ծանէրուք զի և պիղծ հրապոյրք թեւաղիրք չարեց ,
Քակեսցեն զարտից ձեր զոլոր սիրոյ 'ի գործոց բարեց
Որով ոչ տեսջիք ոչ զլոյս հոգւոյն սր՟ Ա՟ծութեան ,
Ո՛չ զյարգ բարւոյն ոչ շահ և վնաս անձին բանական ,
Մանուկ 'ի մօրէ յաշխարհ ընծայեալ ըստ անբանութեան ,
Մանուկ ապրեսջի՛ք մանուկ և մեռջի՛ք յանլոյս մըթութեան ,
Արդ ելէ՛ք 'ի կոյր վիճակէ յայս Տուն փութացէ՛ք ,
Թողէ՛ք զաշխարհի սուտ ծառայութիւն առ մեզ կանխեցէ՛ք ,
Դշխոյն Հարաւոյ եկն առ Սաղոմոն լսել զգիտութ՟ի ,
Նա մեզ օրինակ , զնորայն բարձէ՛ք դուք նմանութ՟ի ,
Զի ո՟պ Արև Տէ՛ր է ամենայն լուսաւորութեան ,
Այսպ՟ գիտութին Տէ՛ր է ամ՟ առաքինութեան ,
Եկայք և տեսէ՛ք աստ է այն Տաճար յորում Ճիշտ պաշտի ,

Ո՜հ Արէս Հերմէս . . . այլ իմաստութիւն մեծ պարգևք երկնի ,
Աստ փոխանակ ձեր բազում վաստակոց և աշխատանաց ,
Առատ ընկալջի՛ք զլուսաւորուն գերաբուն մտաց ,
Զտենչ անսպառ կրթեալ 'ի փափագ երկնային փառաց ,
Զպարգևս աղօթից զջան մաքրաշարդ և անբիծ կենաց ,
Զաճումն ուսման զմխիթարուն անձին կարօտեալ ,
Զբորբոք սիրոյ առ մեր Հայրենիս 'ի սիրտ կըղկաթեալ ,
Ո՜վ երանի քեզ որ հանդերձեալ ես դու գալ յայս կայան ,
Խնդամ ը̅ քո բախտ զի գտեր զգանձ միակ աննման,
Ուրախ լեր բերկրեալդ ապագայ որդի նոր մերս Եդեմայ ,
Ո՜հ քանի չքնաղ զգենուլ ունիս զիմաստից խիլայ ,
Ահա՛ հաճեցաւ Շնորհքն վերին փոխադրել յարգի,
Զքեզ 'ի Պառնաս յեօթնարփեան խորան գիտութեանց տեղի ,
Ուր հանճարէն դասք Մուզայից ընտիր իմաստիւք լըցեալ,
Սպասեն զքեզ յիւրեանց խումբ առնուլ սիրով ծովացեալ ,
Ե՛կ դու երջանի՛կդ 'ի դաս քո եղբարց ե՛կ մի՛ յապաղեր ,
Ե՛կ վայելեա՛ աստ զգանձ իմաստից վարուց բարեբեր,
Յերկրին հայրենի 'ի ծոց ծնո՟ղցդ լոկ զԱյբբենարան,

Ուսեալ ամս ինչ, քաղցր 'ի խաղ լինէիք ըստ բախտին բերման,
Այլ երբ ընտրելոյ մերձի ժամանակ զայն վիճակ կենաց,
Զիա՛րդ տագնապիք այլ յայլմէ լինիք սրտիւ տըխրամած,
Յայն կէտ պահպանեալ ձեր էիք հովանեաւ 'ի ծոց մայրական,
Ընթաց ձեր աչօք հայէիք 'ի վիշտս ամ՟ մարդկան.
Բայց եկեսցէ՛ ժամ ձեզ 'ի մտանել 'ի ծով աշխարհի
Ուր այլ չունիցիք ձեզ օգնական Հայր և կամ Մայր բարի,
Ո՛վ ձախորդութ՟ե ալեաց կոհակաց այսր Ովկիանի,
Ո՛վ թիւր փոփոխման 'ի մէջ մանկական աւուրց հասակի,
Թողեալ զընտանիս հրաժարեալ 'ի ձեր սերտ բարեկամաց,
Թողուք զձեր անմեղ հոգի և մատչիք յուղի անիմաց,
Ուր այլ չի՛ք ժպիտ խանդակաթ սիրոյ դիմաց հայրական,
Եւ ոչ փաղաքշանք սիրոյ, այլ կեղծիք սուտ խաբէական,
Ո՛րչափ դիտութ՟ե պէտք են զի փոխան սէ՟ մոլորման,
Ծանիցես զդէմն խորամանկ հոգւոյ անձանց դաւաճան,
Ընդ այն ամ՟ այլայլակ տեսիլ մարդկան չարութ՟ե,
Մի՛ խռովեսցին մանկունք քաջուսումն անձինք գիտնական,

Այլ միայն տգետք սարսեսցի՛ն 'ի տես այսչափ վըտանգաց ,
Հարեալ զերկիւղի կրթեալ 'ի տագնապ 'ի դատման մտաց ,
Իսկ որ իմաստունն հայի անվեհեր ը՟ այն ամենայն ,
Իմանայ զօգուտն կշռէ զվախճան մտօք դիտնական ,
Զի ջահն այն մտաց արփին իմաստից Ուսմունք դիտութեանց ,
Իբրու մայր քաղցրիկ հոգայ զմերոց պիտոյից անձանց,
Նորին Ճոխ պարգեւք հեղեալ 'ի մեր սիրտ գոգ յաւանդ շնորհաց,
Կարդեն ո՛չ զներկայ այլև զապագայ զբախտ մեր կենաց ,
Գիտուե՟ն որ է Լոյս բանականաց անկէտ յաւիտեան ,
Ուղիղ ռահ բանից մարդկան առ Ա՟Ծ 'ի յարկ մետուղփեան ,
Ձեռնտու լինի 'ի տարժանելի դէպս փորձանաց ,
Երկնային է ձիրք տուեալ մեզ փոխան խրատուց ծընողաց,
Անդ՝ ուր մանկուե՟ն խաբի բազմանգամ յընտրուէ՟ շաւղի ,
Թէ յո՞ր ընթանալ և յորմէ խորշիլ ո՞յք են արտուղի
Անդ ուր մեզք յանցանք ծածկեալ ը՟ քօղով պատիր Թագստեան,
Գիտուե՟ք կորզեն զմարդն 'ի շաւղաց գբոյ կորստե՟ն ,
Իսկ արդ թէ ուսմունք են պարգեւ վերին մխիթար կենաց ,
Ե՞ր ո՛չ զնորին կապել 'ի մեր գլուխ դափնեայ Թագփառաց ,

Յորդորե՞լ պիտի այլ ևս զմանկունս թէ զհետ լե՛ր ուսման ,
Յորում գոյ հաստեալ հոգւոյ մարմնոյ բախտ որդւոց Ադամեան ,
Պէ՞տք իցեն ճառել յունկս ազգիս մերոյ զայնմ յարգանաց ,
Յոր փայլեալ անձն ուսեալ և կրթեալ պերճ և գերիմաց ,
Ո՞չ 'ի լուսաւոր անձինս հանգչի և յոյս Արքայի ,
Եւ 'ի նոցանէ սպասէ հայրենիքն գործոց գերյարգի,
Արհեստք գիտունե՛ց ազատե՛լ զմարդ յերկրիս սնոտե՛ց
Առ Տէր ամբառնան զոգի և զմիտս 'ի գիւտ շնորհաց ,
Ուսմունք պատրաստեն զհոգի զմիտս մեր առ 'ի մտանել ,
'Ի քաղաքական հանդէս պաշտապանց յաւէտ անարգել ,
Նոքօք կարողեմք մեք հատուցանել զմեր նուիրական,
Հաստչին հայրենեաց նաև ծնողաց զպարտս վճարման ,
Երջանիկ է նա որ 'ի մանկական տիոց հասակի ,
Կալաւ ո՛չ զգանձ այլ զկրթու՟ն բաժին եղակի ,
Ա՛յս ձիրք միմիայն յաղթեսցէ համայն վտանգաց իսպառ ,
Ա՛յս ձիրք պահեսցէ՝ զանձն յապահով յարկածից 'ի չար ,
Յաշխարհիս է մարտ կրից և տարերց այնչափ այլա՟զն,
Շաւիղ օձապատ հիւսեալ ուռկանաւ անկէտ մոլորման,

Սքանչելի խառնուրդ բարւոյ և չարի տեսիլ հիացման
Եւ փոփոխումն մարդկային բախտի յոյժ զարմանազան,
Որ այսօր հանէ յաստիճան փառաց 'ի գահ մեծութեան ,
Եւ վաղիւ անդրէն յերկիր կործանէ 'ի վիհ կորստեան,
Յայնս այր գիտուն պահէ 'ի սրտին զկայծ սուրբ սիրոյ,
Զգործ իւր կարգէ լուսաւոր մտօք ըստ կամս Աստուծոյ ,
Ցանկութիւն նորա է երջանկութիւն ոչ միայն իւրեան ,
Այլև ընկերացն և իւր հայրենեաց ազգին սիրական
Բայց զայն մի՛ իմա 'ի հարստութեան կամ 'ի մեծութեան ,
Այլ 'ի վիճակի բաւականութեան և անդորրութեան ,
Մե՞ղ իցէ արդեօք կեալ անստացուած չունել ճոխ ոսկի ,
Ո՛չ . . . քաղցր է ասել զոր պարտ էր առնել ահա՛ արարի .
Բայց բե՛ր քննեսցուք թէ ո՞յք են պաշտօնք Ազգիս յաշխարհի ,
Յոր ժողովուրդ մեր հայթայթէ զապրուստ կենացն ըստ կարի ,
Զորք վիճակք կենաց յատուկ են Ազգիս, իբր զինուորք
Եկեղեցականք և վաճառականք և արուեստաւորք ,
Բայց զիա՛րդ միմիայն անգէտ անուսումն յարբունս հասեալ ,
Մարթասցի լնուլ զայսոսիկ պաշտօնս անսխալ գործեալ,

Ու՞ սփոփեսցէ զնա այն շուկայ վաճառմանց տեղի ,
Ուր բազում լեզուաց և բարուց ազգաց գիտութիւն խնդրի ,
Զիա՞րդ փայլեսցի նա հզօր 'ի գունդ զինուորականի,
Ուր առանց ներքին խորհրդոց մնաց զէն ոչ ներգործի

Զխորդ կարացէ նա կառավարել զազգ զեկեղեցի,
Ուր զԱ.Ծայինս գիտել քարոզել ճառել միշտ պիտի,
Զի այնպիսին ոչ զօրէ գոլ պաշտպան իւրոց հայրենեաց ,
Որ ՚ի մատաղ տիս չուսաւ ինչ ուսումն լոյս իմաստութեանց ,
Նա ձեռամբ պահել ոչ զօրէ զկշիռ արդար իրաւանց ,
Որոյ սիրտ դողայ առ տգիտութե չար խղճի մտաց ,
Նա ոչ զօրէ զայլս ՚ի ռահ վերածել ՚ի ճշմարտութե
Որոյ միտք հիւծել կայ է մէջ շաւղի չար մոլորութե ։
Իսկ առաքինի իմաստնոյն հոգի բաց է յաւիտեան ,
՚Ի պէտս ամենայն անմեղ բերկրութեց վարուց մաքրութեան ,
Ընդ նմա հաւատք է միշտ ուղեկից անձանց մեր պաշտպան,
Ընդ նմա և յոյսն Թագուհի երկնից փառք անզուգական ,
Ընդ նմա և սէրն յԱ.Ծ և յեղբարս պսակ մեր գործոց ,
Ընդ նմա են միշտ գիտունք ուսմունք սրբուն հոգւոց ։
Չիմանամ զխորդ փողեցից զներբող անմահ գիտութե,
Յորում աշխարհի որ Ազգ ոչ կամի զիւր միտք պատուական ,
Ինուլ իմաստունք լայնել գիտութբ միշտ յորդահոսան ,
Զատանել այնու զանձն փառաւոր յանասնոց անբան
Ո՞չ ուսմունք արդեօք զազգս լեռնաբնակս ՚ի մի խումբ ածին ,

Օ ժողովս գիտնոց զյարկ կրթութեան զքաղաք կանգնեցին ,
Ընթերցցուք զՀայոց զնախնի պատմու՟ի տեսցուք անդ յայտնի ,
Յումմէ՞ էր պակաս Ազգ մեր քաջու՟բ թէ ոչ աւելի,
Ե՞ր այնուհետեւ անկաւ յառաջին յիւր քաջու՟է ,
Կորոյս զարի սիրտ դողայր թշնամեաց յիւրոց տեսլենէ ,
Ո՞չ ապաքէն Հայկ զԱրամ իւր եթող, Արամ ըզՏիգրան,
Տիգրան զՏրդատ, Տրդատ զՎարդան ժառանգ քաջութեան,
Եւ զի՞նչ էր զի՛նչ այն, որ եղեւ առիթ յետին կործանման ,
Եւ ուստի՞ եմուտ այն տկարու՟ե յազգ մեր Թորգոմեան ,
Ընդէ՞ր Հռովմայ և կամ Յունաց ազգ էր անպարտելի ,
Եւ թէ յաղթիւր մերթ ի՞ւ դարձեալ յառնէր 'ի փառսն նախնի ,
Սխրագործու՟իք դիւցազանց նոցա էին տօնելի ,
Որք գրեալ 'ի գիրս զնոցին վառէին զոգի կենդանի,
Քա՛ջ նախանձէին զնախանձ բարի 'ի մահ խաղային ,
Ընթերցեալ 'ի գիրս զգործս նախնեաց 'ի սիրտ վառէին ,
Բայց ո՞ւր ընթեռնոյր Արշակ և Աբգար զայս սէր հայրենեաց ,
Ո՛չ գոյր մեզ գրեանք , ուստի՞ պատմու՟ի քաջութիւն նախնեաց ,

Յետինք ո՛չ է̃ այնմ վաւերին նախնեաց նախանձու
փառաց ,
Եւ յետ առ սակաւ գլխովին լուծաւ քաջութիւն
բաղկաց ,
Քննեսցուք դարձեալ ուստի՞ բաժանումն Ազգիս
մեր յերկու ,
Մեկնեալ 'ի ծոցոյ մօր իւր իսկական դիմել առ
մօրու ,
Զմե՞ր միայն գտին զազգ Մխիթարեանք Հռովմեան
խմբի ,
Մոլորեալ հերձել և յիւր դարձուցին կրօն սին
Պապի ,
Եւ զիա՛րդ կարաց Ազգ մեր զօտարին առաւել
սիրել ,
Եւ զիւրն մաքուր կրօն Գրիգորի 'ի յանձնէ մերժել ,
Յա՛յտ է զի տգէտ գոլով ո՛չ ծանեաւ զիւր հաւատ
ուղիղ ,
Խառնեցաւ յայլ գունդ կալաւ զայլ հաւատ բազ-
մօք անուղիղ ,
Այս տգիտութիւն զբոլոր Հայաստան ծով արեան
կացոյց ,
Այս տգիտուե̃ի զպայծառ Աստեղս ազգիս լրթացոյց ,
Այս տգիտուե̃ի իշխեաց ցայն վայր մինչև գլխովին
Ազգ մեր սիրեաց զլոյս գիտուե̃ց զշնորհք Արարչին։
Ուր չէ՛ք գիտուե̃ի անդ չէ՛ք յիրաւի և սէր Հայրենե̃ց ,
Ուրանօր չէ՛ք սէր չէ՛ք անդ միաբան ժողով ընկերաց
Աստի բաժանումն սաստի և հերձուած ծագի ծ̃գեսցի ,
Զի այն լա՛ւ կարգի որ իմաստուե̃ մնաց կար
գադրի .

Ախտ մեծ և այժմոյս նշմարի յԱզգիս և զինչ է պատճառ,
Ախտ զոր չամաչեմ ածել յերեւան քան զոր չի՛ք ինչ չար,
Ո՞ր ազգ իցէ այն որ զիւր բարբառել լեզուն ամաչէ,
Ո՞ր այն ազգ որ զանձն չանուանէ այնպէս յորում ծնեալ է,
Սակայն են յազգիս որք Հայ անուանիլ ամօթ համարեն,
Են որք անարգեն զլեզուն հայրենի օտարին սիրեն,
Վա՜յ ձեր վիճակի աւաղ ձեզ կարդամք որ զայս ախտ ունիք,
Յումմէ՞ զանգիտէք, ո՛չ առնէիք զայս թէ տգէտ չէիք,
Ո՞ւր կայ ձեզ գիտել, թէ զինչ գտանի 'ի տան օտարին,
Ձեր նախ ծաներուք թէ զինչ կայ 'ի տան, յետոյ զընկերին,
Չէ՛ նա բանասէր որ զայլոց գիտէ լեզուս զանազան,
Մինչդեռ անտեղեակ գտանի լեզուին իւրոյ հայրենեան,
Այլ որ ճանաչէ զյարգ իւրոյ լեզուին ընտիր սեփհական,
Յետ այնու զպա՜պ բարբառի լեզուս 'ի պարծ գիտունն,
Ո՞վ դուք եղկելի՛ք թէ ունի մեր Ազգ ինչ պակասուն,
Պարտիք ազգասէր սրտիւ բառնալ զայն և տալ դովութիւն,
Ընդ հուր և ը՟ սուր պարտիք անցանել 'ի սէր Հայրենեաց,

Այլ ոչ խուսափել լուռ վկայուք զո՛ւր յանարգ՟նց
Թէ զայս առնէ ոք տգէտն եթ առնէ այլ ոչ իմաստուն ,
Զունելով զզէն ը՟դէմ թշնամեաց միտքն այն լուսաբուն ,
Եւ ի՞ւ գտանել ի՞ւ սեփհականել զայս զէն իւր անձին ,
Ո՛ւր բաշխի այս զէն, զէն բանականաց ձրի և անգին,
Աստ 'ի Տաճարի նոր Աթենասայ ուր կազմի սեղան
Ձեռամբ Ազգասէր Եղիազարեանց առատ գիտուն։
Պարձել ասեմք ձեզ թէ եկա՛յք յայս մեր մարտկոց դպրութեան ,
Եկա՛յք ը՟ ազդեր կապեցէ՛ք զայս սուր մտաց արփական
Որոյ 'ի բերան հարջիք մի ը՟ մի վառել նախանձու ,
Օ՜ խումբ բովանդակ թշնամեաց գուող ձեր արեանարբու ,
Եկա՛յք յայս Պարտէզ 'ի հիւսիս տնկել մեզ Արեւելեն
փունջ փունջ քաղեցէ՛ք ծաղիկս հանճարոյ 'ի պըսակ լըման ,
Եկա՛յք յայս Տաճար երկրպագանել լինել գոհաբան
Տ՟ն Արարչի Տեարց բարերաց Տոհմին Պաղարեն ։

Թէատրոն խաղամեանց 'ի խարասուէ ։

ՔԵՐԹՈՒԱԾ. ԺԴ.

յԱզատութեան Մայր Աթոռոյն Մերոյ սրբոյ Էջմիածնի,

Ո՛վ պարիսպք բարձունք սուրբ Էջմիածնի տանս օրհնութեան,
ո՛վ դուք անմռունչ վկայք ճշմարիտ դարուց հնուե՟,
ո՞չ խորտակեցայք 'ի շանթից հրոյ անօրէն պարսից,
ո՞չ զարհուրեցայք 'ի սպառնալեաց չարին ծառայից։

Շինուածք քո կանգնեալ, որդիքդ յարուցեալ 'ի գերեզմանաց,
թշնամիքդ ողբան յարտասուս արեան յամօթ երեսաց,
Աջ Լուսաւորչի կացոյց զնոսա 'ի ցիր և 'ի ցան,
վարձ նոցա եղեն գերեզմանք բացե՟լ յերկիր կորստե՟ն։

Ո՛վ Ա՟ծային 'ի կործանմանէ ազատեալ Տաճար,
և այսօր յայտնես զքո զերկնային փառազարդ տիպար,
աղերսք մաղթանաց իբրև խունկ անոյշ 'ի քոյին սեղան,
և այսօր ծխին նստեալ 'ի քրովբէս Հաստչին 'ի կայան։

Գութ մեծ Արարչին առ քեզ յօգնութիւն հասոյց զՌուսաստան,
որ եկն փշրեաց զգագաթ թշնամեաց զգունդ անպիտան,
կորոյս 'ի միջոյ զպարսից վոհմակ յիւր մեծ զօրու՟ն,

ծանոյց աշխարհի զիւր հզօր բազկաց զանյաղթ քաջութիւն ։

Զմե՛ր կոխոտեալ զազգ ՚ի ժողովոյ չար անհաւատից ,
և զվարագոյր տրտմութե՟ զերծեալ ՚ի դիմաց սրտից ,
Արքայն Ռուսսիոյ Հայր Հայաստանի միշտ հոգաբարձու ,
անցեալ յասպարէզ մեծի յաղթութեան ձայնէր ահարկու ։

Կա՛մ սէր հաշտութե՟ և Ազգին հայոց լի ազատութիւն,
կա՛մ արինահեղ սաստիկ մարտ , զի իմ մե՛ծ է բարկութիւն ,
լա՛ւ է կորիցուք ազգաւ ՚ի դաշտի և Հայք ասացին ,
քան թէ կորուսցուք զանուն յաղթութեան անձին ՚ի յանձին ։

Ասացին , և անդ սարսեցաւ Ապպաս խոցե՟լ ՚ի սրտին,
ինքեանք Հայկազունք ցուցին զքաջութիւն ՚ի սաստիկ մարտին ,
անդ Երևանայ պարիսպք երկնամբարձ հալեցան անկան ,
Հայք ՚ի հայրենիս , Ռուսք ՚ի տուն Պարսից մտին անսասան ։

Կեա՛ց ո՛վ նոր օծեալ Արքայ ՆԻԿՈՂԱՈՍ մե՛ր Հայր և մե՛ր Տէր ,
կեա՛ց և մի՛ բառնար ՚ի գլխոյ Ազգիս զքո խնամք և սէր ,
կեա՛ց Դու գերասուրբ Հայրապետ Եփրեմ զարմիս Հայկազեան ,
կեցցէ՛ և Ներսէս Արքեպս Հովիւ Սրբազան ։

ՔԵՐԹՈՒԱԾ · ԾԲ ·

Պատկերագիր Բաղդէ ·

Ասա՛ վասն է՞ր Պատկերահան
զԲաղդն գրեցեր կնոջ նման · —
Վասն այն՝ զի դոյն կերպարանաւ
նա ինձ յանուրջս երևեցաւ ·
և զի միշտ է՝ փոփոխական
թեթևամիտ կնոջ նման ։

Սոյդ է այդ, միայն ասա՛
Զի՞մ գրեցեր կոյր անաչեայ · —
Քանզի բնաւ ոչ տեսանէ
ո՞ւմ զի՞նչ ո՞րչափ է՞ր պարգևէ ;
թ՝ ո՞վ է արժան, ո՞վ անարժան
երջանկութեան ոչ ճանաչէ ։

Բայց մերկանդամ ուսո՛ վասն է՞ր
Եւ անծածկոյթ նկարեցեր · —
Զի թէ պճնել կամի զմին
տայ զինչ ունի մինչ յիւր մորթին ·
և թէ կամի մերկել զոմըն
զբոլորն առնու մինչ 'ի կաշին ։

Ի՞ր կայ եղջիւր 'ի ձախ ձեռին ·
Զի՞մ ունի յաջն զգաւազան · —
Այն է նշան հարստութեան
սա արքունի իշխանութեան ·
զի պաշտէ զնա աշխարհ իբրու
չաստուածուհի երջանկութեան ։

Կամիմ գիտել զի՞նչ գուշակեն
Նորա երկու Թեւք որ ճախրեն ․ —
Մրրկածուփ Թռուցանեն
զնա անկարծ իբր ըղումբկէն ․
եւ թէ որչափ անարժան է
յուսալ ՚ի նա՝ մեզ քարոզեն ։

Ծիծաղադէմ է՞ր գրեցեր
Որպէս թէ առ երեսս ժպտէր ․ —
Զի որում տայ յաջողութիւն
տայ ծիծաղիլ յերգ ՚ի կայթիւն ․
յետ փոքու զնա ծաղր արարեալ
բառնայ զնսեհ , բերէ լալիւն ։

Քա՛ջ են բանքդ , բայց զայն մեկնեա՛
Ընդէ՞ր բազմի յանուղղ վերայ ․ —
Զի ո՛չ միայն ինքն իբր անիւ
հիւ գայ ․ այլեւ զոր ոք հազիւ
բառնայ փառօք մինչեւ յաստեղս ,
՚ի դժոխս իսկոյն սուզէ շանթիւ ։

Բայց չիմանամ , Պա՛տկերահան
Ի՞ր առ ոտսն չի՛ք պատուանդան ․ —
Զի թէ բարիք եւ թէ չարիք
նորա միշտ են առանց հիման ․
որ ոք նովաւ երջանկանայ
չունի ուրեք ոտից կայան ։

Թէ ո՛չ ցասնուս խնդրեմ պատմեա՛
Զիա՞րդ կոչի անունն նորա ․ —
Չիցե՞ս լուեալ մինչ ցարդ ո՞վ այր
աղքատք կոչեն մօրու խորթ մայր ․

Իսկ ուր առնուն զմթերս ոսկւոյ
բամբիշ զնա ձայնեն դշխոյ ։

Եթէ մայր է , ընդէ՞ր տանջէ
Զաղքատն , որ միշտ յոգւոց հանէ . —
Առ այս զի մի՛ դատարկասուն
կեանք վարեսցէ իբր անասուն .
այլ միշտ աշխատ լիցի ։ Բարի
գործովք լցցէ զմարմին զհոգի ։

Թէ այդպէս է , ընդէ՞ր ապա
Հարստաց մեծ ճոխութիւն տայ . —
Որպէս զի որչափ վիսագոյն
սիգան սոնքան մոլեալ յոսկւոյն .
այնչափ լիցի կործանումն այնց
ամօթալի անարգագոյն ։

Մի թէ այդչափ ե՞ն դիւրափոխ
Բարիք բաղդին հանուրց յաղթող . —
զԿրեսոս դու 'ի մի՛տ բեր .
որ 'ի տապակն զանձն աւաղէր .
Բեղիսարիս Դիոնէսիս
Միդաս ցուցին զբաղդին պատկեր ։

Այժմ իմացայ թէ ՙՆը՛կարիչ,
զոր Բաղդ կոչես , է սոսկ ոչինչ .
քիմէռ է այն առասպելին
զոր սուտ կեղծեաց միտք Պուետին .
մարդոյս բաղդն է իւր գործք բարեաց .
և քաջ ուսմունք նուրբ գիտութեանց ։

Թէոդորոս Հալաճեանց 'ի ՙՆախիջեւանայ ։

ՔԵՐԹՈՒԱԾ. ԾԹ.

Բարեխօսութիւն Ստուերի.

Բնութիւնն ինձ չետ՝ սակայն ունիմ գեղ,
և թէ ոչ ինձ, գէթ՝ այլոց տամ զգեղ։
Զի ո՞ր նկարիչ՝ առանց Ստուերի
նկարէ գեղ ինչ՝ որով աչք թովի.
Յարքունիս ո՞րչափ կայ շքեղ պատկեր
որ տգեղ անչափ թուէր անստուեր.
Մի՛ ապ՝ զիս կոչեր՝ թէ չունիմ գեղ գոյն
զի համայն պատկեր ինև երկնագոյն.
Գեղոյ իմ վկայն՝ կարօտ չափաբեր,
ում չափել յերկայն՝ տայ միայն Ստուեր.
Զբարձրութեան չափ՝ լերանց և բրգանց,
առնու երկրաչափ՝ ՚ի ձեռն Ստուերաց.
Զայլ ինչ ասացից մեծ հիանալի,
որ թուի մնայ անհաւատալի.
Տեսանե՞ս արդեօք զայդ մեծ արեգակն,
որ բոլոր երկրիդ՝ կենաց լուսոյ ակն.
Ճանապարհ նորին և չափ բարձրութեան,
ժամանակն՝ տեղին, նոցայն աստիճան,
Ոչ այլով. բայց լոկ ՚ի ձեռն Ստուերի
յաստեղաբաշխէն ճշդիւ ճանաչի.
Բայց ունիմ այժ, լինիմ խոստովան,
թեթև բնութիւն և փոփոխական.

Յինէն թէ փախչիս՝ ես քեզ հետևիմ,
Թ՚ինձ հետևիս դու՝ ՚ի քէն ես փախչիմ։
Թեթև եմ սակայն զիս ոչ ոք կարէր
շարժել, թէ չշարժէր նա՝ ոյր եմ Ստուեր։
Գիտես զի զիս լոկ լոյսն ծնանի,
բայց լուսոյ եմ միշտ անհաշտ թշնամի։
Զիմ ծնօղ զլոյսն ՚ի նոյն ժամ վատթար
յոր զիս ծնանի, փոխեմ ՚ի խաւար։
Տեսանել զիս քեզ չիք կար առ ական
թէ ոչ. երբ ոչինչ տեսցես ՚ի մթան։
Ձեռօք ըմբռնել թէ զիս կամիցիս,
փութա՛. բայց խբե՛լ միշտ յետս դարձցիս,
Քո եմ ես Ստուեր, սակայն չեմ ՚ի քեզ,
ունիմ ըզգոյ, բայց ոչ կեամ առանց քեզ։
Առանց ինձ զքայլ ոտիցդ ոչ փոխես,
ձեռոյդ և շարժմանդ զիս միշտ կապիկ տե՛ս։
Զոյգ գնամք և զոյգ առնումք զդադար,
աստ և բանք մանկանս առցեն զդադար։

[illegible] [illegible] ՚ի [illegible]։

ՔԵՐԹՈՒԱԾ · Կ ·

’Ի տարաբաղդութիւն մարդկային .

Տարաբաղդութիւն է գերաղանց կրթարան մարդոյ, որ տանի զնա ’ի վեր ’ի բարեկամութի՟ զգօնութե՟, մարդասիրութե՟ և բարերարութե՟ . ուսուցանէ ճանաչել զյարգ մարդկան, և հանապազ թելադրէ զգալ զարժանաւորութի՟ կենաց : Ո՜վ արդեօք մնայ անյայտ, և ո՛ր ողջամիտ ո՛չ համաձայնեսցի, թէ յետ անցանելոյ խստադին ձմեռան, գարնան առաւել քաղցր թուի գեղեցկութի՟ . անցցէ ապա վերասցի սպառնալի մրրիկ տարաբաղդութե՟ . և զբերկրութեց մերոց մեծաքանակ տեսցուք զչափ, որ մնուսցեն զսիրտ և պարարեսցեն զոգի : Տարաբաղդութին ո՛չ ումեք ակն առնու և՛ հարուստ և՛ աղքատ անկանին ընդ հարուածովք նո՟ր : Այց ելանէ յաճախագոյն և հոյակապ ապարանից, յորս թագաւորէ առատութե՟ յագուրդ, և գետօրէն հոսին աղբիւրք բերկրութեց : Նման՝ զմարդ ցաւալի են՝ որ յօրանան բարեբաստութբ . յորոց վերայ բարկացայտ վիճակ դանաղէտ դնէ զերկաթի զեւր ծանրութի . բայց դուք դժբաղդք ’ի դայթագղութե՟ շրջիք ’ի դժգոհիլ զվիճակէ ձերմէ, ’ի նկատել աչօք նախանձու ’ի շքեղատեսիլ ապարանս, ’ի վայելչագիր պարտէզս զարդարեալս ծաղկամբք Պոմոնայի, ’ի նժոյգ երիվար ’ի քառաձիգ դեղափայլ կառս, ’ի հայել տրտնջմամբ ’ի բարեբաստ անձինս, որ լի են բարեհաճ բերկրութբ կենաց : Դադարեցէք հալածեալքդ յիրաւանց . ’ի մի՛տ առէք հաւաստեաւ՝ թէ ո՛րքան նոքա հատուցանեն փոխարէնս բաղդի վասն նորուն բարերարութեանց ։

Մեծամեծ կորուստք ածեն զձեզ 'ի հեծութիւն, այլ զգայութիւնք յորմէ ոչ իսպառ զրկեալ էք, կարեն թեթեւացուցանել զվիշտ դառնութեանց ձերոց. ո՞չ արդեօք ընդ ձեզ մնան խաղաղութիւն հոգւոյ և անդորրութիւն խղճմտանաց. մի՛տ դիք ապա զի մի՛ ատելութիւն զօրասցի թափել զթոյն դառնութեան յանօթ կենաց ձեր ։ Դուք գոլով գլուխ գերդաստանի պաշարեալ էք ամենուստ զբազմամբ հոգոց, վշտակիր վաստակք ձեր հազիւ տան թոյլ զհանգստութեան ճաշակել զքաղցրութիւն ։ Այլ ազատ էք յամենայն պարտաւորութեանց զորս ունել դիտէ 'ի վերայ խորամանկութիւն ։ Քանի՞ք յաշխարհի փարթամաց բաղձային արդեօք հոգւով չափ փոխանակել զմեծակառոյց պալատս իւրեանց, լցեալ անսպառ ոսկւովք, ընդ կայանս խաղաղ տնանկութեան, 'ի չափաւոր ճաշս և 'ի խաղաղական բերկրութիւնս աշխատասէր երկրագործի ։ Ո՞ւր գտցուք զսէգ զուղղաբերձ կաղնին, որ հասեալ մինչև յամպս բարձրութեամբ արհամարհէր զխստաշունչ մրրիկս ։ Որոտաց երկինք, և ահա կործեալ ճայթմամբ ձեղքեալ պատառեալ ընդ մէջ ։ Անցաւորն 'ի տեսանելն զայն, զի՞ որ երբեմն յափշութիւն կրթէր իբրև ընդ հսկայ ահագին պանծացեալ, աղաղակէ մեծագոչ, Այն օրինակ գահավիժին իշխանապանծ պայազատք 'ի բարձրութենէ բարեբաստութեան. սոյնօրինակ խորտակեսցին ամենայն՝ որ եղեն աւարկայ զարմանաց և նախանձու ։ Տարաբաղդութիւն՝ առաքեալ յերկնից առ մարդ չարաբարոյ, է քինախնդրութիւն վասն արհամարհեալ առաքինութեան. և մտրակ խոշտանգիչ՝ որ պատժէ զչարագործն վասն անմեղին տանջելոյ 'ի ձեռաց նորա ։ Իսկ որոյ սիրտ ատեայ զարատիս, գտանէ հանապազ ամենայն ուրեք զուրախութիւն նաև 'ի մէջ Թշուառալից վիճակի. և արտասուք հեղեալք 'ի նորին աչաց, յարուցանեն զքաղցրախորժ զգայումն 'ի սիրտ ն՟ր ։ Բնութիւն՝ իբրև մայր գորովառատ լնու զնա նորանոր բարերարութ՟բք. ամենեքեան ընդունին զմտերիմ հաղորդութ՟ն ը՟դ վիճակ ն՟ր. այ՟քն ձեպեն առ նա բաղկատարած 'ի գրկախառնութ՟ն կարեկից զգայութ՟բ սրտի. որ նուիրե՟լ է գլխովին զկեանս իւր առաքինութե՟, զնոյն անտրտունջ 'ի ճանապարհ իւր համբերութ՟բ, զբոլոր վստահութ՟ն իւր և զհաւատ ընծայէ ամենիմաստ նախախնամութե՟, բարեպաշտութ՟բ հնազանդեալ սկզբնագիր իրաւանց նորա ։ Մ՟՟շքեղութ՟իք շրջապատեալք զփառաւորն, ոչ փառքն որ զարդարեն ըզգեցեալն, և ոչ իսկ առատութ՟իք որով յագենան փառթա՟մք, կարեն զարթուցանել 'ի նմա զնախանձ, կամ յողյողդել զնորին համբերութ՟ն ։ Յերեկս և յեւանդըն ամբարհաւաճ կուռք ազգաց կուրացուցին զԹեթեւամիտս շքեղութ՟բ իւրեանց. կնդրուկ և խունկ անուշահոտ ծխեցան 'ի տաճար նոցա, ընդունէին զլիաձեռն պտուղս մատուցելս Թիւրակրօն փաղաքշութ՟բ. բայց այսօր ա՟մ եղեռն չարագործութեց ն՟յնկարին մերկապարանոց ակներև, ա՟մ խորամանկ չարախորհութ՟իք երևէին բացափայլ. և փոխանակ զի ծանուցաւ իշխանապանծ խնամատար և պաշտպան հասարակաց երջանկութ՟ե, ձայնի այժմոյս յափշտակիչ և Թշնամի հայրենեաց. իսկ վաղիւ զի՞նչ, պատկառանք և հայհոյութ՟ի կուտեսցին 'ի գլուխ ն՟ր. չքաւորութ՟ի և յուսահատութ՟ի մատնեսցեն զնա 'ի խստագին տագնապ ։

Բայց գիտես՝ ընկեր՝ Թէ չի՞ք յարատև ուրախութ՟ի ը՟դ ճառագայթիւք արեգական. Թէ բաժակ չարչարանաց ոչ անցցէ և 'ի քէն, ո՟պ վճռեաց տեսչութ՟ին ածային, ապա որ կարէ տանել դժուարին նեղութեանց , ընդունելի զանուն իմաստնոյ , որ ուսաւ վշտանալ անտրտունջ , և գտանել զուրախութիւն իւր 'ի հաւատս առ նախախնամութիւն , նա զօրեսցէ անուանիլ ճշմարիտ քրրիստոնեայ : Առ ձեզ են բանք բարեբաստ ժառանգորդք բովանդակ բարեաց բնութեան , պճնեալք վարդերանգ ծաղկամբք զուարճութեան , մի՛ երբէք մոռանայք թէ վիշտք և թշուառութիւնք սպասեն ձեզ 'ի ճանապարհի կենաց . իսկ դո՛ւք տարաբաղդք բեռնաւորեալք տագնապաւ մարմնոյ շահեցարուք բերկրութեամբ զոր ստացայք մաքուր խղճմտանօք սրտի և բարերարութեամբ բնութեան :

Սարգիս Աբեղեանց 'ի Պաղարայ .

* * *

ՔԵՐԹՈՒԱԾ · ԿԱ ·

Երջանկութեան առաջին տարւոյ և անկման նորա :

'Ի տեղւոջ զուարճալի առ աղբերբ 'ի դրախտին,
Կարգեցան յԱստուծոյ նահապետք մեր ազգին .
Այլ աւաղ մեր բաղդից եմք պատճառ կորստեան ,
Որ ցանկամք միշտ բարեաց, չեմք մերովք բաւական .
Արարիչն Ադամայ զամենայն ինչ յանձնեալ,
'Ի դրախտին եւ պատուէր զայս նմա գերօրհնեալ .
Օհ մի՛ նա մերձեսցի մի՛ 'ի ծառն գիտութեան ,
Որ յայտնէ զչարեաց զբարեաց մարդկութեան .
Խորամանկ և չար օձն զչար միտս հնարէ ,
Մերձեցեալ առ եւայ զայս չարիս թելադրէ .
Զեզ Աստուած արգելեաց զայն պտուղ ճաշակել,
Յայս զի մի՛ նմանեսջիք Աստուծոյ անարդել .
Արդ կերայք զայն պտուղ զի աչք ձեր լուրջ բացցին,

Ծանիջիք զամենայն , ձեզ շնորհք յաւելցին ·
Նենգամիտ ստութ՟ին ՚ի կորուստ լուծանէ ,
Կերին անդ նախահարքն յարգելեալ ՚ի ծառէ ·
Յուտել անդ մերկութ՟իք անկարծուստ յայտնեցան ,
Զսաղարթս զգենուլ հապճեպով փութացան ·
Արհաւիրք և շփոթք ՚ի հոգիս ծագեցան ,
Կորուսին զանմեղ սիրտ ՚ի շնորհաց զրկեցան ·
Արքունին ՚ի յերկինս առ Աստուած զմեզ տանի ,
Բայց յանցանքն ՚ի Տեառնէ և յերկնից զատանի ·
Ծածկեցան նախահարք բայց Աստուած տեսանէ ,
Բարի հայրն զիւր զսիրտ խստութեան անդ փոխէ ·
Հրապուրիչ օձն ՚ի գուբ ընկղմի անիծեալ ,
Եւ յերկրի սողալով մաշի միշտ երերեալ ·
Զի այնու յայտնեսցէ զզօրութ՟ի գոռոզաց ,
Ընդ նմին և պատժեաց նա զանձինս մեր նախնեաց ·
Նա կնոջն հրամայեաց ծնանել աստ ախտիւ ·
Եւ լինել կողակցին հնազանդ տալ պատիւ ·
Նոյն և առն պատուէր եդ վիշտ յերկրի ճաշակել ,
Եւ զհաց դժուարին վաստակօք գտանել ·
Ծածկեցաւ ՚ի նոցունց երկնային ճրագ լուսոյ ,
Բայց թէ մեք զպատուէրս կատարեմք զԱստուծոյ ,
Զդրախտ ՚ի սրտի մեր յաւէտ տեսանեմք ,
Եւ տաճար Աստուծոյ զհոգիս մեր կազմեմք ·
Միշտ ՚ի վիշտս և յաղէտս սէր և յոյսն լուսափայլ·
Բացցեն մեզ կրկնակի զդրախտն Արքափայլ ։

Գրիգոր Սերեպրովեանց ՚ի Պ[illegible] ։

ՔԵՐԹՈՒԱԾ. ԿԲ.

Կարճութիւն կենաց 'ի Սենեքայէ.

Մարդիկ բողոք բառնան զկարճու՟է կենաց և զարագու՟է ժամանակին, վ՟ն այն զի մահն 'ի վ՟ր հասանէ ոմանց յայնժամ, երբ նոր սկսանին կեալ: Ոմանց յանասնոց նախադրե՟լ է յարարչէն կեալ ընդ հինգ կ՟մ ընդ տասն դարս. իսկ մարդոյ, որ ծն՟լ է 'ի պէտս մեծամեծ գործոց, պարտ է 'ի սուղ ժամանակի մեռանել: Բայց 'ի նմին է այս, ժամանակն չէ՛ սղընթաց. մեք ինքեանք վայրապար ծախեմք զմեծ մասն նորին: Բաւական լինէր կեանք մարդոյ առ 'ի գլուխ ածել զմեծամեծ գործս, եթէ գիտէաք արդիւնաւորել նովաւ: Բայց մոլեալ մեր յանկասկած շուայտու՟ս և հեուի յամ՟ բարեմասնու՟է 'ի կեանս մեր, ոչ տեսանեմք թէ ոպ՟ անցանեն աւուրք մեր. հասանէ ժամն օրհասական. և մեր ոչ զգացե՟լ ամենևին զկեալ մեր յաշխարհի, յանկարծակի լսեմք զձայնն, որ կոչէ զմեզ ցըդուրս գերեզմանի:

Երկայնաձիգ է կեանք մարդոյ, բայց մեք զայն համառօտեմք. բաւական է ժամանակն, այլ մեք զայն կորուսանեմք: Գանձք անհամարք յորժամ անկանին 'ի ձեռս առն վատնողի, նոյն հետայն 'ի չիք դառնան. այլ յանդրադարձ սակի և զփոքր ինչ ստացուածք յարդէ նա, որ գիտէ բարւոք տնօրինել զինչս իւր:

Ո՛չ ալևորու՟ն ծերու՟ե և ոչ կնճիռք դիմաց նշան են բազմաժամանակեայ կենաց. զի զի՞նչ է և նոյն իսկ ութսնամեայ հասակ մարդոյ անցելոյ 'ի դատարկու՟ե:

Այնպիսի անձն ո՛չ թէ եկեաց յաշխարհի , այլ միայն տեղի կալաւ յերկրի , և դուք զնմանէ յայսմ իսկ ժամու կարծէք մեռանիլ․ ո՛չ, այլ ամք յոլովք անցեալ են այնուհետեւ : Ոմանք ասեն լինել նմա այր ութսնամեայ . բայց նա 'ի նոյն իսկ աւուր ծննդեանն իւրոյ մեռաւ . քանզի յանդստին մանկական տիոցն ոչի՛նչ արար բարի յաշխարհի : Այլ ոմն վախճանի 'ի դեռաբոյս հասակի . բայց լրացուցեալ զպարտաւորութ՟ի շահաւէտ քաղաքացւոյ , խանդակաթ հօր , հնազանդ որդւոյ , և ո՛չ երբէք զանց արարեալ զգործով իւրով . և թէ՟պ կեանք ն՟ր չէ՛ երկարօրեայ , բայց փառաւոր է յոյժ և յարգոյ : Առաքինին ո՛չ թէ եկեաց , այլ միայն մնաց յաշխարհի ամս ութսուն , և կամ եկեաց որպէս կեանտանիք ամենայն :

Բայց լո՛ւր դու յայսմ վայրի , զի կեանք մեր բերեն զնմանութ՟ի ականց պատուականաց , զորոց զգինս հատանեն ո՛չ ը՟ մեծութ՟ն, այլ ը՟ արժողութ՟ե . քանզի սմին նըման և զկեանս մեր պարտ է ո՛չ թէ հայելով յերկարութ՟ի ժամանակին կշռել , այլ հայելով 'ի գործն միայն : Նկարեա՛ դու 'ի պատկերատանդ զայր ոմն նորահասակ , որ արհամարհեալ միշտ զբաղդն յեղյեղուկ , եհաս հուսկ ապա խաղաղիկ անդորրութ՟ե յեզր կենաց իւրոց . նոյնպ՟ զայլ ոմն ծերունի , որ ո՛չ արար ամենեւին ինչ բարի յընթացս բոլոր կենաց իւրոց . տե՛ս թէ ո՞րպիսի զանազանութ՟ի է 'ի միջի սոցա : Մի՛ն կեայ և անդր ևս քան զմահ իւր . միւսն 'ի նոյն իսկ 'ի կե՟ն իւրում 'ի մոռացութ՟ե տանի : Ա՟յ զնա միայն ձայնեսցուք երջանիկ , որ և զսուղ ժամանակն իւր բարւոք յարդեաց . իբր զի այլք լցուցին միայն զթիւ մարդկան յերեսս երկրի , բայց սա հաւաստեաւ եկեաց . և յետ կատարելոյ զընթացս իւր յաշխարհի կեցցէ 'ի յիշողութե՟ մերոյ ։ Նա ընդէ՞ր է ապա հարցանելն, բազո՞ւմ արդեօք ամս եկեաց նա ․ քանզի բաւական է և այս, զի կեաց նա յամ ժամանակս յաջորդաց իւրոց և անջնջելի մնայ անուն նր՟ յաւիտեան ։ Սակայն իմ աստանօր չէ՛ 'ի մտի եղել հրաժարել յերկարաձգութե՟ հասակին ․ այլ զմի՞ է տրտունջս յորժամ հասանեմք 'ի նաւահանգիստ ։ Ո՛չ պարտ երբէք յուսալ յերկարութե՟ կենաց, այլ զխուրաքանչիւր օր համարել իբրև զվերջին և յարգել զայն իմաստութ՟ ։ Ընդէ՞ր է հարցանելդ ինձ թէ ե՞րբ ծնայ ես, զի որպէս 'ի փոքրահասակ մարմինս մարթ է տեսանել զմեծագործ ոգիս, նոյնպէս և կեանք ևս և սուղ մարթի լինել փառաւոր ։ Զայն ժամանակ կենացս կոչեմ իմ սեպհական, յորում արարի բարութ՟ ինչ, մնացե՟լն ամ՟՝ չէ՛ իմ ։ Խաւարին սոսկութ՟ անտանելի է ամենեցուն առ հասարակ ․ զկեանս պարտ է բարւոք անցուցանել, այլ ո՛չ երկարել ․ բայց և այնպէս որպիսի կեանք է առաւել երկայնաձիգ քան զայն որ իմաստութեամբ է միայն հռչակեալ ։

Զաքարեա Լուծիկեանց 'ի յԱստարխանայ .

ՎԵՐԹՈՒԱԾ. ԿԴ.

'Ի Վերայ Տարեգլխոյն Ամսոյ ։

Ով մշտնջենաւոր ճառագայթ լուսոյ, լուսազարդող զխաւարամած աւուրս կենաց մերոց, կրկնապատկող զուրախութիւն սրտից մերոց, և խափանիչ միգապատ վշտաց մերս տրտմութեանց, արժանի արա՛ զիս քումդ քաղցրահայեաց տեսլեան, զի բաւեցից արձանագրել զկարողութիւն և զարագաթռիչ սլացումն քո ։

Հիանամ՝ ընդ ամենասքանչ զօրութիւն քո, ո՛վ միտք սխրագործ, լուսեղէն զուարթուն երկնից, յորժամ անցանես զանցանես ընդ անսահման տիեզերս, յորժամ ամբառնաս զմեզ զօրութեամբ քով առ Արեգակն Ճշմարտութեան, և 'ի հոգի զմայլման արկանես զմեզ երկրպագուս առաջի աթոռոյ ամենակալին Ա՟յ ։

Զարմանամ՝ ընդ գործս քո՝ ո՛վ Ա՟ծային ոգի, յորժամ գումարես 'ի ծոց քո զսրբասուն դստերս, զհոգեկեցոյց գիտութիւնս, և հրամայես նոցա հոգ տանել երջանկութեան մահկանացուաց, յորժամ անխզելի յօդիւ շաղկապես զսիրտս մարդկան ընդ միմեանս, պաշտպանես զարդարադատութիւն, հեշտընկալ և քաղցրախորժ առնես զբեռն ընկերական ժողովոյ ։

Զարմանամ՝ ապաքէն ոգի՛ հզօր և պաշտպան, յորժամ նուաճես ընդ լծով քով զմրրիկ կրից մերոց, և մեղմագոյն հնչմամբ քաղցրասիգ հողմոյ առաջնորդես 'ի փրկագործ նպատակ, ուր սպասէ մեր և մերձաւորաց մերոց սեպհական վիճակ բարօրութեան և երջանկութեան, Այլ աւա՛ղ, քանի սակաւ են այսպիսի գործք քո ։

քանի՞ գեղեցիկս նմանիս գիշերային օդերևութից որ երբեմն ցոլացեալ է հորիզոն , անդէն շիջանին 'ի ձահճս ջուրց : Յոլովակի նուաստ ես և արհամարհ , ո՜վ միտք խորամանկ , յորժամ դժոխային բոցով բորբոքեալ ընդդէմ զինիս Արարչապետին Ա՟յ , և խորհես խաղալ զբարութ՟ նր՟ , կամ յանդգնաբար ուրանալով զնա , կամ առաջի առնելով զԱ՟ծ Միապետ , որ 'ի խոր նինջս թմրեալ կայցէ յաթոռի իւրում , բայց սարսափեսցի , մի՛ գուցէ հարցեն զքեզ շանթք կյծկնցն՟ : Դու նուաստ ես և արհամարհ , միտք անգործական , և չարակամ , երբ համարիս , վ՟ն այն միայն գտեալ զդի տուն , զի զուարճասցիս այնու , որպէս զուարճանայ ժլատն ը՟ տեսիլ ոսկւոյ , և յարգես զայն որպս՟ նա ըզ դրամն , կամ յորժամ ծպտեալ 'ի կերպարանս խորամանկ քաղաքավարութ՟ , խզես զդաշինս խաղաղականս թագաւորութ՟ց , և մարմնաւոր արանց , և 'ի ձեռս բերեալ զհնարս 'ի հարուածել զտնանկս , արդարացուցանես զկարծիսն , թէ առաւել բարւոք համարի տարաբախտ մահկանացուաց թափառիլ յանտառս :

Անարգ ես և արհամարհ , մի՛տք կորստական , երբ կեաս միայն վ՟ն սեփհական շահասիրութ՟ քո , և անմտաբար զհետ պնդեալ մոլեգին բերկրութ՟ց կրից խորհիս զերջանկութի մատուցանել անձին քում : ո՜վ սուրբ կայծ Ա՟ծային , ընդէ՞ր այդպէս արհամարհ եղեր , է՞ր ոչ պահպանես զնախկին արժանաւորութի քո . արդ՝ ջեռ զմեզ , բայց այրես մի՛ :

Մկրտիչ Լոքէլմանեանց յԱստրախանայ :

ՔԵՐԹՈՒԱԾ · ԿԴ ·

Տաղերգութիւն առ Բանն Աստուած ·

’Ի բա՛ց կացէք, չաստուածք սնոտիք·
մո՛ւզայք, փե՛բոս, ըզձեզ չերգեմ·
հեռի յինէն, կո՛ւռք փանաքիք·
սուտ խորհրդոցդ տենչալոց չեմ·
դո՛ւ Սո՛ւրբ Հոգիդ, զորմէ վկայեմ,
թէ հուրդ վառէ զիմ խելաց ճեմ
անտի ’ի քոյդ բարձրագահեդ·
ե՛կ, է՛ջ, և արա՛՝ զի լուսոյդ հիւթ,
յիս մաքրելով զաղտեղեալ նիւթ,
թո՛ղ փայլեսցէ զիմ բան հեթեթ։

Ե՛րկիր, պճնեա՛ զքոյդ դալարիս·
ա՛ստեղք, լերո՛ւք քաջ լուսատուք·
խո՛նարհեցէ՛ք, տեա՛րք աշխարհիս·
զուարթո՛ւնք երկնից, յո՛տս անկերուք·
և դո՛ւ Սիո՛նդ կալանաւոր
ամբա՛րձ զգագաթդ· զի եհաս օր,
յորում Հաստիչն զկապանսդ մաշէ·
Աստուածորդին գայ ’ի ծնունդ·
Ե՛րկիր, ծանի՛ր զքո սնունդ·
ըզնա աշխարհս Փրկիչ ձայնէ։

’Ի սուրբ Մօրէ, ’ի սուրբ Կուսէ
բանն Աստուծոյ Փրկիչ քաղցրիկ·
նա ամենայն վշտաց տարցէ,
որք մարդկութեան են դատակնիք·

և զի՞նչ . . . . անշուք մսուր գազանաց ,
կոյտն պղտորոյ , կնխւնոյ զանգուած ,
շքով գրկէ զԱստուածորդին .
մե՛ծ աւագաստք , լա՛յն պողոտայք ,
կայա՛նք մեծաց , սրա՛հք գերակայք ,
արհամարհե՞ք զանշուք տեղին ։

Երկնի Աստուած , զորոյ գալուստ
՚ի վաղ հետէ գուշակեցին
Տեսողք . . . . և զի՞նչ . հրաշք բացին
զդրունս մանկութեան անդ ՚ի վերուստ .
ահա՛ ՚ի տիս իւր ուխտաւոր
պատգամ՝ նորա ջինջ օր ՚ի յօր
ըզմոլութիւնս իսպառ լռէ .
Ճշմարտութիւն իւր յաղթական ,
որ ՚ի շրթանց այն պերճաբան ,
զսուտ վարդապետս ըմբերանէ ։

Զայնէ Յիսուս , հողմք խաղաղին ,
մեռեալք յառնեն ՚ի մեռելոց ,
կոհակք յալիս անդ ամոքին
Պետրոս շրջի յերես ջրոց .
կոյրն տեսանէ զկաղաց գնալն
և ըզնոցա քաջ գոհանալն
զհմուտ բուժչէն իւրեանց խոցից .
խուլն զարմանայ յիւր ՚ի լսելն
ամենուրեք ըզքարոզելն
համեր ըզգործս Բանին հրաշից ։

Երուսաղէմ՝ քաղա՛քդ սուրբ ,
այժմ հոգւով չափ ցնծա՛ բերկրեալ :
հուպ լուիցես զՂ̃ին բան սուրբ

'ի շրջապատս քեզ քարոզեալ ·
ահա դայ Տէր · · · · զձայն խնդութեանց
բարիք ափուեն զօրէն ծաղկանց
'նդոտիւք նորա հանդիսացեալ ·
ոմն մեծարէ , ոմանք յարդեն
ըզբնքուշ հայրն որդիք գրգեն ,
որպէս ըզհարբ խանդակաթեալ ։

Հռովմդ շքեղ , մի' պարծիր բնաւ
'ի յաղթանակսդ քո պանծալւոյդ ·
զի քան ըզքոյսդ արժան , իրաւ
են յաղթանակք Աստուածորդւոյդ ·
անդ սէգ յաղթող 'ի դիս ծխեալ ,
կոխան առնէ զփոշիացեալ
հզօր արքայս , և յայն պանծայ ·
իսկ աստ Յիսուս , թէպէտ կարող ,
այլ քաղցրութեամբ զսիրտ նուաճող
սուրբ հրաշիւքն հանդիսանայ ։

Օ ի՞նչ տեսանեմ · զտանջանս պատրաստ ·
աւա՜ղ սաստիկ փոփոխութեանց ·
և զի՞նչ · · · · այն տօն Աստուածազարդ
աւետի՞ս ետ լոկ անձկութեանց ·
Երուսաղեմ ողբա՛ և լա՛ց ,
քանզի ահա օր դառնութեանց ·
Լե՛ր 'ի գլուխս՛րդ քրձազգեաց ·
զենլէն անբիծ հոգւով յօժար
իւր սուրբ կամօք , մարմնով տկար
դայ կրել զամօթ նախատանաց ։
Օ ի՞նչ · · · · սա Աստուած՝ ո՞վ խստասիրտք ,
որում այսչափ դան հարկանէք ·

'ի բա՛ց կացէք, անողո՛րմ սիրտք·
սա ձեր Փրկիչ· զի՞նչ դուք առնէք·
'ի զուր խօսիմ . . . . զնա անդ տանջեն·
Յիսուս անդ գա՛ն մահու ըմպէ՛ն·
հա՛ր· հաս ժամն, Ա՛դ հաւատարիմ·
նանի՞ր է քո շանթ յոգնակուլ·
ջնջեա՛ զերկիրս, 'ի մի ումպ կո՛ւլ
զծառայսդ, որք չե՛ն քեզ մտերիմ։

Զայն ահագին . . . . սարսիմ ահա՛ . . . .
լսե՞ս բանիս, Աստուա՛ծդ ահեղ·
երկիր շարժի, երկինք դողայ·
բոց զգայուէ օդ հրահեղ·
յալիս ծովուց շանթ հոլովի·
տաճարին անկարծ խորասուզի·
համայն շինուած արմատախլի·
դու ա՛րարած՝ մա՛րդ ժանտայի՛ն,
ո՞չ ճա՛նաչես զարքայդ բարի։

Հա՛յր, կե՛ղ զաշխարհս· մեռաւ Որդիդ . .
. . . .
. . . .

բանի տապանն, անտի յառնէ
Յաղթողն մահու ծաղկափթիթ·
և առ Հայր իւր յերկինս ճեմէ·
այն՝ որպէս աստղն լապտեր երկնից
աւարտ եդեալ իւր ընթացից
թուի սուզիլ 'ի ծովս հեռոյն·
բայց յարուցեալ յալեայ ընդել,
գայ նա կրկին լուսաւորել,
կենագործեալ զաշխարհ համայն։

Բանին երկինք . . . . զի՞նչ տեսանեմ . . . .
զՅիսուս դարձեալ առ իմ աչաց .
զո՞րպիսի փառս անդ նշմարեմ .
ո՞վ ցուցցէ ընդ դրունս բարձանց
զհանդիսադիր յաղթանակին .
զմեր տեսանեմ Տէր փառացին
բազմեալ յաթոռ Աստուածութեան .
դասք հրեշտակաց , որք րախանան
առ մեծութեանըն Տիրական
երգեն զայն օր հանդիսական :

Գժնդակ սիրտք , դու ամբոխ չար
եկա՛յք . գո՛նէ արդ մա՛հացուք
տեսէ՛ք . սա ձեր Տէր վեհափառ ,
զոր 'ի մեր սուրբ սեղանս զենուք .
այո՛ . սա — նա , մի՛ երկբայէք .
'ի մոլութեանց պատկառեցէ՛ք .
երկի՛ր պագէք Տեառնս Աստուծոյ .
նոյն երկերո՛ւք յահեղ օրէն ,
յորում տեսջիք՝ ա՛զգք անօրէն ,
'ի ձեզ ընուլ մահուան վճռոյ :

Առաքել Տիգրանեանց 'ի Նախիջեւանայ :

ՔԵՐԹՈՒԱԾ. ԿԵ.

Ափաֆօարեանք առ Աղէէրէ.

Գովեցից զքեզ՝ աղբի՛ւր զովացման և վտակ սրընթաց, արծաթանման ՚ի միջի ծաղկեալ մարգագետոց, նազեցից զձեզ հի՛ն կաղնիք հովանացեալ եզերց աղբերաց. Ը̃ մէջ ձեր ընդ սաղարթալից ոստս ձեր ո՛չ համարձակին թափ անցանել ճառագայթք արեգական. Հանդարտ կարկաջիւն քո զմայլէ զոգի իմ, վտա՛կ սառնատեսակ: Այս եկի աստ բերկրել զովութ՟ ՚ի միայնութե՟ս, եկի անցուցանել զվայրկեանս իմ ՚ի մտածութե՟ յանդորրութե՟ հովանացեալ ստուերի մաքուր ծառոցս: Աստ հեռացեալ ՚ի տաղտկալի զուարճութե՟ց աղմկալից քաղաքի, ՚ի վերայ վիմիս այսորիկ ծածկելոյ կանաչացեալ մամռով՝ միայն նստայց ՚ի խորին լռութե՟, և լուայց զքաղցր կարկաջիւնս ջուրց քոց յստակ: Կեանք մարդկան նման է հոսանաց աղբերս այսմիկ. վտակք լուսաւորք հոսին յերեսս սպիտակացեալ աւազոյ, և ոչի՛նչ արգելու զգնացս նց՟: Այսպէս որ սիրէ զբարեգործութի՟ անցուցանէ զաւուրս իւր ընդ պաշտպանութ՟ հանդարտ խրճթի, ոչ նախանձի մեծատանն որ կեայ յաւատութե՟ և ՚ի շուայլութե՟: Միտքն ճրագ կենաց նր՟ իշխէ ա՟մ հակամտութե՟ նր՟, և խղճմտանք ոչ երբէք խռովեցուցանէ զխաղաղութի՟ անարատ հոգւոյ: Մեղքն զաղիր համարձակեսցի՞ արդեօք նսեմացուցանել զլուսափայլութի՟ս աւուրց նորա. կամ մարթասցի՞ լուծանել զանդորրութի՟ անմեղ սրտի բոցակիզելոյ մաքուր սիրովն բարեգործութի՟: Գարանակալ ժպիտն երջանկութեան չունի և ոչի՛նչ չքնաղութիւն յաչ՝ քաղցր ընկերին մարդկութեանս, խոստագիս հարուածք բարկացեալ վիճակին ոչ կարեն ձգել զնա յանդունդս յուսահատութեան ։ տանջի՞ արդեօք նա 'ի մարդկային չարութենէ, բժշկական բալասամ համբերութեան զուարճացուցանէ զնա ․ զրկի՞ արդեօք յառարկայէն սիրոյ իւրոյ, բարեգործ ճառագայթք յուսոյ տան տեսանել զնա 'ի յաւիտենականութեան ։

Ոչ սակաւ արտասուք կարեկցութեան հեղանին յաչաց անձին բարեպաշտի՝ յորժամ տեսանէ զմարդիկ որք դիմեն առ չնչին կեղծիս երջանկութեան, և հեռանան 'ի ճշմարիտ ճանապարհէն որ տանի 'ի տաճար առաքինութեան ։ 'ի նանիր ատելութիւն սրէ զթիւնալի նետս իւր 'ի խոցել զնա ։ Ունի նա զիւր պատուար և պաշտպանութիւն՝ որ է սիրտ բարի ․ Հեզահամբոյր անդորրութիւն հոգւոյ դարձուցանէ նա զդէմն իւր 'ի շիջանելի լապտերին կենաց, և մահն այլադունեալ յանդիման լինի նմա 'ի տիպ հրեշտակի, մխիթար ժպիտն փայլի յանզօր շրթունս նորա, ցրտութիւն հեղանի ընդ ամենայն երակս նորա և քաղցր նիրհումն ծածկէ զսեաւ մնդուսն 'ի վերայ աչաց նորա ։ Յիշատակութիւն բարեգործութեանց, նմանեալ կարմրափայլ վերջալուսի որ փայլի զկես գիշերաւ յեզերս երկնի յետ մտից արեւուն, անմոռանալի լիցի յոգիս ժամանակցաց և յետագայից նորա ։ Անդ 'ի հանդարտ նաւահանգստի ուրանօր նորափթիթ գարունն յաւիտեան թագաւորէ, ուր հոտ անոյշ բուրեն ծաղկունք ուրախութեան, պսակն անմահութեան զարդարեսցէ զմեծաշուք ճակատ նորա ։ Անդ 'ի դատաստանի անհասանելոյն զուարճասցի յաւիտենական երջանկութեամբ ։ Արդեօք այնպէս է մարդն որ կեայ միայն 'ի կատարել զցանկութիւնս իւր յաշխարհի, և անարգէ զիմաստալի՟ խրատս բարեգործութե՟ և բանականութե՟ . ո՞չ մոլորի նա 'ի թէատրոն աշխարհի նման աղբեր կորուսելոյ յովկիանոսի : Անմիտն որ անկանի 'ի տիղմն ախտից կորստական, ո՛չ անսայ պատուիրանաց սբ՟ հաւատոյ . կուրացեալ ցնորիւք բաղձի ընթանայ փութով զհետ նց՟, գիրկս արկանէ ստուերի, որ 'ի նմին վայրի իսկ 'ի չիք դառնայ, և տեսանէ զանձն իւր յեզերս անդնդոց պատրաստելոյ 'ի կլանել զնա : Յայն ժամ՝ մառախլապատ ամպք դժբաղդութե՟ և յուսահատութե՟ ծածկեն յաչաց նր՟ զբարեգործ լոյսն ուրախութե՟, և վերջին ճառագայթն մխիթարական յուսոյ ո՛չ փայլի յոգի նր՟ . 'ի նանիր խնդրէ նա բերկրիլ 'ի ժողովս մարդկան, ուր շռայլութի՟ն և պաճուճանք նորաձևութե՟ն հրապուրեն 'ի պատրել զթիւրամիտ և զպարապորդ մարդիկ . 'ի նանիր ծածկի նա 'ի թանձրութիս թաւ անտառի՝ զի տանջանք խղճմտանաց ամ՟ ուրեք գտանեն զմեղաւորս : Որպիսի զարհուրանօք հայի նա 'ի մերձաւորութի՟ մահուան : Յիշատակ նր՟ կորնչի յաշխարհի, ո՟պ փայլակն որ փայլի և անդէն անդ կորնչի յամպս մառախլապատ : Մտածելով ես յայսմ վայրի ո՛չ մարթացայ տեսանել, ո՞պ՟ վերջալոյսն երեկոյեան շիջաւ 'ի շափիւղայս երկնից . 'ի հեռուստ անտի լսելի լինէին երգք զուարճալի երկրագործաց և հովուաց որք դառնային 'ի դաշտէ 'ի խաղաղ խրճիթս իւրեանց . քաղցրահնչիւն ձայնք նոցա շարժէին զսիրտ իմ : Ապրեցէ՛ք սիրելի՝ բարեկամք իմ, ասէի ընդ՟ . գովեցէ՛ք զերջանկութի՟ն աւուրց ձերոց, և լերուք համապազ սիրելիք աստ բնութե՟, հուսկ ուրեմն ամ՟ ինչ լռեաց . և ես մեկնեցայ 'ի միայնակեաց յաղբերէն :

Գրիգոր Մահրամեանց 'ի Պարտաւէ :

ՔԵՐԹՈՒԱԾ ԿԶ.

Գրականութիւն.

Միջոցն հաղորդելոյ այլոց զմիտս մեր է գերազանց իմն պարգև ընծայեալ մարդոյ յԱստուծոյն նախախնամութենէ, զորմէ կախեալ կայ յառաջադիմութիւն մտաց և զարգացումն դատողութեան։ Մարդն առանց օգնականութեան այլոց ոչ մարթանայր լուսաւորել զունակութիւնս իւր, բայց ՚ի ձեռն բանից՝ փորձառութիւնք զանազան կարեաց ՚ի բազում ժամանակս յաճախեալք միաւորեն և կազմեն զընդհանուր հմտութիւն՝ որ յատուկ բանիւ ասի լուսաւորութիւն։ Խօսակցութիւն առիթ ընծայեաց մարդոյ գտանել զգիրս, որ կապակցէ ընդ իրերաց զազգս և զդարս, իբրև ՚ի մի ժողով, և ՚ի մի պարբերութիւն ժամանակի։ Օգտակար դատողութիւնք և գեղեցիկ զգացութիւնք ենթադրեն զգիտութիւն մարդկային սրտի, զկախումն պատճառաց և գործողութեանց իրաց, զպահպանութիւն մարդկութեան ՚ի զանազան ծագս աշխարհի և ՚ի դարս. յաղբերացս յայսցանէ առնու գեղեցկախօսութիւն զայն ոյժ՝ որով զմեզ կրթէ ՚ի զարմանս, շարժէ, ուսուցանէ և որսայ։ Այսպէս գրականութիւն պարունակէ յինքեան զծնունդ գեղեցկախօսութեան, բանաստեղծութեան, փիլիսոփայութեան և պատմութեան։ Ամենեքեան սիրայորդոր եռանդեամբ ձգին ՚ի գրականութիւն, զի և ոչ է ոք երբեք անկարօտ խորհրդակցութեան այլոց։ Մեք ոչ յագենամք, եթէ ոչ տեսանեմք զոք նման մեզ․ այլ ընդ հակառակն լինիմք բաւական, մինչ տեսանեմք զի միտք մեր և զգայութիւնք համախոհ գտանին այլոց։ Գրականութիւն՝ որպէս կանոն քաջահմուտ նաւորդաց, նա խազեկոյց արարեալ մեզ զգուշանալ ՚ի քառաժայռից ծովու կենաց, յանդիման նկարէ ողջամտաց զգերագոյն հանդիսարան, լինի նոցա հաւատարիմ բարեկամ. եւ որ միայն ձգի անյագուրդ բաղձանք մարդոյ։ Ոչ արհեստք ծագեցան զկնի բազում փորձառութեանց, նոյնօրինակ եւ 'ի գրականութեան առաջին եղեն Հոմերոս, Հերոդոտ, Սոփոկղէս եւն, իսկ յետ նոցա գրեցան ստեղծաբանութիւնք, ճարտասանութիւնք, եւ բովանդակ ընթացք գիտութեանց եւ գերապանծ արուեստից. որով եւ նախընթաց հռետորքդ բնաւորեալ 'ի գիտութիւնս խնամեցին զմարդիկ եւ զբնութիւն։ Արիստոտէլ զոյգ ընդ այլոց, որք կրթեցան 'ի զարմանս ընդ ծնունդ մտաց նորա, օրինադրեաց բորբոքել զկիրս, եթէ ցանկամք շարժել եւ հաճոյանալ։ Այս օրէնք ըստ ամենայն յատկութեանց տեսանին առ երեւելի հեղինակս. ամենքն 'ի կիր առնուն զճաշակ բաղցրախօսութեան, ուսանին զգալ եւ խորհիլ ըստ կանոնաց՝ որ ծագեցան յայսմ անմահական հանճարոյ։

Ունի լեզու իւրաքանչիւր ազգաց բաղկացեալ է 'ի սակաւ բառից, որք ունին զարտաբերութիւն ազդու եւ թաւաձայն։ Անկիրթ վայրենիք հետեւին արտաքին ձայնի ըստ առաջեդեալ նպատակի իւրեանց, արտաբերեալ զհնչումն, որ համեմատ իցէ յատկութեան նոցա։ “Նոյնպէս նկարիչն գծագրէ զսիզաւէտ իւր դաշտ կանաչերանգ գունով. վայրենին արտասանէ զբառս շեշտելով սաստիկ, երկարաձիգ, եւ 'ի կատար ածէ զայն մարմնական շարժողութեամբ. սմին հանդէտ խօսիմք եւ մեք յայն լեզու, որում չեմք դեռ գլխովին հմուտ։ Ոճն բնական լեզուի զարդարեալ է եւ քաջաղոյգ, կարգադրութիւնք բառից առաւել յարմարագոյն են երեւակայութեան, ազդուութեան խորհրդոց։ Ըստ չափոյ բարեկարգութեան լեզուի դատողութիւն մտանէ փոխանակ երեւակայուն, զարգացումն լեզուաց համեմատ է զարգացման մարդկային հասակի . 'ի մանկութ՟ բոցակիզէ երեւակայութի . 'ի հասունացեալ ամս մեղմի և 'ի կատարելութի ժամանէ դատողութին ։ Այնօրինակ լեզուն անցանելով յանկատարութէ 'ի լիուլի կատարելութի, անցանէ նմանապէս յազդուութէ՝ յիսկութի, 'ի հիացմանէ և 'ի ջերմութէ՝ յիսկական սահման . այս ամ՟ յատկութիք մի զմիոջէ ունին զկախումն , մին 'ի վ՟ այլոյ ունի զզօրութի . նմանաձայն հնչմունք դնին փոխանակ նշանաց , և հանդարտ արտաբերութ՟ անզարդ ոճն և բովանդակ կարգադրութի բառից փոփոխի . լեզուն օր ը՟ օրէ կրթութ՟ յստականայ և լինի կանոնաւոր , բայց ոչ այնչափ զօրեղ և հոգեաւորել . 'ի նախկին որպիսութեն նկատել յարմար է բանաստեղծութե և ճարտարախօսութե . 'ի հետեւեալսն պատշաճագոյն եւս է պատմութե և փիլիսոփայութե ։ Յետ լեզուի՝ որ է միջնորդ ձայնաւոր խօսակցութե , օգտակար վս՟ մարդկան գիւտ է գիրն . որ ծագեցաւ յետոյ քան զառաջինն , վս՟ զի հարկաւոր եւս էր մարդոյ ծանուցանել զիւր խորհուրդս մտաց անձամբ 'ի մերձաւոր ներկայութե , քան 'ի բացակայութե ։ Բայց զգացեալ մարդկան զհարկաւորութի նր՟ դիմեցին և 'ի գիւտ գրոյ , սկսան հնարել զնշանս , որ այնչափ դիւրիմանալի է աչաց , որչափ հնչմունք ծանօթ են լսելեաց ։ Զառաջինն հնարեցին զգիրս իրաց, ապա և զբառից, առ առաջինն վերաբերի գրողութին նկարչաց , գտեալ և առ Մեկսիկացիս . ոպ՟ էին և դրուագք Եգիպտացւոց , կմ՟ նշանք պատկերացուցիչք զաներեւոյթ ինչ էակս , որք ը՟ նոսին ունէին զհամեմատութի ինչ , ոպ՟ ակն քանդակեալ էր նշան ամենատես գիտութեան Աստուծոյ ։

Յովհաննէս Աստուածատրեանց 'ի Պալատոյ .

ՔԵՐԹՈՒԱԾ ԺԵ.

ԱՇԱԿԵՐՏՔ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆ ԶՏՕՆ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԻ
ԻՒՐԵԱՆՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱԼԱՆԹԵԱՆՑ.

Ելէ՛ք յասպարէզ՝ ո՛ մուզայք հայկեան՝ մերս Հեղիկոնի,
՚ի ձայն ցնծութեան՝ երգել նուագել՝ զերգ ՚ի տասնաղի,
ուահ հորդի մեզ արդ՝ վերճեմել ՚ի կոյս՝ երկնից եթերի,
սիրով հապճեպել՝ ՚ի հիւսել ներբող՝ մեր մեծ Ուսուցչի:

Րաբուն յարարթուն՝ նշմարեմք ՚ի գլուխ՝ երջանկաց խմբի,
որ պանծայ փառօք՝ յիւր գործս ձեւաց՝ թագ ՚ի գլուխ հրձուի,
նմա զերգ հնչեն՝ յարմարեալ ՚ի ձայն քաղցրանոյշ տաւղի,
զնա դաբնիդեայց՝ ձայն բազմաց և Տեառն՝ արժան դաւանի:

Աստ ո՛չ Աննիբաղ՝ բարձր ՚ի գլուխ գտեալ՝ զարարովք պարծի,
ո՛չ մեծն Աղեքսանդր՝ և ո՛չ Աղկիդես՝ քաջազանց արհի,
աստ ահա՛ փայլի՝ անշէջ իմաստից՝ զամբար բոցավառ,

որ փառաւորի՝ գերընտիր երգովք՝ 'ի գիտնոց կաճառ ։
Սա ընտիր Որդի՝ պարծանաց Մօր մեր՝ լուսակերտ դաշի ,
վերբերիչ վերնոց՝ ըստ Անուան կոչման՝ իններեակ խմբի ,
զարդ իւր Արամեան իմաստից ցոլմամբ՝ փայլեալ 'ի լոյս նոր ,
փոխէ յոսկեղէն՝ հին պայծառ աւուրց՝ դար զառակաւոր ։
Զարթի՛ր արդ զարթի՛ր՝ հայեա՛ց ակնապիշ՝ ո՛վ տուն Արամեան
տե՛ս զոր խնդրէիր՝ լուսով ճրագի՝ 'ի դարուց սահման ,
նախանձեա՛ց աւուրց՝ մեր քո զաւակաց՝ ընդ բարիս համայն ,
ընդ սեռականափայլ՝ աղբերս Եդեմայ՝ իմաստից հոսման ։
Քո մինչ շիջանէր՝ լուսափիւռ ճրագ՝ մեծ իշխանութեան ,
և առկայծէր բոց՝ վառեալ իմաստից՝ գրականութեան ,
հայթայթէր խնդրել՝ զաւուրըն պարէն՝ անյնխուր Արամեան ,
իսկ զուսմանց արդիւնս՝ ելիք անդոսնեաց՝ բայց ո՛չ յաւիտեան ։
Հնչէին յայնժամ՝ յեզերըս երկրիդ՝ համօրէն ծագաց ,
հողմունք փքարերք՝ զքև շուրջ պատեալ ահեղ թշնամեաց ,

կորուսեր զքո՝ աճումն արգասեաց՝ լեզուի գեղազան ,
իբրու ՚ի նախկին՝ ՚ի Բաբելոնեան՝ դար խառնակութեան ։

Այլ դերերջանիկ՝ մեր աւուրք դարուս՝ լցան ուռճացան ,
յուռթի բարութեամբք՝ ուսմանց իմաստից՝ յաւէտ ծովացան ,
ընդ խաղաղաւէտ՝ հովանեաւ Ռուսաց՝ հզօր Տէրութեան ,
տան մեզ վայելել՝ անդուլ ՚ի բճիճս՝ ուսմանց քաղցրութեան ։

Մանկունք շնորհապարոյք՝ եկայք ՚ի վայելս՝ շընորհաց լիութեան ,
զի՞ ձեզ ՚ի խնդիր՝ լինել Պառնասայ՝ ճգամբ յոգնազան ,
աւասիկ Պառնաս՝ նոյն և Մեկենաս՝ մուզայից պաշտպան ,
որ միշտ մեզ և ձեզ՝ յանսպառ օճան՝ հանդերձէ սեղան ։

Օ՜ հին թագուցեալ՝ ՚ի մերում սրտի՝ հուր իմաստութեան ,
ցոլացոյց արծարծ՝ անշէջ անաղօտ՝ վառեալ անվախճան ,
շողշողեաց փայլմամբ՝ ՚ի ցոյց բնաւից՝ սերնդոց Հայկեան ,
զայն՝ որում բաղձաց՝ միտք բազմակարօտ՝ ցանկայր յաւիտեան ։

Քերականութիւնն՝ է մեր առարկայ՝ խօսից և մտաց ,

ում հանգունատիպ՝ ո̊յր ո՛չ նկատէ՝ աչք յողջամտաց ,
Թէ բնաւ երբէք՝ 'ի դարուց սահման՝ ցարդ 'ի գործս ձեռաց
ո՛չ նշմարեցաւ՝ մերոց զանազան՝ հին հեղինակաց ։

Սովին ո՛չ յիւրոց՝ Հայր մեր վերջանայ՝ սրբագործութեանց ,
տայ ճշդիւք վկայ՝ խոստաբանութեամբ՝ զիւր բան գերապանծ,
հանել յերեւան՝ զայլ այլ հրահանգս՝ ճոխ մակացութեանց ,
վառել զաշտանակ՝ անաղօտ 'ի տան՝ Հայկազեան ազանց ։

Թէ ո՛չ յարիցեն՝ գէ՛թ զգասցեն դասք՝ մեր Թագաւորաց ,
Հայկ , Արամ , Աբգար՝ Տրդատ ընդ արքայս՝ տան Արշակունեաց ,
զազգ իւրեանց փայլեալ ցոլմամբ իմաստից՝ անշէջ լապտերաց ,
ընդ Թեւովք երկրորդ՝ նոր Լամբրոնացւոյ՝ բարեաց միշտ նախանձ ։

Կանգնեսցի կացցէ՝ Կոթող պարծանաց՝ Սորին բարձր անուան ,
սփռեսցի ձեռաց՝ գործ արժանագոյն յոլորտս համայն ,
զի ծագ Հիւսիսոյ՝ 'ի կոյս Հարաւոյ՝ յեզերս փրքալիր ,
գտաւ նախանձորդ՝ ջանից Սահակայ՝ Մեսրոպեայ ընտիր ։

Պանծայ զմայլի՝ յայսմիկ իւր դարու՝ աշխարհ Հայաստան,
ո՛չ ևս նախանձի՝ է՛ հին այն Աթէն՝ կա՛մ է՛ Յունաստան ,
Մխիթա՛ր փոխի՝ 'ի դաս Հայկազնեայց՝ պերճ դամբանկաց,
Արամեան մուշայք՝ ակումբ յօրինեն՝ 'ի կայս Ողիմպեանց ։

Տե՛ս զի՞նչ բերեն Ձեզ՝ Ձեր որդիք նուէր Հայր գերաստիճան,
զիւրեանց ջերմեռանդն՝ բարբառ գոհութեան՝ 'ի Տօնիդ սերկեան ,
ասեն Ձեր անուն՝ մակադրի անջինջ՝ մեր մտաց յարձան ,
կայ լիցի յաւէժ՝ ներկայից , յետնոց՝ 'ի սերունդ Հայկեան ։

Ընդ երգոց բազմաց՝ քումդ Սրբութեան՝ թո՛ղ հաճոյ գտցի ,
բուրումն այս խնկոց՝ բուրվառաւ լեզուացս ելցէ ամբարձցի ,
թէև լինիցի՝ մեր նուազ հանդոյն՝ այն ներբողինի ,
զոր հիւսել ցանկայր՝ անզօր հագներգուն՝ մեծ զօրավարի ։

Օի դասք մուշայից՝ յորոց գլուխ Ձեր՝ շնորհք բարդեցան ,
ո՛չ դարնեայ պսակ՝ յարմարել հիւսել՝ վաղվաղեալ փութան .
այլ փողեն զՏօնդ՝ րոտմամբ գովեստից՝ յոլորտս ամենայն ,
Քո զանուան հռչակ՝ զանչափ երախտիս՝ հանեն 'ի մտեան ։

Յովսէփ Զէրթէճեան յԱստրախանայ .

Այն յեղանակէ հանգուցեալ Տէր Սէթոն Քահանայէ եւ [illegible] Ուսուցչէ մանկանց Ճեմարանէս, ընծայէ աստանօր գեղեցիկ ոտանաւորս նորա.

ՔԵՐԹՈՒԱԾ. ԿԲ.

՚Ի ձայն հարցափորձութեան ուսման մանկանց:

Զուարճացի՛ր այսօր՝ մե՛ծդ Հայաստան,
ընդ հանդէս փառաց՝ որդւոյդ անդրանկան.
Պճնեա՛ց ըստ նախնւոյն՝ ՚ի շուք գեղապանծ,
ամբա՛րձ զգագաթդ՝ դաբնեօք պսակազդեաց:
Բարձրացո՛ զբարբառդ՝ փողով մեծաձայն,
հնչեա՛ զաւետիս՝ յունկս ամենայն:
Որ երբեմն էիր՝ քաջաց զինարան,
Թագադիր վեհից՝ շքեղ բնակարան:
Այլ և սոփեստից՝ ներկուռ վարժարան,
անյաղթ քերթողաց՝ մեծ հանդիսարան:
Զերծեա՛ զաւագաստ՝ քոյդ Ճեմարանաց,
փայլեցո՛ զերաստ՝ քաջ Ճամարտակաց:
Զարթի՛ր դու հոգւով՝ մե՛ծ Քերթողահայր,
ա՛ռ քեզ ուղեկից՝ Թարգմանչացն զպար:
Չու առնել նոքօք՝ մի՛ ՚ի Յունաստան,
այլ ՚ի նոր Աթէնք՝ ՚ի յայս Ռուսաստան:
Տեսէ՛ք աստ ծաղկեալ՝ զաստղն հիւսիսոյ,
գեղեցիկ գուշակ՝ մեզ արշալուսոյ:

Եկա՛յք 'ի դիտել՝ զայս մեծահանդէս ,
 զամբար իմաստից՝ ճառագայթեալ մեզ ։
Ահա ծաղկազարդ՝ իմաստից բախճան ,
 ազգ և ազգ լեզուաց՝ ճարտար խօսարան ։
Երջանիկ կարդամ՝ ես նոցին վաշտկան ,
 որոց փափագմամբ՝ յայս կոչունք փութան ։
Հայաստան երկրի՝ մտավարժ մանկունք ,
 արի՛ք ճեմ առնուլ՝ 'ի դրախտ քաջատունկ ։
Զկաթն և զմեղր՝ և զիւղըս կենաց ,
 առատ վայելել՝ յերկրիս աւետեաց ։

Հանգուցեալ Տէր Սեջան Քահանայ ․

ՔԵՐԹՈՒԱԾ ․ ԿԹ ․

Շնորհաւորութիւն նոր տարւոյ առ Մեհաճեայ Տեառն Եղիազարեանց ․

Շնորհաւո՛ր լիցի՝ սկիզբըն Տարւոյս ․
 շնորհիւ սուրբ Հոգւոյն՝ տուողին մեզ լոյս ։
Ըստ բազում մասանց՝ Առաքինութեան ․
 փթթեսցի՛ Ձեր գործ՝ Ազգասիրութեան ։
Բարգաւաճ՝ լիջիք՝ 'ի բազում Ամըս ․
 պայծառ Ձեր Որդւովք՝ յԱզգային պարծանս ։
Տուն ձեր բարեպաշտ՝ պտուղ օրհնութեան ․
 կացցէ՛ յուսով Տեառն՝ 'ի խաղաղութեան ։
Տեսէ՛ք զանճառ սէր՝ վերնախնամ Տեսչին ․
 ո՛վ Ազգ Հայկազեան՝ Տունկ Լուսաւորչին ։

Յարոյց Տէր զԻշխան՝ հզօր Ախոյեան․
տանըս Արամայ՝ պարծանք անվախճան։
Յովակիմ ձայնեալ՝ յանուն պանծալի․
հաստատ 'ի Հաւատս՝ հաստիչ իւր Ազգի։
'Ի նըսեմ դարուս՝ մեր ժամանակի․
ակն լուսատիպ՝ քան զարփի փայլի։
Ազգասէր ոգւով՝ 'ի նախանձ վառի․
գործովք և արդեամբք՝ Վեհանձն երևի։
Ընծայէր երկամբք՝ մերըս Վեհազնի․
կանգնի Ճեմարան՝ բազմաձայն լեզուի։
Ազգիս սովելոյ՝ յիմաստից բանի,
Սոփեստից խրախճան՝ հրաշալից կազմի։
Ո՛չ Պղատոնին՝ ո՛չ Ճեմականին․
ո՛չ զան Սոկրատայն՝ համեմատ սմին։
Կրթութիւն նոցա՝ մոլար կրօնին․
այլ 'ի սմա փայլի՝ լոյս Աստուածային։
Պայծառանան ա՛րդ՝ սուրբ Եկեղեցիք․
Աստուածաբարբառ՝ լուսով գեղեցիկ։
Զարդանան մանկունք՝ սրբոյն Սիովնի․
'ի լոյս անաղօտ տեսական շնորհի։
Տածին բանաւոր՝ Հօտք Լուսաւորչին․
յարօտ մաքրափայլ՝ հովիտ ծաղկածին։
Արդ զուարճացի՛ր՝ զուարթուն անուն․
սուրբ Հա՛յրդ Գրիգոր՝ Պետ հոգւոց արթուն։
Զարթի՛ր 'ի քնոյ՝ Գիտա՛կդ տեսլեան։
հօտապետ ընտիր՝ մեծ Պարթևազեան։
Մատի՛ր արդ մատի՛ր՝ Շնորհալի՛դ Ներսէս․
------ ' և 'ոջանիկ՝ Հա՛յր մեր Հոգետես։

Բերկրեսջի՛ք հոգւով՝ ընդ այս Երախան ·
 լուսաւոր վարժից՝ պայծառ Տեսարան ։

Տօնակի՛ց լերուք՝ մեզ ուրախաձայն ·
 վաղեմի փափագք՝ ձեր զարդիս լցան ։

Օժանդակ լիջի՛ք՝ ձայնիւ մաղթանաց ·
 այս մեծի գործոյս՝ նըպաստաւորաց ։

Զո՞ր ներբող գրեցից՝ Մեհապանծ Իշխան ·
 Ձեզ ընդ Մեհ Որդւոց և բարեպաշտ Տան ։

Շի՛ւղ էք օրհնութեան՝ Եղիազարեան ·
 մխիթար վշտաց՝ Ազգիս Յաբեթեան ։

Զի՞նչ Ձեզ հատուսցեն՝ Ազգըք Արամեան ·
 ՚ի տրիտուր Ձեր՝ բարերարութեան ,

Բայց թէ աղօթել՝ առ Աստուածըն բան ·
 պահել ըզՏուն Ձեր՝ անքոյթ յաւիտեան ։

Հանգուցեալ Մեծին Յոհաննայ Մեծնեանց ·



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ·

Ներբող արձանական, ասացեալ 'ի նաւակատիս Արձանին կանգնելոյ յանուն Մեծի Իշխանապետին Յովհաննու Եղիազարեան 'ի Ճեմարանին Հայոց 'ի Մոսկով· յօրինեալ 'ի Միքայէլ Ծայրագոյն Վարդապետէ Սալլանթեանց.

Օ՜ զարթի՛ր զարթի՛ր Տո՛ւնդ Աբրահամեան, զարթի՛ր և տե՛ս զեկեալ հասեալ զփրկու՟ն քո · զգեցի՛ր զզօրու՟ն և զփառս քո, թօթափեա՛ զփոշիդ՝ բնակի՛չ Հայաստանի · յո՛տն կաց և նի՛ստ · սրբեա՛ զարտասուս յաչացդ և տե՛ս, ի՞բր գեղեցիկ են 'ի վ՟ր լերանց քոց՝ ոտք աւետարանչի խաղաղու՟ե և բարօրու՟ե, որ աւետարանեաց քեզ զմեծամեծս և զհրաշալիս, որոց մասնաւորեալ և ես՝ ծայրացեալ ծովացեալ 'ի ցնծու՟ե ստիպիմ բանալ զբերան և զլեզու, և հաղորդել հարազատաց զհոսանս հրճուանացս, զի մարմաջե զիս ոգի որովայնի, և եռայ սիրտ իմ՝ իբրու տիկ քաղցուոյ, մա՟յ առել վստահու՟ն 'ի հանդիսականաց գոչեցից գովեցից զգթու՟ն ամենակալին Ա՟յ · որ առաքեաց առ մեզ աւետարանիչ նոր՝ զմեծամեծարար իշխանն Յովհաննէս Եղիազարեան, զանզոյգ բարերարն մեր և բովանդակ ազգիս · զհիմնադիր և զհանդիսադիր պայծառափայլ Ճեմարանիս · զի գեղեցկաստեղն ոստոց շառաւիղ լուսոյ ընձիւղել . զի Պիւցաղն տոհմէ վեհից Սեպուհ երևեալ . զմ՟ծագութ ծնողն ոսկոց և այրեաց մերկացել , և զսերմնարանն անպատում բարեաց ամբարել , որոյ Արձան կանգնի այսօր 'ի մերում միջի՝ 'ի յիշատակ ազգաց յայսմ յաւիտենի , և ինքն անցեալ բազմեալ 'ի գլուխ պարու այսր ակմբի՝ ոչ մեռել , այլ կենդանի . ոչ մոռացեալ , այլ յաւերժատօնելի . կենդանի 'ի մահուան , անմահ 'ի բարունէ մեծաձայն բարբառի ընդ մեզ կենդանաբար երախտեօք իւրովք , կենդանի գոլով յինքեան , և կենդանութ՟ե պատճառք մեզ մահացելոցս :

Բայց դու մի՝ զոր լուարդ կենդանութ՟ի՝ միակող՟ի վարկանիցես , այլ բազմակող՟ի . նա՝ թէ կամիս՝ հնգակող՟ի , զոր սակաւուք լուսաբանել ոչինչ տարադէպ դատեսցի թերևս : Քանզի հինգ ազգս կենաց կամ կենդանութ՟ե որոշեմք յանհատս մարդկան , որք են . կեանք մարմնական , քաղաքական , մտաւորական , բարոյական և երանական . զոր դիւրին է մեկնել ողջամիտ լսելեաց : Քանզի մանուկ նորոգ ծնեալ ունի զֆիզիգական կեանս , այն՝ որ հասարակ է և անբան կենդանեաց , որում դիմադրի մահն բնական . այն է՝ բաժանումն հոգւոյ 'ի մարմնոյ : Եթէ մանուկդ յաճել հասակին ուսցի զդպրոցական գիտութ՟իս , ստանայ զիմացական կեանս . որում հակադրի մահն իմացական , այն է՝ տգիտութ՟ի : Իսկ յորժամ կատարել մտօք պիտանի լինի 'ի քաղաքական պաշտամունս և յընկերութ՟ի մարդկութ՟ե , ասի ունել զքաղաքական կեանս , և սմա հակակայի մահն քաղաքական՝ որ է դեղջկութ՟ի կամ սոպութ՟ի : Եթէ ուղղէ նա զվարս իւր ըստ բնական օրինաց , զգենու զբարոյական կեանս . որում դիմադրի մասն բարոյական , այն է՝ մեղանչել ընդդէմ բանականութեան ։ Յուսկ ապա թէ այրդ վախճանել՝ վիճակեսցի արքայութեան երկնից , կեալ երանական կենօք ․ որում հակադրի մասն յաւիտենական ․ որ է դատապարտութիւն 'ի դժոխս ։

Բայց դու տե՛ս ինձ յայսմ վայրի , զի՞ կեանքն մարմնական՝ զոր ընդունիմք 'ի ծնողաց , թէ չիցէ լծորդեալ ընդ այլոց յիշատակելի կենացդ , յաւէտ մահ է անուանելի քան թէ կեանք․ զի կեալ ըստ մարմնոյ՝ բայց առանց համեստ պատուոյ, առանց գիտութեանց և առաքինութեանց , զի՞նչ այլ իցէ , բայց եթէ կեանք չորքոտանեաց , յոր սակս ոմանք 'ի նախնեաց նախամեծար ընտրեցին զմահ փիզիգական , քան զքաղաքական կեանս զբարոյական ։ Յովնան մարգարէ տեսեալ թէ քաղաքն Նինուէ ոչ կործանեցաւ յետ երից աւուրց , որպէս քարոզեացն ․ խնդրէր զմահ բնական ․ զի համարէր զինքն կարծեցեալ սուտ մարգարէութեամբ արդէն մեռեալ քաղաքապէս ։ Լուկրետիա բամբիշն հռովմայեցի , զոր լըլկեաց Սեքստոս շամբուշն հռովմայեցի, կարծելով զանձըն մեռեալ 'ի գոլն բարոյական , եբարձ յանձնէ և ըզգոլն փիզիգական ։ Այս էր դատաստան և մեծին Աղեքսանդրի, որ զանձն առաւել պարտաւոր խոստովանէր ուսուցչի իւրում , յորմէ ընկալեալ էր զկեանքն իմացական և քաղաքական, քան ծնողին իւրում՝ յորմէ միայն զգոլ փիզիգական ։ Նաև իրաւամբք ․ զի որպէս եական կերպ բնութեան մարդոյս՝ է՛ հոգին բանական, նոյնպէս և եական կերպ իմացական գոլոյ են գիտութիւնք , վասն զի որպէս յանջատիլ բանական հոգւոյ մեռանել է կենդանւոյն ․ նոյնպէս 'ի բառնիլ գիտութեանց՝ մեռանել է մարդն իմացական կարգի ․ ուստի այր տգէտ և զուրկ 'ի գիտուեց՝ մեռնել է կենդանւոյն, և միայն 'ի պատկերի շրջի. զոր և բնական լուսով նշմարեց Արիստիպպոս փիլիսոփայ։ Քանզի յաղաչել ուրուք զնա վարժել զորդի իւր 'ի գիտութիս, խնդրեաց 'ի վարձ ոսկիս քըսան. և լսել առն, դուլին գնով մարթիմ գնել յաւանակ մի, առ Թափեաց իմաստունն 'ի վե՛ր, ե՛րթ գնեա՛, զի 'ի տան քում լիցին երկու յաւանակք։ Ընդ որ չէ՛ մարթ զարմանալ, զի գոլն իմացական այնպէս բաղդատի առ գոլն Ֆիզիգական, ո՛պ գոլն երանական առ գոլն բանական. իմն ըստ երկրաչափական և ո՛չ ըստ Թուաբանական համեմատութե։ Այլ մեր Թողել զայլ ևս բիւրապատիկ յատկութիս ասացել կենացդ, մատիցուք յայլ ինչ կարևոր։

Որոյ առողջ իցէ խելապատակ, զօրէ ինքնին խորհրդածել. Թէ առաջին պատճառ այդ ամ̃ կենաց՝ է նոյն ինքն Ա̃ծ. իսկ երկրորդական պատճառք են արարածք. զի պատճառ մարմնաւոր կենաց են ծնօղք մեր՝ հայր և մայր. իսկ պատճառ այլոց ասացել կենաց՝ ըստ միաձայն վճռոյ ամ̃ իմաստնոց՝ է միայն ուսումնարանն, ուրանօր մանկունք ո՛չ միայն ուսանին ըզկանոնս և զեղանակ յիշատակել կենացդ, այլ և ամս բազումս գործադրութ̃ վարժին յայնս։ Եբր զի յուսումնարանի իբրու 'ի սերմնարանի արկանին և բուսանին սերմունք ամ̃ գիտուեց և առաքինուեց, յորոց ծնանին ազգք ազգք կենաց, և որովք ազատիմք 'ի դիմադրել մահուանէ. այնու՝ զի Թէ ոք զշինուի ձեմարանի վերադասել կամիցի քան զշինուի եկեղեցեց Ա̃յ, ոչի՛նչ օտար 'ի ճշմարտուէ խորհիցի, որ և իմում նուաստախոհ մտաց է համբուրելի. զի Թէպէտ մեծ է յոյժ ըստ առարկային՝ կանգնել զտաճար Ա̃յ [illegible] դանւոյ, բայց այլով տեսութ՟ մեծ ես է ըստ վախճանին յօրինել զճեմարան իմաստից. քանզի ճեմարանն ուսուցանէ մեզ զուղղափառ հաւատս և զառաքինակրօն վարս. ճեմարանին է գործ ճարտարել զքանդակաքերութ գեղաբանութ՟ի. ճեմարանիս կարօտին ճարտարանկար քարոզիչք և ստոիճանաճեմ՝ վարդապետք եկեղեցւոյ. 'ի ճեմարանէս ճառագայթեն երկնաճանապարհորդ կարապետք և հովիւք ժողովրդեանն Ա՟յ. 'ի ճեմարանիս ճախարակին լեզուք և գրիչք ճակատայարդար ճմլողաց զգլուխ հակառակորդաց բարե՟ց. և ընդէ՞ր է ինձ յերկարել 'ի թուելս բանից, միով բովանդ՟կին բաղկեսցի, ճեմարանաւ ուղղին և ուղղեն զանձինս և զայլս, թագաւորք և իշխանք, դատաւորք և օրէնսդիրք, զինաւորք և արհեստաւորք, և առ հասարակ ամ՟ վիճակ մարդկան զճեմարանն ճանաչէ պատճառք երջանկութե՟, որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ, որ յաստի և որ յանտի կենանս։

Այլ արդ՝ եթէ այսպիսի անզուգական բարեաց է պատճառ ճեմարանն, կրկնեմ արդ յուշի քում զաւանդն փիլիսոփայից, զայն՝ թէ որ ինչ է պատճառ պատճառին, է պատճառ և պատճառելոյն. կմ՟ որ 'ի նոյն գլխի, պատճառն առաջին բոլորէ յինքեան զպատճառն եր՟կ և զպատճառեալն յայնմանէ. կրկնեմ ասեմ յուշիդ, և մատո՞ամ զձեռնարկութ՟իդ 'ի գործոյ 'ի պատճառն. և կշռեմ 'ի լծակս առաջնորդականիդ՝ եթէ հասու ինչ իցես. թէ քանի՞ դերմարդկային առաքինութ՟ զինազարդե՟լ կենդանի է ցարդ մեծամեծարար իշխանն Յովհաննէս. և քանի՞պատիկ կենդանութե՟ գործի եղև նա և ազգի մերում. զի ոչ միայն կենդանի է հոգւով յերկինս, այլ և կենդանի է յարձանի իւրում, կենդանի 'ի Ճեմարանի իւրում, կենդանի յարիւնակիցս իւր, կենդանի 'ի բովանդակ ազգիս. վ՟յ և կենդանի անջինջ մնասցէ 'ի սրտի մերում, որովհետև ըստ կատարելամիտ հասակին գերագահունէ, և ըստ զուարթածաղիկ խոհականուէ յաւէրժայիշատակ լուսածնուէն, ոչ միայն կամեցաւ զպատճառըն կենդանուէ մերում զՃեմարանն, այլ և կատարե՛ց. ոչ միայն սկսաւ, այլ և գլխաւորեալ յանգաւորեաց, թէ ոչ ինքնին անձամբ, սակս յափշտակելոյն 'ի մէնջ նախանձու երկնաւորացն, սակայն 'ի ձեռն հարազատ եղբօրն Յովակիմ մեծ Իշխանապետիս, և որդւոց ս՟ր Յովհաննէս, Խաչատուր և Եղիազար ամենագոհար իշխանացս, որ ոչինչ նուազ՟ք զերանելոյն զայն՝ վերբերիչ գտանին գերաշխարհիկ գովեստից, ընդ որ մի՛ ինչ յերկուսասցիս, զի ո՞չ ապաքէն և Դաւիթ փափաքէր իմ՟ն՝ շինել տաճար ա՟ծային բնակուէ. այլ արգելեալ յա՟ծակոյս տեսչուէ, որդի նորա Սողոմոն կատարեաց զշինուածն. բայց և ոչ մին վրիպեաց ինչ 'ի վարձուցն. զի նա վասն փափագանացն, և սա վ՟ն արդիւնակատար գործոյն զուգապար ընկալան զորիտուրն. նմանօրինակ նմին իմն և 'ի բանիս, զի նա իշխանն Յովհաննէս հիմն եարկ, և ն՟ք նուիրակատար յանկ ածին. նա երկնեաց մայրաբար, և սոքա սնուցանեն դայեկաբար, և թէ նա, և թէ սոքա միաշունչ միախորհուրդ նահատակեալք իբրու լծաբարձ ամոլաձիգք և ա՟ծազոյգ ակօսատարք զանարօրադիր անդաստան մտաղատունկ մանկանցս հերկագործեն. և իբրու ճրագարանք եօթնանշոյլք զաննշոյլ միտս արփիաւորեն. իբրու բովք հալոցաց քուրայից զխակուռն խորհրդոցս ձեռնաձուլեն, և զմոլորաշաւիղ վրիպեալքս 'ի ծովածուփ կենցաղս՝ զօրէն տակիացող արուեստի շնորհաշառաւիղ ղեկավարեն. Հոգեգումար Իշխանքս Յովհաննիսեանք և Յովակիմեանք, 'ի կենսաւէտ տնկոյն ընձիւղեալ բարունակք հրաշանշանք · բիւրուք բերկրալիր բարեօք բարեբաստու՟ք բարեբանեալք · զաւակք արդարու՟ե , աշակերտք երանու՟ե , և անդրանկածնունդ որդիք երկանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ , կաճառակիցք կրօնից ազգապետ նախնեաց մերոց· հովուապետք ջոլորեալ գառնամոլ գումարեցդ · վ՜յ եկայք սիրամնունդ աշակերտակիցք , գոհու՟թ բերանալիր ամանորաբեր հատուսցուք սխրագործ Իշխանացս այսոցիկ · վասն զի սոքա ստեղծողք այսր Ճեմարանի · սոքա պարագլուխք պաշտօնապայծառ հանդիսիս · սոքա աթոռակալք և հանդիսայարդար նահատակք այսր հրապարակի · սոքա արդարահրահանգ դաստիարակք մերոցս կուրաստեղծեալ մտաց · զսոսա օրհնեսցուք· սոցա շնորհապարտ լիցուք · սոցա կենաց բարօրութեան և բարեկենդանութեան հեղցուք զանձինս յանդիման փառաց մեծվայելչութեան Տեառն ։

* * *

’Ի վերայ այնր Արձանի հանգնելոյ ’ի պարտէզ Ճեմարանիս, յերեսին կողմանս քանդակեալ կան պատկերք Մեհազնեայց, և ’ի ներքոյ պատկերացն յետագայ բանք, զորս փոխագրեմք աստանօր վասն յիշատակի ։

’Ի ներքոյ Պատկերի

Ներգործական ներքին Խորհրդականի և Ասպետի Տեառն Յովհաննու Լազարեանց Հիմնադրի Ճեմարանիս ։

Դասեսցի ’ի կաճառ շողշողուն աստեղաց
անաղօտ արուսեակն լոյս ’ի յազգ Հայկազանց ·
գերապանծն Յովհաննէս փառք իւրոց Հայրենեաց
դաբնազարդ ճեմեսցէ յաղթական կամարաց ,
Բարելի շառաւիղ յարմատոց Դիւցազանց
որդեգիր մօր բարւոյ Ռուսսիոյ սահմանաց ,
յանձանձիչ տղայոց հայրագութ անմոռաց
Ճշմարիտ հատուցող իւր զպարտ հայրենեաց ։

’Ի ներքոյ Պատկերի

Մեհապանծ առն Ազնուականի Տեառն Յովակիմայ Լազարեանց , արդեամբք [illegible] [illegible] հիմնադրի , Բարերարի և Հոգաբարձուի Ճեմարանիս ·

Ազգաշէն գործունեայ դու Յովհան Մեհապանծ
մեք թոթովքս ’ի բարբառ պակասիմք ’ի մնաց ։

Զարթիցէ Հոմերոս պարագլուխն հագներգուաց,
ուսուսցէ ներբողել վայելուչ ըստ արդեանց ։

Բարունակ դու չքնաղ 'ի տոհմէ քաջազանց
Հայկազեան գըրոհէս ես պսակ պարծանաց ։

Անմուաց կատարիչ զպատուէր կըտակաց ,
բարձրացար 'ի պատիւ , և 'ի փառս հայրենեաց ։

* * *

'Ի ներքոյ Պատկերոյ

Աննայէ Բարեպաշտ տիկնոջ կողակցի Յովակիմայ Լազարեանց . և որդւոյ նորա Յարութեան Յովակիմեան Լազարեանց Թիկնապահի և Ասպետի, որ եւ զենեալ էր 'ի պատերազմին մերձ 'ի Լէյպցիգ . 'ի 4 հոկտ . 1813 ամ ։ Սոքա երկոքեան նուիրեցին զերևելի գումար յօգուտ Ճեմարանին .

Ընդէ՞ր յայս անշուք տախտակ քարեղէն
զանուն քո բարի սևակաւ գրեն ,
զոր քո որք որդիքս տառիւք ոսկեղէն
Մա՛յր մեր՝ գրեցաք 'ի սիրտ մարմնեղէն ,

* * *

Որդի հարազատ հօր իւր համանման ,
փառաց հայրենեաց արժան անսասան ,
'ի դաշտ Արեսի արի զօրական ,
ժառանգորդ անմահ անմոռաց անուան ։

ՀԱՐՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ

'Ի վերայ Գլխոյ Եկեղեցւոյն Քրիստոսի .

Բացախօսեալ

'Ի յառաջադաս աշակերտաց Ճեմարանի , որք յետ աւարտելոյ զուսումն Սրբազան Աստուածաբանութեան, բաժանեալք յերկուս խումբս . 'ի Հարցանող և 'ի Պատասխանող , վիճէին զիրաց հաւատոյ առ վարժութեան և յապագայ պէտս ։

Տպեալ յետ ուղղագրութեան Պասատուէն ։

Հարցանող ։

§ . 1 . Յանկալի է մեզ՝ սիրեցեալ աշակերտակիցք , լսել 'ի ձէնջ թէ զի՞նչ կարծիք ունիցիք զգլխոյ եկեղեցւոյն ք՟ի , զորմէ վէճ ծանր է 'ի մէջ մեր և պապադաւան քրիստոնէից , որք միաձայն աղաղակեն թէ հայրպ՟տն հռովմայ՝ է ը՟հանր՟կն գլուխ ա՟մ եկեղեցեաց , միապե՟տկն հովիւ է ա՟մ քրիստոնէից ոչ միայն աշխարհականաց , այլ և եպ՟ց և հայրպ՟տց . ունի բացարձակ իշխանութի՟ կառավարելոյ և դատելոյ զա՟մ հւ՟տցեալս . և թէ այլ ա՟մ եպ՟ունք պր՟տւոր են նմա միայնոյ հնազանդիլ , 'ի նմանէ առնուլ զիրաւաբանութի՟ հովուելոյ զժողովուրդն , և առ նա դիմել յա՟մ ծանր դիպուածս . և որովհետև Լուսաւորչական եկեղեցին և ազգն մեր այժմ ոչ ճանաչէ զնա այդպիսի , վ՟նկ հերձուածող և հերետիկոս կոչեն զմեզ , ևն ։

Պատասխանող .

§ . 2 . Զլուծումն այդոցիկ դիտէ և ձերդ եղբայրութի՟ , զի միօրինակ է՟ մեզ ուսեալք զա՟ծբնութի՟ , բայց զի հրաման է գերպ՟տիւ ուսուցչիս վիճել մեզ սիրով զայս ցանէ , տացուք պատ՟սխնի ը՟ մերում կարի · այլ արդ ասացէք, փափագաւանք լսօսի՞ն միայն զայդպիսիս, թէ ունի՞ն եւս փաստս և ապացուցութի՟ կարծեաց իւրե՟նց · և թէ ունիցին՝ ա՛ղէ յառաջ մատուցէք , զի քննեսցուք զճշմարտութիւն նոցին ։

Հարցանողք ·

§ · 3· Փաստքն՝ որովք նոքա հաստատեն զդրութ՟ի իւրե՟նց և զորս ընթերցե՟լ եմք 'ի գիրս ա՟ծբնից նոցա, կարի գեղեցիկ և ճշմարտանման երևին մեզ , զորս թէ կամիք տեսանել, առաջի արասցուք ձեզ ը՟ օրինակիս ը՟ այսմիկ ։

§ · 4· Արդ ասեմք, նախ՝ թէ սբ՟ առաքե՟լն պետրոս կարգեցաւ Գլուխ ա՟մ առաքելոց, եւ 'ի քս՟է ըզ յառաջնութի՟ կմ՟ զգերադահութի՟ (primatus) 'ի վր՟ ա՟մ եկեղեցե՟ց, եւս զիրաւաբանութի՟ կմ՟ զիրաւունս և զիշխանութի՟ (jurisdictio) հովուելոյ զա՟մ և զիւրաքանչիւր քրիստոնեայս թէ զաշխարհականս և թէ զեկեղե՟ցկնս որով և կարգեցաւ միապետական իշխօղ և ինքնագլուխ կառավարիչ ա՟մ եկղցե՟ց և ա՟մ հաւատացելոց ։

§ · 5· Երկ՟դ՝ թէ սբ՟ն պետրոս այսպիսի իշխանութե՟ք զարդարե՟լ, յետ բզ՟մ քարոզութե՟ց գնաց 'ի Հռովմ քղ՟ք, հիմնե՟ց անդ զեկեղեցի, կալաւ զառաջնորդութի նորին զամս 25 · և անդ խաչեցե՟լ մեռաւ և թաղեցաւ , որոյ և գերեզման կայ անդ մինչև ցայսօր ։

§ · 6· Եր՟դ՝ թէ այն ա՟մ իշխանութի՟ք և իրաւունք սբ՟յն պետրոսի անցանեն , և հարկաւ պարտին անցանել յա՟մ հայրապետս որք օրինօք յաջորդեն նմա յաթոռն հռովմայ, որոյ պատճառն է, զի քս՟ հիմնեաց զեկեղեցի իւր և զկառավարութի՟ նր՟ վս՟ տևելոյ միշտ մինչև ցկատարած աշխարհի։ Այսպ՟ ապա՟ցնեն ած՟բնք ն՟ց հինք և նորք յամ՟ գիրս իւրեանց, յորոց առնել և մխիթարեան վրդ՟պտք քարոզեն պարզամիտ ժղվ՟դեան մեր, ոպ՟ տեսանի դիւրեաւ յամ՟ գիրս տպեալս ՚ի վենետկէն միաբանից։ Արդ՝ զիարդ թուի ձեզ այս փաստք ն՟ց։

Պատասխանողք.

§. 7. Յայդոսիկ բանս սակաւ է յոյժ ճշմարտութի՟, իսկ խաբէութի՟ բզմ՟, որք ո՛չ պարզ երևին աչաց, եթէ ոչ նախ ը՟ ամ՟ մասանցն քրքրեսցին. վ՟ն թէ հաճոյ է ձեզ, նախ՝ զառաջին փաստ նոցա (§. 4) զննեսցուք, և՛ աղէ ասացէք. զիարդ հաստատեն ն՟ք թէ ն՟րն պետրոս իցէ գլուխ առաք՟լց, և միապետական հովիւ ամ՟ եկեղեցեաց և ամ՟ քրիստոնէից։

Հարցանողք.

§. 8. Նաւ ՚ի հաստատել զայդ զբզմ՟ վկայութի՟ս սբ՟ գրոց կուտէին նախնի ածբնք նոցա, պելլարմինոս, դաննէրոս, և այլք. սակայն յետ որոյ ուղղափառ վարդապետք այլոց ազգաց ըմբերանեցին զն՟ս յամի, նոր վրդ՟պտք նոցա յերկուս բանս աւետ՟րնին եդեալ ունին զթեթև յոյս իւրեանց, որոց առաջինն է այն, որ գրի (Մատթ. ԺԶ. 18. 19) թէ փրկիչն մեր քրիստոս ասաց պետրոսի, «Եւ ես քեզ ասեմ. զի դու ես վէմ. և ՚ի վ՟ր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն. և ես տաց քեզ զփականս արքայութե՟ երկնից, և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս, ևն»։ Ի բանից աստի ք՟ջ յայտնի լինի՝ ասեն՝ նախ, թէ պ՟տրոս է հիմն եկեղեցւոյ, իսկ արդ՝ հիմն հաստատէ և պահպանէ զշինուածն, ապա և պ՟տրոս զեկեղեցին ը՟հն՟ուր. երկ՟րդ՝ թէ պ՟տրոս ունի զփականս եկեղեցւոյ և որում աւանդի փականք տան կմ՟ քաղաքի, նա կացուցանի կա ռավարիչ կ՟մ գլուխ քաղաքի. և երդ՝ թէ պետրոս ունի զիշխանութ՟ կապելոյ և արձակելոյ յերկինս և յերկրի, որ նշանակէ զը՟հանուր իրաւաբանութ՟ 'ի վ՟ր ա՟մ քրիստոնէից, եւն ։ Այսպ՟ խօսին պելլարմինոս, անդոյան, կոլլէդ, պիլլուարտ, ստադլէր, քլիպֆէլ, շըրամ, ֆէյէր, վիսդ, եւն ։ Արդ՝ զի՞նչ առ այս դուք.

Պատասխանող.

§. 9. Յայդմ բնաբանի բնաւ իսկ ոչ երևի թէ ք՟ս խոստանայ կ՟մ տայ պետրոսի իշխանութ՟ և իրաւունք ինչ աւելի քան այլոց առաքելոց, զոր կամեցեալ ամ՟ն դիւրիմանալի գործել, հարկաւոր համարիմք յայսմ վայրի առ 'ի խափանել զա՟մ շփոթութ՟, կանխաւ մեկնաբանել զբառս, և բացորոշել զզինչութ՟ և զորպիսութ՟ խնդրելի նիւթոյս, և առ այս պարտիմք քաջ յուշի ունել զզանազանութիւն, որ գտանի ը՟ մէջ յառաջնութ՟ (կ՟մ առաւելութ՟) պատուոյ, կարգի և ժամանակի, և ը՟ մէջ յառաջնութ՟ (կ՟մ առաւելութ՟) իրաւաբանութ՟ և իշխանութ՟ ։ Յառաջնութ՟ պատուոյ գտանի 'ի մէջ պատուելի հաւասարազօր անձանց, յորոց մին առաւելու քան զայլս պատուով. որ՟պ 'ի հաւաքիլ ուրեք տասն թագաւորաց, յայտ է թէ մի՟ նստի յառաջին աթոռըն վ՟ս առաւել պատուելի գոլոյն ։ Կարգն է շարադասութ՟ կ՟մ տրամադրութ՟ զանազան և բազմաթիւ իրաց առ 'ի խորշիլ 'ի շփոթութե՟. որ՟պ մատե՟նք 'ի գրատան շարին կարգաւ ինչ կ՟մ ը՟ քանակի մեծութեցն, կ՟մ ը՟ ճաւելի նիւթոյն, և կ՟մ այլ ինչ նկատմամբ. և յայսպիսիս յառաջնութիւն ընծայի այնմ, որ կայ զետեղեալ յառաջնում կարգի ։ այսպ՟ զինուորք շարադասին 'ի ճակատի կարգաւ ինչ ։ ը՟ այսմ հիմն տան ունի զյառաջնութ՟ կարգի նկատմամբ այլոց մասանց շինուածոյն ։

Յառաջնութիւն ժամանակի գտանի յայնս, յորս գոլն կամ գործելն միոյ յառաջագոյն է ժամանակաւ քան զգոլն և զգործելն այլոյ, որպէս ծերն ժամանակաւ յառաջ է ծնեալ քան զմանուկն. ծառն յառաջ է ժամանակաւ քան զպտուղն իւր, հիմն ժամանակաւ յառաջ է քան զլրացեալ տունն, ևն:

§. 10. Իսկ յառաջնութիւն, կամ լաւ ևս, առաւելութիւն իրաւանց և իշխանութեան տեսանի յայնպիսի անձինս, որք ՚ի բնութենէ կամ ՚ի սահմանելոյ մարդկան ընկալեալ ունին կամ զբոլորական և կամ զառաւելագոյն իշխանութիւն ՚ի վերայ հպատակաց։ Այսպէս բանական մարդիկ ՚ի բնութենէ ունին զբոլորական իշխանութիւն ՚ի վերայ անբանից. այրն ՚ի բնութենէ ունի զընդարձակագոյն իշխանութիւն և իրաւունս քան զկինն ՚ի վերայ որդւոց և ընտանեաց. կայսրն տաճկաց կամ չինաց ունի միայնակ զբոլորական իշխանութիւն վարելոյ զամենայն պաշտօնեայս և զհպատակս իւր. և այսպիսիքս այլով բառիւ կոչին, Միապետ, Միապետական տէր, Ինքնակալ, Գլուխ, monarcha: Փոխարքայն ունի ՚ի թագաւորէ զընդարձակագոյն իշխանութիւն քան զայլ պաշտօնեայս տէրութեան՝ ՚ի վերայ հպատակաց կամ այլոց պաշտօնէից ևս։ Յայսպիսեաց աստի՝ միապետն սահմանի, Գլուխ քաղաքին՝ որ ունի զծայրագոյն իշխողութիւն և զհրամանատարութիւն ՚ի վերայ հպատակաց, որ ազատաբար բաշխէ այլոց զամենայն պաշտամունս և զիրաւունս. տնօրինէ զբարութիւն և զփրկութիւն ժողովրդեանն, և չունի զայլ ոք գերազանց կամ հաւասար յիշխանութեան իւրում։ Պապականք ըստ քմաց իւրեանց ընծայել կամին սրբոյն Պետրոսի զայսպիսի միապետութիւն, յորում և բովանդակի ասեն երեք ինչ. նախ՝ իշխողութիւն և իրաւունք ՚ի վերայ մետասան առաքելոց իբրու ՚ի վերայ հպատակաց։ երկրորդ՝

որ զհետ գայ յառաջնոյն, իրաւունք 'ի վ՟ր հովուութե՟ և վարչութե՟ մետասանից, ո՛չ թէ զա՟մ իշխանութ՟ի և զիրաւունս 'ի վ՟ր քրիստոնէից՝ 'ի պետրոսէ 'ի փոխ առեալ իցեն մետասանքն, և կախեալ իցեն զնմանէ, ո՛չ քննեմք զեպսէ. վ՟նկ և ն՟ը երազախաբ կարծեաց իւրեանց զպետրոս կոչեն՝ ընծայեալ կ՟մ վիճակաւոր հովիւ (pastor ordinarius). իսկ զմետասան առաքեալս կոչեն արտաքոյ կարգէ հովիւք. ա՟յ մշակք և դեսպանք պետրոսի (pastores extraordinarii. legati). սմին նման զիրաւաբանութիւն պետրոսի կոչեն սեփհական, առաջնորդական (jurisdictio ordinaria.), իսկ զիրաւաբանութիւն այլոց առաքելոց կոչեն՝ փոխառեալ, յանձնարարեալ (jurisdictio delegata) յայտնանէ 'ի վ՟ր ածեն, թէ իրաւաբանութիւն պ՟տրոսի անցանէ յա՟մ յաջորդս ն՟ր մինչև 'ի կատարած աշխարհի, իսկ իրաւաբանութի այլոց առաքելոց դադարեցաւ 'ի մահուանն ն՟ց. և ո՛չ փոխեցաւ 'ի հայրապետս որք յաջորդեցին յաթոռ նոցա: Այսպ՟ ցնորաբանեն անդրոյան. վայլերքին, եւն. ը նմանեաց իւրեանց: Արդ բոլորական իշխանութի և սեփհականել իրաւաբանութի 'ի վ՟ր ա՟մ քրիստոնէից՝ առանց ա՟մ բացառութե և ընդերակցութե, ո՛չ թէ ք՟ս զբոլոր ժող՟վ իւր յանձնել իցէ՝ ո՛չ թէ երկոտասան առաքելոց հաւասարա՟պ, այլ միում միայնոյ պ՟տրոսի. որ թէ կամիցի՝ զմասն ինչ ժողվրդեան յանձնէ այսմ կ՟մ այնմ առաքելոյ 'ի հովուել, և թէ ո՛չ կամի 'ի բաց առնու զհօտ իւր. յայսմանէ՝ առեն ա՟մ քրիստոնեայք պարտաւոր են մահուչափ մեղօք զպ՟տրոս միայն (ի՟մ զկարծեցեալ յաջորդս ն՟ր զհայրապետս հռովմայ, զի վ՟ս պետրոսի չէ փոյթ ն՟ց) ճանաչել իւրեանց սեփհական հովիւ. նմա հնազանդիլ, 'ի նմանէ կառավարիլ, եւն.

§ · 11 · Արդ՝ զայսոսիկ յառաջագոյն իմացեալ , առ փաստ սպասկանաց ասեմք , թէ ճշմարտութ՟ ը՟ այ՟ խօսելով , ամենեւին ոչ գտանի 'ի յիշել բնաբանիդ , թէ ք՟ն տուեալ իցէ , կ՟մ պ՟րտս առեալ ունիցի 'ի ք՟նէ զբոլորական կ՟մ գոնէ զը՟արձակ իշխանութի և իրաւունս և ոչ իսկ 'ի վ՟ր ը՟հնու՟ր քրիստոնէից և եկե՟ղցեաց, թող թէ 'ի վ՟ր նոյն իսկ առ՟քելց · այլ այսչափ ինչ միայն տեսանի 'ի բնաբանէդ , թէ ք՟ն ետ պ՟տրսի միայն զառաւելութի և զյառաջնութի պատուոյ և կարգի, վ՟ն ունելոյ ն՟ր զյ՟ջնութի ժամանակի · իբր զի՝ ո՟պ պատմէ մտթ · (Ղկ· 18=21) ք՟ն տ՟րն մեր նախ-եհարց ցառաքե՟լսն վ՟ն հաւատոյ ժողվ՟դեանն , զ՟ո՞ ոք կարծեն զիս մարդիկն , և յասել ն՟ց զկարծիս ժողվ՟դեանն , փրկիչն մեր կամեցաւ հր՟պրկաւ ճանաչել զհ՟ւտս աշակերտաց իւրոց · վ՟յ ասաց ցն՟ս , իսկ դուք աշակերտքդ իմ զ՟ո՞րպիսի ոք հաւատայք զիս , յայնժամ պետրոս վ՟ն ջեր՟մն սիրոյ իւր յառաջեաց ժամանակաւ ք՟ զայլ առաքեալսն , և ասէ , դու ես ք՟սն որդի ա՟յ կենդանւոյ · Այսուիկ գործով է զի պ՟տրոս ժամանակաւ առաջին 'ի հ՟ւտլ սրտիւ , ժամանակաւ առաջին 'ի դաւանել բերանով , և ժամանակաւ առաջին 'ի քարոզել այլոց հր՟պրկաւ զծնուն՟ և զորդիութի՟ն ք՟սի , և վ՟նկ 'ի վարձ այսպիսի առաջնութե՟ ն՟ր , փրկիչն մեր շնորհեաց նմա, զի լինիցի ևս առաջին վէմ 'ի կարգի շինուածոյ եկեղեցւոյն, որով և ունիցի զառաջնութի պատուոյ 'ի մէջ այլոց վիմաց · ուստի հարազատ իմաստ փոխաբերական բանից ք՟սի լինի այս : Դու ո՛վ սիմոն յառաջին աւուր աշակերտելոյդ ինձ կոչեցար լինել վէմ (ը՟ յո-ն · պէ՛տրոս , պէ՛տրա · ը՟ ասորւոց , քէ՛փա · տե՛ս · յովհ· ա· 42·) , ո՟պ թէ այր վիմանման , հ՟ստուն և անշարժ 'ի հաւատս , և այժմ իսկ յառաջ քան զայս դաւանելովդ քո, ցուցար լինել առաջին վէմ. և ես հաստատելով զայդ՝ ասեմ քեզ, թէ արդարև դու ես վէմ, նա առաջին տեղի որ սկզբնաւորէ զշինուածն. առաջին մասն շինուածոյ. նիւթ տան եղեալ յառաջին կարգի. դու ես առաջին հաւատացօղ, դաւանօղ և առաջին քարոզօղ։ որպէս վէմն է առաջին տեղի և առաջին եզր (եզր՝ ծայրն), որ լինի սկիզբն և մասն տան, նոյնպէս դու ես առաջին անդամ և առաջին մասն հաւատացօղաց յիս։ Եւ 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. որպէս ճարտարապետն 'ի վիմէն սկսանի, և զվէմն դնէ սկիզբն շինուածոյն իւրոյ. նոյնպէս և ես 'ի քէն, քև, քո քարոզութեամբդ սկսայց հաւաքել զհաւատացօղս (շինել զեկեղեցի իմ), զքեզ արարից առաջին քարոզօղ քրիստոնէութեան. յառաջ քան զայլ առաքեալս իմ, դու լիցիս հաւաքօղ զքրիստոնեայս. և դարձուցիչ հրէից և հեթանոսաց. դու եղիցիս մին յառաջին սեանց եկեղեցւոյս (Գաղատ. Բ. 9)։

§. 12. Յայսցանէ կարէ ոմն ոք ճանաչել. թէ այսպիսի յառաջնութիւն 'ի պետրոս ամենևին ոչ նշանակէ զծայրագոյն իրաւունք 'ի վերայ այլոց առաքելոց, զի աստ ոչ բաղդատին առաքեալք ընդ պետրոսի. կամ իրաւունք նոցա ընդ սորայս, այլ պետրոս իմացի լոկ իբր առաջին հաւատացօղ և դաւանօղ, որում քան խոստանայ առաջին կարգել զնա 'ի շինութեան եկեղեցւոյ, այսինքն 'ի հաւաքել զքրիստոնեայս. զորոյ զճշմարտութիւն հաստատեաց և սրբազան պատմութիւն. զի արդարև յետ գալստեան հոգւոյն սրբոյ՝ պետրոս նախ առաջին (թէպէտ և հանդերձ մետասանիւք) քարոզեաց զհաւատս և եմոյծ յեկեղեցի թէ զհրեայս (Գործ. Բ. 14) և թէ զհեթանոսս (Գործ. Ժ. 34)։ Այլ արդ որովհետև այսպիսի եղանակաւ առաջին լինելն 'ի մէջ հաւասարազօր ընկերաց՝ ոչ երբէք ցուցանէ ունել իրաւունս և իշխանութի՟ 'ի վ՟ր ընկերաց, ապա յայսմ՟ բանէ ք՟ի ոչ կարեն պապականք լօծիդական ուղղութ՟ ապացուցանել մեզ զմիապետական իշխանութի՟ 'ի պետրոս: Այլ թէ արդարև նկատեմք այսպիսի յառաջնութե՟ հնարաւոր էին միւս առաքեալք ևս ը՟ պետրոսի, ապացուցանի նախ յայնմանէ, զի զնոյն հաւասար պետրոսի ունէին և միւս առաքեալքն, ո՛չ երևի 'ի յետագայ բանից ք՟ի (Յհ՟. 20)· յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի ումեք ասասցեն թէ նա է ք՟ս ||: Երկ՟ յայնմանէ, զի ո՛չ պետրոս եղև առաջին քարոզիչ յեհմ քաղաքի, նոյնպ՟ և միւս առաքեալք եղեն առաջին քարոզիչ և հիմնադիր եկեղեցւոյ յայլևայլ քաղաքս և յազգս, ո՛չ ուսուցանէ պատմութի՟ վարուց նոցա:

§. 13: 'Ի փոխաբերեալ բանսն ք՟ի բաւն վէմ, կմ՟ հիմն, 'ի մէջ բերէ այն առուղղակի և զայլ իմաստ, ը՟ որում նկատի 'ի նմա և զօրութի՟ կանգնելոյ և հաստատուն պահելոյ զշինուածն, յինքեն 'ի վեր ամբառնալոյ զծանրութի՟ն, ևս՟. սակայն յայս միտս ոչ պետրոս և ոչ միւս առաքեալքն կարեն կոչիլ վէմ կմ՟ հիմն, զի այդպիսի զօրութի՟ յատուկ է միայնոյ ա՟յ և ք՟ի, որպէս ընդունին և հակառակորդք մեր:

§. 14. Ո՛չ է ինչ թագուն 'ի սիրելի եղբարցդ և այն, զի բազումք 'ի նախնի վրդպաց զանազան ազգաց յայլ ևայլ միտս մեկնեցին զբանն վէմ: Այս՟ նախ օգոստ. (Մեկն. յոհ. Ճառ Ճկէ), հերոնիմ (Մեկն. Տաղ. Է), թէոդորետոս (Մեկն. ա՟ կորն. 4.) բանիւս վէմ իմացան զնոյն ինքն զք՟ս: Եթէ այս մեկնութի՟ հաճոյ է պապականաց, յայնժամ չունին ինչ ընծայել պ՟տրսի և յաջորդաց ն՟ր: Երկ՟ նախնի վրդպք աւ՟լի ք՟ զերեսուն (ո՛չ հիլարիոս, ոսկեբերան. գրիգոր նիւսացի. ամբրոսիոս. մեծն գրիգոր պապ. Թէոդորետոս. լեոն ա. ադրիանոս, Լիա), ըստ որս և ոմանք 'ի մեր վրդպտց բառիւս վէմ իմացան զհաւատս և զդաւանութին պետրոսի. բայց Թէ և այս կարծիք ճշմարտեսցի, տակաւին ոչինչ առաւելութն ընծայի պետրոսի 'ի վր այլոց առքլց. վն զի զնոյն հաւատս պետրոսի ունէին և միւս առաքելքն, զոր ապացուցանէ վերոյիշել բանն քի, || յայնժամ սաստեաց աշակերտացն (ոչ պետրոսի միայն, այլ ամյն), զի մի' ումեք ասասցեն Թէ նա է քն ||: Երրդ՝ բզմք և 'ի վրդպտց վէմ անուամբ իմանան ոչ միայն զպտրս, այլև զամ առաքեալս. յայտ է Թէ ուսեալք 'ի սբ գրոց, որ զամ առաքելս անխտիր կոչէ վէմ, ըստ այսմ || Շինեալք 'ի վր հիման առաքելոց և մարգարէից (Եփես. Բ. 20): Եւ և || Պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան, և 'ի նս երկոտասան անուանք երկոտասան առաքելոց գառինն (Յայտն. ԻԱ. 14): զայսպիսի մեկնութիւն տան որոգինէս (Ճառ. Ա. Տէէն, Ճղ. Գլխ. Տար.), հերոնիմ (Գրոց. Ըղէտ յովհն), օգոս (Ճառ. ՃԸ), լեոն ա, (Եռն. Գ. 'ի փարէտրչ), Թէոփիլակտոս (Ջէին, այոր Եռնուէառ), և այլ ևս բազումք 'ի հնոց և 'ի նորոց: Այս ամ այլազան մեկնութիք վրդպտց ակներև զայն ճշմարտեն Թէ անհնար է բանիւքն քի հմայել կմ հաստատել զմիապետական իշխանութին 'ի սբն պետրոս, մի՝ զի յայդմ վայրի պետրոս ոչ մնածի իբր կառավարիչ կմ հովիւ, այլ լոկ իբր հաւատացող և քարոզող: Երկրդ՝ զի չասաց քս, դու միայն ես վէմ, 'ի վր քո միայնոյ շինեցից զեկեղեցի իմ, բայց 'ի քէն այլ ոք մի' լիցի վէմ: Երրդ՝ ոպ հիմն տան ոչ է ստացիչ և տէր տանն. նոյնպէս լինելն հիմն եկեղեցւոյ, հիմնելն զեկեղեցի, ոչ քարոզելն զհաւատս և հաւաքելն զքրիստոնեայս՝ բնաւ ոչ երբեք նշանակէ լինել տէր հաւատացելոց, տիրել և տիրապետել քրիստոնէից, կամ իշխօղ և միապետ լինել 'ի վ՟ր ժողովրդեանն այ՟, զի կարի յոյժ զանազանեալ և այլաձայն են այս երկու պաշտամունք. վյ՟ փափադաւանք հակառակ ամ՟ լօճիգական կանոնաց մեղանչեն, յասելն, «Պետրոս էր հիմն եկեղեցւոյ, ապա ուրեմն էր միապետական գլուխ և տէր ամ՟ քրիստոնէից. զի ծաղրական սխալ է այդ մակաբերութի՟ն, ո՟պ ուսաք 'ի տրամաբանուե՟ ։ Չր՟դ՝ լինելն վէմ և հիմն եկեղեցւոյ ոչ է անհաղորդական յատկութի՟ն ինչ սեփհականել միայն Պետրոսի. վ՟ն զի այդ փոխաբերական բառ նախ առաջին ընծայի Քսի՟՝ 'ի բազում տեղիս ս՟բ գրոց (տե՟ս Գործ. Դ. 11. Հռովմ. Թ. 33. Ա՟ Պետր. Բ. 6. Ա՟ Կորնթ. Գ. 11. և Ժ. 4) Եկ՟դ՝ ընծայի երկոտասան առաքելոց անխտիր առանց ինչ գերադահութե՟ Պետրոսի, (տե՟ս Եփես. Բ. 20. Յայտն. ԻԱ. 14.) Եր՟դ՝ զդոյն զայդ անունն նոյն ինքն ս՟բն Պետրոս ընծայէ ամ՟ քրիստոնէից, ը՟ս ‖ առ որ մատուցեալ էք 'ի վէմն կենդանի ('ի Քս՟) . . . և դուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր ‖ Ա՟ Պետր. Բ. 4. Ուրեմն յայսմ անուանէ չէ հնար ստեղծանել զկեղծուպատիր միապետութի՟ն ինչ 'ի սուրբն Պետրոս ։

§. 15. Ստէպ յիշատակեալ բառդ՝ Վէմ ստիպէ զմեզ հրապարակել յայսմ տեղւոջ զծանր խարդախութի՟ն գաբրիէլ վրդ՟պտին 'ի մխիթարեան միաբանից վենետկոյ. որ 'ի գիրսն (Բացատր, Շարական. յէր. 131. 804) ը՟ս կամաց իւրոց՝ առ 'ի հաստատել զկեղծեալ գլխաւորութի՟ն ս՟բ՟յն պետրոսի 'ի վ՟ր այլոց առաքելոց, անխիղճ մտօք զբառն Կէֆա Թարգմանէ Գլուխ, որ է ամենասուտ, իբր զի անունդ Կէֆա, կամ ը՟ս բուն հնչման յունաց ՔԷ՛ՓԱՍ, է բառ ասորւոց, որում նշանակէ ՎԷՄ, ՔԱՐ, ԱՊԱՌԱԺ, ը̅ որում՝ ինքն առ̅քեալն յովհաննէս թարգմանէ զայն 'ի յունաց լեզու ՓԷ՛ԴՐԱ, ՓԷ՛ԴՐՈՍ, յասելն (ա. 42)« Հայեցեալ ը̅ նա յս̅ի ասէ, դու ես սիմոն որդի յովնանու, դու կոչեսցիս կէ՛փաս, որ թարգմանի (ասէ 'ի յունական լեզու) փէ՛դրոս, և սա 'ի Հայումն թրգ̅մանի ՎԷՄ, ՔԱՐ։ վս̅ զի ը̅ Հաստատելոյ ամ̅ պատմաբանից և թարգմանչաց՝ քս̅ 'ի քարոզւէն խօսէր ասորի լեզուաւ խառն ը̅ քաղդէականին (զոր ը̅ունին և պերլարինոս, ա՛նդոյան, և այլք) որ էր յայնժամ հասարակ լեզու հրէից 'ի պաղեստին, և նովին լեզուաւ խօսելով ը̅ պետրոսի՝ կոչեաց զնա ՔԷՓԱՍ, և զայս բառ ասորւոց աւետարանիչն յովհաննէս 'ի գործ ածելով՝ յականջս յունաց թարգմանէ զայն ՓԷ՛ԴՐԱ, ՓԷ՛ԴՐՈՍ։ ապա ուրեմն անստերի վկայութ̅ աւետարանչին, բառն ՔԷՓԱՍ է ասորւոց, որում ապա համարձակութ̅ ասէ նա (յէր. 804) թէ իցէ բառ յունաց, զոր և թարգմանէ ԳԼՈՒԽ. որ է ստոյ սուտ. վս̅ զի գլուխն յունարէն ասի ՔԷՓԱԼԷ՛, և ո՛չ թէ ՔԷ՛ՓԱՍ, զի՞արդ ապա նոյնացուցանէ նա զՔԷՓԱԼԷ և զՔԷ՛ՓԱՍ, և չգիտեմք ո՞րպիսի երեսօք 'ի վե՞ր ածէ (յէր. 131)» ապա ուրեմն զի՛նչ և անուանեաց քս̅ պետրոսի, ա՛յն անուն է նորա, և մարդ ոչ է իշխան փոփոխել՝ զոր ած̅ անուանեաց ¦ ։Աւա՛ղ ուսմանն. և ուրա՞նօր արդեօք՝ ո՛վ իմաստունդ գաբրիէլ, ո՞ւր արդեօք քս̅ անուանեաց զպետրոս ԳԼՈՒԽ։ Ե՛կ 'ի բերանոյ քումմէ դատեսցուք զքեզ, եթէ ը̅ քո իսկ ասելոյ, մարդս ոչ է իշխան փոփոխել զոր ած̅ անուանէ, ապա դու ինքն մ̅դ գոլով զիա՞րդ իշխեցեր փոխել զած̅ադիր անուանն սիմոնի։ քս̅ կոչէ զնա ՔԷՓԱՍ. աւետարանիչն թարգմանէ զայն փէ՛դրա, պէ՛տրոս, ՎԷՄ. դու զիա՞րդ ստելով զք՟ս և զաւետարանիչն , զկեփասն թարգմանես Գլուխ։ եթէ զի՛նչ և անուանեց ք՟ս պետրոսի , այն է անուն նո՛ր , և ո՛չ աւելի , ապա դու զիա՞րդ ը՟ս քմաց յաւելուս 'ի պ՟տրս զբառդ Գլուխ . ա՛ղէ՝ ցո՛յց մեզ զտեղին , յո՞ր խորշս ս՟բ գրոց գտանի , թէ ք՟ս կոչեցեալ իցէ զպ՟տրս բառիս՝ Գլուխ . կ՟մ զիա՞րդ յաւելուս զանհեթեթն զայն || ո՛չ անուն սոսկ և կոչումն , այլ արդեամբք առնելով զնա գլուխ || . բա՛բէ հետևուե՞ս , մեք զլոկ բառն ո՛չ գտանեմք 'ի բանս ք՟սի , իսկ հայրն գաբրիել առատաձեռն յաւելու և զարդիւնքն ։ Բայց լուիցէ եղբայրութիւն ձեր զառաւել զարմանալին , զի դա ինքն գաբրիել վ՟րդպտ յայլ գիրս իւր (ՁԵՌ. ԲՂԲ. ՊՕՂ. ՀԱ. Բ. ԵՐ. 342) համարձակ գրէ (թէպ՟է յայլոյ դէմս , բայց ստոյգ համարելով , զի ո՛չ ստէ զնա) թէ բառն ԿԷՓԱՍ է ասորւոց լեզուի . ապա ո՛չ իմանամք զիա՞րդ կարաց իմաստունդ, զմիևնոյն բառ՝ 'ի մեկնութ՟ն պօղոսի համարիլ ասորի , և ապա 'ի բացատրութ՟ն շարականաց կեղծել զայն իբր բառ յունաց . ո՞չ ապաքէն այդ է անձամբ զանձն ծանակ առնել . բայց եթէ այսպ՟ կարծեսցուք թէ որովհետև 'ի ս՟բ գիրս յո՛չ ի՛նչ տեղւոջ եգիտ զպետրոս կոչեցեալ Գլուխ , հարկադրեցաւ առ 'ի թիւր մեկնել զայս բան շարականին (զորոյ զճշմարիտ իմաստն յետոյ ցուցցուք եղբարցդ) և առ հռոմացուցանել զասորին , որպէս զի կարասցէ ապա և զհայս լատինացուցանել ։ Այսպիսի է ահա՝ սիրելի՛ եղբարք , հաւատարմութի՟ն մխիթարեան վարդապետաց . այսպիսի է ուսումն և արուեստ գողանալոյ նոցա զհայս . զի որովհետև կարծեն ն՟ք թէ ազգն հայոց ո՛չ կարէ ճանաչել զմեքենայս նոցա , վասն այսորիկ տպագրեն զի՛նչ և կամին զճշմարիտ և ըզսուտ, և զանազան նուրբ դաւադրութեամբ ըզպարզամիտ ժողովուրդս մեր ձգեն 'ի կեշտ իւրեանց.

ՀԱՐՑԱՆՈՂՔ.

§. 16. Եթէ 'ի ս՟բ գիրս ո՛չ ուրեք գտանի անուն ՆՈՐ ԿՏԱԿ ընծայեալ ն՟յն պետրոսի, ո՟պ ասէքդ ճըշմարտութ՟, առիմէ՞ ապա վր՟դպտք զանազան ազգաց կոչեն զպ՟րս ԿՏԱԿ ԱՌԱՔԵԼՈՑ կամ ԵԿԵՂԵՑՒՈՅ, 'ի պ՟պ գիրս իւրեանց. ո՟պ ոսկեբեր, եպիփան, կիւրեղ աղեքս, կիպրիան, հերոնիմ, ե՟ն, ո՟պ և բզ՟մք 'ի վարդպ՟տց հայոց, 'ի շարականս մեր և յայլ գիրս. զորոց զբանս մնոտի աշխատանօք հաւաքե՛լ և տպագրել են հայերէն և լատիներէն մխիթարեան վարդապետք 'ի վենետիկ 'ի 1800 ամի.

ՊԱՏԱՍԽԱՆՈՂՔ.

§. 17. Վարդապետք եկեղեցւոյ կամ համաձայն ածաշունչ գրոց խօսեցե՛լ են, կամ հակառակ այնմ. Եթէ հակ՟ռկ ինչ խօսեցե՛լ են, ամենևին չեն ը՟ունելի, թէ՟պ և բիւր ս՟բ կարծիցեն, զի հաւատք քրիստոնէից միայն յածաշունչ գիրս հիմնե՛լ է, և ո՛չ 'ի բանս վարդապետաց. այլ վ՟ն զի չէ արժան կարծել, թէ ն՟ք հակառակ իցեն ս՟բ գրոց, ապա յաւերևոյթ ը՟դիմաբանուէ՟ս ն՟ց նկատելի է յաւէտ իմաստ մտացն քան թէ բառք բերանոյն. վասն զի յայտնի է ամէն, թէ նախնի վրդ՟պտք անտեղեակ գոլով այժմեան լօճիգական նրբուէ՟ց, բազում ինչ խօսեցան յաւէտ ճարտասանական չափազանցութ՟, քան թէ փիլիսոփայական ուղղադատութ՟. Վկայ են մեզ վկայուէ՟ք ն՟ց զանձանց. Ըստ

այսմ՝ ոսկեբերան ասաց վասն բանից ինչ իւրոց (Գր․ Ա․
ՅՂ․ ՂՂԶ․ ՈՐՓԷ)» մի՛ համարիցես թէ այսոքիկ ճշմարտութ
» ասացան, այլ վ՟ն յորդորելոյ || ։ Յերոնիմոս (Ընդդէմ
յովինեանու) ասէ» Ճշմարտասանօրէն խօսեցայք, և զօրէն ա-
»տենաբանից սակաւ ինչ խաղ արարաք || ։ Օգոստի-
նոս ասէ (Թղթ․ ՃԽԸ)» ոչ պարտիմք իբրև զկանոնա-
» կան սբ՟ գիրս ըն՟ունիլ զվիճաբանութիւնս ոմանց, թէև
» ուղղափառ և գովելի արանց, այնպ՟ զի չիցէ մեզ օ-
» րէն . . . 'ի գրուածս նոցա ինչ ինչ անարգել և ար
» համարհել . . . այսպիսի եմ ես 'ի գրուածս այլոց, և
» կամիմ զի այսպիսի լիցին ընթերցօղք իմ || ։ Նոյնն
ասէ (Ընդդէմ Կրեսկոնեայ, Գր․ Բ․ Գլ․ ԼԲ․)» զայս (կարծիք) կիպ-
»րիանոսի վ՟ն վերստին մկրտելոյ զհերետիկոսս, ոչ ըն՟ու-
»նիմ, թէպ՟և անհամեմատ ստոր իցեմ քան զկիպրիա-
»նոս, ոպ՟ և զայն (գործ) պետրոսի առաքելոյ, որ զհե-
» թանոսս ստիպէր հրէաբար կեալ, ոչ ըն՟ունիմ և ոչ
»կատարեմ, թէպէտև անհամեմատ յետնեալ իցեմ ք՟
զպետրոս || ։ Նոյնն ասէ (Ընդդէմ Փաւստոսի․ Գր Ե․ Գլ․ Գ)«
գրեանք եպիսկոպոսաց ոչ են այնպիսի ինչ, զի իմաստ-
»նագոյնք և գիտնագոյնք ոչ կարասցեն ստգտանել կմ՟
» դսրովել զայնս || ։ Ոմանց արարեալ յառաջ բերել
զայլ ևս անթիւ վկայութիւնս նախնեաց վ՟ն նիւթոյս, զայն
ևս յաւելումք, թէ բազումք 'ի նախնի վարդապետաց
ո՟ք կմ՟ անո՟ք կարծելոց, 'ի բազում իրս այժմ համա-
րին մոլորել ։ Իբ՟ այսմ որոգինէս, լակտանտիոս, հիլա-
րիոս, մեծն բարսեղ, օգոստինոս, դամասկացին, յով-
հան կասսիանոս, եկ՟ր ժողովն նիկիոյ, եւն, համարե-
ցան թէ հրեշտակք բարիք և չարք ունին զմարմին նուրբ
օդեղէն կմ՟ հրեղէն, որ այժմ համարի սուտ ։ Դար-
ձեալ տերտուղիանոս, յուստինոս վկայ, իրինէոս, որո-

գինէս, լակտանտիոս, ոսկեբերան, թէոդորետոս, ամբրոսիոս, և այլ բազումք յայտնի գրեն, թէ հոգիք ննջեցելոց յետ մահուան ոչ տեսանեն զերեսս ա՟յ մինչև ցօրն դատաստանի · զոր այժմ ոչ ը՟ունին լատինք ։ Պատմէ պելլարմինոս (յղ· Երան· Սրբ· Գլ· դ) թէ իրինէոս, եփիփան, և ոկումէն ուսուցին թէ դևք յ՟ռջ քան զօրն դատաստանի ոչ պատժին դժոխային տանջանօք։ Յայտնի է ձեզ և սխալանքն կիպրիանոսի վ՟ն մկրտելոց զհերետիկոսս, ևն։ Նպս ը՟ այսոցիկ հարկ է ասել թէ ոմանք 'ի վրդ՟պտց անզգոյշ և չափազանց ինչ խօսեցան զս՟րյն պետրոսէ, և զայլոց. զորս 'ի բարին և յուղիղն մեկնաբանելով ասեմք, թէ նոքա զդոյական բառդ Գլուխ եդեալ իցեն քերթողաբանելով փոխանակ ածականի՝ Գլխաւոր, այն է, առաջին, երևելի, աւագ, մեծապատիւ, երեց, ևն։ ուստի յանուանել նոցա զպետրոս՝ Գլուխ առաքելոց կ՟մ եկեղեցւոյ, իմանալի է Գլխաւոր առաջին կ՟մ մեծապատիւ 'ի մէջ առաքելոց։ Նպս թէ ոչ, եթէ զԳլուխն իմանաս ը՟ բուն նշանակութ՟, այն է ը՟ տիրողութ՟ և իշխողութ՟ 'ի վ՟ր այլ առաքելոց, ո՟պ այրն ասի գլուխ կնոջ, և թագաւորն գլուխ ժողովրդեան, ը՟ այսմ սուտ և հակառակ լինի ա՟ծաշունչ գրոց, որ ոչ ուրեք ընծայէ պետրոսի զայդպիսի ինչ, ոչ ը՟ բառին և ոչ ը՟ իմաստիցն ։ Եթէ ոչ այսպիսի մեկնութ՟ ընկալցուք զբանս ոմանց անզգոյշ վրդ՟պտց նախնեաց, անհնարին հակասութիք ը՟ առաջ ելանեն. որում օրինակ լիցի մեզ անալի բան շարականին մերոյ, որ զս՟րբն սարգիս կոչէ ԱՆՇԷՋ [illegible], [illegible] ԱՆՀԱՂԹԱ[illegible], որք ոչ ապաքէն բանք են անանուն գրչի զորէն բառնաբայ 'ի կեղծաւորութ՟ խոնարհելոյ · վ՟ զի այդպիսի տիտղոսք միայն ա՟յ վայելեն, և ոչ ումեք 'ի ս՟րբց ։

Հուսկ յետոյ յաւելումք, որովհետեւ ԳԼՈՒԽ և ՄԱՐՄԻՆ առընչակից եղերք են, թէ ճշմարիտ էր ասելն, ՊԵՏՐՈՍ Է ԳԼՈՒԽ ԵԿԵՂԵՑՒՈՅ, ապա ճշմարիտ լինէր և ասելն ԵԿԵՂԵՑԻՆ Է ՄԱՐՄԻՆ ՊԵՏՐՈՍԻ, իսկ արդ՝ սուտ է երկրորդս, ապա սուտ է և առաջինն. որոյ ստութիւն հաստատի և յածաշունչ գրոց, որ միայն զանձն կոչէ գլուխ եկեղեցւոյ (եփես. ա. 22։ դ. 15։ Ե. 23։ կողոս. ա. 18։ բ. 10։ 19). իսկ զեկեղեցին ոչ երբեք և ոչ ուրեք կոչէ մարմին պետրոսի, այլ միշտ՝ մարմին քի (հռովմ. ժբ. 5։ ա. կորնթ. ժբ. 27։ եփես. ա 23։ դ 13։ 16։ Ե. 23։ կողոս. ա. 18. 24։ բ. 19). ապա ուրեմն ըստ սբ. գրոց, ոչ եկեղեցին է ՄԱՐՄԻՆ պետրոսի, և ոչ պետրոս է ԳԼՈՒԽ եկեղեցւոյ. այլ առ առաւելն, նախապատիւ անդամ մարմնոյ եկեղեցւոյ. ըստ որում անդամքն ամ ոչ զնոյն գործ ունին։ Իսկ առ վկայութիւն չարականին մեր ասեմք, թէ նոյն չարականն և զյակոբոս կոչէ ԳԼՈՒԽ առաքելոց նրց (ՆԽ. ՃԷ) զոր հայրն գաբրիէլ 'ի բացատրութեն (էջ. 121) պէսպէս ծամածռութեամբ 'ի թիւր միտս տանի։

ՀԱՐՑԱՆՈՂՔ.

§. 18. Գոհ եմք զսիրելի եղբարցդ վն ուղիղ իմաստիցդ. բայց խնդրեմք թարգմանել մեզ և զմիւս բանքն, զոր ասաց ցպետրոս։ Տաց քեզ զփականս արքայութե երկնից, եւն. զի լատինք յայսմանէ 'ի վր ածեն, թէ պետրոս միայն ունի զփականս, զոր թէ կամի՝ հաղորդէ այլոց առաքելոց, և թէ ոչ՝ չունին նոքա իրաւունս փակելոյ և բանալոյ, եւն։

ՊԱՏԱՍԽԱՆՈՂՔ.

§. 19. Անկարելի է թէ լատինք կարասցեն յայդմ բնաբանէ քաղել ինչ փաստ 'ի հաստատել զմիապետութի նորին պետրոսի. իբր զի առ իմանալ զմիտս բա նիդ՝ հարկ է ծանուցանել նախ թէ բառն փականք զօրութ՟ ունի զբուն յատկացուցիչ իւր, որ է բառս դրունք, որով լրացեալ նախադասութ՟ին լինի այս, || տաց քեզ զփականս դրան եկեղեցւոյ || · որ հաստատի այնուիկ, զի 'ի նախընթաց բանսն փրկչի՝ մեր փոխաբերական այլ՟բանութ՟բ նմանեցոյց զեկեղեցին՝ նիւթական շինուածոյ 'ի վ՟ր վիմի կ՟մ հիման կառուցելոյ · ապա յիշեաց զդրունս դժոխոց· յայտնանէ դիւրին եղ՟ նմա անցանել առ փականս դրան եկեղեցւոյ · զոր խոստանալով տալ պետրոսի, կամեցաւ առնել զնա դռնապան եկեղեցւոյ, այն է բացօղ (և փակօղ) զդրունս եկեղեցւոյ, և յայս սակս բազումք 'ի նախնի վ՟րդ՟պաց կոչեն զպետրոս դռնապան (յոյնք [illegible] · լա · [illegible] · [illegible]) արքայութ՟ե կամ եկեղեցւոյ: Նկ՟տ՝ 'ի բանսն ք՟նի՝ որովհետև երկոքին բառք՝ փականք, դրունք, են փոխաբերական, հարկ է փոխել զայնս յիմաստ նկարագիր: Ուրդ՝ բառս փականք, կամ ուղիղ ևս, բանալի (զի յոյն բնագիրն դնէ [illegible]), յայտ է թէ դնի աստ փոխանակ բառիցս գործիք · միջոց, հնարք, զի բանալին ոչ այլ ինչ է · բայց եթէ գործիք փակելոյ և բանալոյ ։ Նոյնպ՟ բառս դրունք դնի աստ փոխանակ բառիցս [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], որում դուռնն է առաջին տեղի կ՟մ մասն շինուածոյն, որ տայ զառաջին մուտս, որ նախ առաջին ընդունի զմտանօղս և մուծանէ 'ի ներքս 'ի շինուածն, կամ որ լինի սկիզբն և միջոց մտանելոյ · Նոյնպ՟ 'ի բանալ զդրունս տուեալ լինի առիթ և պատեհութ՟ մտանելոյ · կ՟մ սկսուած լինի մտից և ելից ։ Ապացուցանի մեկնութիւս յայլ տեղեաց ս՟ր գրոց ։ Ըստ այսմ յաւելն || ած եբաց հեթանոսաց զդուռն հաւատոց (Գործ · ժդ · 26), յայտնի է թէ խմացեալ լինի այս || ա՟ծ սկիզբն արար ը՟նդունելոյ զհեթանոսս , սկսաւ տալ նոցա զհաւատս, եւ հեթանոսաց զառաջին առիթ՝ զպատեհութի՟՝ զսկիզբն լինելոյ քրիստոնեայ || ։ Սոյնպէս յասելն || Աղօթս արարէք վասն մեր, զի ա՟ծ բացցէ մեզ դուռն բանի ՚ի խօսել զխորհուրդն ք՟ի (կողոս. դ. 3) իմանի , ա՟ծ տացէ մեզ առիթ, յաջողեսցէ մեզ սկիզբն առնել քարոզելոյ ։ ը՟ս այսմ եւ ասելն || վայ ձեզ օրինականացդ, զի թաքուցանէք զփականս (դրանց) գիտութե՟ . դուք ոչ մտանէք (ը՟ն դուռն գիտութեց), եւ որ մտանելոցն են՝ արգելուք (ղուկ. ժա. 52. եւ մատթ. իգ. 13), զայս միտս տայ || զրկէք զժողովուրդն ՚ի գիտութենէն ա՟յ, ոչ տայք նոցա առիթ եւ պատեհութի՟ ուսանելոյ, փակէք զդուռն գիտութե՟ || ։ տե՛ս եւ զբանսն ա՟ կորնթ. ժզ. 9։ բ՟ կորնթ. բ. 12։ ը՟ս այսորիկ եւ ասի. Քերականութիւն է դուռն գիտութեց, այն է՝ սկսուած կամ առաջին աստիճան գիտութե՟. Մերձեցայ ես ՚ի դուռն մահու, ՚ի դուռն գերեզմանի, Բա՛ց տէր զդուռն ողորմութե՟, եւն։ Արդ զայսոսիկ յառաջագոյն իմացեալ ասելն է , թէ ը՟ս այսմ ոճոյ եւ իմացուածոյ ս՟բ գրոց, այն փոխաբերական զրոյց ք՟ի || Տաց քեզ զփականս դրան եկեղեցւոյ || մերկացեալ յայլաբանական պաճուճանաց եւ փոխեալ յիմաստ ը՟ս գրոյն, ՚ի մէջ բերէ զայս բառական իմաստ || Տաց քեզ զառիթ, զպատեհութի՟, զդործիք (բանալի, փական) զի սկիզբն արասցես, առաջին լիցիս, տացես սկսուած եւ միջոց (բացցէ դուռն) ժողովելոյ զհաւատացեալս (եկեղեցւոյ)։ Այս է հարազատ եւ անխարդախ իմաստ բանիդ, յորում տեսանի զի փրկիչն մեր տակաւին զնախընթաց միտս իւր եկ՟դէ այլովք բառիւք , այն է խոստանայ առաջին առնել զպետրոս ՚ի քարոզութե՟ հաւատոյ . որ եւ յելից իրացն ճշմարտեցաւ, զի ըստ վերագոյն ասացելոցս, արդարև մին պետրոս նախ առաջին քարոզութ̄բ երբաց զդուռն հաւատոյ և եկեղեցւոյ թէ հրէից (Գործ. Բ. 14) և թէ հեթանոսաց (Գործ. Ժ. 34)։ Այլ արդ՝ որովհետև առաջին լինելն պետրոսի ՚ի քարոզութե̄ ոչ ցուցանէ ունել նմա իշխանութի̄ ՚ի վ̄ր այլոց առաքելոց (§. 12. 13), յայս սակս չէ՛ մարթ լատինաց յայդմ բնաբանէ մակաբերել զիշխանութի̄ ինչ ՚ի մին պետրոս. իբր զի որպէս պետրոս յԵ̄մ եղև առաջին ՚ի բանալ զդուռն եկեղեցւոյ, նոյնպէս և այլ առաքե̄լք եղեն առաջին բացօղք զդուռն հաւատոյ յայլևայլ քաղաքս և յազգս։

§. 20։ Պարզեալ զխրթնութի̄ շարուածոյ բանիցդ, մնայ այժմ որոնել ևևս, թէ զի՞նչ և ո՞րպիսի իր իցէ այն, որ աստ նշանակի բառիւքդ Փականք, Բանալի, Գոցել, Բանալ ևն̄։ և ահա քննելով զսո̄յ գիրս (յորմէ ոչ երբէք բաժանիմք) գտանեմք, թէ բանալեօք նշանակին երկու միայն պաշտամունք ՚ի քն̄է հրամայեալք առաքելոց. որոց առաջինն է քարոզել, աւետարանել, ուսուցանել զժողովուրդն. գիտուն առնել զնոսա ա̄յ և ա̄ծային իրաց, տալ ժողովրդե̄ն՝ զգիտութի̄ փրկութե̄, իմաստուն առնել, լուսաւորել զմիտս ընկերին, ըստ այնմ Մտթ. ԻԸ. 18) որ̄պ առաքե̄ց զիս հայր, և ես առաքեմ զձեզ. գնացէ՛ք այսուհետև, աշակերտեցէ՛ք զամ̄ հեթանոսս . . . ուսուցէ՛ք նոցա պահել զամ̄, զոր ինչ պատուիրեցի ձեզ|| ևս մարկ. ԺԶ. 15. երթայք յաշխարհ ամ̄ և քարոզեցէ՛ք զաւետարանն ամ̄ արարածոց||։ տե՛ս ևս (մտթ. Ժ. 7։ մարկ. Գ. 14։ Զ. 12։ ԺԶ. 20։ ղկս. Թ. 2։ յովհ. Ի. 21։ գործ. Զ. 2. 4։ ԺԵ. 35։ հռովմ. Ժ. 14. 15։ Ա̄ կորնթ. Ա̄. 17։ Թ. 16։ ևն̄)։ Այս պաշտօն է այն, զոր փրկիչն մեր անուանեաց Փականք Գիտութեան (Ղուկ. ԺԱ. 52) որ̄պ մեկնեցաք 'ի վերոյ, որ յիշե՟լ լինի և 'ի Տիմ. Դ.13։ Իսկ եկղ՟ պաշտօնն է մատակարարել ժողովրդեան զսր՟ խորհուրդս եկեղեցւոյ, այն է՝ մկրտել զնոսա (մտթ. իը 19), բաշխել նոցա զմարմին և զարիւնն ք՟սի (ղկս. իբ 19. զայս արասջիք առ իմոյ յիշատակի), թողուլ և ունիլ զմեղս նոցա, կամ՝ կապել և արձակել զմարդիկ (մտթ. ժզ.19։ ժը. 18։ յովհ. ի. 22. 23։) դատել, պատժել, ձեռնադրել, օծանել, եւն։ Ո՜ այս փականս նշանակեաց ք՟ն, յորժամ զինի ասելոյն ցպետրոս, Տաց քեզ զփականս արքայութե՟ երկնից, անդէն անմիջաբար 'ի վ՟ր ած, Ո՜ որ միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս ||։ Նկատմամբ երկուց պաշտամանցս այսոցիկ՝ որք իմանին փականօք՝ ած՟ առաքելք անխըտիր և յաջորդք ն՟ց եպիսկոպոսունք՝ 'ի ս՟բ գիրս անուանին տնտեսք, ը՟ս յունին, Οἰκονόμοι, (ա՟. կորն. դ. 1. 2։ տիտոս. ա՟. 7։ ղկս. ժբ. 42։ ժզ. 1—8։ ա՟. կորն. թ. 17։ եփես. գ. 2։ կողոս. ա՟. 25)։

§. 21. 'Ի հիմնական բանից աստի ս՟բ գրոց դիւրին է սիրելի եղբարցդ մակաբերել զհետագայ զանսուտ ճշմարտութիւն ։ Նախ՝ թէ լինելն տնտես, այն է՝ տեսուչ և կառավարիչ տան, ունելն զփականս դրանց տանըն, գանձարանին, եւն, ոչ երբեք նշանակէ լինել տէր և ստացիչ տանն, և ոչ գլուխ գերդաստանին. զի տընտեսն մի է 'ի ծառայից անտի, մատակարար է պիտոյից ծառայակցացն, ուստի չէ ինչ աւելի քան զծ՟ոյն, թող թէ միապետական գլուխ տանն կամ ծառայակցացն ։ Ապա ունելն զփականս չէ՛ և չէ՛ նշանակ միապետութե՟, Ուստի վայրապար ե՟ն օդս աղաղակեն անդոյան, Փէյէր, և այլք 'ի պապականաց, որք առ հաստատութի սուտ կարծեաց իւրեանց՝ նեցուկ ամրութե՟ կամին առնուլ նախ՝

զբանն եսայեայ (ԽԲ·22), յորում խոստանայ ա՟ծ փոխանակ սովնասայ կարգել զեղիակիմ քեղկեայ, և տալ նմ՟ զփականս տանն դաւթի (թէպ՟ ՚ի մեր թարգմանութեան ոչ գոյ բառդ տանն, բայց՝ ներգործու՟ի դնեն զայն բնագիրն եբրայեցւոց, լատինն և արաբացին), քանզի և յայսմ տեղւոջ փականօք նշանակի ոչ թէ միապետական իշխողու՟ի, այլ լոկ տնտեսու՟ի կամ՝ կառավարու՟ի տանն արքային յուդայ· որ յայտնի բառիւք դնի ՚ի բնագիրն· զի ուր առ մեզ ասի (՚ի 15 տան)» Մուտ ՚ի դիւան մտիր առ սովնաս հանդերձապետ || ՚ի բնագրին եբրայեցւոց յայտնապ՟ դնի || Մտի՛ր առ շեբնայդ, որ տնտես է, կամ վերակացու է տանն || · մինչ և առ մեզ ուղիղ դնի ՚ի 21· տան) տայ ՚ի ձեռս նր՟ զհազարապետութիւն քո, որ այն է տնտեսութիւն ։ Ապա ուրեմն ոպ՟ եղիակիմ առնլով զփականս տանն արքային՝ ոչ կարգեցաւ տէր և միապետական գլուխ տանն, այլ տնտես միայն · նոյնպ՟ և ս՟րն պետրոս և միւս առաքեալքն առնլով զփականս դրան եկեղեցւոյ, ոչ երբեք լինին գըլուխ կմ՟ միապետ եկեղեցւոյ, այլ լոկ տնտես կմ՟ դըռնապան ։ Յաւել և զայն· զի յայսմ բնաբանի փականքն աւանդին միում եղիակիմայ միայնոյ, իսկ փականքն եկեղեցւոյ թէպ՟ խոստացեալ լինի միում պետրոսի ՚ի դէմաց ամ՟ առաքելոց դաւանողի, սակայն իրական տուչու՟ին փականաց ոչ աւանդեցաւ միում պետրոսի, այլ ամ՟ առաքելոց· ոպ՟ յետոյ մեկնեսցուք եղբարցդ ։ Այբապար աղաղակեն պապականք եկղ՟ և առ բանն յայտնութե (Գ·7), ուր ասի || Այսպէս ասէ ս՟րն ճշմարիտն որ ունի զփականս դաւթի, բանայ և ոչ ոք է որ փակէ· և փակէ՝ և ոչ ոք է որ բանայ ||· զի աստանօր բանն է զք՟ս, որ արդարև միապետական տէր և գլուխ է ամ՟յն և ունի զամ՟ փականս իբր տանուտէր, և ոչ իբր տէրն տես կամ դռնապան. բայց մինչ հնար իցէ յայսմանէ մակաբերել, թէ ուրեմն պետրոս ը՟ այսմ օրինակի ունի զփականս եկեղեցւոյ, ո՞չ ապաքէն այդ լինէր զեղծանիլ սկզբամբ, ո՟ր տրամաբանք ասեն, կամ զցուցանելին ենթադրել փոխանակ ցուցելոյ ։

§. 22. Նկդ՟` թէ ունիլն զփականս եկեղեցւոյ, կամ լինելն դռնապան և տնտես, ոչ է արտօնութիւն ինչ սեփհականեալ միում պետրոսի. այլ հասարակ է ամ՟ առաքելոց. զի ամ՟ առաքեալք հաւասարա՟պ ընկալան 'ի Քնէ՟ զմինոյն փականս եկեղեցւոյ, զոր այսպէս ապացուցանեմք ։ 1 Փականքն եկեղեցւոյ ը՟ էութեանն և ըստ իրականութեանն նկատել ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկնղի պաշտօնն այն, զոր 'ի վերոյ (§.20) մեկնեցաք, այն է` լուսաւորելոյ զժողովուրդն, և տալոյ նմ՟ա զխորհուրդս. զոր լաւ ևս լինի կոչել Իրաւունք հովուելոյ զհօտն Քնի՟ ։ 2. այլ արդ` այդ պաշտօն 'ի Քնէ՟ յանձնեցաւ ամ՟ առաքելոց հաւասարա՟պ առանց ինչ նախադասութեան պետրոսի. 3 ապա ուրեմն փականքն յանձնեցաւ ամ՟ առաքելոց հւ՟րպ ։ Նկդ՟ նախադասութիւն, զոր ոմանք 'ի դիմախօսից կամին ուրանալ, ապացուցանի 'ի սբ՟ գրոց ։ Նախ` փրկիչն մեր 'ի մտթ. ժզ. 19. իրօք ոչինչ ետ պետրոսի, այլ խոստացաւ միայն յապառնի ժամանակի տալ նմա զփականս. և եթէ քննեսցուք թէ ե՞րբ ետև իրական տուչութիւն, ահա գտանեմք զայն յաւետարանին յովհաննու. (ի.21—24), ուր այսպէս պատմի ։ Ասէ ցնո՟ս դարձեալ, ողջոյն ը՟ ձեզ, ո՟պ առաքեաց զիս հայր իմ, և ես առաքեմ զձեզ. և զայս իբրև ասաց յն՟ փչեաց 'ի նոսա, և ասէ, Առէք հոգի սբ՟, եթէ ումեք Թողուցուք զմեղս, թողեալ լիցի, և եթէ զուրուք Ունիցիք , կալեալ լիցի || ։ Տեսանի աստանօր մի՝ զի Յս̄ առ մետասան առաքե̃լս (յորոց միջի էր և պետրոս) խօսի յոգնական բայիւ , Առէ՛ք , Թողուցուք , Ունիցիք ։ առաքեմ զՁեզ եւն ․ և միւս եւս՝ զի այս իշխանութի̃ նոյն է ամենեւին ը̄դ այնմ , զոր անուամբ փականաց խոստացաւ պետրոսի (Մտթ · Ժզ · 18)· ը̄դ այսմ օրինակի և միւս պաշտամունք յոգնակի բայիւ ամ̃ առաքելոց յանձնեցան , գնացէ՛ք , աշակերտեցէ՛ք , ուսուցէ՛ք , քարոզեցէ՛ք , մկրտեցէ՛ք զն̃ս , զայս արասջի՛ք առ իմոյ յիշատակի , որ Ձեզ լսէ , որ զՁեզ անարգէ , եւն ։

§· 23· Նկ̃տ՝ թէ արդարև փականքն յանձնեցան ամ̃ առաքելոց հաւասարապէս , ուսուցանէ մեզ ք̃ս բանիւքն , զոր յառաջ բերէ մտթ (Ժը · 15—23)· Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո , ե՛րթ յանդիմանեա զնա , յորժամ դու և նա միայն իցէք . . . ապա թէ ոչ լուիցէ քեզ , ա՛ռ ը̄դ քեզ մի եւս կ̃երկուս . . . իսկ թէ և նոցա ոչ լուիցէ , ասասջիր Եկեղեցւոյն (*)· ապա թէ և Եկեղեցւոյն ոչ լուիցէ , եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր ։ Ամէն ասեմ ձեզ , զի զոր կապիցէք յերկրի , եղիցի կապե̃լ յերկինս . և զոր արձակիցէք յերկրի , եղիցի արձակե̃լ յերկինս . . . յայն ժամ մատեաւ առ նա պետրոս և ասէ . տէ՛ր՝ քանիցս անգամ՝ թէ մեղիցէ ինձ եղբայրն իմ, թողից նմա || ։

(*) Թէ̃պ յա̃ծաշունչն մեր տպեալ 'ի 1805 'ի Վենետիկ , եդեալ կայ , ասասջի՛ր յեկեղեցւոջ , սակայն սխալ է այն գրելն հայ տպողին · Վասն զի բնագիրն յունաց դնէ աստանօր դի եքքլիզի՛ա , որ է տրական հոլով և ոչ ներգոյական , վ̃ոյ և առ մեզ դնելի է , ասասջի՛ր եկեղեցւոյն , և այսպ̃ ունին լատինն և արաբացին ։

Այսոքիւք բանիւք երեք ինչ ուսուցանէ մեզ ք՟ս, մի՛ թէ որևիցէ առաքե՟լ զատաբար և առանձինն նկատելով՝ նուազ է իրաւաբանութ՟ք զգումար նոցին · իբր զի ք՟ս նախ եղակի ձայնիւ խօսելով ը՟ պետրոսի ասէ, եթէ մեղիցէ ՙՔեզ եղբայր ՙՔո, և ոչ ուղղեսցի, ասասջի՛ր Եկեղեցւոյն ։ ապա ուրեմն եկեղեցին, որ ը՟ ը՟ունելոյ պապականաց իսկ, դնի աստանօր փոխանակ ժողովոյ առաքելոց հաւաքա՟պ առելոց, գերակատար է իրաւաբանութ՟ք քան զորևիցէ առաքեալ ։ Երկրորդ թէ եկեղեցին կամ գումարն առաքելոց գերազանց է հեղինակութեամբ քան զնոյն ինքն զը՟ն պետրոս · զի թէ արդարև ը՟ կարծեց պապականաց՝ պետրոս էր միապետական գլուխ եկեղեցւոյ, ապա հարկ էր ք՟սի այսպ՟ հրամայել առաքելոց 'ի ներկայութե՟ անդ· պետրոսի || եթէ ոչ լուիցէ քեզ՝ ասասջի՛ր պետրոսի · և եթէ պետրոսիդ ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոս || · բայց սակայն չասաց այդպէս, այլ զեկեղեցին կարգե՟ց վերջին ապաստանարան · ուրեմն յայսմ բանէ ք՟սի յայտնի երևի, թէ եկեղեցին կ՟մ գումարն առաքելոց կարի յոյժ մեծ է ք՟ զպետրոս · ը՟ որոյ պետրոս լինի ոչ թէ գլուխ, այլ անդամ եկեղեցւոյ 'ի ներքոյ գլխոյն քրիստոսի ։ Երրորդ՝ յայսմ բնաբանի քրիստոս վասն այն հրամայէ զանհնազանդ եղբայրն յատենէ մասնաւոր անձանց մատնել եկեղեցւոյ, որպէս զի եկեղեցին (ի՟ գումարն առաքելոց, և ոչ թէ միայնակ պետրոս կամ պօղոս) խրատեսցէ, ուղղեսցէ, դատեսցէ զմեղուցեալն, և եթէ անլըսօղ գտցի, հրատարակեսցէ զնա խորշելի իբր հեթանոս ։ Իսկ արդ՝ դատել, վճռել և հրատարակել իբր խորշելի՝ են գործ փականաց (զի նշանակէ փակել զդուռն եկեղեցւոյ ը՟դէմ անուղղայ եղբօրն) . ապա ուրեմն փականքն յանձնե՟լ են 'ի քհ՟է եկեղեցւոյ, ա՛յն է՝ դասուն առաքելոց, և ո՛չ թէ միում պետրոսի։

§. 24. Յայսց ա՟ծային պատգամաց ունե՛լք բազումք 'ի նախնի վրդ՟պաց ուսուցին յայտնի 'ի գիրս իւրեանց, թէ իշխանութ՟ի փականաց աւանդեցաւ 'ի քհ՟է ո՛չ թէ միում պետրոսի, այլ բովանդակ եկեղեցւոյ, թէպ՟ և յանձին պետրոսի։ Այսպ՟ խօսին տերտուղիանոս, օգոստինոս. կիւրեղ աղեքսանդրացի, գրիգոր մ՟ պապ. փուղկենտիոս, կիպրիանոս, հերոնիմոս, լևոն մ՟ պապ. որոգինէս. հիլարիոս. ամբրոսիոս. կաւտենտիոս. և այլ բազ՟մք 'ի նոյն լատինաց, զորոց զբանս վ՟ն համառօտութե՟ զանց առնեմք 'ի մէջ բերել. զի ծանօթ են այնց դիմախօսքն մեր։

§. 25. Այլ ունիմք մերումս անսուտ ճշմարտութե՟ զբազում յոյժ վրդ՟պտս և զա՟ծաբանս նոյն իսկ փափադաւանից, որք ձանձրացեալ յանկոպար բռնաւորութե՟ ոմանց 'ի հայրապետաց հռովմայ և անարգ մարդեչյզ շողոմարարաց ն՟ր, լիաբերան գրով և ձայնիւ քարոզեն ամ՟ աշխարհի, թէ իշխանութ՟ին փականաց յանձնեցաւ մարմնոյ եկեղեցւոյ, և ո՛չ թէ միում պետրոսի։ Ա՟ն զի 'ի մէջ նոյն պապականաց ծանր տարաձայնութ՟ի է վ՟ն այսր. իտալացի վրդ՟պտք որովհետև բովանդակ օգուտ և փառք ն՟ց կախեալ կայ զպապէն, ա՟մ ջանիւ գ՟ւն գործեն հաստատել թէ սբ՟ն պետրոս (և կարծել յաջորդ ն՟ր հայրապետն հռովմայ) էր միապետական գլուխ, և միայնակ ունէր զփականս եկեղեցւոյ, յորմէ 'ի փոխ առին այլ առաքե՛լք։ Իսկ ը՟հակառակն վարդապետք այլոց փափադաւան ազգաց, սպանիացիք, գերմանացիք, ողջամիտքն յիտալացւոց անտի, և առա ւել քան զամ՟ն գաղղիացի վ՟րդպտք , եպ՟սունք , ած՟աբանք , և բոլոր ուխտ եկեղեցւոյն ն՟ց 'ի սկզբանէ մինչև ցայսօր զմերս Ճշմարտութի՟ քարոզեն միաձայն ։ Յայսպիսի վ՟րդպտս հռչակաւոր են Պետաւ · դոստատ ապուլեցի · նատալիս աղեքսանդր · անդրէաս էսկոպար , կարդինալն քուզանոս · պետրոս ալիակոս · էնէաս սիլվիոս՝ որ յետոյ եղև պապ պիոս Բ ։ յովհաննէս գերսոն · տուրանդոս · կղոդիոս Փլէօռի · դուրնէլլի · զաւվէյն · էտմունտ ռիշէրի · պետրոս տէմարքայ · սէկովիայ · սոդոս · լուտով , տուբին · լաւնոյոս · մարկ , տէտօմինիս · նաւարրոս · ալմայէն · կերպասիոս · արնոլտոս · դոլնաչէն · երևելին պօսիւէթ · փայվայ · տուփինոս · հաբերդ · բերրիէր · էփիոս · Եւն , և ևս Ճեմարանքն գաղղիոյ , վիենայու · կողոնիոյ · բրաքովիոյ · էրֆորտոյ · քօնիմպրեկոյ · իբր երեքհարիւր հարք պասիլեան ժողովոյն , և այլ բազմութ՟իք յոյժ նախնի և արդի վ՟րդպտց ն՟ց · մանաւանդ նոյն իսկ հարք տրիտենդեան ժողովոյն թերևս ակամայ խոստովան եղեն զայս Ճշմարտութի՟ · զի 'ի նիստն ԺԴ · կան · ԺԵ · ասեն , || Եթէ ոք ասասցէ թէ փականքն որք աւանդեցան Եկեղեցւոյ , միայն առ 'ի բանալ , և ոչ առ 'ի փակել || Եւն ։ Այսչափ է զօրութիւն Ճշմարտութեան ։

Հարցանօղ .

§. 26. 'Ի խօսս սիրելի եղբարցդ երևի մեզ թիւրութ՟ի շրջաբանութ՟է · զի թուի թէ ասէք || փականքն եկեղեցւոյ աւանդեցան եկեղեցւոյ || · իսկ արդ՝ ո՞չ ապաքէն սխալ կ՟ի դէ՛թ անիմանալի են բանքդ ։

Պատասխանօղ .

§. 27. Ո՛չ ինչ դժուարութ՟ի գտանի 'ի բանս մեր , եթէ յուշ ածջիք զնշանակութ՟ի բառիդ էկէղէցի , որ քանզի է բառ հաւաքական, վարի երբեմն յերկուս միտըս ։ զի ո՟պ նշանակէ ըն դոլին՝ այն է բազմութ՟ին հաւատացելոց՝ բաժանի յերկուս կարգս, յուսուցիչ, և յուսուցանօղ ․ նոյնպ՟ և բառն եկեղեցի 'ի գործ ածի նախ փոխանակ ուսուցչաց, որք են՝ վր՟դպտք, ե՟պսունք, քարոզիչք, հովիւք, և ա՟մ սպասաւորք բանին, որոց գումարն կոչի ուսուցիչ եկեղեցի, և սովին մտօք դնի մտթ․ ժը․ 17 ։ ա՟․ տիմոթ․ գ՟․ 15 ։ Եա՟ ։ եկ՟դ՝ փոխանակ ուսանօղաց, որք են ժողովուրդք և աշխարհիկ անձինք, կա՟մ ոչխարք հօտին, յոր միտս իմանի ա՟ կորնթ․ ժդ․ 34 ։ և գործ․ ի՟․ 28․ ուր 'ի բնագիրն յունաց դնի, հովուել զեկեղեցի տեառն ։ և սա կոչի ուսանօղ եկեղեցի ։ Արդ՝ ասելն վր՟դպտց || փականքն եկեղեցւոյ աւանդեցան եկեղեցւոյ ||, փոփոխել բառիւք տայ զայս անստեղի իմաստ, Իշխանութ՟ին հովուելոյ (քահանայք) զոչխարս ք՟նի և զհասարակ ժողովուրդս (զուսանօղ եկեղեցին) աւանդեցաւ 'ի ք՟նէ դասուն առաքելոց և ե՟պսաց (ուսուցիչ եկեղեցւոյ)։ և յայսմ բանի յայտ է թէ չիք ոչ թիւրութ՟ի և ոչ շրջան բանի․ վ՟ն զի եկեղեցին իբր բոլոր ինչ և մարմին ք՟նի ընկալաւ 'ի նմանէ զփականս, բայց 'ի գործ ածէ զայն ձեռամբ պաշտօնէից իւրոց ․ յոր սակս ա՟մ առաքեալք անխտիր և յաջորդք նոցա 'ի սբ՟ գիրս կոչին պաշտօնեայ, սպասաւոր ․ Եա՟, ը՟ այնմ, կողոս ․ ա՟ ․ 24 ․ 25 ․ ա՟ կորնթ ․ դ՟ ․ 4 ․ դ ․ 1 ։ բ՟ կորնթ ․ զ ․ 4 ։ ժա՟ ․ 23 ։ եփես ․ դ՟ ․ 7 ։ ա՟ տիմոթ ․ դ ․ 6 ․ և յայլ տեղիս ։ Այլ վ՟ն փականաց եկեղեցւոյ, նոյն և վ՟ն առաջին փաստի պապականաց շատ լիցին առ ժամս այս բանք ․ բե՛ր այժըմ տեսցուք զեկ՟դ փաստ նոցա, զի ասաց ձերդ եղբայլումն (§. 8) թէ նոքա յերկուս բանս աւետարանին ապաւինեալ են ։

Հարցանողք.

§. 28. Երկ՟դ վկայութ՟ի նոցա վ՟ս միապետութ՟ե ս՟բյն պետրոսի այն է, զոր յիշէ աւետարանիչն յովհաննէս (ի՟ա. 15—18), յորում փրկիչն մեր երիցս եհարց պետրոսի զսիրոյ ն՟ր, և երիցս հրամայեաց նմա արածել զոչխարս և զգառինս իւր. զի յայսոսիկ բանս՝ ասեն նոքա՝ բառն արածեա՛, նշանակէ գլուխ լինել հօտին, կառավարել և տիրաբար հովուել. Բառն՝ զոչխարս իմ, նշանակէ զամ՟ հօտն ք՟ի թէ՛ զեկեղեցականս և թէ զաշխարհականս։ և որովհետև այս բանք միայն առ պետրոս ասին, և ոչ առ այլ առաքեալս, վ՟յ ՚ի վ՟ր բերեն թէ միայն պետրոս է վիճակաւոր բացարձակ հովիւ ամ՟բղ քրիստոնէից, իսկ այլ առաքեալք են նուիրակք կա՟մ դեսպանք և մշակք պետրոսի, ևն ։ Այսպ՟ անդոյան, մուծարելի, կայապ, շմիտ, սավդեր, Ֆեյեր, և մեծ մասըն պապական վարդապետաց ։ Առ այս զի՞նչ ունիք պատասխանի ։

Պատասխանողք.

§. 29. Եթէ յուղիղ միտս մեկնեսցին բանքդ, ոչ ինչ հաստատութ՟ի գտանի յայնս ՚ի նպաստ միապետութ՟ե պետրոսի, իբր զի Տ՟րն՝ երիցս անգա՟մ հարցանելն ք՟ի զսիրոյ ն՟ր և յանձնելն նմա զոչխարս, ոչ վ՟ս այլ ինչ պատճառի էր, եթէ ոչ առ ՚ի բժշկել զերիս ուրացութ՟ի պետրոսի. և այս է անստելի իմաստ բանիդ ը՟դ որում հաստատեն զայն և բազում նախնի վ՟րդպտք եկեղեցւոյ. օգոստինոս. ամբրոսիոս. ոսկեբերան. մեծըն բարսեղ. և այլ անթիւք, զորոց զբանս ՚ի մի հաւաքեաց սամուել պասնակիոս. ը՟դ որս և շարականն մեր

(Յովհ. Իող), իբր զի պետրոս յառաջ ք՟ զչարչարանս ք՟ի յանձնապաստան խիղախելով ասացեալ էր ցք՟ս» (մատթ. իզ. 33. յովհ. ժգ. 37) թէ՟պ և ամ՟քն (ը՟ս ամ՟ առաքե՟լք) գայթագղեսցին 'ի քէն. սակայն ես ոչ գայթագղեցայց ¦ և վ՟ն զի ոչ եկաց յայսմ խոստման, այլ երիցս ուրացաւ. վ՟նկ յետ յարութե՟ն ք՟ի իբր յուշ ածելով նմա ո՟պ թէ ասէր, յիշե՞ս պետրոս զի խոստացար չուրանալ զիս, առաւել ք՟ զայլ առաքե՟լս հաստատ մնալ 'ի սէր իմ. այժմ ո՟պի ես, սիրե՞ս զիս առաւել ք՟ զայլ աշակերտս իմ, և եթէ սիրես՝ դարձե՟լ ը՟ունիմ զքեզ 'ի թիւս աշակերտացս, և յանձնեմ քեզ արածել զոչխարս իմ։ Որովք յայտ է թէ կամեցաւ ք՟ս բժշկել զմիտս թէ՛ պ՟տրսի թէ՛ այլոց առաքելոցն, զի մի՛ համարեսցին զնա վ՟ն ուրացութե՟ն արտաքսեալ յառաքելական պաշտամանէն։

Երկ՟դ՝ բաւական փաստ ը՟դէմ միապետութե՟ պետրոսի առնել լինի յայսց բանից ք՟ի. իբր զի թէ՟պ զսիրե՟լն առաւել քան զայլ առաքե՟լս պահանջեաց 'ի պետրոսէ, սակայն իշխանութ՟ի հովուելոյ առաւել ք՟ զայլ առաքե՟լս ոչ ետ նմ՟. զի թէ արդարև ք՟ս ունէր կամք միապետ կացուցանելոյ զպետրոս, հարկ էր նմա աստանօր ասել այսպ՟ ¦ որովհետև դու առաւել քան զայլ աշակերտս սիրես զիս, վ՟յ դու առաւել ք՟ զայլ աշակերտս արածեա զոչխարս իմ, դու միայն լե՛ր հովիւ ոչխարացս, քեզ միայն յանձնեմ զամ՟ ոչխարս իմ, բաց 'ի քէն այլ ոք մի՛ լիցի հովիւ, ե՟ն։ Իսկ արդ չասաց ք՟ս այսպիսի ինչ, այլ լոկ, թէ արածեա զոչխարս իմ, ապա զիա՞րդ համարձակին պապականք յայդց սակաւ բանից դիւթելով ստեղծանել զմիապետական հովուութ՟ի 'ի պետրոս, իբր զի 'ի բանից զսէրն պետրոսի բաղդատութ համեմատէ քն ընդ սիրոյ այլոց աշակերտացն, «սիրե՞ս զիս առաւել քան զսոսա» (այն է զայլ առաքեալս), բայց զիշխանութիւն հովուելոյ ոչ բաղդատէ ընդ իշխանութեան այլոց առաքելոց. զի ոչ ասէ, արածեա զոչխարս իմ առաւել քան զդոսա ։

§. 30. Երդ՝ բայն արածէ՛, յայտ է թէ ոչ նշանակէ տիրել, իշխել, [illegible], տիրապետել, որպէս ինքն սրբազանն պետրոս մեկնէ զնոյն բառ (ա պետր. ե. 2) «արածեցէ՛ք որ ՚ի ձեզ հօտդ է այ, վերակացու լինել . . . մի՛ իբրեւ Տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին». ապա ուրեմն քն ոչ յանձնեաց պետրոսի Տիրել վիճակին, այլ միայն արածել, որ է կերակրել զոչխարս, հոգեւոր ճարակ մատուցանել. Իսկ զՏիրելն եւ զԻշխելն միմեանց յայտնապէս արգել քն առաքելոց ՚ի բանսն մտթ. Ի. 25. ղկս. ԻԲ ։ 25. 26։ մրկ. Ժ. 42. 43։ Բ կորնթ. Ա. 23. եւն)։ Չրդ՝ արածելն զոչխարս որ է պաշտօն հովուի, ոչ է յատկութի ինչ սբյն պետրոսի. այլ հասարակ է ամ առաքելոց եւ յաջորդաց նոցա եպսկպսց. որք ՚ի սբ գիրս կոչին հովիւ (տե՛ս. գործ. Ի. 28 ։ Ա պետր. Ե. 2։ եփես. Դ. 11. Ա կորնթ. ԺԲ 28 ։) ապա ամ առաքեալք եւ յաջորդք նոցա արածեն զհօտն քի, եւ ոչ թէ միայն պետրոս ։ Հինգերդ՝ արձակաբար Տիրել եւ Իշխել ոչխարացն՝ ենթադրէ զյատուկ սեփհականութի ստացողին. իսկ արդ զայսպիսի սեփհականութի ինքեան պահեաց քն, ընդ որում ասաց, զոչխարս Իմ, զգառինս Իմ, եւ ո՛չ՝ զոչխարս Քո. ապա ուրեմն Տէր ոչխարացն է քն. իսկ պետրոսի իբրեւ մշակի կմ եկղցն հովուի յանձն արար միայն զարածելն, եւ ոչ զտիրելն. ընդ որոյ պետրոս լինի սպասաւոր եւ պաշտօնեայ ոչխարաց. եւ ոչ թէ տէր կմ իշխօղ նոցին ։ Վեցերորդ՝ կամ որոշաբար զա՟մ և զիւրաքանչիւր անհատս ոչխարաց յանձն արար Ք՟ս պետրոսի, և կամ անորոշաբար զոմանս յանհատից, ը՟ս զո՛ր ոք և ո՛րքան կարիցէ պետրոս շահիլ։ Իսկ արդ՝ չէ՛ հընար ասել թէ զա՟մ և զիւրաքանչիւր ոչխարսն յանձնեաց նմ՟, զի թէ այսպ՟ լինէր, զի՞նչ ապա յանձնեց միւս առաքելոց, յասելն՝ գնացէ՛ք, ուսուցէ՛ք, քարոզեցէ՛ք, մկրտեցէ՛ք ։ ո՞չ ապաքէն առաքեալքն կարէին ասել ցՔ՟ս, տէ՛ր զա՟մ ոչխարսն պետրոսի յանձնեցեր, իսկ մեք զո՞ մկրտեսցուք, ո՞ւմ քարոզեսցուք, եւն ։ Ապա ուրեմն հա՛րկ է ասել, թէ ո՛չ զա՟մ, այլ զոմանս յոչխարաց իւրոց յանձն արար Ք՟ս պետրոսի ։ Եօթներորդ՝ Ք՟ս ՚ի յանձնելն աստանօր պետրոսի զժողովուրդ իւր, յայտ է թէ ամենայնին նախագահութ՟բ և խորհրդով, ո՛չ յաւել զբառս Ամենայն, (զի ո՛չ ասաց նմա, արածեա՛ զԱմենայն ոչխարս իմ, զԱմենայն գառինս իմ). սակայն ՚ի տալն ժողովոյն առաքելոց զիրաւաբանութի՝ ներգործութ՟բ յաւել զհանրական բառն Ամենայն, ասելով «Երթայք յաշխարհ Ամենայն, և քարոզեցէ՛ք զաւետարանն Ամենայն արարածոց . . . աշակերտեցէ՛ք զԱմենայն հեթանոս» ։ ապա ուրեմն յայտ բաղդատութ՟է ուղիղ մակաբերի, թէ որովհետև գումարն հաւատացելոց իբրու բոլորական առարկայ իրաւաբանութե յանձնել լինի միայն ժողովոյն առաքելոց, և ո՛չ պետրոսի, վ՟սկ իրաւաբանութին պետրոսի լինի նուազ, մասնական, և սահմանափակ. իսկ իրաւաբանութին ը՟հանուր առաքելոց էր անսահման, համայնատարած, և առաւել քան զպետրոսին ։ Ութերորդ՝ ծաղրական զանազանութի և տղայական խաղ է, զոր ոմանք ՚ի վրդ՟պտց նախնեաց և արդեաց ստեղծանեն ը՟

մէջ բառիցս գաւազան և ոչխար · ո՟պ թէ գաւազան նշանակէ զհասարակ ժողովուրդս · իսկ ոչխարն զեկեղեցականս, և զհօտ երկաքանչիւրոցն յանձնել լցէ ք՟ս պետրոսի ։ Սուտն այսր կեղծաւորութե՟ ցուցանի նախ այսու, զի փրկիչն մեր զնոյն իսկ զառաքեալսն երբեմն կոչէ գաւազան, ո՟ր այսմ (ղկ՟ս · ժ · 3 ·) ահա առաքեմ զձեզ իբր զգառինս 'ի մէջ գայլոց || և երբեմն կոչէ ոչխար, ո՟պ 'ի մտթ · ժ · 16 · իսկ զժողովուրդն կոչէ միշտ ոչխար, ո՟ր այսմ, մտթ · ժ · 6 · ժե · 24 · մրկ · զ · 34 ։ յովհ · ժ · 1—28 ։ Նկտ՟ այսուիկ, զի փրկիչն մեր ոչ յունարէն, այլ ասորի լեզուաւ քարոզէր · իսկ աւետարանիչն յովհաննէս 'ի գրելն զբանս ն՟ր յունարէն, վ՟ս քաղցր հնչելոյ յականջս յունաց՝ խորհրդով փոփոխել է զձայնն, ըստ նոյն իր այլևայլ բառիւ բացատրելով · այն է, երբեմն գաւազան և երբեմն ոչխար կոչելով զժողովուրդն · և այս է սովորական ոճ յովհաննու, ո՟պ տեսանի և 'ի թուղթս ն՟ր (ա՟ թղթ · բ · 12=18 · 28 · գ · թղթ · 4) · յորս առ նոյն ժողովուրդ խօսելով ասէ, գրեմ ձեզ որդեակք, գրեմ ձեզ հարք, գրեմ ձեզ երիտասարդք, գրեցի ձեզ մանկունք, ևա՟ ։ Ապա ուրեմն 'ի զանազանութե՟ բառիցս գաւազան, ոչխար, ոչինչ փաստ կարեն պապականք ստեղծանել վ՟ս բացարձակ և անկախ հովուութեան պետրոսի ։

§· 31· Յաննե՟րդ՝ եթէ ք՟ս միում պետրոսի յանձնեալ էր զհովուութի՟ և զհօտս ամ՟ քրիստոնէից, չէ՞ր հնար այլում ումեք յառաքելոց պարծիլ թէ ունին զհօտ ամ՟ քրիստոնէից ։ իսկ արդ՝ ո՟րն պօղոս յայտնապ՟ գրէ առ կորնթացիս (բ · կորնթ · ժա՟ · 28) թէ նա կրէր զհօտս Ամենայն Եկեղեցեաց, գո՟նէ 'ի նմանէ հիմնելոց, ապա ուրեմն հօտք ամ՟ եկեղեցեաց չէր յանձնել միում պետրոսի ։ Նոյն ս՟բն պօղոս այլուր (գաղատ . ՟բ . 7 . հռովմ . ժ՟ա . 13) ցուցանէ, թէ ինքն է սեփհական յատուկ առաքել հեթանոսաց, ո՟պ պետրոս էր հրէից ։ ապա ոչ ա՟մ ժողովուրդք յանձնեցան պետրոսի, այլ հաւասարա՟պ և այլոց առաքելոց ։ Տասներ՟որդ՝ բանքս՝ արածեա՛ զոչխարս իմ, զ՟ի բառական նշանակութե՟ն իմացել՝ ընաւ ոչ երբեք ցուցանեն կա՟մ պարունակեն զհեղինակութի՟ և զիրաւունս ինչ գերագանց ք՟ զայն բանս ա՟մ առաքելոց պատուիրելոյ, առաքեմ զՁեզ, գնացէ՛ք, ուսուցէ՛ք, մկրտեցէ՛ք, ե՟ւն, վ՟կ նախնի վրդ՟պտք օգոստինոս ։ ամբրոսիոս ։ ոսկեբերան ։ բարսեղ ։ և այլ բազումք յայտնի գրեն թէ այդ բան, արածեա՛ զոչխարս իմ, համարի ասացեալ ա՟մ առաքելոց և յաջորդաց ն՟ց ։ Մետասներ՟որդ՝ վ՟ս նախընթաց և այսր ընաբանի ասեմք, թէ բանքս || դու ես վէմ, 'ի վ՟ր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, տաց քեզ զփականս արքայութե՟ երկնից ։ արածեա՛ զոչխարս իմ || յայտնի տեսակաւ փոխաբերութե՟ և այլաբանութի՟ են, զ՟ի ընդունելոյ և դիմախօսաց մերոց ։ իսկ արդ՝ ունիմք կանոն 'ի սրբազան ածաբանութե՟՝ թէ 'ի փոխաբերել և յառակախօս բանից ս՟ք գրոց չէ հնար ապացուցանել զմասն ինչ հաւատոյ ։ ապա այդ երկու ընաբանք ոչ նպաստեն պապականաց 'ի հաւատացուցանել զօդահնար միապետութի՟ ինչ 'ի ս՟բն պետրոս, ո՟պ և ա՟մ ողջամիտք կարեն դատել ըստ նախադրեալ լուծմանցդ ։

Ժարյանօղ ։

§. 32. Արդարև եմք ը՟ սիրելի եղբարցդ Ճշմարտասէր ուղղափառութի՟, բայց զայն լինիմք խոստովան թէ ոչ ինչ՟ու շատացան միտք մեր ը՟ ձերդ Ճշմարտութի՟, իբր զի մինչև ցարդ զառարկութ՟իս պապականաց լուծիք միայն, իսկ փաստ ինչ ը՟դդէմ միապետութե՟ ս՟բյն պետրոսի կարգադրութ՟ ո՟չ ցուցիք. վ՟յ աղաչեմք ուսուցէ՛ք մեզ, և ապացուցանէք թէ ս՟բ՟ն պետրոս ո՟չ էր միապետական գլուխ ամենայն քրիստոնէից ։

Պատասխանողք.

§. 33. Այն իսկ զի անխարդախ ճշմարտութ՟ ջրեցաք մինչև ցարդ զերկուս գլխաւոր փաստս ն՟ց 'ի վըկայութե՟ց ս՟բ գրոց, շատ էր ձեզ և ա՟մ պապականաց 'ի հաստատել զմեր ուղղութ՟իս. այլ զի ծարաւի էք արդարութե՟, և ցանկայք յաւելուլ 'ի հաւատս, յօժարակամ յանձն առնումք առ առաւել հաստատութ՟ի մաքուր դաւանութե՟ հայաստանեայցս եկեղեցւոյ, առաջի առնել ձեզ այլ ևս ութ փաստս յա՟ծաշունչ գրոց հաւաքելս, զորս լաւ լիցի կոչել Վճիռս, կամ Վճռաբանութիւնս, զի անստերլի բանիւք ս՟բ գրոց վճռել և հաստատեալ են 'ի խրատ մեր ։

Վճիռ Առաջին.

§. 34. Ա՟ծաշունչ գիրք յոչինչ տեղւոջ յայտնի բառիւ ցուցանեն, թէ ք՟ս տ՟ր՟ն մեր կարգեալ իցէ ըզս՟բ՟ն պետրոս միապետական գլուխ և կառավարիչ ա՟մ եկեղեցեաց, տալով նմա միայնոյ զբոլորական իրաւաբանութ՟ի 'ի վ՟ր ա՟մ քրիստոնէից. ապա ուրեմն չէ հնար հաւատալ թէ ս՟բ՟ն պետրոս իցէ միապետական գըլուխ ամենայն քրիստոնէից. Ապացուցանի վճիռս ։

Նախ փոխանակ մեր անթիւ բազմութ՟իք պապական վարդապետաց (մանաւանդ երեսապաշտ քծնօղն պելլարմինոս, գր. ա. յղ. ժղվոց. գլ. 17), ո՟պ թէ մաղելով զբոլոր նոր կտակարանն՝ հազիւ գտել են զվերոյգրեալ երկուս վկայութ՟իս ս՟բ գրոց, այն է մատթ. ժզ.

և յովհ․ ի՟ա ։ և ահա զերկոսին ևս անժխտելի փաստիւք ջրեցաք վերագոյն․ ցուցանելով թէ այն բանք ոչինչ եղանակաւ հաստատեն զբոլորական իրաւաբանութի՟ 'ի պետրոս , ապա ուրեմն ևն ։ Եւ թէ՟պ յիշատակելդ պելլարմինոս բաց յայդց բնաբանից յառաջ բերէ և զգրե՟լսն ղկս․ ժ՟բ․ 42 ։ ի՟բ․ 32․ ա՟ տիմոթ․ գ՟․ 15 ։ եփես․ դ՟․ 11 ։ ե՟․ 21 ։ բայց սակայն յետագայ ա՟ծաբանք նոցա , մանաւանդ յովհ , լաւնոյոս , նատալ , աղէքսանդր , ևն , արդէն խայտառակեցին զնա , ցուցանելով թէ այդ վկայուի՟ք բնաւ ինչ ոչ նըպաստեն կարծե՟ց իւրեանց․ մանաւանդ բանն ղկս․ ի՟բ․ 32․ որ բոլորովին հայի յանձն պետրոսի միայն , և ոչ 'ի յաջորդս ն՟ր․ ը՟ որում միաձայն մեկնեն զայն նախնի վրդպտք , տերտուղիանոս (յղ․ փախստ․ գլ․ 2) կիպրիանոս (թղթ․ ը՟) , իլարիոս (յղ․ երդ․ գր․ ա՟) բարսեղ (ճռ․ ի՟բ)․ ոսկեբերան (ճռ․ կզ․ և ը՟ 'ի մտթ)․ ամբրոսիոս ('ի խ՟գ․ սղմս)․ օգոստինոս , կիւրեղ աղէքսանդրացի , պապն լևոն ա՟ , թէոդորետոս․ թէոփիլակտոս , ալպերտ , ադուինացին , պոնավենդուրա , կայետանոս , և այլք բազումք․ ը՟ որս և ժողովքն կարթագինոյ և մելեվիդանոյ․ ևս և պօսիւէթ (պշտպ․ գղերց գաղղ․ գր․ ա՟․ գլ․ 7․ գր․ դ՟․ գլ․ 10․ և գր․ ժ․ գլ․ 3․ 4․ ևն)։ Իսկ արդ՝ եթէ ոչ մեք , և ոչ պապականք կարեմք գտանել 'ի նոր կտակարանի զփաստ ինչ 'ի հաստատութի՟ միապետութե՟ ս՟րյն պետրոսի , ապա ուրեմն ս՟բն պետրոս չէ միապետական գըլուխ եկեղեցւոյ․ զի զոր ինչ ոչ ուսուցանեն սուրբ գիրք․ չէ հնար ը՟ունել զայն իբր զմասն հաւատոյ ։

§․ 35․ Եկդ՝ առաքելն պօղոս թուելով զաստիճանս եկեղեցական քահանայապետութե՟ (ա՟ կորնթ․ ժբ․, 28=31. եփես. դ. 11) միշտ յառաջին տեղւոջ դասէ զառաքելսն, ասելով || Եւ զորս եդ Ած յեկեղեցւոջ այս են, նախ՝ զԱռաքեալս. Երկդ զմարգարէս. Երդ զվարդապետս. . . . Եւ նա ետ զոմանս Առաքեալս. զոմանս մարգարէս. եւն ||. Իսկ արդ եթէ պետրոս էր միապետական գլուխ առաքելոց և ամ քրիստոնէից, զի՞արդ ապա պօղոս ոչ յիշէ զնա յառաջին տեղւոջ, ասելով || Նախ՝ զգլուխն առաքելոց զպետրոս, Երկդ՝ զառաքելս, եւն ||. ապա այսու զի պօղոս երկիցս յառաջին տեղւոջ դնէ զգումարն առաքելոց և ոչ զպետրոս, յայտնի ուսուցանէ մեզ, մի՝ թէ ոչ պօղոս և ոչ այլ առաքելք կամ քրիստոնեայք ոչ ճանաչէին զպտրս իբր գլուխ ինքեանց, և միւս ևս՝ թէ պետրոս հաւասար էր այլոց առաքելոց, ըստորմ փակի 'ի թիւն նց, զորմէ յետոյ խօսեսցուք որոշակի։ Եւկ գաբրիէլ վրդպտ 'ի մեկնութե բանից (հտր. ա. եր. 924) բանս դասել 'ի ճշմարտութէ ասէ» առաջինք յեկեղեցւոջ իբրև գլուխ մարմնոյ են առաքելք. 'ի կազմութե եկեղեցւոյ առաջին իմանին նք» այլովքն հանդերձ. զորս արժան է ընթեռնուլ։

Երդ՝ սբն պօղոս 'ի թուղթս իւր վեց անգամ (ա. կորնթ. ժա. 3. եփես. ա. 22, դ. 15, ե. 23, կղս. ա. 18, բ. 19) կրկնէ թէ քս է գլուխ եկեղեցւոյ և ամ մարդոյ. բայց ընդէ՞ր գոնէ միանգամ ոչ յիշատակէ թէ բաց յաներևոյթ գլխոյ քսի, կայ ևս երևելի գլուխ քրիստոնէից, և այն է առաքելն պետրոս. Ապա ուրեմն եթէ սբն պօղոս ոչ ճանաչէր զայլ գլուխ եկեղեցւոյ, ուղիղ հետևութք զհետ գայ, թէ ոչ գոյր այդպիսի ոք կացուցեալ յաստուծոյ.

§. 36. Չրդ՝ նոյն սբն պօղոս գրէ (հռովմ. ժբ. 5)

թէ « բազումքս մի մարմին եմք 'ի քս՟, այլ Իւրաքանչիւր Միմեանց Անդամք եմք »։ յայսմ բնաբանի (ոպ՟ և այլուր ա՟ կորնթ. ժբ. եփես. ե. 30) զգուշալին քրիստոնէից նկատմամբ քս՟ի կոչէ [illegible]. իսկ զիւրաքանչիւր անհատս հաւատացելոց` 'ի մէջ առեալ ևս զնոյն իսկ զառաքե՟լս և զպետրոս իսկ (զի այժմ ուրեք յառաջին դէմն խօսի) բաղդատելով առ իրեարս կոչէ միմեանց անդամ, (ը՟ յոյն բնագրին [illegible] [illegible]. որ է, [illegible] [illegible] [illegible], [illegible], մինչ համեմատել առ միւսն եմք անդամ)։ բայց առ իմէ՞ ոչ ասէ թէ 'ի մէջ անդամոցս, կամ բաց յանդամոցս, կայ ևս գլուխ, այն է պետրոս ։ Ապա ուրեմն ը՟ ո՟ր գրոց` նոյն ինքն պետրոս նկատմամբ այլոց հաւատացելոց է անդամ ինչ նախապատիւ, կամ անդամակից այլոց քրիստոնէից, և ոչ գլուխ նոցա ։ զոր և ուսոյց ե՟ գրիգոր պապն ն՟ց յութ դարուն, յասելն « Առաքե՟լն պետրոս Ճշմարտիւ է ա-
» ռաջին անդամ սբյ՟ և ը՟հանրական եկեղեցւոյ ։ պօ-
» ղոս, անդրէաս, և յովհաննէս զի՞նչ այլ իցեն քան
» թէ գլուխք մասնաւոր ազգաց, և սակայն Ամենե-
» քեան են անդամք եկեղեցւոյ 'ի ներքոյ միոյ գլխոյն
» քս՟ի (գր. ե. թղթ. ժը)։

§. 37. Հինգե՟րդ` ա՟ծաշունչ գիրք վկայեն, թէ միայն քս՟ է պետ և իշխան հովուաց եկեղեցւոյ, ը՟ այնմ (ա՟ պետրոս ե. 3. ը՟ յոյն բնաբանին) Յորժամ երևեսցի այն պետն, կամ իշխանն հովուաց (յոյն. [illegible]), ընդունիջիք զանթառամ փառաց պսակն »։ Պարձեալ (եբրայ. ժգ. 20) Ա՟ծ խաղաղութե՟. որ եհան 'ի մեռելոց զայն մեծ հովիւն ոչխարաց . . . զտ՟ր մեր յս՟ »։ իսկ զայլ ոք յառաքելոց ոչ երբեք և ոչ ուրեք կոչեն պետ կամ իշխան հովուաց։ Իսկ արդ եթէ ս՟բ գիրք միայն զք՟ս կոչեն պետ Հովուաց , և ոչ զոք յառաքելոց , ապա ուրեմն ոչ Պետրոս և ոչ այլ առաքեալք կարեն ճշմարտութ՟ ասել միապետ կամ Հովուապետ ։ Ոչինչ զօրէ առարկելն պապականաց || Թէպէտ ս՟բ գիրք ոչ ասեն զայդ , բայց բազումք 'ի նախնի Հայրապետաց ասացին , Պտ՟ || վն՟ զի բազում անգամ յիշեցաք թէ արտաքոյ ա՟ծաշունչ գրոց չի՛ք մասն հաւատոյ · Բազում Հայրապետք և վրդ՟պետք 'ի նիւթս հաւատոյ ոչ են Պապականք , այլ միայն Հայք · որոց վկայութի թէ համաձայնի ս՟բ գրոց՝ ընդունելի է , իսկ թէ ոչ համաձայնի , անընդունելի է ամենեին ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ ·

§· 38· Ա՟ծաշունչ գիրք յայտնապէս ուսուցանեն , թէ ք՟ս տ՟ր մեր բացասական բանիւ արգել աշակերտաց իւրոց , զի մի՛ լիցի 'ի մէջ ն՟ց Մեծութ՟ն , Իշխողութ՟ն և Տիրողութ՟ն · ապա 'ի մէջ առաքելոց ոչ գոյր Իշխող և Տիրող այլոց , կամ գլուխ միապետական ։ Ապացուցանի վճիռս ։ Ընթեռնումք 'ի ս՟բ աւետարանս · թէ առաքեալք երիցս անգամ վիճեցին ը՟ միմեանս . թէ ո՞վ 'ի նոցանէ մեծ իցէ · նախ՝ զկնի այլակերպութե՟ն ք՟սի 'ի ճանապարհին , զոր պատմեն (Մտթ․ ԺԸ․ 1 · Մրկ․ Թ․ 32 · Ղկ․ Թ․ 46) և յայսմ նուագի չասաց ն՟ց յ՟ս · ընդէ՞ր վայրապար վիճէք , ո՞չ ապաքէն զպետրոս կացուցի ձեզ մեծ և գլուխ · այլ ը՟նհակառակն ասաց (մրկ․ թ) եթէ ոք 'ի ձէնջ կամի առաջին լինել ։ Տեսէ՛ք՝ եթէ ոք ինքնին կամի ասէ , և ոչ թէ , պետրոս է մեծն ձեր ։ Երկ՟ զկնի պահանջմանցն որդւոյն զեբեթեայ (մտթ․ ի․ 25 · մրկ․ ժ․ 42) ուր յ՟ս ասաց ցն՟ս || գիտէք զի իշխանք ազգաց Տիրեն ն՟ց , և մեծամեծքն Իշխեն ն՟ց · ոչ այնպ՟ իցէ և 'ի

Ձերում միջի, այլ որ կամիցի 'ի ձէնջ Մեծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ ||: Յորս յայտնապ՟ արգելու ն՟ց Տիրել և Իշխել 'ի վ՟ր միմեանց. և չասէ թէ պ՟տրս է մեծն 'ի ձեզ, այլ 'ի կամս ն՟ց թողու, որ կամիցի ասէ մեծ լինել, եւն: Արդ՝ զկնի վերջին ընթրեացն, զոր յիշէ միայն Ղկս (Ղկ. 24). որոց նոյնպէս պատասխանի ետ ք՟ս || Թագաւորք ազգաց Տիրեն ն՟ց, և որ Իշխենն ն՟ց բարերարք կոչին, այլ դուք ոչ այնպ՟, այլ որ մեծն է 'ի ձեզ (պատուով, ժամանակաւ, կարգաւ, հասակաւ, եւն) եղիցի իբրև զկրտսերըն ||. աստ եւս ոչ ասաց ք՟ս ցառաքեալսն, ահա պետրոս է ձեր մեծն և գլուխն զկնի իմ, այլ հրամայէ ն՟ց չլինել ը՟ օրինակի երկրաւոր Թ՟գրց Տիրող և Իշխող 'ի վերայ միմեանց:

§. 39. Յայսչափ բանից ս՟բ գրոց երկու ինչ իմանամք, նախ՝ թէ ք՟ս չունէր ամենևին կամք զմի ո՟ն յաշակերտացն կարգել գլուխ և իշխող այլոց, ապա թէ ոչ, երիցս անգամ հարցին ցնա աշակերտքն, և ը՟՞ր գէթ միանգամ ոչ յայտնէց ն՟ց, թէ պետրոս է մեծն 'ի միջի ձերում, այլ ը՟ հակառակն յայտնի արգելու ն՟ց չվարել Տէրութ՟ և Իշխողութ՟ 'ի վ՟ր միմեանց: Երկ՟՝ թէ աշակերտքն 'ի միջի իւրեանց բնաւ ոչ ունէին ինչ կարծիք վ՟ս գլխաւորութ՟ պետրոսի. զի թէ գիտէին ն՟ք զպետրոս մեծ 'ի միջի իւրեանց, վ՟ս է՞ր այնչափ գրգռէին և հակառակէին ընդ իրեարս, զոր աւետարանիչքն ծանր բանիւք ստորագրեն, || լուեալ տասանցն՝ Բարկացան 'ի վ՟ր երկուց եղբարցն . . . ը՟ միմեանս || վիճէին 'ի ճանապարհին թէ ով մեծ իցէ . . . Եղև հակառակութ՟ 'ի մէջ ն՟ց, թէ ով 'ի նոցանէ համարիցի մեծ ||. այս ամ՟ զրոյցք բացայայտ քա րողէն, թէ առաքեալքն ոչ ճանաչէին զպետրոս գե՛թ իբր մեծ քան զինքեանս, թող թէ միապետական գըլուխ և կառավարիչ ինքեանց ։

§· 40· Վայրապար ումանք 'ի պապականաց (ո՟պ կարդինալն Որսի, ևն) պատասխանեն ը՟դէմ վկայութեանցս, թէ ք՟ս արգելու միայն առաքելոց չԻշխել իբրև զթագաւորս հեթանոսաց, այն է, հպարտութ՟բ, անիրաւութ՟բ, դառնութ՟բ, բռնութ՟բ, ևն, իսկ զհայրական քաղցր իշխողութիւն ոչ արգելու, ևն ։ Փախուստ է այս վայրապար, իբր զի ք՟ս պարզ բառիւ Տիրել և Իշխել ասէ, և ոչ թէ Բռնանալ· Եւս թագաւորք կ՟մ իշխանք հեթանոսաց ոչ ա՟մքն բռնաւորք էին, այլ միշտ կային և կան իսկ 'ի ն՟ս բարի իշխանք, որք արդարութ՟բ և քաղցրութ՟բ հովուեն զհպ՟ակս, և թէ ք՟ս կամէր, կարէր պարզ ասել, թէ Բռնաւորութի և Գոռոզութի մի՛ լիցի 'ի ձեզ· բայց չասաց այդպէս· ուրեմն սոսկ զՏիրողութին և զԻշխողութին արգել ն՟ց բացայայտ բառիւ, զոր չէ հնար ուրանալ ։

§· 41· Զայսպիսի անկարգ բաղձանս մեծութե և տիրողութե՝ այլուր ևս արգել ք՟ս աշակերտաց իւրոց· յասելն ‖ Բայց դուք մի՛ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ, և ա՟մքին դուք եղբարք էք ։ Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է հայր, որ յերկինս է ։ Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր ք՟ս է· և մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր, որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի (Մտթ· Իգ· 8=12) ։ Յայսոսիկ բանս յայտ է թէ ոչ այնչափ զլոկ անուանակոչութին արգելու ք՟ս, որ՟չ զներքին բաղձանս փառասիրութե և իշխողութե· որում 'ի սկզբան օրինակ բերէ ն՟ց զփարիսեցիս, որք նստէին յաթոռն Մովսիսի, ուստի կամէր ասել ցաշակերտսն, Դուք մի՛ նմանեսջիք իշխանասիրութեան փարիսեցւոց, սահմանելով ձեզ առանձին անուն մեծութե՟. մի՛ կոչիցիք հայր, հեղինակ, նախահայր ցեղի, առաջնորդ բազմութե՟ (Է. Եբր. Ղ. 21. ո՞չ ասելն, պօղոսեան, ապօղոսեան, կեփայեան, ա՟ Կորնթ. ա. 12 ; Գ. 4. 22. Լն). Նաև մի՛ կոչիցիք Գլուխ եկեղեցւոյ, Իշխող ժողովրդեան. Գահաւոր յեկեղեցւոջ. Լն ‖ ; Պատճառ մեկնութեան է, զի աստանօր 'ի 10, տան յունական բառն Քաթէղիտէ՛, որ առ մեզ եդեալ է Առաջին, Ճշգրիտ նշանակէ ուղեցոյց, առաջնորդ ճանապարհի, (տե՛ս. բառօրին. բօլլուկս. Դ. 95), իսկ առ տեղեաւս առ առաքեալս ասացեալ՝ նշանակէ Իշխող կամ Գլուխ եկեղեցւոյ, [illegible] տէր յեկեղեցւոջ. և այս հաստատի յաւելուածովքն փրկչին ‖ զի մի է ձեր քաթիղիդիսն, ի՟ Ք՟ս ‖. վ՟ն զի այս դիմադրութ՟ի բանի 'ի մէջ բերէ զայս անժխտելի իմաստ ‖ Դուք ո՛ աշակերտք իմ, զմասնաւոր անձն ոք մի՛ կոչէք քաթիղիդիս, ի՟ իշխան եկեղեցւոյ, գլուխ քրիստոնէից, տէր միապետող, առաջին առաջնորդ բազմութե՟ հաւատացելոց. վ՟ն զի այդպիսի քաթիդիս ձեր է միայն Ք՟ս . . . մի՛ կոչիցիք յերկրի այնպիսի քաթիղիդիս, այնպիսի գլուխ և առաջնորդ, որպ՟ Ք՟ս է . . . 'ի վ՟ր երկրի՝ բայց 'ի Ք՟ս է զայլ ոք մի՛ կոչէք քաթիղիդիս իբր տեղակալ կ՟մ երեսփոխան Ք՟սի . . . քաթիղիդիսն ձեր Ք՟ս ո՛չ ունի իւր փոխանորդ նման իւրեան, Լն ‖ . և առ 'ի տպաւորել զայս իմաստ 'ի սիրտս առաքելոց, դիտմամբ յաւելու անդ Ք՟ս զբանն ‖ զի դուք ամ՟ք եղբարք էք ‖, ուրանօր բառն Եղբայր, զի է անուն առնչական, ցուցանէ մի՝ զբազմութիւն, զի մի որդին ո՛չ կոչի եղբայր, այլ բազ՟

որդիք միոյ Հօր՝ նկատմամբ իւրերաց անուանին եղբարք. և միւս՝ զհաւատալու՟ին, զի ամ՟ եղբարք ունին զհաւատար իրաւունս 'ի վ՟ր ժառանգու՟ե ծնողացն, և չկարէ ոք 'ի ն՟ա լինել տէր և իշխան եղբօրն. ուստի 'ի բովանդակ բնաբանիս զայս ինչ հրամայէ ք՟ս, զի մի՛ ոք յաշակերտացն իշխեսցէ 'ի վ՟ր երկրի անուանիլ նախահայր բազմու՟ե, գլուխ և միակ առաջնորդ եկեղեցւոյ, միապետ քրիստոնէից, տեղակալ ք՟սի, ևն, այլ զի եղբայրանման բազմու՟թ և հաւասարաչափ իրաւամբք՝ առանց բարձրացուցանելոյ զանձն 'ի վ՟ր եղբօրն զօրէն փարիսեցւոց, վարեսցին ը՟ միմեանս և ը՟ ժողովրդեան խոնարհու՟թ իբր որդիք միոյ Հօր ա՟յ և ք՟ի։

§. 42. Յայսց պատուիրանաց ք՟սի ուսեալ նոյն ինքն՝ ս՟բն պետրոս բացայայտ բանիւ արգելու ամ՟ եպիսկոպոսաց Տիրել և Իշխել 'ի վ՟ր ժողովրդեան, յասելն ը՟ յոյն բնագրին || Արածեցէ՛ք զհօտ ա՟յ, որ
» առ ձեզ կայ, պարապելով վերատեսչու՟ե ն՟ր. . . ոչ
» իբրև Տիրողք վիճակին, այլ օրինակ լինելով հօտին (ա. պետր. ե. 2)։ Ըստ այսմ ուսուցանէ և պօղոս վ՟ն իւր ասելով ցկորնթացիս թէ մեք ոչ կարեմք Տիրել և Իշխել ձեզ. ը՟ այնմ || Ոչ թէ եթէ Տիրեմք ձեզ հաւատովքս, այլ գործակից եմք շնորհացդ ձերոց (բ. կորնթ. ա. 23)։ Ապա ուրեմն առաքեալք և եպիսկոպոսունք չունին հրաման և ոչ իսկ Տիրելոյ կամ Իշխելոյ, թող թէ միապետ լինելոյ։

Մ՟սն Երրորդ.

§. 43. Ա՟ծաշունչ գիրք ուսուցանեն, թէ ք՟ս տ՟ն մեր առ հասարակ երկոտասան առաքելոց իւրոց առանց խտրանաց ետ զհաւաս՟րզօր իշխանու՟թ 'ի վ՟ր ժողովրդոց. ապա ուրեմն 'ի մէջ առաքելոց ոչ պետրոս և ո՛չ այլ ոք գերազանցե՟լ էր իրաւաբանու՟բ քան զայլս ։ Ապացուցանի ։ Ըստ օրէնսգիտաց՝ իրաւաբանութ՟ին տուեալ լինի յիշխանէն ընտրու՟բ , կացուցմամբ , առաքմամբ , և յանձնարարու՟բ պաշտօնին ։ Իսկ արդ՝ գտանեմք 'ի ս՟բ գիրս , թէ ք՟ս ո՛չ զպետրոս միայն , այլ զերկոտասան մարդիկ ընտրեաց , առաքեաց , և յանձն արար ն՟ց զպաշտօն իւր , ո՟պ յայտնի քարոզեն աւետարանիչք ․ Ը՟ այնմ (Մրկ ․ Գ ․ 13) ելանէ 'ի լեառն , և կոչէ առ ինքն , զորս ինքն կամեցաւ , և արար Երկոտասանս զի իցեն զնովաւ ‖ Եւ , Ո՟պ առաքեաց զիս Հայր իմ , և ես առաքեմ զՁեզ , Գնացէ՛ք , Աշակերտեցէ՛ք , Մկրտեցէ՛ք , Ուսուցէ՛ք , Քարոզեցէ՛ք , ես ընդ Ձեզ եմ զա՟մ աւուրս , ես աղաչեցից զՀայր , և այլ մխիթարիչ տացէ Ձեզ , զի ը՟ Ձեզ բնակեսցի 'ի յաւիտեան . . . մխիթարիչն Հոգին ս՟բ , նա ուսուսցէ Ձեզ զա՟մ , և յիշեցուսցէ Ձեզ ․ զայս Արասջի՛ք առ իմոյ յիշատակի , փչեաց 'ի Նոսա և ասէ , Առէ՛ք Հոգի ս՟բ , որոց Թողուցուք զմեղս , զորոց Ունիցիք ‖ ։ Այսչափ անստելի բա՟նքն յոգնակի բաւիւք ասացե՟լք՝ երկու ինչ ուսուցանեն մեզ գլխաւորաբար ։

§․ 44․ Նախ՝ թէ ք՟ս տ՟ր մեր 'ի կամիլն իւր համբառնալ յերկինս՝ կացոյց յաշխարհի փոխանակ իւր ո՛չ զմի մարդ ո՟մն , այլ զերկոտասան մարդիկ ․ ո՛չ միում ումեք , այլ երկոտ՟նից յանձն արար հիմնարկել և կառավարել զեկեղեցի իւր ի՟ս զգումարն հաւատացելոց , վ՟ն երկոտասան առաքե՟լքն միօրինակ ենթակայ են իրաւաբանու՟ն ․ և կոչին երեսփոխանք , տեղակալք , փոխանորդք , աթոռակալք , պատգամաւորք ք՟ի (Բ ․ Կորնթ ․ Ե ․ 20 ․ Եփես ․ Զ ․ 20) ։

Ասէ՝ թէ երկոտասան առաքելոցն ետ ք՟ս զհաւասարաչափ իրաւաբանութի՟ · առանց նախադասելոյ զմի ոմն՝ այլում · զի ամ՟յն միօրինակ հրամայէ մկրտել, քարոզել · եւն, ոչ ՚ի բաց առնու զայս կամ զայն, ոչ մի չէ թէ այս կա՟մ այն ոք ՚ի ձեռն ունիցի զառաւելագոյն իշխանութի՟ քարոզելոյ, հովուելոյ, եւն · այլ ամ՟յն հաւասար տայ զմիեւնոյն իշխանութի՟ ։ Զայս առաւել եւս հաստատէ բանն պօղոսի (Գղտ · Բ · 7=10) · ուր ցուցանէ, թէ որ յաջողեաց պետրոսի յառաքելութի՟ թլփատութե՟ն, յաջողեաց և ինձ ՚ի հեթանոսս, եւն ։

Վ՟ն հաւասար չափոյ իշխանութե՟ առաքելոցն և յաջորդաց ն՟ց եպ՟սց, բզ՟մ ինչ գրեցին կիպրիանոս (Գր · ՃԶ · Յովհ՟է ԷԿԶ) ամբրոսիոս · հերոնիմոս · նատաղիս աղեքսանդր · պետրոս կոլլեդ · թոմազինոս · պետրոս տեմարքայ · դուռնէլլի · հերիքօվդ · պապն գելասիոս · նիկողոս տէքուզա · տոմինիկոս սոդոս · պելլարմինոս · (Գր · Դ · ՃԶ · Հյրպտ · Հռոմ՟ · ԳԼ · 23) կարդին, քուզանոս · ուէպուֆոս · վանեսբէն · կիպերդ · պարդել · և այլ բազումք ՚ի նոյն իսկ պապականաց ։

§· 45· Առ ՚ի հաստատել զհաւասար լինելն իրաւաբանութե՟ ՚ի մէջ առաքելոց, ունիմք և այլ բզ՟մ փաստըս ՚ի ս՟բ գիրս, որոց Առաջինն է այն, զի ս՟բն պետրոս միով թուահամարով հաշուե՟լ լինի ը՟ այլ առաքեալս (ո՟պ մաթ · Ժ · 2 ։ մրկ · Գ · 14 ։ Զ · 7 ։ ղկս · Զ · 13 ։ յովհ · Զ ։ 71) ։ Այլ արդ՝ ը՟ փիլիսոփայից թիւն է բազմութի՟ միութե՟ց նոյնատեսակ իրաց կամ անհատից · ը՟որում այլատեսակ անհատք ոչ թուին միով համարով, և ոչ կացուցանեն զմի բազմապատկեալ թիւ, ո՟պ երեք մ՟դկ և երեք լերինք ոչ կացուցանեն զթիւն վեց, զի այլասեռ իրք են · ապա այսու զի պետրոս ասի առաջինն 'ի մէջ առաքելոց (մատթ. ժ. 2), հարկաւ մակաբերի թէ ոչ է միապետական գլուխ ն՟ց, և ոչ ունի զիրաւաբանու՟ն 'ի վ՟ր ն՟ց։ ապա թէ ոչ, չէր կարելի միաթիւ հաշուել զնա ը՟ այլոց, ո՟րպ կայսրն կ՟մ թագաւորն ոչինչ օրինակաւ 'ի մի թիւ մտանէ ը՟ հպատակաց իւրոց. ոչ իշխօղն ը՟ իշխեալոցն, և ոչ տէրն ը՟ ծառայից իւրոց. զի ոչ են դասակից կ՟մ նոյնասեռք 'ի բանի թուարկու՟ե։ Առ այս վերաբերի և լինելն պետրոսի անդամ եկեղեցւոյ (զորմէ 'ի վերոյ § . 36) զի գլուխն ոչ համարի 'ի թուոյ անդամոց։

Ակ՟դ՝ որ ինչ արտօնութիւնք համարին պ՟տրսի, նոյնք ընծային և այլոց առաքելոց, ք՟ր. պ՟տրս կոչեցաւ վէմ, բայց և միւս առաքեալքն կոչին դովլին անուամբ (եփես. բ. 20։ յայտն. իա. 14). պետրոսի ասացաւ, արածեա զոչխարս իմ, բայց և այլոց առաքելոց ասաց ք՟ս, երթայք առ ոչխարս կորուսեալս տանն ի՟ղի . . . երթայք յաշխարհ ա՟մ և քարոզեցէք զաւետ՟րնն ա՟մ արարածոց։ պետրոսի խոստացեալ եղեն փականք կապելոյ և արձակելոյ, բայց իրօք աւանդեցան ա՟մ առաքելոց։ Ապա ուրեմն պետրոս չունի ինչ գերազանցու՟ի քան զայլս բաց յառաւելու՟են պատուոյ։

§. 46. Ար՟րդ՝ տ՟րն պօղոս գրէ (ը՟ յուն. բ կորնթ. ժա. 5. ժբ. 11) բայց ես այս՟պ համարիմ թէ ոչինչ իւիք պակաս իցեմ ք՟ զծայրագոյն առաքեալսն ||. ուր ասելովն, ք՟ զծայրագոյն առաքելովն, յայտ է թէ իմանայ և զպետրոս, իսկ ասելովն ոչինչ իւիք պակաս, 'ի մէջ առնու և զհեղինակու՟ին. ապա թէ ոչ, սուտ լինէր ասելն ը՟հանուր բացասականաւ ոչինչ իւիք, վ՟ս վայրապար ծեքաբանէ գաբրիէլ վ՟րդպտ 'ի մեկնու՟են (հտ. է. էր. 224)» թէ աստանօր բանքն են յաղագս աւետարանական վրդ՟պտուե՟ և պաշտամանց , և ոչ թէ յաղագս պետական իշխանուե՟ և հովուուե՟ եկեղեցւոյ || ։ Այս է սովորական արուեստ պապական վրդ՟պտի, ծխով մնոտի բանից հեղձուցանել զաշս ընթերցողաց, զի մի՛ տեսցեն զճշմարտուի՟ աւետարանին ․ զ՟ որում և իմաստունս այս առնէ , բայց 'ի նանիր ․ զի պարտաւորի բուն բանիւք բերանոյ իւրոյ , իբր զի սա ինքն գաբրիէլ վրդ՟պտ ը՟ունի այլուր 'ի նոյն գիրսն (հտ ․ ա՟ ․ եր ․ 581 ․ 924) թէ || առաքելական իշխանուե՟ երկոքին այս պաշտամունք աւանդեցան 'ի քս՟է , աշակերտել զհեթանոսս , և մկրտել զնս՟ ․ բայց նախ է աշակերտելն, ոչ միայն կարգաւ , այլ և մեծուե՟ ․ ․ ․ քարոզել , ուսուցանել է առաջին և սեպհական պաշտօն առաքելոց ․ ․ ․ սեպհական իշխանուի՟ և պաշտօն առաքելոց է քարոզել , հիմնարկել և կառավարել զեկեղեցիս || ․ Իսկ արդ՝ եթէ սեփհական և առաջին իշխանուի՟ առաքելոյ է քարոզել , աւետարանել , վրդ՟պտել և պաշտել զխորհուրդս , և եթէ » աստանօր բանք պօղոսի են յաղագս աւետարանական վրդ՟պտուե՟ և պաշտամանց , զորմէ վկայէ պօղոս թէ յայդոսիկ չէ իւիք պակաս ք՟ զպետրոս , ապա ուրեմն ուղիղ մակաբերի թէ ն՟քն պօղոս (զ՟ ը՟ունելոյ գաբրիէլի իսկ) 'ի սեփհական իշխանուի՟ս և յառաջին պաշտամունս առաքելոյ ոչինչ իւիք պակաս է ք՟ զպետրոս ․ ընդէ՞ր է ապա մնոտի բացատուին ն՟ր յաւելուածովքն || ոչ թէ յաղագս պետական իշխանուե՟ և հովուուե՟ եկեղեցւոյ || վ՟ զի ասելն հովուեսցես եկեղեցւոյ , նոյն է ամենևին ը՟ բանիցս , քարոզել , աւետարանել , վարդապետել , հիմնարկել և կառավարել զեկեղեցիս ․ զի այդ իսկ է հովուել փոխաբանուե՟ ասացել ․ Իսկ այն զի ասէ ' պետրոսեան եկեղեցին, (զոր և կամի լռելեայն ընծայել պետրոսի և յաջորդաց նր), է նոյն իսկ բան, զոր մեք մինչև ցայժմ կոչեցաք Փաւղոսեան եկեղեցին, Փաւղոսեան, իմ. Բայց ոչ իմանամք թէ որպիսի փաստիւք կարէ գաբրիէլ վրդպտ կմ ընկերք նր հաստատել, թէ կայցէ յեկեղեցւոջ պետրոսեան եկեղեցին կմ Փաւղոսեանն. զի ածաշունչ մատեանք ոչ ուսուցանեն մեզ զայդպիսի ինչ, և բուն իսկ վրդպտք լատինաց ջատագովք միապետութե պապին՝ դեռ ոչ կարացին ապացուցանել 'ի սբ գրոց. թող զայն զի բաժանեալ են 'ի մէջ իւրեանց 'ի զանազան հերձուածս (secta). իսկ պատուելի Մխիթարեան հարքն՝ աշակերտք լատին վրդպտց՝ բանիւ և գրով քարոզեն այն թէ սբն պետրոս և յաջորդք նր հյրպտքն հռովմայ են միապետական գլուխ եկեղեցւոյ, || սակայն մինչև ցայսօր ոչ ապացուցին 'ի սբ գրոց կարգաբան փաստիւք (systematice) թէ արդարև կայցէ իրաւ այդպիսի ինչ յեկեղեցւոջ. միայն սա ինքն գաբրիէլ վրդպտ 'ի գիրսն իւր Հայելի ուղղափառութեան, ոպ գիտէքդ, վիճէ ընդ սրմաքեշ մանուելի վն այսր նիւթոյ, բայց անդ ևս ոչ թէ ածաբանօրէն խօսի ոպ նիւթն պահանջէր, այլ խեղկատակութբ խաղ առնէ պէսպ ամօթալի փախստեամբ, որ անվայել էր առն իմաստնոյ: Իսկ ընդէմ վերոյդրէլ ըստ քմաց մեկնութե գաբրիէլ վրդպտիդ՝ լաւ լիցի մեզ դիմադրել զբանս ամբրոսիոսի նոյայն եկեղեցւոյ երևելի սբյ, որ ('ի գիրսն յղ. հող. սբյ. դր. է) ասէ || Եւ ոչ պօղոս ստորին է քն զպետրոս. . . ոչ է անարժան պօղոս, ասեմ, ընկերութե առաքելոց, ընդ առաջնոյն (կմ գլխաւորին) քաջ հաւասարի, ոչ միում ումեք է ստորին. զի որ ոչ ճանաչէ զինքն անհաւատար (գոլ այլոց), առնէ հաւատար (այլոց) ։ Եթէ յուշի ունէր իմաստունն գաբրիէլ զայս բան ամբրոսիոսի, ոչ արդեօք գրէր զոր գրեացն ։

§· 47· Չ՟րդ՝ անսուտ բերանն քս՟ի զամ՟ առաքեալս կոչէ ԵՂԲԱՐՔ · ը՟ այնմ ‖ Մ՛ի է ձեր ուսուցիչ · և ամ՟ենքին դուք ԵՂԲԱՐՔ էք (ՄՏԹ · ԻԳ · 8) · Նա՝ առանձինն խօսելով քս՟ ը՟ պետրոսի ասաց նմա ‖ Եւ դու երբեմն դարձցիս (յուրացուցէդ) և հաստատեսցես զԵՂԲԱՐՍ քո (ՂԿ · ԻԲ · 32) · սովին մտօք գրեաց և յովհաննէս ‖ Եւ ել բանս այս յԵՂԲԱՐՍ (ԻԱ · 23) ։ Իսկ արդ՝ եթէ ամ՟ առաքելք անխտիր · և 'ի մասնաւորի պետրոս իսկ որոշակի, ԵՂԲԱՅՐ են և կոչին 'ի ս՟ր գրոց, ապա ուրեմն հաւասար են ը՟ միմեանս 'ի բանի իրաւանց, և չի՛ք ոք 'ի մէջ ն՟ց միապետ և գլուխ այլոց, կամ հպատակ և ստորադրել, այլ առ առաւելն՝ միայն ԱՆԴՐԷԱՍ և յառաջնու՟ն ժամանակի ը՟ ծննդեան, կամ առաւելու՟ն պատուոյ և կարգի 'ի սակս արտաքին պատահմանց ինչ, ը՟ որոյ և պետրոս լինի երեց կամ աւագ եղբայր 'ի դասու անդ առաքելոց, և ոչ թէ միապետական գլուխ և իշխող նոցա ։

§· 48· Հինգե՟րդ՝ գրէ սրբազանն պօղոս ‖ Յորժամ եկն կեփաս յանտիոք, ը՟դէմ դարձայ նմա, ք՟զի գո՛դ իբրև ստգտանել իսկ էր . . . և կեղծաւորեցան ը՟ նմա և այլ հրէայքն . . . իբրև տեսի թէ ոչ ուղիղ գնան, ասեմ ցկեփաս առաջի ամ՟ն ‖ · յորս տեսանի, զի զպետրոս կոչէ ՍՏԳՏԱՆԵԱԼ (ը՟ յունին, ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ) ԿԵՂԾԱՒՈՐԵԱԼ, ՈՉ ՈՒՂԻՂ ԳՆԱՑՈՂ · յոյր սակս յանդիմանեաց և ուղղեաց զնա ։ Իսկ արդ՝ յանդիմանել հրապարակաւ և ուղղել զսխալանս՝ պատշաճի վերնագունին, կամ գէթ հաւասարին, և ոչ ստորինագունին, զի ոչ ուրեք ընթերցեալ լինի թէ հպատակն կամ ստրուկն յանդիմանեալ իցէ զտ՟ր և զիշխօղ իւր, ապա յայտնէ իրաւամբք մակաբերի թէ պետրոս ոչ էր գլուխ այլոց առաքելոց, և թէ պօղոս ամ՟իւ հաւասար էր յիշխանութեան ընդ պետրոսի։

Առ՟կ Չորրորդ·

§. 49. Ա՟ծաշունչ գիրք ուսուցանեն, թէ քս՟ ինքնին անձամբ անմիջա՟պ ետ առաքելոց իւրոց զիրաւաբանութի՟ (մտթ. ի՟ը. 12=20։ մրկ. ժ՟զ. 15։ յովհ. ի՟. 21=24) և ոչ թէ պետրոս ետ ն՟ց, կ՟մ գոնէ միջնորդութ՟ պետրոսի ետ քս՟. ապա ուրեմն պետրոս ոչ է միապետական գլուխ այլոց առաքելոց։

Ապացուցանի։ Ըստ սահմանելոյն Պետաւիոսի (յղ. Եկղցին· Իշխնթ· Գր· Գ· Գլ· ԺԵ) նա կոչի և է միապետ, որ ունի զծայրագոյն և զվերջին կարողութի՟ն առաջնորդելոյ, կառավարելոյ և հրամայելոյ, յորմէ հեղինակութի՟ն բղխէ առ ամ՟ ատենակալս և դատաւորս, բաժանի առ իւրաքանչիւրսն, և վերստին առ միապետն իբրու առ աղբիւր վերադառնայ նոյն հեղինակութի՟ն։ Իսկ արդ՝ եթէ ո՟ք կարծեաց պապականաց՝ պետրոս էր միապետական գլուխ այլոց առաքելոց, ո՟չ է՞ր ապա քս՟ ոչ առաքեաց զաշակերտսն առ պետրոս ասելով, Գնացէ՛ք առ պետրոս, նա ձեզ տայ զիրաւաբանութի՟, զի նա է գլուխ ձեր, եւ՟ս, կ՟մ գոնէ զիարդ միջնորդութ՟ պետրոսի ոչ ետ քս՟ զհեղինակութի՟ն։ Ապա ուրեմն այսու զի քս՟ անձամբ անմիջա՟պ ետ թէ մետասանիցն և թէ պետրոսի զամ՟ իրաւաբանութի՟, յասելն, որ՟պ առաքեաց զիս հայր, և ես նոյն՟պ առաքեմ զձեզ, եւ՟ս, ուղիղ զհետ գայ թէ միայն քս՟ է թէ՛ երևելի թէ՛ աներևոյթ գլուխ և միապետ առաքելոց և այլոց քրիստոնէից · և ո՛չ թէ պետրոս ։

§· 50· ՕՃշմարտութ՟իս մեր հաստատեն սբ՟ գիրք և յայլ բզմ՟ տեղիս · Այսպ՟ պօղոս վկայէ վն՟ իւր (Գղտ՟· Ա՟· 1) թէ ո՛չ 'ի մարդկանէ ընկալաւ զպաշտօն առաքելութ՟ն, յասելն || պօղոս առաքեալ ո՛չ 'ի մրդկնէ և ո՛չ 'ի ձեռն մարդոյ (ապա և, ո՛չ 'ի պետրոսէ, ո՛չ 'ի ձեռն պետրոսի), այլ 'ի ձեռն յսի քսի և այ՟ հօր || ։ և ո՛չ այսչափ միայն, այլ և վն՟ այլոց եպս՟ց 'ի նմանէ կամ յայլ առաքելոց ձեռնադրելոց վկայէ, թէ հոգին սբ՟ եդ զնս՟ յեկեղեցւոջ տուել նց՟ զպաշտօն հովուութ՟ն, զի ըս՟ պատմելոյն ղուկայ (Գրծ· Ի՟ · 28) կոչեալ պօղոս զեպսունս եփեսոսի՝ ասաց ցնս՟ ըս՟ յոյն բնագրին ||, զգո՛յշ կացէք անձանց և ամ՟ հօտին, յորում զձեզ հոգին Սբ՟ կացոյց եպս՟ս առ 'ի հովուել զեկեղեցին այ՟ ։ || Տեսէ՛ք՝ զի չասէ պօղոս, թէ պետրոս կարգեաց զձեզ եպս՟, պետրոս հրամայեաց ձեզ հովուել զեկեղեցին · այլ թէ ած՟ կմ՟ հոգին սբ՟ ետ ձեզ զպաշտօն եպսուե՟ և հովուուե՟ ։ Ապա ուրեմն ո՛չ առաքեալքն և ո՛չ յաջորդք նց՟ եպսունք առին զիրաւունս և զիշխանութի 'ի պետրոսէ, և ո՛չ պետրոս է միապետ կմ՟ գլուխ առաքելոց, զի ո՟պ ցուցաւ 'ի վերոյ, յիսուէ միապետին է բաշխել ստորին պաշտօնակալաց զամենայն իրաւունս ։

ԱՌԿ— ՀԻՆԳԵՐՈՐԴ ·

§· 51· Ածաշունչ գիրք ուսուցանեն, թէ բոլորական առարկային իրաւաբանութի՝ յանձնեցաւ 'ի քսէ միայն ժողովոյն առաքելոց, և ո՛չ պետրոսի միայնոյ, ապա ուրեմն սբ՟ն պետրոս ո՛չ ունելով միայնակ զբոլորական առարկային իրաւաբանութի, ո՛չ է միապետ նկատմամբ բոլոր եկեղեցւոյն և քրիստոնէից ։

Ապացուցանի ։ Բոլորական առարկայ իրաւաբանութեան՝ յայտ է, թէ է միայն գումարն մրդ՟կն, կմ՟ ամ՟ մրդ՟կ բնակեալք յամ՟ տեղիս ը՟հանուր աշխարհի, որոց կարելի էր առաքելոց հովուել ։ Իսկ արդ՝ զայս գումար մրդ՟կային յանձն առար քս՟ միայն դասուն առաքելոց (յորոց միջի էր և պետրոս) յասելն ցնս՟ յետ յարութե՟ն ‖ երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց (յայտ է, բանականաց) . . . աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս ‖ . ուր 'ի տալ առանձինն զիրաւաբանութի՟ ցպետրոս՝ ոչ յանձն առար նմա զայս գումար . զի ոչ ասաց նմա, արածեա՛ զամենայն ոչխարս իմ, զամենայն գառինս իմ ։ Ապա ուրեմն պետրոս միայնակ և զատաբար առեալ՝ ոչ ունի զբոլորական առարկայն . իսկ հաւաքա՟պ և ը՟ այլոց առաքելոց նկատեալ, ունի զբոլորական առարկայն . և յայսմանէ անսխալ մակաբերեմք, թէ որովհետև պետրոս զատաբար ոչ ունի միայնակ զբոլոր առարկայն իրաւաբանութե՟, վս՟կ ոչ է և ոչ կարէ անուանիլ միապետ կմ՟ մի միայն գլուխ և տէր ամենայն քրիստոնէից ։

§. 52. Ո՞չ քս՟ զգումարն հաւատացելոց յանձնեաց դասուն առաքելոց 'ի միասնաւորի, նոյնպ՟ առաքեալք նր՟ ուսե՟լք 'ի նմանէ և 'ի հոգւոյն սբյ՟, զնոյն գումար իբր զմի միայն առարկայ՝ յանձն առարին յաջորդաց իւրեանց եպ՟ց, որ ապացուցանի 'ի բանից պօղոսի ցեպ՟ունս, ը՟ յոյն բնագրին ‖ Զգոյշ կացէ՛ք անձանց ձերոց և ամ՟ հօտին, յորում զձեզ հոգին սբ՟ կացոյց Ե՟պիս առ 'ի հովուել զԵկեղեցին ած՟ն (Գրծ. Ի. 28) ։ Ահա յայսմ բանի յանձն լինի եպ՟ց ամենայն հօտն, որ նշանակէ զգումարն ժողովրդականաց, և նոյն հօտն ստորև կոչի ԵԿԵՂԵՑԻ , որ ցուցանէ աստանօր զնոյն ժողովուրդն , որ այն ինքն է ուսանօղ եկեղեցին . ապա որովհետև բոլոր առաքեալն իբրաւաբանութ՟ , իմ՟ Ամենայն հօտն և Եկեղեցին ուսանօղ՝ ոչ է յանձնել միայնակ հոգաբարձութ՟ պետրոսի և կարծեցեալ յաջորդաց նորա հայրապետացն հռովմայ , այլ ամ՟ եպ՟ց իբրև յաջորդաց առաքելոց , ուրեմն ոչ պետրոս և ոչ յաջորդք ն՟ր կարեն լինել միապետական գլուխ քրիստոնէից ։

Առ ուղիղ իմանալ զայս վճիռ՝ հարկ է յուշ ածել, թէ գումարն հաւատացելոց թէ՛ ըստ տեսակին և թէ ըստ անհատիցն յանձն եղև հոգացողութ՟ դասուն առաքելոց , և զօրութ՟ այսր՝ որևիցէ առաքեալ կամ եպ՟ս պարտաւոր է հոգ տանել՝ որչափ զօրէ՝ ամենայն անհատ քրիստոնէից ։

ՎՃԻՌ ՎԵՑԵՐՈՐԴ .

§. 53. Ա՟ծաշունչ գիրք ուսուցանեն , թէ ս՟բն պետրոս 'ի բովանդակ կեանս իւր ոչ երբէք 'ի կիր էառ զմիապետական իշխանութ՟ 'ի վ՟ր առաքելոց և քրիստոնէից , ապա ուրեմն ոչ ունէր զայնպիսի իշխանութ՟, և ոչ էր միապետական գլուխ ։

Ապացուցանի վճիռս ։ Բովանդակ կեանք պետրոսի յետ համբարձմանն ք՟սի , պարունակի 'ի պատմութ՟ գործոց առաքելոց , և 'ի թուղթս նոցա ։ իսկ արդ՝ քննելով զբոլոր եղանակ հովուութ՟ ն՟ր , ոչ ուրեք գտանեմք թէ նա վարեալ իցէ զօրէն միապետի, ապա եա՟ ։ Փոքր նախադասութ՟իս ապացուցանի ։ Պատկեր միապետի նկարի ըստ իմիք 'ի բանսն (Ղւկ. է. 8) քան զի և ես այր մի եմ . . . ունիմ ընդ ինև զինուորս , ասեմ սմա ե՛րթ , և երթայ . և այլում թէ ե՛կ , և գայ · և ծառայի իմում թէ արա՛ զայս, և առնէ ||: իսկ արդ՝ զայսպիսի վարչութ՟ի ոչ երբեք 'ի կիր էառ պետրոս · քանզի Նախ՝ ոչ միայնակ ինքնիշխանօրէն ընտրեաց զմատաթի (Գրծ · ա : 15=26) այլ հաւանութ՟ այլոց առաքելոց || և Կացուցին (առաքեալքն) երկուս · · · · և կացեալ յաղօթս Ասեն · · · Ետուն վիճակս նոցա ||: Այս յոգնակի բառք յայտ առնեն, զի թէպէտ պետրոս ը՟որում նախապատիւ անդամ ժողովոյն՝ առաջի արար զընտրութ՟ին, բայց ոչ ինքն միայնակ ընտրեաց, այլ զոյգ ը՟ այլոց առաքելոց, և այս կարի քաջ ցուցանէ թէ պետրոս չէր միապետական գլուխ նոցա · զի ոչ այդ՟պ գործէ միապետն: Եկ՟դ՝ առ 'ի ընտրել զեօթն սր՟կւգունս (Գրծց · զ · 2=7) ոչ միայնակ պետրոս, այլ || Երկոտասանքն Կոչեցին զբազմութ՟ի աշակերտացն և Ասեն, ոչ է հաճոյ Մեզ (և ո՛չ, պետրոսի միայնոյ) Թողուլ զբանն · · · զորս Կացուսցուք 'ի վ՟ր պիտոյից · · · և Եդին 'ի վ՟ր ն՟ց ձեռս || · տե՛ս՝ ոչ պետրոս միայնակ գործէ, այլ ժողովն առաքելոց:

§· 54· Եր՟դ՝ կարևոր առիթ և քաջադէպ ժամանակ գործածելոյն պետրոսի զմիապետութ՟ի իւր (թէ ունէր զայն), է դիպուածն, զոր պատմէ ղկ՟ս (Գրծց· ժե· 2=30)· յորում արժան է մանր կրկտելով ճանաչել նախ՝ թէ վ՟ր թլփատելոյ կամ ոչ, զքրիստոնեայս, եղև հակառակութ՟ի այնչափ սաստիկ, զի հեղինակութ՟ի պօղոսի և բառնաբայ՝ ոչ կարաց լուծանել զխնդիրն, այլ հարկ եղև ն՟ց դիմել առ վերջին վճռատու դատաւորն, որում երկոքեան կողմունք ունէին հնազանդիլ: բայց ո՞վ էր այս վերջին դատաւոր, ա՛րդեօք՝ պետրո՞ս, ոչ բնաւ· այլ || Եդին Ելանել առ Առաքեալսն և Երիցունս յէ՟մ վ՟ն խնդրոյս այսորիկ ||·

Տե՛ս՝ ոչ եկին առ պետրոս իբրև առ միապետական գլուխ իւրեանց, այլ առ առաքելսն, և երիցունս ։ Եկտ՝ դեսպանքս իբրև հասին յեհմ, ընկալել եղեն ոչ ՚ի պետրոսէ, այլ || Եկեղեցւոյն և յառաքելոց և յերիցանց || ։ Ահա գեղեցիկ աստիճան և կարգ սրբազան քահանայպետուե, աւանդել յածաշունչ գրոց · նախ՝ Եկեղեցի (որ գումար կամ ժողովն առաքելոց և երիցց) · ապա անհատ առաքեալք զատաբար առեալք · և ապա երիցունք ։ Երդ ոչ ասէ մզ գիրն թէ պետրոս վճռեաց զայն խնդիր, այլ || Ժողովեցան Առաքեալք և երիցունք տեսանել վն բանիս այսորիկ ||, բայց զի՞ պիտոյ էր ժողով հաւաքել, եթէ պետրոս էր գլուխ և միապետ իշխան առաքելոց ։ Գրդ՝ առաքեալքն ոչ խնդրոյն ծանեան զճշմարտուն իւրին, այլ || յետ բազում խնդիր (որ վիճմունք) լինելոյ || պետրոս իբր նախապատիւ անդամ ժողովոյն յոտն եկաց ՚ի պատիւ այլոց առաքելոց. և նախ առաջին ասաց զկարծիս իւր ։ Զկնի պետրոսի սկսաւ խօսել յակոբոս, որ էր Թեմակալ եպս առաջին եկեղեցւոյն յեհմ · ոչ ասաց, թէ պետրոս խօսեցաւ, վճռեալ է ամ ինչ, արասցուք ըստ հաւանի նր, այլ թէ || Շմաւոն պատմեաց որպ յառաջագոյն ած այց արար ԺԵ || ապա սբ գրոց վկայուբ հաստատեալ զկարծիս պետրոսի, ասաց || վն և ես իրաւունս համարիմ (ըստ յունին, ես դատեմ) մի՛ նեղել զայնոսիկ ԺԵ || · և ուսոյց առաւել քան զպետրոս, թէ զի՞նչ պարտ իցէ առնել հուսկ ապա. որ գրել Թուղթ յանտիոք, հրամայել խորշիլ ՚ի կերակրոյ կռոց || ԺԵ ։ Հինգերդ՝ յայնժամ (որ յետ վճռելոյն յակոբայ, և ոչ պետրոսի) հաճոյ թուեցաւ առաքելոց և երիցանց և ամ եկեղեցւոյն, առա քել յանտիոք զնուիրակս և զվճիռ ժողովոյն ։ Վեցերորդ՝ վճիռն ժողովոյն ոչ գրեցաւ անուամբ պետրոսի միայն, այլ յանուն ամ՟ առաքելոց և երիցանց, նա՝ և եղբարց իսկ. յասելն || Առաքեալք և երիցունք և եղբարք . . . եղբարցդ որ 'ի հեթանոսաց էք, ողջոյն . . . հաճոյ թուեցաւ Մ՝եզ միաբան ժողովելոցս արս ընտրել յղել առ ձեզ . . . զի հաճոյ թուեցաւ հոգւոյն ս՟բյ և Մ՝եզ մի' ինչ աւելի բեռն դնել ձեզ || ժե ։

§. 55. Յայսմ վայրի արժան է հարցանել ցպապականս, եթէ ստոյգ միապետ էր պետրոս, ընդէ՞ր նշան ինչ բնաւ ոչ եցոյց յայսմ ժողովի վ՟ս գլուխ լինելոյն իւրոյ, ընդէ՞ր զվճիռն ոչ գրեաց միայնակ յանուն իւր, ընդէ՞ր միւս առաքեալքն ոչ գրեցին || Հաճոյ թուեցաւ պետրոսի և մեզ . . . հաճոյ թուեցաւ հոգւոյն ս՟բյ, պետրոսի գլխոյ մերոյ, և մեզ մշակաց նորա, ժե || . ընդէ՞ր զկնի հոգւոյն ս՟բյ անմիջապ՟ դնեն ոչ զանունն պետրոսի, այլ զիւրեանցն, ասելով || Հոգւոյն ս՟բյ և Մ՝եզ || . զի՞արդ համարձակեցան հոգւով ս՟բվ լցեալ առաքեալքն հաւասարել զինքեանս ը՟ պետրոսի, այս է՝ ը՟ կեղծեաց պապականաց, զհպատակս ը՟ միապետին, զծառայսն ը՟ տեառն, զիշխեցեալս ը՟ իշխանին, ժե ։ Ո՞չ ապաքէն յայսց գործողու՟ց ուղիղ մակաբերել կարեն ամ՟ լուսաւորեալ միտք, թէ ոչ առաքեալքն ճանաչէին զպետրոս իբր միապետական գլուխ իւրեանց, և ոչ ինքն պետրոս այնպիսի ճանաչէր զանձն իւր . վ՟ս զի այդ եղանակ գործողու՟է լուիլու քարոզէ, թէ ամ՟ առաքեալք անխտիր ունէին զհաւասարաչափ հեղինակու՟ի 'ի վ՟ր ժողովրդեանն, և թէ իրաւարանու՟ի ն՟ց ոչ ինչ իւիք կախեալ էր զպետրոսէ 'ի դէպս ինչ ։

§. 56. Չորրորդ՝ որն Պօղոս խօսելով զայսմ ճանապարհորդութենէ իւրմէ (Գաղ. Բ. 1=16) և զժողովոյս, ասէ, Թէ ինքն գնաց յԵրուսաղէմ առ 'ի համարս տալ՝ ո՛չ միապետին Պետրոսի, այլ դասուն առաքելոց կամ գըլխաւորաց նոցա, ըստ այսմ || ապա յետ ամաց չորեքտասանից միւսանգամ ելի յԵրուսաղէմ . . . և զգացուցի նոցա զաւետարանն, զոր քարոզէի 'ի հեթանոսս, առանձինն (զգացուցի) Այնոցիկ՝ որ Կարծեալքն էին (իմա՛ գըլխաւոր, նախապատիւ էին)։ Արդ՝ ընդէ՞ր Պօղոս համար տայ և ջատագովէ զինքն յատենի առաքելոց, և ո՛չ Պետրոսի միայնոյ՝ Թէ նա էր գլուխ և միապետական իշխան առաքելոց, կամ գոնէ զիա՞րդ ո՛չ յիշէ որոշակի զՊետրոս. վասն է՞ր յոգնակի բանիւ խօսի, զգացուցի Նոցա, Այնոցիկ՝ որք Կարծեալք Գլխաւորք էին, 'ի մի շար դասելով զգլուխն ընդ ոտից։

§. 57. Հինգերորդ՝ յայսմ տեղւոջ գրէ Պօղոս || Իբրև գիտացին զշնորհսն, որ տուեալ էին ինձ, Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս, որ Կարծեալք Սիւնքն էին, ձեռն ետուն հաւանութեան ||։ Այլ արդ՝ եթէ Պետրոս էր գլուխ և միապետ այլոց, ընդէ՞ր Պօղոս սիւն կոչելով հաւասարէ զնա ընդ այլոց, ընդէ՞ր զՅակոբոս դնէ յառաջին տեղւոջ, և զԿեփաս՝ որ է Պետրոս, դնէ յերկրորդ տեղւոջ. վասն է՞ր ո՛չ զատանէ զՊետրոս՝ յայլոց. ո՞չ ապաքէն յայսմ բանէ արժան է յաւէտ մակաբերել, Թէ Յակոբոս՝ որ և զվերջին վճիռ ժողովոյն ետ (Գործ. ԺԵ. 19), իցէ նախապատիւ քան զՊետրոս։ Ապա ուրեմն եթէ Յակոբոս և Յովհաննէս հաւասարապէս սիւնք կոչին 'ի Պօղոսէ, ասելի է Թէ չէին ինչ պակաս քան զՊետրոս, եթէ չիցեն աւելի։

§. 58. Վեցերորդ՝ գրեալ է 'ի գործս առաքելոց

» (Ը. 14)։ Իբրև լուան որ յԵ՟մ առաքե՟ն . . . ,
» թէ և ի Սամարիայ ընկալան զբանն այ՟, առաքե-
» ցին առ ն՟ս զՊետրոս և զՅովհաննէս, որք իջե՟լ կա-
» ցին յաղօթս ի վ՟ր ն՟ց ||։ Այս բան յայտնա՟պ քա-
րոզէ, թէ գումարն առաքելոց ունէր իրաւունս ի վ՟ր
Պետրոսի, զի առաքե՟ց զնա. քանզի ը՟ս ամ՟ օրէնսգի-
տաց Առաքելն է գործ հեղինակութե՟ և իրաւաբանութե՟.
և սեպհական է միայն իշխանին. իսկ Առաքիլն է պաշ-
տօն և նշան հպատակի ստորադրելոյ. և որովհետև
դասն առաքելոց առաքե՟ց զՊետրոս, ուղիղ հետևի
թէ Պետրոս անկե՟լ էր ի ներքոյ իրաւաբանութե՟ դա-
սուն առաքելոց, իբրև մասն ի ներքոյ բոլորին, կ՟մ
իբր անդամ ը՟ս գլխով, զոր և կանխաւ ծանոյց երևե-
լին Գերսոն, յասել՟ն (յղ. եկեղց. իշխան. Տրակտ. Ժ՟)
Առաքեալքն ի Սամարիա առաքեցին զՊետրոս և զՅով-
հաննէս իբրև զիշխեցե՟լ հպատակս եկեղեցւոյ ||։ Ապա
Պետրոս ոչ էր գլուխ և իշխան առաքելոց, այլ ան-
դամ ժողովոյ ն՟ց, և հպատակ իրաւաբանութե՟ դասուն
առաքելոց, զոր անժխտելի ցուցանէ բնաբանս ։

§. 59. Եօթներո՟րդ՝ ինքն ն՟քն Պետրոս կոչէ զան-
ձըն ոչ գլուխ, այլ երիցակից (Ա՟. Պետ. Ե. 1) Զերի-
ցունս այսուհետև աղաչեմ իբրև երէցակից և զվկայս
չարչարանաց Ք՟ի ||։ Իսկ արդ՝ բառն երէցակից կամ
ը՟ս յունին [illegible] նշանակէ՝ ընկեր երիցանց.
կցորդ յերիցութե։ Նոյնն ի սկզբան երկուց թղթոցն
կոչէ զինքն լոկ առաքեալ, և ոչ առաքելապետ, ոչ գը-
լուխ կ՟մ միապետ. և ոչ եպ՟ս հռոմայ։ Այլ արդ՝
եթէ ունէր նա ի ք՟նէ զայնպիսի ծայրագոյն հեղինա-
կութե՟, հարկ էր նմա գոնէ միանգամ յիշել զայն առ
ի ուսուցանել գէթ նորադ՟րձ քրիստոնէից. և չար-

ժէ ինչ պատասխանին ոմանց պապականաց առ այս. ո̃պ թէ պետրոս վ̃ն պարկեշտութե̃ ոչ յիշէ զայն, այլ թագուցանէ: Սուտ է այս պատրուակ. զի թէ զառաքելու̃ի իւր ոչ ծածկէ, այլ պարծանօք գրէ, նոյնպէս և զգլխաւորու̃ի իւր հարկ էր դոնէ միանգամ յիշել կմ̃ ՚ի կիր առնուլ. այլ արդ՝ ոչ յիշէ և ոչ վարէ զմիապետու̃ի, ապա ոչ ունէր զայն և ոչ էր միապետ:

§. 60. Ութե̃րդ՝ եթէ ի̃քն պետրոս և կարծեալ յաջորդք նո̃ր հայրապետքն հռովմայ՝ էին միապետ և գլուխ ամ̃ եկեղեցե̃ց, հարկ էր անուանել զնո̃ ընդհանրական կամ̃ տիեզերական առաքե̃լ և եպս: Իսկ արդ՝ երբ յովհաննէս պտ̃րիարգ կոստանդնուպօլսոյ ՚ի վախճան զ̃ դարուն՝ սահմանեց ինքեան զտիտղոսդ ընդհանրական եպ̃ս, այսմ՝ անչափ հակառակ կացին պեղագիոս և մեծն գրիգոր պապք, ասելով թէ այդ տիտղոս ոչ ումեք եպ̃սաց պատշաճի երբէք, և որոշակի՝ պապն գրիգոր յայտնի գրեաց, թէ անունդ այդ բոլորովին է || հայհոյական, թունաւոր, անոտի, ամբարտաւան, պիղծ, յիմարական, դերաքն̃ական, դիւական, Լի̃բ(Գր. Գ̃. Թղթ. 32. 34: Գր. Է. Թղթ. 4. 24. 30. 36. Լի̃բ). զորմէ և առ եւսեբիոս եպ̃սն թեսաղոնիկոյ գրեաց գանգատելով այսպ̃ || Ծանիցէ ասէ եղբայրութի̃ քո,
» թէ յովհաննէս ոմ̃ն առաջնորդ եկեղեցւոյն կոստանդ-
» նուպօլսոյ, հակառակ այ̃, հակառակ խաղաղութե̃ եկե-
» ղեցւոյ, ՚ի նախատինս և յարհամարհանս ամ̃ քահա-
» նայից՝ էանց զսահման համեստութե̃ և հեզութե̃, և ՚ի
» սիւնհոդոսի՝ զամբարտաւան և զժանտախտալից անու-
» նըդ՝ ընդհանրական, այս է, տիեզերական (եպ̃սի) ապօ-
» րինաբ̃ անձին գրաւեաց. զոր Ճանաչելով բարեյի-
» շատակ նախընթացն մեր պեղագիոս, զամ̃ զգործս

» այնր ժողովոյ . . . բոլորովին ոչինչ համարեցաւ (Գր · Է · Թղթ · 69) ։ Որ և կամելով փաստիւք հաստատել զբան իւր, ասէ, վ՟ն զի || Գլխաւորն մ՟ր առաքելոց պետրոս . . . ոչ երբէք կոչեցաւ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ
» ԱՌԱՔԵԱԼ . . . Բոլորում մ՟ր առաքելք 'ի ներքոյ միոյ
» ընդհանրական գլխոյն ք՟ի էին իբր անդամք ընդհանուր եկեղեցւոյ || ։ Ահա վկայու՟ն նոյն իսկ հայրապետին հռովմայ, որ յայտնի բառիւք ուսուցանէ, թէ ոչ պետրոս, ոչ ինքն · և ոչ այլ ոք յեպ՟ոյ կարող է կոչել ՏԻԵԶԵՐԱԿԱՆ կամ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ եպ՟ս · որ է ասել, միապետական տ՟ր կմ՟ գլուխ ։ Երանի՝ թէ հետագայ եպ՟ոսունք հռովմայ ունէին զայսպիսի պարկեշտութե՟ ոգի մեծին գրիգորի պապին · զի գոնէ ոչ առաւել էին զխաբեբայ միսիոնարս (կ՟մ զնուիրակս) իւրեանց 'ի հայաստան, 'ի շրջել զմիամիտ ազգս մեր 'ի հաւատս իւրեանց, որ չէ ինչ լաւագոյն քան զմերս ։

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ ·

§· 61· Ա՟ծաշունչ գիրք ուսուցանեն թէ ս՟րն պետրոս ունէր միայն զգերազանցութի՟ և զյառաջնութի՟ (primatus) պատուոյ, կարգի, և ժամանակի, 'ի մէջ այլոց առաքելոց ։

Ապացուցանի 'ի ս՟բ գրոց ։ Նախ՝ աւետարանիչք 'ի թուելն զառաքեալս, զպետրոս յոլովակի դնեն յառաջին տեղւոջ (մտթ · Ժ · 2 ։ մրկ · Գ · 16 · ղկս · Զ · 14 ։ գործ · Ա · 13) · և այս ցուցանէ միայն զառաւել պատուելի լինելն ն՟ր, և ոչ այլ ինչ · որ հաստատի և այն ուստի, զի նոյն աւետարանիչք զյուդա իսկարիովտացի միշտ դնեն 'ի վերջին տեղւոջ (տե՛ս 'ի վերոյիշեալ բանսդ աւետարանչաց), յայտ է թէ վ՟ն անպատիւ և անարգ լինելոյն ։ Բայց և զայն գիտեք, զի ս՟բ գիրք ոչ միշտ նախադասեն զանունն պետրոսի . այլ բազում ուրեք եւս դնեն յեկդ՟ , կմ՟ 'ի վերջին տեղւոջ . որպ՟ տեսանի ա՟ . կորնթ . թ . 5 ։ գաղ . բ՟ . 9 ։ մրկ . ժզ՟ . 7 ։ յովհ . ա՟ . 44 ։ ա՟ կորնթ . գ՟ . 22 . եւ յայլ տեղիս ։ Աւկդ՟՝ պատմէ մեզ յովհաննէս (ա՟ . 42) թէ քս՟ փոխեաց զանունն սիմոնի , բայց եւ այս պատիւ ոչ է յատուկ ինչ պետրոսի , զի քս՟ եւ զանուանս որդւոցն զեբեդեայ փոխեաց (Մրկ . գ . 17) , կոչելով զնս՟ բանէրգէս՛ , որ է որդիք որոտման . թող զի նմ՟ առաքեալք հաւասարպ՟ վէմ կոչին , որպ՟ տեսաք 'ի վերոյ ։ Արդ՟՝ հնար է իբր զնշանս պատուոյ համարել եւ զայնըս , զի քս՟ վս՟ իւր եւ վս՟ պետրոսի վճարեց զսատերն (մտթ . ժէ . 26) . զի 'ի ժողովս առաքելոց պտրս՟ առաջին ասէր զկարծիս իւր (մտթ . ժզ՟ . 16 ։ գործ . ա՟ . 15 ։ ժե . 7) . զի նախ առաջին քարոզելով դարձոյց զհրեայս (գործ . բ՟ . 14) եւ զհեթանոսս (ժ . 11) , եւ այլ սոյնպիսիք ։

§. 62. Բայց յայտնի են 'ի սբ՟ գրոց եւ պակասութիք՟ սոյն պետրոսի , ի՟ր զի սատանայ կոչեցաւ 'ի քն՟է (Մտթ . ժզ . 23) որպ՟ եւ յուդայ (յովհ՟ . զ . 71) . զի նա միայն երիցս ուրացաւ զքս՟ . եւ զի յանդիմանեցաւ 'ի պօղոսէ իբր կեղծաւոր (գաղ . բ՟) ։ Ոմանք 'ի պապականաց եւ զայն պատճառեն , թէ քս՟ վս՟ պետրոսի աղօթեաց (ղկ՟ . իբ՟ . 32) . բայց այս չէ ինչ յատկութի՟ պետրոսի , զի քս՟ վս՟ ամ՟ աշակերտացն , մանաւանդ վս՟ ամ՟ հաւատացելոց իւրոց յերկար աղօթեաց առ հայր իւր (յովհ՟ . ժէ . 9=26) ։ իսկ այն առանձին աղօթելն վս՟ պետրոսի էր միայն վս՟ ապագայ ուրացութե՟ նր՟ , զի մի՛ իսպառ պակասեսցի հաւատք նր՟ , որպ՟ խօսեցաք վերագոյն (§ . 34 .) . Օ այսպիսի առաւելութի՟ պատուոյ սրբոյն պետրոսի նկատելով նախնի վրդ՟պք Հայոց, յունաց, առաւել և նոյն իսկ լատինաց, ուրեք երբեք չափազանցութ՟ խօսեցան զնմանէ. բայց 'ի մեկնել զայս չի՛ք ինչ դժուարութ՟ի. իբր զի այն բանք վրդ՟պց՝ որք համաձայնին ա՟ծաշունչ գրոց, ընդունելի են ամ՟ցն. իսկ որք արտաքոյ ա՟ծաշնչին են, պատուով դրողացն Թաղելի են ը՟ս նմ՟։ Արժան է յաւելուլ աստանօր զծանր վկայութ՟ի ամբրոսիոսի երևելի վրդ՟պտի լատինաց, որ (ԳՐ. ՅԸ. ՏՓ ԵՂ. ԳԼ. 4) զյառաջնութ՟ին պետրոսի յայտնապէս կոչէ ‖ Առաջնութ՟ի դաւանութե, և ոչ թէ պատուոյ. առաջնութ՟ի հաւատոյ, և ոչ թէ կարգի ‖.

ԱՃԷՆ ՍՕՐՆԷՐՈՐԴ.

§. 63. Ա՟ծաշունչ գիրք ուսուցանեն, թէ բայց 'ի պետրոսէ և այլք ոմանք յառաքելոց ունէին ինչ ինչ գերազանցութ՟իս և յատուկ արտօնութ՟իս առաւել քան զայլ առաքեալս։

Ապացուցանի։ Այսպ՟ նախ՝ առաջին պտուղ առաքելոց եղև անդրէաս (յովհ. ա. 40), յոր սակս անուանի՝ ՆԱԽԱԿՈՉ. որ և զեղբայր իւր զպետրոս եած յաշակերտութ՟ի ք՟սի. զորմէ այսպ՟ գրէ Հեզիկիոս պատրիարգ երեմ՟այ 'ի Ե դարուն. ‖ Առաջին փող անդրեաս, առաջին ծնունդ առաքելոց, սիւն եկեղեցւոյ, վէմ յառաջ ք՟ զվէմն (այս զպետրոս), հիմն՝ հիմանց (պետրոսի) (ՓՈՏԻՆՈՍ, ՀՕՏՈՅ, ՏՓԷՆ, 269)։ Իսկ հերոնիմոս (ԸՆԴ. ՅՈՎ. ԻԷ) զանդրէաս և զպետրոս կոչէ ԻՇԽԱՆՍ ԱՌԱՔԵԼՈՑ։ Նոյնպ՟ և շարականն մեր (ՆԱՒԱՆ. ՆՈ) զպետրոս և զանդրէաս միօրինակ կոչէ, հարազատ ԱԷՏ հաւատոյ։

Աշակերտ՝ միայն ս՟բն յովհաննէս կոչի ԱՇԱԿԵՐՏԷԱԼ ՍԻՐԵԼԻ ՏԵԱՌՆ (ՅՈՎՀ. ԺԳ. ԻԳ). որ միայն անկաւ զլանջօքն յ՟սի (ԺԳ. 25). որ միայն համարեցաւ անմահ (ԻԳ. 23).

հաւասար պետրոսի և յակոբու սիւն կոչի (գղտ․ բ)․ և կիւրեղ աղեքսանդրացի (ընդ․ նեստոր) կոչէ զնա հաւասար պետրոսի ։

§․ 64․ Արդ՝ սրբն պօղոս միայն անմիջապ ՚ի քնէ յերկնից կոչեցաւ յառաքելութն (գրծց․ թ), միայն յերրորդ յերկինս յափշտակեցաւ (բ․ կորնթ․ ժբ)․ միայն հեթանոսաց առաքեալ կոչեցաւ (հռովմ․ ժա ։ գրծց, ի․ գղտ․ բ)․ առաւել քն զայլ առաքեալս վաստակեցաւ (ա կորնթ․ ժե․ բ․ կորնթ․ ժա)․ կալաւ զհոգս Ամենայն եկեղեցեաց (բ կորնթ․ ժա), և առաւել քան զայլ առաքեալս գրեաց զբզմ թուղթս, զորս և գովութբ յիշատակէ ինքն պետրոս (բ․ պետ․ գ․ 15)․ վսյ որ խոստովանելոյն պելլարմինոսի իսկ (յղ․ հյրպտ․ հռովմ․ գր․ ա․ գլ․ բ) պօղոս առաւել յոյժ օգտակար եղև եկեղեցւոյ, քն թէ պետրոս ։ Ամն իրի բզմք ՚ի նախնի վրդպտց, իրենէոս, եպիփան, եւն, ուսուցանեն թէ պետրոս և պօղոս յամի հաւասար էին յիշխանութե, և վսն այսր պատճառի՝ ամ գիրք նախնեաց մերոց զպօղոս հաւասարելով ըն պետրոսի՝ միօրինակ կոչեն զնս գլխաւոր առաքելոց, որպս յամ ձեռագիր հին շարականս, ՚ի տօնացոյցս և յայսմաւուրս մեր տեսանեմք, յորս ասի ‖ կանոն գլխաւոր առաքելոյն պետրոսի և պօղոսի ․․․ տօն գլխաւոր առաքելոցն պետրոսի և պօղոսի, եւն ‖․ թէպ և գաբրիէլ վրդպտ (ճշմր․ ղբին․ եր․ 130) խորհրդով արտաքսէ զբառսդ գլխաւոր առաքելոց, ընդէմ հաւատարմութե դնէ լոկ. Անուն պետրոսի և պօղոսի ։ Բայց ընկեր նր մկրտիչ վրդպտ դնէ ներգործութբ զայն բառս (վարք ՚սրբց․ հտ․ ժ․ եր․ 286 ։ հտ․ գ․ եր․ 509) ։ Նշանաւոր է և այն, զի ամ հարքն մեր զպետրոս և զպօղոս հաւասարելով միօրինակ կոչեն՝ ամոլք հաւատոյ, Սիոնք եկեղեցւոյ (ՂՐԷՆ․ ՀԱՆՐՆ․ ՃԲ)։

§. 65. Զրդ՝ յակոբոս ալփեան կոչեցաւ եղբայր Տ̃ն (ԳՂՏ․ Ա․ 19) և սեան հաւասար պետրոսի (ԳՂՏ․ Բ)․ եղև առաջին եպ̃ս առաջին եկեղեցւոյն Եր̃մայ, որ մայր և ծնող է այլ ամ̃ եկեղեցեաց (ԳՐԾՑ․ ԻԱ․ 18)․ և նախ առաջին յօրինեց զվճիռ կարևոր ժողովոյն առաքելոց (ԳՐԾՑ․ ԺԵ․ 13) ուր և անուն սր̃ յառաջ դնի ք̃ զպետրոսին․ վ̃սյ և պետրոս յազատելն 'ի բանտէ՝ գնաց 'ի տուն մարիամու, և յղեաց պատմել յակոբու զազատումն իւր (ԳՐԾՑ․ ԺԲ․ 17)․ յայս սակս յիշեալ Հեգիսիպոս զՅԱԿՈԲՈՍ կոչէ, Իշխան քահանայից, և առաքելոց ՊՈՂՈՍ (յուն․ էքսարխոն) ՏՊԷՆՏՐ․ ՀՈ~ՏՈՅ․ ՏՊ․ 275)․ յորմէ թերևս առեալ և նախնիք մեր, ասեն զնմանէ 'ի շարականի (ՀԱՆՐՆ․ ՃԷ), սա եղև գլուխ առաքելոց սր̃ց ||․ Իսկ 'ի սոցանէ յայտնի են յաւետարանի գերազանցութիւնք երից առաքելոցն, ի̃յ պետրոսի․ յովհաննու և եղբօր նր̃ յակոբու, որք միայն արժանացան պայծառութեան ք̃ն 'ի թափօր լերինն, և տագնապի նր̃ 'ի պարտիզին գեթսեմանի, որոց վ̃ս յովհան դամասկացին կոչէ զսոսա, Պարագլուխք առաքելոց (ՔԱՐՈԶ․ ՎԵՐԱՓՈԽՄ)․ Արդ՝ ո̃պ այս ամ̃ անձնական արտօնութիւնք պօղոսի, յովհաննու և այլոց ոչ ապացուցանեն թէ սոքա էին միապետական գլուխք, և միւս առաքեալք՝ մշակք դ̃ց․ Ը̃ս նմին օրինակի և այն արտօնութիւնք պետրոսի ոչ իւիք հաստատեն, թէ նա միայն էր գլուխ և միապետ այլոց առաքելոց, կա̃մ թէ միւս առաքեալք էին դեսպանք կա̃մ նուիրակք նր̃․ այլ այսչափ միայն ուսուցանեն, թէ 'ի մէջ առաքելոց ոմանք առաւել պատուելի էին ք̃ զայլս վասն անձնական գերազանցութեանց ինչ ։

Մ՝ջէ— Ո-րերորդ ․

§. 66. Ա՟ծաշունչ գիրք ուսուցանեն , թէ Ք՟ս հաստատեաց վ՟ն եկեղեցւոյ իւրոյ զկառավարութի՟ն ժողովական , և ոչ զիշխանապետական . ապա ուրեմն 'ի մէջ եկեղեցւոյ ոչ գոյ միապետ , այլ միայն ժողովն կամ գումարն առաքելոց և յաջորդաց ն՟ց եպ՟սց եղբայրս կամ ընկերութ՟ կառավարէ զժողովուրդն յամ՟ հոգևոր պիտոյսն ։ Ապացուցանի ։ Նախ՝ յունական բառն էկլէզիէ որում է անուն հաւաքական , 'ի հայ լեզուի նշանակէ զգումարն հաւատացողաց 'ի Ք՟ս , կամ զամ՟ քրիստոնեայս հաւաքապէս առեալս ։ Զայս մարդակոյտ բազմութի՟ն ս՟բ գիրք նմանեցուցանեն այլևայլ իրաց կբ . Նախ՝ մարմնոյ 'ի բազում անդամոց բաղկացելոյ որոյ գլուխ է Ք՟ս (եփես . ե . 23 . 30 ։ կողոս . ա . 18 . բ . 19 ։ ա կորնթ . ժբ . 15) . Եկ՟դ՝ հօտի 'ի բզմ՟ ոչխարաց խմբելոյ (յովհ . ժ . 1=28 . մտթ . թ . 36 ։ իե . 32 ։ իզ . 3) . յորոց միջի ոմանք են հովիւք (եփես . դ 11 ։ յովհ . իա . 16) . բայց իշխան և պետ ամ՟ հովուաց է միայն Ք՟ս (եբրայ . ժգ . 20 . ա . պ՟տրս . ե . 4) ։ Եր՟դ՝ տան և տաճարի 'ի բազում վիմաց կառուցելոյ (եբր . գ . 6 ։ բ կորնթ . զ . 16 ։ ա տիմ . գ . 15 ։ ա պ՟տրս . բ . 5 ։ դ . 17) . յորում ամ՟ քրիստոնեայք կոչին վէմ (ա պ՟տրս . բ . 5) . իսկ գլուխ անկեան և վէմ անկիւնակալ է միայն Ք՟ս (եսայ . իը . 16 ։ ա պ՟տրս . բ . 6) ։ Չր՟դ՝ եկեղեցին կմ՟ քրիստոնեայքն կոչին եւս հարսն Ք՟ի (յովհ . գ . 29 ։ յայտ . ժթ . 7 ։ սղմ . խդ . 12 ։ ովս . բ . 16 ։ եփես . ե . 32) թագաւորութի՟ Ք՟ի (սղմ . բ . 6 ։ երեմ . իգ . 5 ։ յովհ ա . 49) ։ այլ և սիւն և հաստատութի՟ ճշմարտութե՟ (ա . տիմ .

գ. 15), և այլ նմանք ։ Յայս ամ՟ նմանաբանութ՟ին տեսանի ակներև, զի գումարն քրիստոնէից բաժանի յերկուս դասս, որոց առաջինն է հասարակ ժողովուրդն իբր ոչխարք ք՟ի, և սա ը՟ կանխաւ (§. 27) ասացելոցս կոչի՝ ուսանող եկեղեցի ։ Իսկ եկ՟ղ. դասն, յորում են հովիւք, պաշտօնեայք, սպասաւորք, մանաւանդ՝ ուսուցիչ եկեղեցի, որոց միմիայն գործ է հոգտանիլ հոգևոր պիտոյից ոչխարաց, հովուել և արածել զն՟ս, բանալ և փակել ն՟ց (§. 20) զդուռն արքայութ՟ե, տնտեսել, առաջնորդել, միով բանիւ՝ կառավարել զժղվ՟րդն միայն 'ի հոգևորս և յանձայինս ։

§. 67. Բայց որովհետև յաշխարհայինս երրեակ ազգ կառավարութ՟ե են, այ՟ միապետական, ազնուապետական, և ռամկապետական, խնդրի՝ թէ ո՞ր յայդցանէ պատշաճեսցի ուսուցիչ եկեղեցւոյ ։ Պապականք ո՟պ լուայքդ՝ ամ՟ ջանիւ զուն գործեն հաստատել թէ եկեղեցին ք՟ի կառավարի միապետական օրինակաւ, բայց դոքա կ՟մ խաբին, կ՟մ խաբեն զանզգոյշս ։ Մեք քննելով զա՟ծաշունչ գիրս ակներև տեսանեմք, թէ միապետական կառավարութ՟ին բնաւ ոչինչ օրինակաւ պատշաճի եկեղեցւոյ, այլ ը՟ հակառակն միայն Ժողովական կ՟մ Ընկերական (collegiale) կառավարութ՟ին յարմարի պաշտօնէից եկեղեցւոյ, և զայս ապացուցանեմք նախ՝ 'ի սահմանելոյն ք՟ի. երկ՟դ՝ 'ի գործածութ՟է առաքելոց. և եր՟ր՝ 'ի գործածութ՟է կ՟մ յօրինակաց նախնի եկեղեցւոյն 'ի բազում դարս քրիստոնէութեան ։

§. 68. Եւ նախ՝ թէ արդարև ք՟ս սահմանեաց, զի աշակերտք ն՟ր ժողովաբար կառավարեսցեն զքրիստոնեայս, բացայայտ ուսուցանեն հրամանք նորա բազմապատիկ օրինակաւ աւանդեալք առաքելոց 'ի բազում՝ դէպս ։ Յայս վերածի պատուէրն քս̃ի ցպետրոս և ցայլ առաքեալսն || եթէ մեղիցէ քեզ եղբայր քո , ե՛րթ յանդիմանեա զնա . . . և եթէ ոչ լուիցէ , ասասջի՛ր Եկեղեցւոյն , և եթէ Եկեղեցւոյն ոչ լուիցէ , եղիցի քեզ իբր զհեթանոս || ։ Յայսմ բանի յայտնի սահմանադրէ քս̃ , զի զկնի մասնաւոր անձանց , եկեղեցին միայն (այ̃ ժողովն առաքելոց կամ եպս̃ց) լիցի վերջին կառավարիչ մեղուցեալ եղբօրն , և յայսմանէ իմանամք , մի՝ թէ կառավարիչք քրիստոնէին երկու միայն են , այ̃ կամ մասնաւոր եպս̃ , կամ ժողովն եպս̃ց . ապա ոչ գոյ այլ ոք դատաւոր , ոչ միապետ , ոչ գլուխ կամ իշխան բաց յերկուցդ ։ միւս ևս՝ թէ այս հրամանն կապէ և զնոյն ինքն զպետրոս , որ անդ առաջակայ էր խօսիցն քս̃ի (տ̃ս որոշաբար անուանի սուրբ մտթ . ժը . 21 . յայնժամ մատեաւ առ նա պետրոս և ասէ)։ և զի աւելի այսր պատուիրանադրութեան քս̃ի էր անկարգ սէրն մեծութեան յառաքեալսն , տ̃ս նշանակի 'ի սկզբան անդ ժ̃ը գլխոյն || յայնմ աւուր մատեան աշակերտքն առ յս̃ և ասեն , ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ յարքայութեան երկնից (այ̃ 'ի մէջ եկեղեցւոյ) , փրկիչն մեր զկնի բազում խրատուց՝ ցուցանէ թէ ո՞վ է մեծն 'ի մէջ եկեղեցւոյ , այ̃ ոչ պետրոս , ոչ անդրէաս , և ոչ այլ ոք մասնաւոր անձն , այլ ժողովն կմ̃ դասն առաքելոց և եպս̃ց հաւաքա̃պ առեալ . և առ 'ի կրկին հաստատել 'ի մէջ նոցա զայս Ժողովական կառավարութի̃ , խոստացաւ ն̃ց զայս անգին շնորհք || զի ուր իցեն երկու կամ երեք Ժողովեալ յանուն իմ , անդ եմ ես 'ի մէջ նոցա (19 . 20 . տան). ուրանօր տեսանի զի ոչ պետրոսի , ոչ յովհա նու, և ոչ այլում մասնաւորի խոստանայ քս՟ զիւր ներկայութի՟, այլ միայն ժողովոյն նց՟. և ոչ միայն զիւրն, այլ և զհոգւոյն սբյ՟ զառաջնորդութին՟ խոստացաւ ժողովոյն կմ՟ գումարին առաքելոց և եպսց՟, յասելն || Ես աղաչեցից զհայր, և այլ մխիթարիչ տացէ Ձեզ, զի ը՟ Ձեզ բնակեսցի 'ի յաւիտ՟ն. զհոգին ճշմարտութ՟ե . . . մխիթարիչն հոգին սբ՟, նա ուսուսցէ Ձեզ զամ՟ || յովհ. ժդ՟։ Եւ առ այս նպատակ յերկար աղօթեաց քս՟ առ հ՟յր իւր, զի աշակերտք ն՟ր իցեն Մ՛ի, եղիցին կատարեալք 'ի Մ՛ի, ո՟ր միաբանք, միակցեալք, եւն՟. յովհ. ժէ՟. 11=26։

§. 69. Ապ՟ զի այս ուսուցիչ եկեղեցի 'ի կառավարելն զժողովուրդս՝ լիցի անսխալելի, և զի քրիստոնեայք կարասցեն յապահովի լինել ընդ հովուութ՟ի ն՟ր, բաց 'ի գրելոցդ՝ և զայս խոստացաւ փրկիչն մեր, թէ այս եկղ՟ցի՝ անյաղթելի է լինելոց յամ՟ մ՟րդկային և դիւական պատերազմաց, ը՟ այսմ || 'ի վ՟ր այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն (մտթ. ժզ՟.), ուր նկատի առնել թէ ոչ մասնաւոր անձն, այլ միայն եկեղեցին կայ մնայ անյաղթելի. զոր և այլով արտունութ՟բ յղփացեալ ցուցանէ պօղոս, յասելն || Գիտասցես թէ ո՟պ պարտ իցէ քեզ 'ի տան ա՟յ շրջել, որ է Եկեղեցի ա՟յ կենդանւոյ, սիւն և հաստատութ՟ի ճշմարտութ՟ե (ա՟, տիմոթ. գ՟. 15)։ Այլ արդ՝ եթէ միայն ուսուցիչ եկեղեցին է անսխալելի, անյաղթելի, սիւն և հաստատութ՟ի ճշմարտութ՟ե, եւն՟, ապա իրաւամբք հաւատացե՟լ լինի, թէ նա է կառավարիչն քրիստոնէից, և ոչ թէ մասնաւոր անձն ոք։

§. 70. Ժողովական կառավարութին՟ ապացուցանի երկ՟դ և 'ի գործածուց առաքելոց , զորոց ընթեռնումք 'ի մե՟ր գիրս , թէ 'ի ծանր դիպուածս և 'ի ծրնանիլ հակառակութե՟ց մե՟ր կառավարութե՟ քրիստոնէից՝ չորից 'ի ժողովս գումարեցան ։ Առաջին ժողովն եղև յընտրելն զմատաթիա ․ ուրանօր ոչ միայնակ պետրոս վարեցաւ , այլ դասն առաքելոց հաւասարապ՟ ‖ Եւ կացուցին երկուս . . . կացէ՛ք յաղօթս Ասեն . . . . . . Տուին վիճակս նց՟ (Գրծց․ ա՟)։ Երկդ՟՝ յընտրելն զեօթն սարկաւագունս , ուր նոյնպ՟ ոչ մի ոմն , պետրոս կմ՟ յովհաննէս , այլ ‖ Կոչեցին Երկոտասանքն ըզբազմութի՟ աշակերտացն և Ասեն . . . զորս կացուցին առաջի Առաքելոցն ։ . Եդին 'ի վ՟ր նց՟ զձեռս (Գրծ , զ)։ Երդ՟՝ 'ի վճռելն օրինական խնդիրն (Գրծց․ ժե՟) ոչ միայն գործով , այլև բացայայտ բանիւ հաստատեն զճշմարտութի՟ մեր , 'ի գրելն առ անտիոքացիս ‖ Հաճոյ թուեցաւ Մեզ միաբան Ժողովելոցս (ահա Ժողովական Կառավարութի՟) արս ընտրէլս յղել առ ձեզ . . . . զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբ՟յ և Մեզ մի՛ ինչ աւելի բեռն դնել ‖ ։ Յայսմ բնաբանի այնչափ հրաշալոյս փայլէ ճշմարտութի՟ մեր , մինչև իրաւամբք զարմանալ , թէ զիա՞րդ ոչ խոստովին սրատես աչք լատինաց և լատինահայոց , գուցէ կամաւ կափուցանեն զաչս զի մի՛ տեսցեն ։ Չրդ՟ 'ի գնալն պօղոսի յԵ՟մ (գրծ․ իա՟ ․ 17=26) 'ի ժողով հաւաքին յակոբոս և այլ ամ՟ երիցունք և եղբարք ․ և յոգնակի խօսելով ասեն ցպօղոս ‖ Արդ զայս արա զոր Ասեմք քեզ . . . վ՟ս հաւատացելոցն հեթանոսաց Մեք առաքեցաք ոպ՟ Ընտրեցաք , մի՛ ինչ այնպիսի պահել նց՟ ‖ ։ Բաց 'ի սոցանէ՝ ոմանք 'ի պատմագրաց ժողով համարին և զհաւաքելն պօղոսի զերիցունս եփեսոսի (գրծ․ ի՟ ․ 17).

Են եւս որք եօթն, ոմանք եւս զերկոտասան ժողովս համարին գումարել յառաջին դարու անդ առ առաքելովք. զորոց մարթ է տեսանել զեկեղեցական պատմագիրս, ո՟պիք են Նատալիս աղէքսանդր, կղոդիոս Փլէօրի, փաձիոս, հարտուին, քավէ, մանսի, եւ այլք ՚ի նախնեաց անտի, եւսեբիոս, սոկրատ, սոզոմենոս, թէոդորետոս, եւագր, եւն։)

§. 71. Յայն չորս ժողովս քաջայայտ երեւի, թէ ոչ մի ո՟մն առաքե՟լ խօսի եւ գործէ, այլ ժողովն կամ գումարն նոցա, եւ առանձինն վ՟ն պետրոսի յառաջին եւ յերր՟դ դէպն տեսանի, զի թէ՟պ պե՟տրս Նախ խօսի եւ Նախ գործէ, բայց ոչ Միայնակ խօսի եւ ոչ Միայնակ գործէ, այլ ՚ի ժողո՟վի եւ կամակցու՟բ ժողովե՟լ ընկերացն. ուստի այն՝ զի յառաջ ք՟ զայլս խօսի, ցուցանէ թէ նախապատիւ է քան զայլսն. իսկ այն զի կամակցու՟բ ընկերացն եւ ոչ առանց հաւանութե՟ն ն՟ց գործէ, ստոյգ ապացուցանէ թէ ոչ է միապետ, եւ ոչ գլուխ կ՟մ իշխան ն՟ց. վ՟ն զի միապետն ոչ գործէ ը՟ս այդմ օրինակի, այլ ասէ՝ ե՛կ, եւ գան. եւ այլոց թէ ե՛րթ, եւ երթան. եւ ծառայիցն թէ արա զայս եւ առնեն։ Իսկ այդ՟պ ոչ վարին ոչ պետրոս եւ ոչ միւս առաքե՟լքն, վ՟ն զի գիտէին թէ ք՟ս ոչ միայն արգել ն՟ց, Տիրել եւ Իշխել միմեանց, այլ եւ զի սահմանեաց ժողովական եղբայրու՟բ կ՟ռ վարել զհւ՟տցե՟լս։

§. 372. Ժողովական կառավարութի՟ն եկեղեցականաց ապացուցանի երկ՟ր յօրինակաց նախնի հայրապ՟տց ՚ի բզ՟մ դարս քրիստոնէութե՟ն, որք հետեւելով հրամանացն ք՟ի եւ օրինակաց առաքելոց, ոչ միապետական այլ ժողովական ընկերու՟բ կառավարեցին զժողո՟վդն ՚ի նիւթս հաւատոյ եւ վարուց։ Այս՟պ յեկ՟րդ դարուն

Ք՟սի (մ՟ի 'ի 101=200 ամ. տ՟ն) 'ի յայտ եկին բզ՟մ աղանդաւորք, ո՟ք Նազարեանք, Եպիոնեանք, սատուրնինեայք, բասիլիդեանք, կարպոկրատեանք, վաղենտինեանք, բարդեզանեանք, արտեմոնեանք, դատիանոսք, ովբիտեանք, հերմոգենեանք, գնոստիկեանք, մարկիոնեանք, մոնդանեանք, ևն, բայց առ 'ի խափանել զմոլորութ՟ի սոցա, եպ՟սունք ժամանակին ոչ երբեք դիմեցին առ հայր՟պտն հռովմայ իբրու առ միապետական գլուխ իւրեանց և եկեղեցւոյ. այլ այն վիճակաւոր եպ՟ս՝ յորոյ 'ի Թեմի ծագէր մոլորութ՟ի, ժողովէր զմօտաւոր եպ՟սունս, և 'ի ժողովի անդ եղբայրական ընկերութ՟բ քննել զճշմարտութ՟ին և զստութ՟ի, դատապարտէին զհերետիկոսս. և վկայ են այսմ բազում գաւառական ժողովք յասիա, յափրիկէ և յեւրոպիա գումարե՟լք յայսմ եկ՟դ դարու, յորոց զվեցն 'ի պատճառս զատկի հաւաքե՟լս յիշէ եւսեբիոս (պտմ. եկղ. գր. ե. գլ. ի՟գ), որք են ժողովն. 1 եփեսոսի, որոյ գլուխ էր պողիկրատէս եպ՟ս տեղւոյն։ 2 ժողովն կեսարիոյ պաղեստինու, յորում նախագահ նստան Թէոփիլոս և նարկիս եպ՟սունք։ 3 ժողովն պոնտոսի, յոր գլուխ էր փղամայ եպ՟ս։ 4 ժողովն գաղղիոյ, ուր նախաԹոռ նստաւ իրենէոս եպ՟ս լուկտոնի։ 5 ժողովն հռովմայ, յորում պապն վիկտոր էր նախագահ և 6 ժողովն աքայիոյ, ուր գլխաւոր էր պակղիլոս եպ՟ս տեղւոյն. զորոց ընԹերցիր զեւսեբիոս։

§. 73. Բայց յասացելոցդ եղեն և այլ բզ՟մ ժողովք 'ի պատճառս մոնդանեանց և այլ հերետիկոսաց, զորոց զանուանս յիշէ եւսեբիոս (վարք կոստանդիան. գ՟. ե՟. ի՟դ) և զայլս յիշատակեն հեղինակքն գրոցն (սինն հոդոսի և նախասահման)։ Այսպիսի են 1. ժողովն եէ՟մայ, ուր նախագահ նստաւ ապողինար եպ՟ս ։ 2. ժողովն անղելանայ, որոյ գլխաւոր էր սոտաս եպ՟ս ։ 3. ժողովն սիկուլայ ՚ի 125 ամի տ՟ն ։ 4 ժողովն հռովմայ ՚ի 146 ամին ։ 5 ժողովն պերկամոյ ՚ի 152 ամին ։ 5 ժողովն արևելեան ՚ի 160 ամին ։ 7 ժողովն հռովմայ ՚ի պատճառս զատկի ՚ի 170 ամին ։ 8. ժողովն միջագետաց ՚ի 198 ամին ։ 9 ժողովն յովտրոյեն գաւառի, և՟ն ։ Թո՛ղ զայլ երկուս ժողովս անտիոքիոյ և զե՟րդն յունաստանի, զորոց ճառեն Ոուէլիոս, Ասսեման և Մանսի ։ Արդ՝ առ ի՞նչ պիտոյ էին այսչափ ժողովք յայսմ դարու. ընդէ՞ր եպ՟սունք վիճակացն ո՛չ դիմեցին առ Հայրպ՟տն Հռովմայ իբրու առ տեղակալ ք՟սի կ՟մ պետրոսի, և իբր առ անսխալելի դատաւոր ՚ի նիւթս հաւատոյ և վարուց. ո՛չ ապաքէն այս անձնիշխան կառավարութ՟իք այդչափ եպ՟ց և անկախութ՟ի դոցա զեպ՟էն Հռովմայ՝ յայտնի ուսուցանեն մեզ թէ՝ ո՛չ եպ՟սունք և ո՛չ քրիստոնեայք եկր՟դ դարուն բնաւ ո՛չ ճանաչէին զհայրպ՟տն Հռովմայ իբր զմիապետական գլուխ եկեղեցւոյ, թէ՝ եկեղեցական կառավարութ՟ին դարուս ո՛չ էր միապետական, այլ ժողովական. այն է՝ սինհոդոսական, որ իւիք միաբանի և իւիք տարբերի յազնուապետական կառավարութ՟է ։

§. 74. Հայրապետք այսր դարու՝ ո՛չ միայն չճանաչէին զեպ՟սն Հռովմայ իբր միապետական գլուխ եկեղեցւոյ, այլ և բզ՟մ անգամ հակառակ կացին նմա, և յանդիմանեցին զյանդուգն փառասիրութ՟ի ն՟ր ։ Այսպէս յայտնի է ամ՟ն վէճն այսց ժամանակաց վ՟ս աւուր զատկի, զոր ասիացիք՝ ըստ աւանդելոյ յովհաննու աւետարանչին և այլոց առաքելոց՝ կատարէին ՚ի չորրեքտասանն լուսնի, յի՞նչ օր և պատահէր, իսկ արեւմտեայք կատարէին 'ի հետագայ աւուր կիւրակէի, որոյ վն̃ պողիկարպոս եպս̃ եփեսոսի գնաց 'ի Հռովմ զի անիկետոսի եպս̃ի տեղւոյն տացէ ը̃ունել զիւր սովորութի̃ն ։ Բայց ոչ կարացե̃լ փոխել զմիտս նր̃ դարձաւ 'ի տեղի իւր, ո̃պ պատմէ եւսեբիոս (գր․ Ե․ գլ․ 23) ։ Զկնի մարտիրոսութե̃ն պողիկարպոսի դարձեալ յուզեցաւ վէճն 'ի կողմանէ լաւոդիկեցւոց և այլ ասիայւոց, որք պնդէին պահել զսովորութի̃ն իւրե̃նց, որոց ը̃դէմ եկաց Ելեւթերոս եպս̃ Հռովմայ, յորում ժամանակի մելիտոս եպս̃ սարտենայ երկուս մատեանս յօրինե̃ց 'ի ցուցանել, թէ հարկ է 'ի չորեքտասանն լուսնի կատարել զզատիկն ։ Յաջորդն ելեւթերոսի Վիկտոր եպս̃ Հռովմայ՝ ը̃ գրելոյն սոկրատայ (Ե․ 22) բորբոքեալ անզուսպ բարկութ̃, տիրողական իշխանութ̃ եհատ յընկերութէ̃ զպողիկրատէս եպս̃ եփեսոսի և զընկերս նր̃․ բայց այս գործ Վիկտորի այնչափ անօրէն թուեցաւ այլոց եպս̃ց, մինչև բազումք 'ի նոցանէ, մանաւանդ իրենէոս, պողիկրատէս, և այլք, գրով յանդիմանեցին զվիկտոր, որոց բանք տեսանին առ եւսեբեայ, սոկրատայ, նիկեփորայ, սոծոմենայ և̃։ Եւ ոչ միայն գրով նախատեցին, այլ և կացին մնացին եկեղեցիք ասիոյ և անդղիացիք 'ի սովորութե̃ իւրեանց յետ այսօրիկ զամս իբր 130, մինչև յառաջին ժողովն նիկիոյ յամի տ̃ն 325․ ա̃մենքին միաբանեցան տօնել 'ի կիրակէն որ յաջորդէ ժդ̃ աւուր լուսնի ։ Արդ՝ այս բաժանումն ասիական եկեղեցեաց 'ի հռովմայ, և այսչափ ուղղափառ եպս̃աց հակառակ կալն ը̃դէմ եպս̃ին հռովմայ, յայտնի ուսուցանէ թէ սոքա ոչ ճանաչէին զհայրապ̃տն հռովմայ իբր զմիապետական գլուխ, և թէ կառավարէին զժողովուրդն միայն ժողովական ընկերութ՟, և ոչ միապետութեամբ ։

§. 75. Զնոյն եղանակ ընթացից տեսանեմք և յեր՟դ, 'ի չոր՟դ, 'ի հինգե՟րդ և 'ի յետագայ դարս ՚ յորս միշտ 'ի ծագել ուրեք հերետիկոսաց՝ եպ՟ք վիճակին առանց հարցանելոյ զեպ՟ն հռովմայ գումարէին զմօտակայ եպ՟սունս 'ի ժողով, և վճռէին զխծբիծն բաղդատութ՟ ս՟բ գրոց. Երբեմն ևս հակառակ եպ՟սին հռովմայ, որոյ անժխտելի ապացոյց է բաժանումն եկեղեցե՟ց աֆրիկոյ՝ 'ի հռովմայ, և հակառակութ՟ին կիպրիանոսի և փիրմիլիանոսի ը՟դէմ ստեփաննոս հայրապետին հռովմայ՝ վասն բզ՟ին 'ի պատճառս կրկին մկրտելոյ զհերետիկոսս, ուր նշանաւոր է այն, զի 'ի բաժանել ստեփաննոսի զափրիկեցիս 'ի հաւասարութ՟է, ս՟բն փիրմիլիանոս գրեաց առ պապն ստեփան, այսպ՟ || մեղս կարի ծանունս բարդեցեր քեզ, երբ զքեզ բաժանեցեր յայնչափ հօտից. զի զանձն քո բաժանեցեր. մի՛ խաբեր զքեզ, որովհետև նա լինի ճշմարտիւ հերձուածող, որ բաժանէ զինքն 'ի հաւասարութ՟է եկեղեցական միութ՟ե. վ՟ն զի ուր կարծես զամ՟ն զայլս զատանել 'ի քէն, միայն զքեզ ինքդ զատեցեր յայլոց ('Ի ԹՂԹ. ԿԻՊՐԻԱՆ. ՀԵ) ։ Առաւել ք՟ զայս գրեաց հիլարիոս առ պապն լիբերիոս || »Նզովեալ ես յինէն լիբերիոս, դու և ընկերքդ քո . . . կրկին և եր՟դ անգամ նզովք քեզ՝ օրինազանց լիբերիոս (ՀԻԼԱՐ. 'Ի Ղ՟, ՀԱՏՈՒԱԾ) ։ Ըստ այսմ և եպիսկոպոսունք աֆրիկոյ, իլլիրիոյ և տալմացիոյ բաժանեցին զինքեանս 'ի հաւասարութ՟է պապին վիրգիլիոսի, զորոց տե՛ս յեկեղեցական պատմութ՟ե կղոդիոսի Փլէօռի (ԿԲ. ԼԷ). որ յութսուն և վեց հատորս ը՟արձակ ճառէ զբազմատեսակ անկարգութ՟իս պապիցն հռովմայ՝

Բազում ինչ ունէաք ասել վս̃ այսց իրաց, այլ սղուե̃ աւուրս ստիպէ զմեզ թողուլ այլում ժամանակի, և զայսքանս ասացաք առ 'ի ցուցանել, թէ զկնի առաքելոց 'ի բազում դարս ոչ ոք յե̃պսաց ճանաչէր զհայրապետն հռովմայ իբր զմի միայն երեսփոխան ք̃սի կմ̃ պետրոսի. այլ յետոյ յիններ̃դ դարուն խաւարային տգիտուե̃ սկսան ե̃պսունք հռովմայ բռնանալ 'ի տիրել, և ը̃ իշխողու̃ք իւրեանց գրաւել ոչ միայն զեպիսկոպոսունս և զեկեղեցիս քրիստոնէից, այլ և զթագաւորս աշխարհի. մինչև հետզհետէ 'ի ծագել հոգեկեցոյց լուսոյ գիտուե̃ց և իմաստուե̃ց 'ի սկիզբն վեշտասան դարուն, վրդ̃պաք աւետարանական եկեղեցւոյն ձայնիւ և գրովք սկսան խորտակել զլուծ բռնաւորուե̃ նոցա, և անտի մինչև ցայժմ օրըստօրէ պակասի հեղինակուե̃ նց յարևմուտս ։ Զեղանակէ ծագման և աճման տիրողուե̃ պապեցն հռովմայ ը̃ երկար և գեղեցիկս ճառեն Երնեստ կիպրեանի, փրանկիսկոս վալքի. Պետրոս մոլինեոս. Դաւիթ պլոնտելլոս, և այլք բազումք յոյժ ։

Հարցանող.

§. 76. Առ ի՞նչ օգուտ իցեն այդ ամ̃ ասացեալքդ ձեր, յի՞նչ նպատակ ուղղին, զի՞նչ հոգևոր շահ մարթ իցէ մեզ քաղել յայդցանէ, կամ իցե՞ն յինչ պիտանի այդ ամ̃, աղաչեմք զեղբարսդ՝ ցուցէ՛ք մեզ ։

Պատասխանող.

§. 77. Կարի՛ քաջ իմաստու̃ք առնէք, զի շահ հոգևոր խնդրէք գտանել 'ի հոգևոր բանից. զի վախճան ամ̃ ուսմանց մերոց պարտի դիմել յօգուտ հաւատոյ և վարուց մերոց. զայդպիսի օգուտ՝ բզ̃մ յոյժ գործ նական հետեւու՟բ մարթիմք քաղել 'ի վերոյգրեալ բանիցդ՝ 'ի զգուշու՟ն մեր եւ ա՟մ հայկաբանեայ եղբարցս, գուցէ եւ 'ի դարձուցանել առ մեզ զբաժանեալ եղբարըս · որք պարզամտու՟բ յարեալ են յօտար եկեղեցի, որսացեալք 'ի խորթ մշակաց, եւ անհոգու՟բ հովուաց մերոց ցրուեալք ամենայն ուրեք ։

§· 78· Արդ՝ առաջին օգուտ եւ զգուշու՟ն մեր լիցի այս · զի այսուհետեւ 'ի խօսս եւ 'ի գիրս մեր՝ ո՛չ երբեք 'ի կիր արկցուք զայս բան || Իք՟ն պետրոս է գըլուխ առաքելոց || · վ՟ս զի այդ եղանակ խօսից է հակառակ մ՟ր գրոց · է սուտ ը՟ս իմաստիցն · եւ է վնասակար ազգիս ։ Նախ՝ թէ հակառակ է մ՟ր գրոց, յայտնի է ը՟ս ինքեան · վ՟ս զի 'ի բովանդակ յաւետարանս 'ի գործս առաքելոց եւ 'ի թուղթս ն՟ց, յոչինչ տեղւոջ գտանի այդպիսի խօսք, բառն Գլուխ (յուն · քէֆալի) ո՛չ երբէք եւ ո՛չ ուրեք ընծայի մ՟րն պետրոսի, ո՛չ ը՟ս ձայնին, եւ ո՛չ ը՟ս մտացն · ապա թէ ո՛չ, թող իմաստուն մխիթարեանքն կամ նոյն իսկ լատինք մացեն յասպարէզ եւ ցուցցեն մեզ, յորում տեղւոջ յոյն բնագրի ածաշնչին կայ այդ բառ ընծայեալ պետրոսի ։ Իսկ արդ՝ զայն բառ, զոր մ՟ր գիրք ո՛չ 'ի գործ ածեն եւ ո՛չ ընծայեն պետրոսի, մեզ եւս չէ՛ օրէն, չէ՛ արժան 'ի գործ ածել ։ Երկ՟դ՝ կոչելն զպետրոս՝ Գլուխ առաքելոց, է ամենեւին սուտ ը՟ս ճիշտ իմաստիցըն, վ՟ս զի բառն՝ Գլուխ, ը՟ս բնական եւ զգայական նշանակու՟են՝ երկու ինչ ցուցանէ · մի՝ իշխել, տիրել, հրամայել, կարգադրել, եւ կառավարել զբոլոր մարմինն եւ զա՟մ անդամս նորին · միւս եւս՝ տալ կենդանու՟թ, ոգեւորել, աճեցուցանել, սնուցանել զմարմինն եւ զանդամսն, (Ճանաչէ զայսոսիկ եւ գաբրիէւ վրէպ 'ի մեկն․ պօղ․ հտ․ ա․ եր․ 855․ հտ․ բ․ եր․ 507․ 575․ Նա)․ իսկ արդ՝ զայդ կրկին ներդործութիս չէ՛ հնար ընծայել պետրոսի նկատմամբ այլոց առաքելոց, վ՟ զի ո՞վ վերադոյն (9=72) բազմօք ապացուցաք, պետրոս ո՛չ երբեք իշխեաց՝ տիրեաց կա՛մ միապետեաց 'ի վ՟ր այլոց առաքելոց, և ո՛չ իսկ եա նոցա ուրեք սնունդ կամ՝ աճումն հոգևոր․ այլ մանաւանդ ընդ հակառակն՝ միւս առաքելքն հրամայեցին պետրոսի, կարգեցին և առաքեցին զնա 'ի սամարիա (տե՛ս 'ի վերոյ․ § 58)․ ապա ուրեմն նշանակութիւն և իմաստին բառիդ՝ Գլուխ սատո՞ւր ընծայի պետրոսի։ Ուղղ և զայն անտեղութի, զի թէ ճշմարիտ էր իմաստ բանիցս պարզաբար է Գլուխ առաքելոց, հարկ էր զի ճշմարիտ լինի և այս հակադրել նորին՝ Առաքելոյն են մարմին պետրոսի․ բայց սակայն զայդ հրէշ և ո՛չ իսկ դժոխք փըսխեցին մինչև ցայժմ, ապա և առաջինն այն չէ ճշմարիտ։

§ 79․ Արդ՝ այդ ոճ խօսից վնասաբեր է յոյժ ազգիս մերոյ․ վ՟ զի այդ է սովորական ուռկան և թակարդ պապականաց, որով որսացան զբազում միամիտ հայս մեր յեկեղեցի իւրեանց․ իբր զի յայդմ նախադասութե կազմեն հաւաքաբանութի այսպիսի։ Ո՛րն պետրոս է գլուխ ամ՟ առաքելոց։ Իսկ արդ՝ հայրապետն հռովմայ է յաջորդ պետրոսի, և կաթուղիկոսն հայոց է յաջորդ առաքելոցն թադէոսի և բարթողոմէոսի։ Ապա ուրեմն և հայրապետն հռովմայ է գլուխ կաթուղիկոսին հայոց և ամ՟ եպ՟ց նր՟։ Տեսանէ՞ք ըզ պապական ձեռնարկութիդ, թէ ուստի՞ սկսաւ, և ու՞ր աւարտեաց․ մանաւանդ թէ դեռ ո՛չ աւարտեաց, այլ նոր սկսաւ, զի յայդմ եզրակացութե սկսանի 'ի վ՟ր բերել զայլ անթիւ հետևութիս, այսպ՟․ Որովհետև հայրապետն կա՞մ պապն Հռովմայ է գլուխ կաթուղիկոսին Հայոց , այլ ուրեմն Հարկաւոր է զի կաթուղիկոսն Հայոց յամ իրս հնազանդ լիցի պապին , զի զիրաւաբանուն իւր առցէ 'ի պապէն , զի յամի զհրամանս նորա կատարեսցէ , զի զանուն նր յիշեսցէ 'ի պատարագին, զի ջուր խառնեսցէ 'ի բաժակն , 'ի հօրէ և յորդւոյ ասասցէ , քաւարան խոստովանեսցի , և այլ անթուելի պահանջմունք . և ո՞ կարիցէ տանել այսոցիկ , բայց եթէ նա՝ որ ամիւ թողել զեկեղեցին և զհաւատս մբ Լուսաւորչին , կամիցի փոխել 'ի լատինութի , որպս և արարեն են պարզամիտք բզմք յազգէս Հայոց յամ տեղիս . և յայսմ հետէ բազումք ևս արասցեն՝ ցորչափ հաստատ մնայ վերոյգրեալ ամենասուտ բանն այն , թէ պետրոս է գլուխ ամ առաքելոց . մն զի այդ է արմատ և աղբիւր ամ մոլորութեց , յոր կործանեցան ժողովրդք մեր 'ի սկզբանէ մինչև ցայսօր ։

§. 80. Թէ կամք իցեն սիրելի եղբարցդ լսել , առաջի արասցուք զողբալի օրինակ այդպիսի մոլորութե նորոգ դիպեալ յաւուրս մեր 'ի կոստանդնուպօլիս ։ Ընթերցեալ էք ապաքէն զտետրակն , որոյ Ճակատագիրն է այս , || Բան հրաւէր սիրոյ , որ առաջի առ-
»նէ զպատասխանի խնդրոց ինչ ինչ մասանց հաւատոյ,
» ըս լուսաւորչաւանդ ուղղափառուե Հայաստանեայց առա-
» քելական սբ եկեղեցւոյ , ազգային ժողովոյ հաւա-
» նուբ և խնդրանօք տպեալ 'ի կոստանդնուպօլիս 'ի
» 1820 ամի տն || ։ 'Ի տետրակի աստ պատմի , թէ գերապատիւ եկեղեցականք և աշխարհականք ազգիս մերոյ ժողով արարեալ են անդ առ 'ի միանալ և միաւորել զբաժանեալ հայս (որ մեզ ևս հոգւով չափ ցանկալի է) . և առ այս վախճան յօրինեալ են զուղղա-

փառ վրդպտուն եկեղեցւոյն Հայոց ‖ (յեր․ 19=31)․ բայց սակայն չգիտեմք ո՞րպ՟ի անմտադրութ՟ գրեալ են յայս սխալանս, զորմէ աստանօր բանքս են, իբր զի 'ի դաւանութե՛ անդ իւրեանց՝ ասեն և զայս անխորհուրդ բանս (յէր․ 28)։ Իսկ ս՟բ առաքե՛լն պետրոս է » Գլուխ առաքելոց ս՟բց, և վէմ հաստատութե՛ ա՟մ » եկեղեցեաց, ո՟պ երդեմք, * Որ գերագոյն ընտրե» լոց առաքելոցն դասուց՝ անուանեցեր լինել զերա» նելին զպետրոս․ գլուխ ս՟բ հաւատոյ, հիմն եկեղեց» ւոյ (շրկն․ ճբ)։ Եւ ս՟բ լուսաւորիչն մեր ասէ* ք՟նա » գունդ և խաչակիր առաքելոցն, որոց Գլխաւորն » պետրոս (ագաթան, 303)․ և թէ՝ Արար զնա վէմ » հաստատութե՛ ա՟մ եկեղեցեաց ‖ (ագաթ․ 198)։ Ո՜հ աղաւնակերպ միամտութե՛ ժողովել հայոց մերոց․ որք բոլորովին հեռի են լեալ 'ի միւս մասնէ պատուիրանին ք՟նի [illegible] (մտթ․ ժ․ 16)․ զի պարտ է հարցանել ցն՟ա․ յումմէ՞ ուսան զբանդ՝ պետրոս է Գլուխ առաքելոց․ զի բերե՛լ վկայութ՟ս նոցա զայդ ոչ ուսուցանեն․ ս՟բ Լուսաւորիչն մեր ահա Գլխաւոր առաքելոց ասէ․ իսկ շարականն՝ Գերագոյն առաքելոց․ Գլուխ հաւատոյ․ և Հիմն եկեղեցւոյ կոչէ․ ո՞ւր է ապա ն՟ց ասելն Գլուխ առաքելոց։ Եթէ ասասցուք թէ շփոթե՛լ են 'ի բանից լուսաւորչին, այս դաւանայ 'ի նախատինս ն՟ց, թէ զիա՞րդ ոչ կարացին զանազանել զնշանակութ՟ն գոյականիս Գլուխ յածական բառէդ Գլխաւոր․ զի սա առ մեզ ցուցանէ կամ ունող զԳլուխ․ կամ դնի փոխանակ բառիցս՝ Գերագոյն, Երևելի, Առաջին, Աւագ, [illegible], ե՟ն, և թէ արդարև սոյին նշանակութ՟ վարեալ են զԳլուխն․ տակաւին չեն ազատ 'ի մեղադրանաց, զի 'ի նիւթս հաւատոյ և ածա բանու՟ն՝ պարտիմք և զնշանախեցս բառից տարբերել մանաւանդ յայսպիսի վէճս ը՟ լատինաց . զի մի՛ ըմբռնեսցուք յորոգայթս նոցա ։

§. 81. Իսկ եթէ ասասցուք , թէ ժողովե՟լ հարքն թակարդե՟լ են 'ի բանս շարականին՝ Գլուխ ո՛չ հաւատոյ , տակաւին և յայսմ ո՛չ մնան անպարսաւ , զի յոյժ հեռի են իմաստք երկուց բանիցս || Պետրոս է գլուխ առաքելոց . . . . Պետրոս է գլուխ հաւատոյ || , զառաջինն մեկնե՟լ եմք 'ի վերոյ . խնդրելի է նշանակու՟ե ե՟րկդին . բայց յումմէ՞ խնդրեսցուք . մեկնիչ շարականի է իմաստունն գաբրիէլ , բայց և սա պահելով զպատուիրանն ք՟նի (եղերուք խորագէտ իբրև զօձս), նորօրինակ խորագիտու՟բ ընաւ իսկ ո՛չ բացատրէ թէ զի՞նչ իմանի ասելն , պետրոս է գլուխ ս՟բ հաւատոյ, այլ միայն՝ քար գայթագղու՟ե առե՟լ ինքեան զբառդ՝ Գլուխ . և՝ ո՟պ վերագոյն (§. 15) ասացաք , ամօթալի նենգու՟բ միացուցե՟լ զայն ը՟ բառին կէֆա , սկսանի աղաղակել ը՟ օդս , թէ ահա շարականն Գլուխ կոչէ զպետրոս . և յանդիմանէ ա՟ռէ չիմանամք զո՞վ . բայց ուղղու՟բ խօսելով՝ ինքն է ա՟միւ յանդիմանելի . իբր զի՝ կամաւ թէ ակամայ՝ ո՛չ տեսանէ և ո՛չ մեկնէ զյատկացուցիչ բառն՝ Հաւատոյ . և ո՛չ ցուցանէ թէ յի՞նչ միտս առե՟լ է աստանօր բառն՝ Գլուխ . զի՞նչ ապա , ո՞վ մեկնեսցէ մեզ զբառսդ . ո՞ւմ հարցցուք . առ ո՞ դիմեսցուք . տարակուսիլն չէ բարւոք . Այր է գաբրիէլ վրդ՟պտն , և իմաստուն հայր , առ նա դիմեսցուք, նա Հայրական գթու՟բ ուսուցանէ մեզ զնշանակու՟ե բառիցդ և նախադասու՟եդ . . . . մի՞ թէ . . . . սուտ դի՛ւ . . . և ո՞ւր արդեօք . . . . նախ՝ 'ի բացատրութեան անդ շարականաց (յէջ . 542) . ուր 'ի մեկնելն

զայս բան զս՟բյ խաչէն || գլուխ ս՟բ Հաւատոյ և փայտ
կենաց՝ մարդկան յայտնել || այսպ՟ Ճշմարտաբանէ || 'ի
» տ՟ր յերկնից , յե՟րդ տան , ասելն զս՟բ խաչն, Գլուխ
» ո՟է հաւատոյ , իմանի , Գլխաւոր Հիմն և արմատ քա-
րոզութ՟ե Հաւատոյն ք՟ի || ։ Եկ՟դ պարզագոյն ևս 'ի մեկ-
նութեն պօղոսի (հռ · Գ · եր · 408) , ուր աս՟ բնաբանս ||
յ՟ս ք՟ս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս , որոց գլու-
խն ես եմ || այսպ՟ մեկնաբանէ || 'Ի ժամուս՝ զի մարդ
» մեղաւորաց ասէ զինքն Գլուխ · կամ ը՟ յունին առա-
» ջին , խնդրելի է · · · · ըստ լեզուի գրոց՝ առաջին
» կամ Գլուխ , իմանի , գլխաւոր , մեծագոյն , ո՟պ պետ-
» րոս կոչի առաջին յառաքելս , ոչ ը՟ կոչմանն , այլ ը՟
» գլխաւորութեն · · · վ՟ն մեր թարգմանս վայելչա-
» բար եդ Գլուխ մեղաւորաց , այս է , երևելին , մեծա-
» գոյնն 'ի մէջ մեղաւորաց || ։ Օրհնեալ է Ճշմար-
տութին ա՟յ · բե՛ր այժմ վկայութ՟ և բառիւք հօրն գաբ-
րիէլի՝ մեկնեսցուք զբանս ,

§· 82· Նախ՝ կոչելն շարականին զխաչն Գլուխ հաւատոյ , իմանի ասել* , Խաչն է գլխաւոր Հիմն և արմատ քարոզելոյ զհաւատս ք՟ի * , ապա ուրեմն ը՟ սմին օրինակի՝ և ասելն շարականին (թող այլք քննեսցեն , թէ վր՟դպետք մեր որո՞վ իրաւամբք՝ զպետրոս հաւասարեալ են խաչին ք՟ի , զնոյնաձայն տիտղոս ընծայելով երկոցունցն) թէ պետրոս է Գլուխ հաւատոյ , անտարակոյս իմացեալ լինի այս , * պետրոս է գլխաւոր Հիմն և արմատ կամ սկիզբն քարոզելոյ զհաւատս * կամ որ 'ի նոյն դառնայ ,* պետրոս է գլխաւոր , երևելի քարոզիչ հաւատոյ , կամ առաջին քարոզող զհաւատս*(ո՟պ յերկար մեկնեցաք 'ի վերոյ · 11=20) ։ Ընդէ՞ր ապա զայս մեկնու՟ն ո՛չ յաւել հայրն գաբրիէլ 'ի բանի անդ (յէր · 131) · յայտ է՝ թէ զի վնասակար էր ինքեան, զի յայնժամ ոչ կարէր գրել զայն քան տող ստալից վրդ̃պտուեան, որովք հնարէր իբր խրտուիլակօք երկեցուցանել զմանկունս ։

§· 83· Եկ̃դ՝ որովհետեւ ընդունի եւ խոստովանի պապասէր Հայրն գաբրիէլ թէ ‖ 'ի լեզուի գրոց՝ բառըն գլուխ իմանի Գլխաւոր, առաջին, երեւելի, ('ի բաց տար այժմ զանյարմար բառն նր̃ Մեծագոյն, զի այդ ճշդիւ քանակական իրաց պատշաճի), եւ թէ՝ ասելըն պօղոսի զանձնէ, ես եմ գլուխն մեղաւորաց, իմացեալ լինի, երեւելին, գլխաւորն 'ի մէջ մեղաւորաց, ապա ըստ այսմ ոճոյ՝ յորժամ վրդ̃պտք Հայոց 'ի շարականի կմ̃ յայլ գիրս, զս̃բն պետրոս կոչեն գլուխ առաքելոց կմ̃ եկեղեցւոյ, միշտ իմանալ պարտ է, Գլխաւոր, երեւելի, գերագոյն, ըստ Նարեկացւոյն՝ առաջին, սկզբնաթիւ, Նախամեծար, 'ի մէջ այլոց առաքելոց · եւ ոչ թէ ըստ բուն նշանակութ̃ գլուխ բառին · այն է՝ իբր տիրող, իշխող, կառավարող · վն̃ զի այս իմաստ ստու̃թբ ընծայի պետրոսի ։ 'Ի տետրակի անդ Հայ, եւ լատ, տպելոյ 'ի վենետիկ նկատելի է եւ այս ծանր խըտրոց, զի 'ի ժամանակէ լուսաւորչին մերոյ մինչեւ ցտասներ̃րդ դարն՝ ոչ ոք 'ի մեր վրդ̃պտոց կոչէ զպետրոս բառիւս՝ գլուխ, այլ միայն զկնի այդր դարուն՝ սակաւ ումանք 'ի վրդ̃պտոց, որ̃ք են մեծն խոսրով, Նարեկացի, Ներսէս եւ սարգիս շնորհալիք, լամբրոնացին, եւն̃, երբեմն 'ի կիր առեալ են զայդ բառ անմտադրու̃թբ ։ Իսկ վկայութ̃ին յակոբայ մծբնայ հայրապետի անհաւատալի է յոյժ · ըստ որում չէ մեզ յայտ, հայերէ՞ն թէ ասորի գրեաց նա, եւ ե՞րբ կմ̃ յումմէ՞ թարգմանեցաւ · ըստ որոյ եւ տպեալն Հայ, եւ լատ, լի է ծաղրական աղճատաբանութեամբ ։

§. 84. Արդ՝ վ՟ն բառիդ՝ առաջին, զոր Հայրն Գաբրիէլ 'ի բանիդ անխտիր նոյնացուցանէ ընդ բառիցս՝ գլուխ, գլխաւոր, երեւելի, մեծագոյն, ստիպիմք տալ զայս զգուշութի՟, թէ այն բառ ո՛չ յ՟մ տեղւոջ և ո՛չ յ՟մ ժամանակի վարի այդպիսի նշանակութ՟· այլ բզմ՟ ուրեք ևս դնի ը՟ բնական նշանակութեն լոկ իբր թուական անուն դասական, 'ի ցուցանել զառաջին թուել իրն՝ 'ի կարգի անդ բազում թուելոց· որոյ անթիւ են օրինակք 'ի հասարակ խօսս ։ Ըստ այսմ ասեմք, յառաջին աւուր յամսեանն առաջնում· · · · ամիս այս առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ · · · կարգն առաջին, կարգն երկ՟րդ · · · առաջին արմտիք · · · · զառաջին բարբառն զնմանն ամ՟ցն նոյնգունակ լուեալ · · · առաջին մարդն, երկ՟րդ մարդն · · · եկին զինուորքն և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն · · · էին առ մեզ եղբարք եօթն, առաջինն արար կին և մեռաւ· նոյնպ՟ և երկ՟րդն և եր՟րդն · · · կոչեա՛ զմշակսն և տո՛ւր նց՟ զվարձս սկսեալ 'ի յետնոցն մինչև ցառաջինսն· եկեալ և առաջինքն համարեցին || ևն՟ ։ Արդ՝ յայսպիսի տեղիս բառն առաջին յայտ է թէ ոչ նշանակէ գլխաւոր, պատուելի, երեւելի, մեծապատիւ, ևն՟, այլ լոկ զայն՝ որ զառաջին թիւն ունի, և յառաջ քան զայլս 'ի կարգ մտանէ և սկսանի զշար իրացն ։

§. 85. Բայց բազում անգամ ևս նոյն բառն առաջին փոփոխել նշանակութ՟՝ վարի (մանաւանդ 'ի լեզուի մերում յաճախ) փոխանակ բառիցս պատուական, երեւելի, գերագոյն, մեծապատիւ, գլխաւոր, ևն՟, և այսմ ունիմք նոյնպ՟ անթիւ օրինակս 'ի ս՟բ և յարտաքին գիրս ։ Այսպ՟ ասի || այս է մեծն և առաջին պատուիրանն . . . սիրեն զառաջին գահս յընթրիս և զառաջին աթոռս 'ի ժողովուրդս . զառաջին ողջոյնս 'ի հրապարակս . . . . . մի՛ բազմեսցիս յառաջին բարձին . . . փառաւորեաց զնա Թգ՟րն ը՟ առաջին բարեկամսն . . . զմուռս և հալուէ հանդերձ ամ՟ առաջին խնկօք . . . միքայէլ՝ մի յառաջին իշխանացն եկն օգնել ինձ || . և ը՟ այսմ նշանակութե՝ զյունական բառըն՝ առաջին, ը՟ նոցա , փրօ՛դէրօս . փրօ՛դադօս , փրօդօս , լ՟տ , երանելի Թարգմանիչքն մեր յա՟ծաշնչի ուրեք ուրեք առ մեզ Թարգմանել են՝ Գլխաւոր , ո՟պ յայսոսիկ || Գրգռեցին . . . զգլխաւորս քաղաքին (Գրծք . ԺԳ . 50) . . . առաքել յանտիոք զյուդա և զսիղա զայրս գլխաւորս (անդ . ԺԵ . 22) . . . զգացուցին նմ՟ քահանայպ՟տքն և գլխաւորք հրէիցն զպաւղոսէ (անդ , ԻԵ . 2) . . . եղև յետ երից աւուրց կոչել նմա զհրէից գլխաւորսն (անդ . ԻԸ . 17) . . . էառ դահճապետն զսարեա զքահանայ զգլխաւորն , և զսոփոնիա զեկ՟րդն (Երեմ . ԾԲ . 24) . . . նստուցէ՛ք զնաբովթ 'ի գլուխ ժողովրդեանն (Գ . Թագ . ԻԱ . 9. 12)։ Յայս ամ՟ տեղիս (բաց 'ի գրծ . ԺԵ . 22) յոյն բնագիրն դնէ զբառդ առաջին , զոր նախնիք մեր ը՟ մտացն եդեալ են Գլխաւոր, Գլուխ, որ այն ինքն է ասել Փառաւոր , Պատուելի , Նախապատիւ , եւ ահա նոյն այս բառ է , զոր նոյնպիսի նշանակութ՟ ընծայել են նախնիք մեր սբ՟յն պետրոսի , ո՟պ ասելն Լուսաւորչին || , քա՟ղունդ և խաչակիր առաքելոցն , որոց գլխաւորն պետրոս || . և որ զկնի նր՟ այլ վրդ՟պտք մեր 'ի կիր առեալ են զնոյն բառ նոյնպիսի նշանակութ՟ , իբր բացատրու՟ն բառիս՝ առաջին . որ ընծայի պետրոսի միայն 'ի մտթ . Ժ . 2 . Թէպ՟ և ճիշդ ը՟ ո՟յ խօսելով՝ աստ եւս ոչ դնի եկ՟դկն նշանակութ՟ , այն է՝ փոխանակ Գլխաւորէ, այլ ըս՟ բուն նշանակութե՟ իւր թուական անուն դասական, որ քերթողական վերլուծութ՟ յայտ լինի 'ի բնաբանէն. ուրանօր նախ դնի Հաւաքական թիւ առաքելոցն. յասելն || եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր. . . եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ ||. ապա սկսանի զիւրաքանչիւրսն թուել. առաջին՝ սիմովն, երկ՟ր անդրեաս, եր՟ր յակոբոս, չր՟ր յովհաննէս, եւն ։ || Ս՟կ յընթեռնուլ մեր 'ի գիրս Նախնեաց, թէ պետրոս է գլխաւորն առաքելոց, մի՛ իբրև զխելաբախ մանկունս շփոթեսցուք, այլ ճշմարտութ՟ անսխալ իմասցուք զմիտս Ն՟ց. թէ կամին Ն՟ք միայն զայս ասել, պետրոս էր առաւել պատուելի, մեծապատիւ 'ի մէջ առաքելոց, և զայս ո՞ ոք ուրանայ, զի ա՟մքն խոստովանիմք զայդ ը՟ ս՟բց Հայրապետաց մերոց, և այդ է ուղղափառ դաւանութի՟ Հայաստանեայցս եկեղեցւոյ, յորմէ ո՛չ երբէք բաժանիմք, և ո՛չ փոփոխեմք զդաւանութի՟ Ն՟ց. և ո՛չ իսկ տանիմք թէ կեղծել բարեկամքն փոխեսցեն զմիտս բանից ս՟բց վրդ՟պտց մերոց, օտար իմաստս և սուտ նշանակութի՟ս բանի 'ի ներքս մուծանելով, ո՟պ հնարի առնել Հայրըն գաբրիէլ առ յիշել բանսն շարականին, 'ի բացատրութե՟ն (էր. 131) ։ և այս լիցի մեզ առ ժամ՟ երկդշահ Հոգւոր և զգուշաւորութ՟ յիմանալ զբանս նախնեաց, զի մի՛ ըս՟ օրինակի միամիտ Հարցն ժողովելոց 'ի կոստանդնուպօլիս՝ գահավիժեսցուք բառս օտարս 'ի լեզուէ և 'ի մտաց եկեղեցւոյս մերոյ. ուր և զայն կարէ դիտել ձերդ եղբայրութի՟, թէ ո՞րչափ վնասակար է եկեղեցական անձանց տգէտ լինելն քերականութե՟ և տրամաբանութե՟. և ո՞րքան ամօթալի է չգիտել զբաուրս լեզուիս և զնշանակութ՟ի նոցին , և զիմաստ գրելոցն 'ի նախնեաց մեր , որով հարկ լինի ն՟ց խաբիլ ամ՟ հողմով բանից սուտ և օտար վարդապետաց՟ ։

Հարցանօղ.

§. 86. Ո՛ւէ հաճոյ է սիրելի եղբարցդ՝ ասացէ՛ք ինչ և վ՟ս եկ՟դ փաստի (§. 5) պապականաց . առ այն թէ ս՟բն պետրոս գնաց 'ի հռովմ , հիմնեաց անդ զեկեղեցի , և կալաւ զառաջնորդութ՟ի նորին զամս 25, եւ՟, վ՟ս զի յայսմանէ հաստատեն ն՟ք թէ եպ՟սք հռովմայ են յաջորդք պետրոսի , և ունին զամ՟ հեղինակութ՟ին իբր գլուխ և միապետական իշխող ամ՟ եկեղեցեաց և ամենայն քրիստոնէից , եւ՟ ։

Պատասխանօղ.

§. 87. Ընդդէմ այդր փաստի բզ՟մ ինչ պատրաստեալ է մեր . բայց 'ի նեղ ժամուս համառօտու՟ք տացուք զայս սակաւ պ՟տասխանիս ։ Նախ առաջին՝ ա՟ծաշունչ գիրքն 'ի գործս և 'ի թուղթս առաքելոց՝ ո՛չ երբէք նշանակէ , թէ պետրոս գնացեալ իցէ 'ի հռովմ քաղաք , կամ անդ քարոզեալ և հիմնեալ իցէ զեկեղեցի , ապա ուրեմն այդ բան ո՛չ է մասն հաւատոյ իբր ա՟ծային հաւատով դաւանելի . և հնար է առանց մեղաց ուրանալ զայն . զի արտաքոյ ս՟բ գրոց ո՛չ գոյ նիւթ հաւատոյ ։ Եւ թէպէտ ոմանք յապուշ պապականաց կամելով 'ի ս՟բ գրոց հաստատել զայդ , յառաջ բերեն զբանն պետրոսի (Ա. Թղթ. Ե. 13) ‖ Ողջոյն տայ ձեզ , որ 'ի բաբելոն ընտրելակից եկեղեցին է , և մարկոս որդի իմ ‖ , ուր բառն՝ բաբելոն փոխաբերու՟ք եդեալ նշանակէ առ ն՟ն զհռովմ քաղաք՝ վ՟ս ընկղմելոյն 'ի կռապաշտութ՟ե եւ՟ . Սակայն սուտ է այսր մեկնութ՟ե ցուցանի այնուիկ , զի 'ի ստորագրու՟նս նամակաց և թղթոց՝ չի՛ք երբէք սովորու՟ն , փոխանակ բուն անուան՝ դնել զբառ փոխաբերական և այլաբանել , և ոչ իսկ 'ի մ՟ջ թուղթս պօղոսի կ՟մ այլոց առաքելոց գտանի այդմ օրինակ · վ՟ոյ ասելի է թէ բառն ԲԱԲԵԼՈՆ ցուցանէ ըզբուն քաղաքն ասորեստանի այդու անուամբ ծանուցել 'ի ս՟բ գիրս , և թէ անդ գնաց ս՟բն պետրոս և անտի գրեց զառաջին թուղթն · որում հաւատարիմ վկայ է և խորենացին մեր 'ի Ե՟ դարու , մանաւանդ՝ աբգար թ՟գր մեր յառաջին դարու , որ գրելով նամակ առ ներսեհ թ՟գր բաբելոնի՝ ասէ ‖ Ընկերաց նորա ԳԼԽԱՒՈՐԱՑ՝ սիմոն անուն , անդր 'ի կողմանս պարսից առաքել է · խնդիր արարել լուիցես նմա . . . մի յաշակերտաց ն՟ր ԳԼԽԱՒՈՐԱՑ սիմոն անուն (ԽՈՐԷՆ · Բ · 30)։ Ուրանօր ասելն , Գլխաւոր աշակերտ ք՟ի սիմոն անուն , յայտ յանդիման նշանակէ զսիմոն պետրոս կ՟մ կեփաս · զոր ճշմարիտ համարին և թարգմանիչք խորենացւոյն վիստոնեան եղբարք · վ՟րկ չէ պարտ հաւատալ մկրտիչ վրդ՟պտի , որ (ՎԱՐԺ · Ս՟ԷՋ · ՀԱ · Բ · ԵՐ · 98) զայս բան խորենացւոյն առանց ա՟մ հիման մեկնէ 'ի վ՟ր սիմոնի կանանացւոյ , և զբանն՝ յընկերաց ն՟ր ԳԼԽԱՒՈՐԱՑ , ը՟ս քմաց իւրոց 'ի փակագծի ձգէ 'ի վ՟ր երկոտասանից , որ է կեղծիք · զի սիմոն կանանացի յոչինչ գիրս կոչի ԳԼԽԱՒՈՐ աշակերտ ք՟ի , այլ միայն պետրոս և պօղոս միշտ անուանին ԳԼԽԱՒՈՐՔ առաքե՟լ ։ Բայց և պարտիմք շնորհ ունել նոյն մկրտիչ վրդ՟պտի , որ բացայայտ յիշէ զայս ճշմարտու՟ն մեր (ՎԱՐԺ · Ս՟ԷՋ · ՀԱ · Է · ԵՐ · 129) յասելն ‖ ս՟բն պետրոս 'ի յիշելն զմարկոս 'ի թղթի իւրում՝ յիշէ և զեկեղեցին բաբելոնի , որ առաւել զհռովմ կամ զաղէքսանդրիա երևի նշանակել , բայց քանզի 'ի հինն բաբելոն կայր պատրիբիրզոն քաղաք , 'ի նոյն հակամիտել են միտք ոմանց (դու յաւե'լ , բազմաց) 'ի գրչաց ‖ ։

§. 88. Երկդ՝ գնալն պետրոսի 'ի հռովմ՝ է անստոյգ աւանդութի մարդկային և պատմական , յառաջին , յերկդ և յերրդ դարն բնաւ անլուր և անծանօթ , նախ առաջին գրով աւանդել 'ի չորրդ դարուն յեւսեբիոսէ կեսարացւոյ , բայց անհաստատ բանիւք ․ վն զի յեկեղեցական պատմութեն (գր ․ Բ ․ գլ ․ ԻԵ) խօսի ըստ լրոյ ականջաց կարծիքական երկբայութբ , քանզի ասէ ‖ Աւանդեալ լինի , թէ պօղոս 'ի հռովմ գլխատեալ իցէ , իսկ պետրոս 'ի խաչ ելեալ իցէ առ Թգրութբ նր (յն ներոնի) ։ Նոյնն (գր ․ Գ ․ գլ ․ Ա) ասէ ‖ իսկ պետրոս Երևի թէ քարոզել իցէ 'ի պոնտոս , 'ի գաղատիա ․ ․ ․ որ և 'ի Վախճանի Կենացն (լուր՝ զինչ խօսի) 'ի հռովմ եկեալ գլխիվայր խաչել է ։ ‖ Բայց սակայն նոյն սա 'ի քրոնիկոնն իւր հակառակ անձին խօսի , (ըստ տպագրութեն Սքալիճերի ․ 'ի 43 ամն քսի ․ և 'ի 2 ամն կղոդիայ , որ 'ի հայ տպագրութեն վենետկոյ այլազգ եդել է 'ի 3 ամն գայիոսի) , ասելով ‖ պետրոս առաքել յետ հիմնելոյ զեկեղեցին անտիոքայ , 'ի հռովմ առաքի , ուր զամն 25 քարոզելով զաւետարանն՝ մնայ եպս այնր քաղաքի ‖ ։ Այս բան եւսեբիոսի քզի յայտնի հակառակ է 'ի վերոյ ասացելոյն ‖ 'ի վախճանի կենացն եկել 'ի հռովմ ‖ , այժմ յամն կրիտիսաց համարի յանդուգն յաւելուած հերոնիմոսի , որ զակատել գոլով զհետ աթոռոյն հռովմայ՝ 'ի հաստատել զյաջորդուի պապիցն 'ի պետրոսէ , յաւել զայդ բան 'ի քմաց իւրոց , որում վկայէ մեծի մասն Սքալիճեր , առ բանսն » զամն 25 » այսպ ծա

նօթաբանելով || Յաւելե՟լ են (այս բանք) 'ի Հերոնի
» մոսէ, և 'ի նմանէ կրկնե՟լ լինի 'ի ցուցակն եկեղե-
» ցական մատենագրաց ։ Յունական (ձեռագիրք) ոչ
» ունին զայդոսիկ (բանս) ։ 'Ի համբարձմանէն Ք՟ի
» մինչև ցայն ժամանակ, յորում պետրոս բանտար-
» կեալ եղև 'ի Հերովդէ ագրիպպայ . . . . միշտ 'ի
» պաղեստին կ՟մ 'ի սիւրիա եղև պետրոս ։ Հերովդէս
» ագրիպպայ մեռաւ 'ի չ՟րդ ամին կղոդե՟յ . զիարդ ապա
» յե՟կդ ամին կղոդեայ 'ի Հռովմ գնաց (պետրոս), զիարդ
» զամս 25 յարատևեաց 'ի Հռովմ, ևն || ։ Եւ այժմ
առ ամ՟ կրիտիկոս խոստովանե՟լ է, թէ Հերոնիմոս 'ի թարգմանելն զ յունականն եւսեբիոսի՝ բ՟ց ինչ յաւելել յիւրմէ մանաւանդ 'ի պատմութե՟ն վ՟ն Հռովմայ, զոր և Հայրն մկրտիչ խոստովանի 'ի լատինական յառաջաբանութեանն գործոյն եւսեբիայ. Թէպէտ և վասն գնալոյն պետրոսի 'ի Հռովմ բնաւ և ոչ բառ մի խօսի 'ի ծանօթութիւնսն ։

§. 89. Ս՟կ բազումք յոյժ յիմաստուն վրդ՟պտց վերջնոց, մանաւանդ փրետերիկ սփանհեմիոս (Հտ՟. Ա՟. էր. 535. ևն) յայտնի ցուցանեն թէ պետրոս ոչ երբեք գնացե՟լ է 'ի Հռովմ. և ոչ զամս 25 կացե՟լ է եպ՟ս այնր վիճակի, և առ 'ի հաստատել զայս բերեն փաստըս անխոտելիս, ո՟պի են, Նախ այն, զի ոչ միայն ս՟բն Ղկ՟ս 'ի գործս առաքելոց բնաւ ոչ յիշատակէ զայդ, զոր ամօթ էր նմա զանց առնել, մանաւանդ թէ անկարելի, այլ և ոչ միւս առաքե՟լք. ոչ ինքն պետրոս 'ի թուղթս իւր, ոչ պօղոս 'ի չորեքտասան թ՟ղթս իւր. ոչ յովհաննէս որ յետ ամ՟ց գրեաց զթուղթս և զաւետարան իւր. ոչ առաքելոց աշակերտք յառաջին դարու, ո՟պի են կղեմէս Հռովմայեցի, իգնատիոս, պողիկարպոս․ բառնաբաս, հերմէս, եւն․ և ոչ եւս գրիչք կմ՟ պատմիչք եկ՟դ դարուն․ ո՞րք են, պապիաս, կոդրատոս, արիստիդէս, յուստինոս վկայ․ իրենէոս, պողիկարպոս, թէոփիլոս, մելիտոս, ապողինար, դիոնեսիոս, եկեսիպպոս, դատիանոս, աբերկիոս, աթենագորաս, կղեմէս աղեքսանդրացի, պողիկրատէս, և այլ նմանք, խօսին 'ի թղթս կամ 'ի գիրս իւրեանց վ՟ն այսր իրի ։ Այլ արդ՝ զինչ կարելի է հաւատալ, թէ այսչափ երևելի անձինք զանց արարեալ իցեն յիշել զայդպիսի երևելի դիպուած․ ապա ուրեմն եւն ։ Եկ՟դ այն, զի ոչ միայն չէ յայտնի ժամանակ գնալոյն պետրոսի 'ի հռոմ, այլև զի բնաւ չէ կարելի միաբանել ը՟ն ճիշդ ժամանակագրութե՟ ըզ մնալն ն՟ր 'ի հռոմ զամս 25․ իբր զի պետրոս մինչև ցամն 52, յորում սոյն դնի ժողովն առ՟քլց (Գրծ․ ԺԵ) անդ յեր՟էմ էր, իսկ նահատակութ՟ի ն՟ր համարի 'ի 66 ամի տ՟ն, զիա՛րդ ապա 'ի 40, կմ՟ 43, ամի գնաց 'ի հռոմ և մնաց անդ, կմ՟ դարձաւ յետս, եւն ։ Թո՛ղ զայն․ զի ասեն եւս թէ զեօթն ամ զեկեղեցին անտիոքայ հովուեալ իցէ, եւն․ որք են անստոյգ և անհաստատ բանք․ զորոց տե՛ս 'ի սփանհէմիոս, առ որում գտցես և զայլ բազում փաստս ։

§․ 90․ Ա՛րդ՝ համարեսցուք թէ ստոյգ իցէ գնալն պետրոսի 'ի հռոմ, բայց ո՞րպիսի է այդ ստուգութ՟ի, յայտ է թէ մարդկային և պատմական, հիմնեալ 'ի վկայութ՟իս ոչ ժամանակակցաց և ոչ ականատեսից, այլ երեք դարուք յետին վկայից․ և այն կարկատուն բանիւք, և ը՟ն մասին միայն, այն է՝ ը՟ն գնալոյն պետրոսի 'ի վախճանի կենացն, և ոչ ը՟ն հովուելոյն ն՟ր զամս 25 զեկեղեցին հռոմայ իբր թեմակալ եպ՟ս տեղւոյն, վ՟ն զի այդ բոլորովին հակառակ է առաքելական պաշտաման, իբր զի ո՛չ ճշմարտութ՟ ուսուցանէ ոսկեբերան (Մեկն․ Տիմ․ Ճառ․ ԺԲ) առաքեալն այսուիկ տարբերել զանազանի յեպս՟է, զի առաքե՟լք չէին կապե՟լ ը՟ մասնաւոր ինչ տեղւոյ և քաղաքի, այլ հրամանօքն ք՟սի պարտաւոր էին երթալ յաշխարհ ամ՟, քարոզել զաւետարանն ամ՟ արարածոց, և հիմնարկել զեկեղեցիս յա՟մ կողմունս աշխարհի․ հակառակ այդմ՝ եպիսկոպոսունք կապե՟լ են ը՟ միում թեմի և վիճակի, և չկարեն խառնիլ ՚ի վիճակ այլոց, բայց եթէ ՚ի յետին հարկաւորութե՟․ ուստի ը՟ այսմ պետրոս ամենեւին չկարէր զամս 25 իբր հասարակ եպս՟ հաստատել զաթոռ իւր ՚ի հռովմ․ որ հաստատի և այնու, զի ո՛չ միայն պետրոս ՚ի թուղթս իւր ո՛չ կոչէ զինքն ԵՊՍ՟ ՀՌՈՎՄԱՅ, այլ միշտ ԱՌԱՔԵԱԼ ՔՐԻՍՏՈՍԻ․ այլ և զի պատմագիրք զկարգ եպս՟յն հռովմայ սկսանին ՚ի ղինոսէ, զոր կոչեն ԱՌԱՋԻՆ եպս՟ ։ ը՟ այսմ նա ինքն եւսեբիոս ՚ի քրոնիկոնն (հայ, և լատ, տպեալ ՚ի 1818 ՚ի վենետիկ) զկղեդոս կոչէ ԵՐԿ՟ եպս՟․ և զղինոս՝ ԱՌԱՋԻՆ եպս՟, զոր և հաստատէ տպագրիչ հայրն մկրտիչ ՚ի լատին ծանօթութ՟ին (յէր․ 354)։ զդոյն կարգ պահեն և հերոնիմոս, և եպիփան (հերձ․ 27)․ և այլ պատմիչք։ Ապա ուրեմն բ՟աւ իսկ սուտ է ասելն․ թէ պետրոս եղեւ առաջին եպս՟ հռովմայ․ այլ մնայ միայն ճշմարտանման աւանդութ՟ին թէ ՚ի յետին աւուրս կենացն եկեալ իցէ ՚ի հռովմ և խաչեալ առ ներոնիւ, և այն ևս երկբայական ստուգութ՟․ ը՟ որոյ և հայրն մկրտիչ ՚ի վերս նր՟ց (հատ․ Ժ) իմաստուն խոհականութ՟ բնաւ իսկ չմերձենայ ՚ի զննութ՟ի աւանդութ՟ցդ․ այլ զհասարակ աւանդըս յայսմաւուրաց կրկնելով, փոխանակ ճանապարհորդուե՟ն պետրոսի՝ 'ի ծանօթութեան զիւր Ճանապարհորդութի՟ն պատմէ, չիմանամք յի՞նչ պէտս, գուցէ 'ի սեւակել զերեսս թղթոց, և 'ի թանձրացուցանել ըզհատորս, զի երևեսցի բազմագրիչ :

§. 91. Արդ՝ անհնարին պէսպիսու՟թի է կարծեց թէ վ՟ն եղանակի մահուանն պետրոսի, զոր այլազգ պատմէ աթանաս յառաջին ջատագովութե՟ն, այլազգ եւսեբիոս. այլազգ որոգինէս և հերոնիմոս. թէ՝ վ՟ն յաջորդացն պետրոսի, ըստ որում՝ ոմանք զղինոս դնեն առաջին եպ՟ս, ոմանք զկղեմէս, և ոմանք զայլոք, զոր յիշէ և գերապատիւ միքայել վ՟րդապետն չամչեան յերորդ հատորն պատմու՟ե հայոց յաղիւսակսն : Ոմանք հաստատեն թէ պետրոս և պօղոս միանգամայն քարոզեին 'ի հռոմ, պետրոս հրէից, և պօղոս հեթանոսաց, որոց և մահն է անստոյգ. զի ոմանք ասեն թէ 'ի միում ամի և 'ի նոյն աւուր նահատակեալ իցեն, և ոմանք թէ մին զկնի միոյ տարւոյ, ևն : Նոյնպ՟ անհաստատ է ամ՟ աւանդու՟թի վ՟ն իրացս. և ո՛չինչ արգելու զմեզ չընծայել հաւատս այդպիսի երկբայական կեղծեաց. ը՟ որում տեսանեմք, զի ընմանօրինակ պատմու՟թի նորին եւսեբիոսի վ՟ն անձեռագործ դաստառակին ք՟ի առ աբգար թագաւոր եդեսիոյ, այժմ ամ՟ կրիտիկք յայտնի սուտ և կեղծիք համարին. ո՟պ և վ՟ն այլոց անթիւ գրուածոց և գործոց նախնեաց՝ իմաստուն խոհականութ՟ք յերկբայս լինին : Նոյնպ՟ ը՟ այսոցիկ չէ ինչ ը՟դէմ, թէ զբովանդակ զայդ պատմու՟թի գնալոյն պետրոսի 'ի հռոմ և հիմնելոյն անդ զեկեղեցի, համարեսցուք կեղակարծ և անհիմն ստեղծաբանու՟թիս ոմանց շողոմարարաց : Բայց դիցուք թէ ստոյգ իցէ այդ ամ՟ պատմական ստուգութ՟ք և մարդկայի՛ն վկայութ՟, զի՞նչ օգուտ այտի պապականաց . կամ զի՞նչ կամին յայնմանէ մակաբերել, թէ տեղեակ էք, ասացէ՛ք, զի լուիցուք ։

Հարցանող.

§. 92. Ո՛չ կարծեմք թէ 'ի սրամտութ՟ եղբարցդ թագչի մակաբերութ՟ նց՟, զոր և յառաջագոյն (§. 6) ցուցաք ձեզ, այն՝ զի ասեն թէ ամ՟ իրաւունք և իշխանութ՟իք պետրոսի անցանեն յամ՟ յաջորդս նր՟ 'ի հայրապետս հռովմայ . և ո՟պ պետրոս յայնժամ էր գլուխ առաքելոց, նոյնպ՟ և այժմ հայրպ՟տն հռոմայ է գլուխ և կառավարիչ ամ՟ եպս՟ց և ամ՟ եկեղեցե՟ց ը՟հանուր ազգաց քրիստոնէից, հայոց, յունաց, ասորւոց, և ամ՟ հաւատացելոց, վ՟յ ամ՟քին պարտին հնազանդիլ նմա, 'ի նմանէ կառավարիլ, եւն. արդ՝ դուք զի՞նչ ունիք ասել ընդդէմ այսոցիկ ։

Պատասխանող.

§. 93. Եւ մեք իսկ ո՛չ կարծեմք, թէ թաքուն մնայ 'ի ձէնջ պատասխանի մեր առ այդպիսի սնոտի բանս պապականաց, զի ցայսվայր ասացելքն մեր վ՟ս ն՟րյն պետրոսի, բաւական ցուցանեն և զօրպիսութ՟ն յաջորդաց նր՟, թէպ՟ և ո՛չ ը՟ն ամ՟ մասանցն . վ՟ս զի նախ՝ ո՟պ պետրոս ո՛չ բնաւ եղև [illegible] Գլուխ և Տէր առաքելոց և ամ՟ քրիստոնէից (զոր յերկար ապացուցաք § . 9=60). նոյնպ՟ և եպս՟ունք հռովմայ (թէ՛ և համարեսցին յաջորդ պետրոսի) ո՛չ են և ո՛չ կարեն ասիլ [illegible], Տէր կմ՟ Գլուխ եկեղեցւոյ և եպս՟ց, թէպ՟ և ոմանք 'ի նախնի վարդ՟պաց չափազանցութ՟ խօսեցեալ իցեն ինչ զնմանէ, որ մեզ անը՟ունելի է ։ Եկդ՝ ո՟պ ն՟քն պետրոս միայն կարգաւ և պատուով առաւելեալ էր քան զայլ առաքեալս (տե՛ս §. 61. Նա). Ը՟ նմին օրինակի և յաջորդք ն՟ր եպ՟ունք Հռովմայ՝ միայն առ տաքին պատուով նախագահ են այլոց եպ՟ոց, և ո՛չ թէ տիրողական իշխանու՟բ ։ Վկայ են այսմ պ՟ապ բանք վրդ՟պաց և ժողովոց, որք միայն զառաւելու՟ն պատուոյ ընծայեն եպ՟ին և եկ՟ղեցւոյն Հռովմայ և ո՛չ աւելի ինչ. և այն վ՟ն գոլոյն Հռոմայ աթոռ կայսերաց և առաջին մայրաքաղաք տիեզերական տէրութեն Հռովմայեցւոց. որպ վ՟ն և 'ի կարգս առաջին պատրիարգաց դասեցաւ 'ի նախնեաց ։ Իսկ ինքեանք պապականք մեծամեծս խորհին և խօսին վ՟ն եպ՟ին և եկեղեցւոյն Հռովմայ, կոչելով զնա ՄԱՅՐ և ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՄ ՈՒՍՈՒՑԻՉ ԱՄ՟Ն ԵԿԵՂԵՑԵԱՑ, որ զառաջինն գտանի 'ի կեղծուպատիր Թուղթն կալիկոդի պապին, յորում աւին և հետագայ գրիչք, որպ և ժողովն դրիտենդինոյ (Նիստ. Է. Կան. 3. Նիստ. Ժդ. Կան. 3) ։ Բայց սակայն ը՟ ճշմարտուե այդ ծաղրական անուն ո՛չ պատշաճի նմա արժակաբար. այլ միայն նկատմամբ ոմանց եկեղեցեաց իտալիոյ, սպանիոյ, և գաղղիոյ, որոց հիմնադիր եղեն քարոզիչք յառաջին ժամանակս 'ի Հռովմայ առաքե՟լք. իսկ նկատմամբ արևելեան եկեղեցեաց Հայոց, յունաց, ասորւոց, վրաց, և այլոց, սուտ է ամենեւին թէ եկեղեցին Հռովմայ իցէ մայր՝ ծնող և ուսուցիչ սոցա, վ՟ն զի այսպիսի ը՟հանրական ծնող և մայր եկեղեցեաց ամ՟ քրիստոնէից՝ է միայն եկեղեցին Ե՟մայ, ը՟ բանին ք՟ի, Եւ ասէ ցնոսա, այսպ՟ պարտ էր չարչարել ք՟ի . . . և քարոզել յանուն ն՟ր ապաշխարու՟ն և թողու՟ն մեղաց յամ՟ ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ (Ղուկ. ԻԴ. 46). զոր և խոստովանին հարքն կոստանդնուպօլսոյ ժողովոյն 'ի Թուղթն առ դամասոս (տե՛ս 'ի Հարտուլին · հտ · ա՟ · էր · 826) · եւս կայսրն յուստինոս 'ի Թուղթն առ ոռմիզդ (Հարտուին · հտ · Է · էր · 1025)· և այլ բազումք ։ Զիա՞րդ ապա ոչ ամաչեն պապականք և ոչ երկնչին յա՟յ, այդպիսի ը՟հանուր բառիւք խօսելով՝ խաբել զտխմար աշխարհականս մեր, և փոխել զնոսա յեկեղեցի իւրեանց ։

§· 94· Եւս առաւել ծաղրական և ամենասուտ է այն, զի զեպ՟սն հռովմայ կոչեն Գլուխ ընդհանուր եկեղեցւոյն ք՟սի, վ՟ս զի այդ բառ և ոչ միով նշանակութ՟բ պատշաճի երբէք եպ՟սին հռովմայ, իբր զի բառըն Գլուխ եթէ առցի ՙՆախ՝ ըս՟ բնական նշանակութեն, իբրու այն՝ որ տայ անդամոց և բոլոր մարմնոյն զկենդանութ՟ի, զշարժումն և զզգայութ՟ի · ըս՟ այսմ միայն ք՟ս է եկեղեցւոյ գլուխ էական՝ և սկզբնական, զոր և նոյն իսկ պապականք ը՟ունին ։ Եկ՟դ՝ կեղծեն այս պապականք զայլ իմն նշանակութ՟ի Գլուխ բառին, զոր կոչեն Պաշտօնէական (Caput ministeriale), և զայս ընծայեն հայրապետին հռովմայ, բայց և այս նշանակութ՟ի է սուտ և անխմանալի · մի՝ զի ասել Գլուխ և պաշտօնէայ, հակասական է յեզերսն · միւս ևս՝ զի ոչ կարեն փաստիւք ապացուցանել թէ յումմէ՞ է կացուց՟ել այդ գլուխ ։ Եթէ ա՟ծային հրամանաւ է, ա՛ղէ՝ ցուցցեն մեզ զվկայութ՟իւն ս՟բ գրոց ։ Եթէ 'ի մարդկանէ է, ոչ արժէ դանկ մի, և քակտեսցի ։ Եթէ 'ի յաջորդութ՟ի ս՟բյն պետրոսի առաքելին, ահա բազմօք ապացուցաք, թէ այդ բնաւ և ոչինչ օգնէ ն՟ց · զի թէ ինքն իսկ պետրոս ոչ էր գլուխ առաքելոց և եկեղեցւոյ, զիա՞րդ ապա կարաց փոխանցել 'ի յաջորդս իւր զայն ինչ, զոր ոչն ունէր · թող լուիցեն պապականք բանից բեռնարդոսի իւրեանց ս՟բյ, որ գրելով առ պապն եւգենիոս

ասաց || Առաքելոց արգելեալ լինի Տիրողութիւն · Երթ-
» ապա դու և յանդգնեա՛ց գրաւել քեզ կամ զտիրողա-
» կան առաքելութիւն · կամ զառաքելական տիրողութիւն ։
» Եթէ զերկոսին ես կամիս ունել, զերկոսին ևս կո-
» րուսցես . . . . Դիցուք թէ այլով ինչ եղանակաւ
» գրաւես քեզ զայս (զիշխողութիւն), բայց ոչ առաքելա-
» կան իրաւամբք · զի և ոչ նա (պետրոս) կարաց տալ
» քեզ զայն ինչ, զոր ոչն ունէր ։ Զոր ինչ ունէր՝
» զայն ետ քեզ , զհոգս 'ի վերայ եկեղեցեաց · որպէս ասացի ։
» Մի՞թէ և զտիրողութիւն ։ Լո՛ւր նմա · մի՛ Տիրելով
» առէ վիճակացն , այլ լինել օրինակ հօտին ։ Եւ մի՛
» կարծիցես թէ այդ լոկ խոնարհութեամբ ասացեալ է , և
» ոչ ճշմարտութեամբ , ձայն Տեառն կայ յաւետարանի , թէ
» թագաւորք ազգաց տիրեն նոցա , Ղկ. (իբ. է. իե. ն) ։

Որչափ հեռացան հետագայ հայրապետք հռովմայ յայսց իմաստութեան բանից բեռնարդոսի , զոր պաշտեն իբր սուրբ, այլ զխրատ նորա և ոչ իսկ լսել կամին ։

§. 95. Բայց մեք յաւելցուք զայլ ինչ պիտանի, այն է՝ թող պապականք ամենայն գրոց վկայութեամբ հաստատեսցեն մեզ , թէ պետրոս ունէր 'ի քրիստոսէ հրաման առ այս՝ զի զամենայն անձնական արտօնութիւնս իւր փոխեսցէ յեպիսկոպոսունս յաջորդեալս յաթոռ իւր , զի ուստի՞ գիտեն նոքա թէ եպիսկոպոսն հռովմայ ունի զամենայն իշխանութիւնս պետրոսի , ո՞վ է որ ուսուցանէ զայդ · ա՛ղէ՝ ասասցեն ։ Եթէ մարդիկ վկայեն , ոչ կարեմք հաւատալ ամենայն հոգւոյ · այլ պարտիմք ընտրել զհոգիսն , յԱստուծոյ իցեն՝ եթէ ոչ ։ Իսկ եթէ Աստուած հրամայէ զայդ , հապա ցուցցեն մեզ յո՞ր գիրս աստուածաշնչին , յորո՞ւմ գլխոջ , յորում տան գրեալ իցէ այդ հրաման առ պետրոս · ապա չեմք զիմաստութեան մխիթարենս , թող գրեսցեն զպատասխանի այսոցիկ ։ Ընթերցաք երբեմն 'ի գիրս լատինաց ․ զի առ 'ի հաստատել զայս, ը՟ խելաց իւրեանց թանձր ագիտութ՟ յառաջ բերեն զբանն ք՟սի ‖ Ահաւասիկ ես ը՟ Ձեզ եմ զա՟մ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի ‖ ․ ուր բանն մինչև 'ի կատարած աշխարհի, ցուցանէ առէն ոչ զանձինս առաքելոց, որք չէին ապրելոց մինչև 'ի կատարած աշխարհի, այլ զյաջորդ եպ՟սունս ն՟ց ։ Բայց թէ արդարև այս բան նշանակէ զյաջորդս առաքելոց և զփոխումն հեղինակութե ն՟ց 'ի յաջորդսն ․ ապա պարտիմք ասել, թէ որովհետև այս բան ոչ միայն առ պետրոս ասացաւ, այլ յոդնակի բաւիւք առ ա՟մ առաքե՟լս և աշակերտս, ուրեմն ըստ այսմ ոչ միայն յաջորդն պետրոսի, այլ և ա՟մ յաջորդք այլոց մետասան առաքելոց և եօթանասուն և երկու աշակերտաց պարտին ունել յաւիտե՟ն զա՟մ իշխանու՟իս և զհեղինակու՟իս ն՟ց շարունակաբար ․ այլ արդ՝ ո՞յք են յաջորդք այլոց առաքելոց, ո՞ւր է տեղի և աթոռ առաքելութե ն՟ց, ո՞ւր է յաջորդն պօղոսի, յակոբու զեբեդեայ, յակոբու ալփեայ, փիլիպպոսի, թադէոսի, և այլոց ․ ահա և տեղի նահատակութե բզ՟մ առաքելոց ընաւ իսկ անծանօթ և անստոյգ է մեզ, ո՟պ ուսուցանեն յայսմաւուրք ա՟մ ազգաց ․ թո՛ղ զի և շարք յաջորդաց ոմանց առաքելոց ընաւ իսկ վերջացեալ է, ո՟պ թովմայի 'ի հնդիկս ։ ևս և զի յաջորդք ոմանց առաքելոց՝ ը՟ սովորական լեզուի պապականաց՝ այժմ հերետիկոս և հերձուածող փոխեալ են, ո՟պ յոյն եպ՟ն եփեսոսի, անտիոքիոյ, և՟ք ։ Ո՞րդ ապա կարելի է հաւատալ, թէ յիշել բանն ք՟սի հայեսցի 'ի յաջորդս առաքելոց ։ Եւ եթէ այս բան ոչ է վ՟ն յաջորդաց, ապա ցուցցեն մեզ պապականք թէ պետրոս զի՞արդ, և որո՞յ հրամանաւ կարաց փոխել զանձնական արտօնութ՟իս իւր 'ի յաջորդ եպ՟սունս: Ո՛չ կարեն պապականք ապացուցանել զայս. ապա և մեք ո՛չ կարեմք և ո՛չ պարտիմք հաւատալ թէ եպ՟սն հռոմայ ունիցի զա՟մ հեղինակութ՟իս պետրոսի:

Հարցանողք.

§. 96. Եթէ ներէ մեզ ձերդ եղբայրութ՟ի ասել զոր զգամքս, անպատրուակ խոստովան լինիմք, թէ ո՛չ յագեցան միտք մեր 'ի ձերդ բանից. իբր զի բարձիք յեկեղեցւոյ զգլուխ, որով քրիստոնեայք մնան անտէր և անգլուխ. և զի՞արդ կառավարեսցի այդչափ անթիւ բազմութ՟ի. և ո՛չ իսկ օրինակք ուսուցանեն ձեզ, զի թէ տուն, և նաւ, և վաշտ զօրաց և քաղաք ո՛չ ուղիղ կառավարի առանց գլխոյ, զի՞արդ ապա ասէք, թէ բազմութ՟ի քրիստոնէից կարիցէ կառավարիլ առանց միոյ երևելի գլխոյ յեկեղեցւոջ, ո՟պի դընեն պապականք, մանաւանդ՝ զի առանց այդպիսի գըլխոյ թուի թէ անհնար է ևս պահել զմիութ՟ի եկեղեցւոյ, զոր դաւանիմք 'ի հանգանակի հաւատոյ:

Պատասխանողք.

§. 97. Մեք համարեաք՝ թէ ցայսվայր ասացե՟լքն մեր շատ լիցին բառնալ 'ի ձէնջ զա՟մ տարակոյս, բայց զի ստիպէք զմեզ խօսել, ապա պարտաւոր էք լսել: Այլ արդ՝ ասացաք և ասեմք, թէ ո՛չ իսպառ բառնամք յեկեղեցւոյ զա՟մ գլուխ, այլ ը՟ունիմք և քարոզեմք նախ՝ թէ էական և սկզբնական գլուխ եկեղեցւոյ է ինքն ք՟ս, ը՟ս վկայելոյ առաքելոյն (ա՟, կորնթ. ժա՟. 3: եփես. ա՟. 22: դ՟. 15: ե՟. 23, ևլն): Եկ՟դ՝ իւրաքանչիւր ազգ քրիստոնէից յառաջին դարուց անտի՝ ունի սահմանել յեկ՟ղցւոջ իւրում զարքեպ՟ս ոմն էբր Գուրու (մ̃ծ գլխաւոր, Նախապատիւ, Երէց, աւագ) այլոց եպ̃ց և բոլոր եկեղեցւոյն, որ առանց ունելոյ կախումն ինչ զայլոց ազգային գլխոց, ը̃ իւրոց եպ̃ց կառավարէ զեկեղեցի և զազգ իւր 'ի հոգևորս։ Նոյնպ̃ անդստին յե̃րդ կմ̃ 'ի չ̃րդ դարուն արդէն որոշեալ էին հինգ ինքնագլուխ մետրապօլիտք կմ̃ պատրիարգք, որ էին, Հռովմայ, կոստանդնուպօլսոյ, աղէքսանդրիոյ, անտիոքայ, և Եէ̃մայն ։ Իսկ ինքնագլուխ և յայլոց անկախ լինել սոցա յայտ անտի է․ զի յորժամ ոմանք 'ի դոցանէ սկսան խառնել յիրաւունս այլոց, հարկ եղև ժողովել հարցն նիկիոյ՝ յամին 325․ սահմանել զայս վճռեալ կանոն, որ ասէ ‖ Հին սովորութի̃ն պահեսցի յեգիպտոս՝ 'ի լիբիա և 'ի պենտապօլիս, այնպ̃ զի եպ̃ն աղեքսանդրիոյ ունիցի զիշխանութ̃ն ամ̃ի այդոցիկ․ վս̃ զի և եպ̃սի քաղաքին հռովմայ սովորական է այդ ։ Սմին նման և յանտիոք և յայլ նահանգս պահեսցին արտօնութի̃ք և արժանաւորութի̃ք եկեղեցեաց նց̃ ‖ ։ Ուր տեսանես․ զի ժողովն զատանէ 'ի միմեանց զեպ̃ն աղեքսանդրիոյ, հռովմայ և անտիոքիոյ, և իւրաքանչիւրոցն զիւր իրաւունս սեփհականէ անկախ յայլոց ։ Ըստ այսմ և եկեղեցիս հայոց անդստին 'ի սկզբանէ հիմնարկութ̃է իւրոյ 'ի Թադէոսէ և 'ի բարթողոմէոսէ և 'ի լուսաւորչէն՝ միշտ ունէր զիւր պատրիարգ ինքնագլուխ և անկախ յայլոց պատրիարգաց, որում վկայեն ոչ միայն ամ̃ պատմագիրք մեր, այլ և օտարք․ ո̃պի է պետրոս տէմարքայ, որ այսպէս խօսի յունարէն ‖ Գիտել արժան է, թէ այս » նահանգ (հայաստան) է ինքնագլուխ, և ոչ է հպա- » տակ առաքելական աթոռոյն (մ̃ծ կոստանդնուպօլսոյ) » այլ պատուել լինի նկատմամբ սբ̃յն գրիգորի հայոց

» եպ՟սի, և նախագահ է երկերիւր քաղաքաց և բեր
» դից (յէջ․ 27․ տպ․ ՚ի 1708 ՚ի Փրանքֆօր)։ Զնոյն պարտ է ասել և վ՟ս գլխոց կ՟մ պատրիարգաց այլոց ազգաց քրիստոնէից, յունաց, ասորւոց, եթովպացւոց, և այլոց։ Արդ՝ այսպիսի ազգային եկեղեցւոյ գլուխ բաւական է ՚ի կառավարել զեկեղեցին իւրաքանչիւր ազգի, որ՟պ փորձիւ և մակածութ՟բ ստուգել տեսանեմք ՚ի սկզբանէ քրիստոնէութ՟ն մինչև ցայսօր․ և չէ՛ բնաւ հարկաւոր, թէ ՚ի վ՟ր այսց ազգային գլխոց կարգեսցի մի ոմն եպ՟ս իբր ընդհանուր գլուխ դոցա․ որ՟պ ստուգ՟թ ձեռնարկէ հայրն գաբրիէլ ՚ի գիրսն Պայէլի ապքէյարէան, յաշխարհական իշխանութ՟է ձեռնարկելով ՚ի հոգևորս․ ապա թէ ոչ, հարկ լինէր ասել, թէ ը՟ս այդմ կանոնի պէտք լինին ՚ի վ՟ր ազգային թագաւորաց ուռուսաց, գաղղիացւոց, գերմանացւոց, տաճկաց, և այլն, կարգել զոմն ընդհանրական գլուխ իբր թ՟գր թագ՟րց, ը՟ս որում յաւուրս մեր կամեցաւ լինել նաբոլէոն, և այլն։ Այլ որ՟պ մարմնաւոր իշխանութիւնք ոչ տանին զայդպիսի ընդհանրական գլուխ, նոյնպ՟ս և ոչ հոգևոր իշխանութ՟ք կ՟մ գլուխք ազգաց կարեն կ՟մ պարտին ճանաչել զայդպիսի գլուխ․ մանաւանդ՝ զի յայտնի գիտեն թէ ածաշունչ գիրք ոչ ուրեք և ոչ երբէք հրամայեն զայդպիսի ինչ, որ՟պ վերադոյն բազում անժխտելի փաստիւք հաստատեցաք։

§․ 98․ Արդ՝ եթէ ստիպեսցի ևս հարկաւոր լինել այդպիսի ընդհանրական գլխոյ իբր կառավարչի բոլոր եկեղեցեաց ա՟մ քրիստոնէից, ասեմք թէ այն ոչ է եպ՟ն հռովմայ, այլ է միայն ընդհանուր ժողովն եպ՟ց ա՟մ ազգաց քրիստոնէից, (որ՟պ ապացուցաք ՚ի վերոյ․ §․ 66=76), ուրանօր բազմութիւնք եպ՟ց հաւասարաչափ իշխանութ՟ բազմեալ քննեն զվէճն և համաձայն ածաշունչ գրոց վճռեն զճշմարտութ՟ին . և այսմ անժխտելի ապացոյց են ութևտասն ժողովք՝ ՚ի պապականաց իբր ընդհանրական ընկալե՟լք , որք են ՙՆիկիոյ առաջին և երկ՟ , եփեսոսի , կոստանդնուպօլսոյ չորք , քաղկեդոնի , լուկտոնի երկու , լատերանու հինգ , փլորենտիոյ , վիեննոյ , և դրետենտինոյ , (Թող զանհամար ազգային ժողովս այլևայլ քրիստոնէից)· արդ՝ առ ի՞նչ վախճան գումարեցան այդչափ ը՟նհանրական ժողովք ՚ի միջոցի իբր 1200 ամաց , եթէ արդարև եպսն հռովմայ էր հանրական գլուխ և կառավարիչ ա՟մ ազգաց քրիստոնէից . ընդէ՞ր եպսք ազգաց ո՛չ դիմեցին միայն առ նա . ընդէ՞ր նա միայնակ ո՛չ որոշեաց զվէճն . ո՞վ ոք ողջամիտ քրիստոնեայ կարող է յերկբայս լինել թէ այդ վարմունք այնչափ անթիւ եպ՟ց և քրիստոնէից յայտնի քարոզեն ամէն , թէ ո՛չ վերջին կառավարիչ եկեղեցւոյ ճանաչէին ո՛չ զհայրապետն հռովմայ , այլ միայն զը՟նհանրական ժողովն եպ՟ց , որում և ամ՟քեան հնազանդե՟լ հանդարտէին ։ Այսոքիկ են ահա զանազան գլուխք եկեղեցւոյ , զորոց հարցիքդ մեզ . յորոց յայտնի իմանայք , թէ եպ՟ն և եկեղեցին հռովմայ ամենևին չունի գլխութ՟ի նկատմամբ արևելեան եկեղեցեաց հայոց, յունաց , ասորւոց , եւ՟, այլ միայն գլխաւոր եպ՟ և պատրիարգ է արևմտե՟ն եկեղեցեաց ոմանց , ո՟պ ասացաք ՚ի վերոյ ։ Իսկ վ՟ միուե՟ եկեղեցւոյ զոր ասացիքդ , խօսեսցուք ՚ի վերջոյ ․

* * *

§· 99· Որովհետև ՚ի մօտոյ յիշեցիք զեկեղեցին հայոց՝ ՚ի յուշ մեր բերիք զբանս պապականաց , որք ՚ի խօսե՟լն զմերս եկեղեցւոյ՝ յայտնի հերետիկոս համարմին զմեզ 'ի պ՟պ պատճառաց, գ՟ր վասն երկու բնութեց 'ի քս՟, վս՟ չասելոյ զբղխումն հոգւոյն ս՟յ 'ի հօրէ և յորդւոյ, վս՟ գլխուէ պապին, ջուր խառնելոյ 'ի բաժակն, եւն. արդ՝ զի՞նչ կարծէք վասն այսոց տարակուսութեանց նոցա :

Պատասխանօղ.

§. 100. Որքա զայդպիսիս խօսելով կամ ցուցանեն թէ տգէտ են դաւանութե մերս եկեղեցւոյ, և կամ՝ թէ չունին յանձինս լինել զսէրն ա՟յ և զընկերին. ապա թէ ո՞չ՝ այդ՟պ անդուռն ո՞չ բամբասէին զեկեղեցի մեր լուսաւորչական, որ շնորհօքն ա՟յ 'ի սկզբանէ և այսր ազատ է յա՟մ հերետիկոսութեց, զոր 'ի պէտս եղբարց մերոց՝ այս՟պ ապացուցանեմք ը՟ այնց մասանց, զորոց ստգտանեն զմեզ : Ն՟ւ

Նախ՝ վս՟ մարդեղութե՞ քս՟ի բնաւ իսկ չէ՛ հարկ կամ ն՟ց հարցանել, կամ մեզ պատասխանել. զի ուղղափառութի մեր յայնմ՝ պայծառ՟ք ըլյս արեգական փայլէ 'ի հաւատապատում գիրս եկեղեցւոյ մերոյ, որոց գլխաւորքն են վեց այսոքիկ. 1 Ժամագիրք. 2 Շարական. 3 Ծիսարան մաշտոց. 4 խորհրդատետր պատարագի. 5 յաճախապատում ճառք լուսաւորչին մերոյ հանդերձ գտելովք առ ագաթանգեղոսի : և 6 Ընդհանրականն շնորհալւոյն. յորս յաւելցի և տօնացոյցն մեր : Յայսոսիկ գիրս յայտ յանդիման տեսանի թէ զյ՟ս քս՟ դաւանիմք կատարեալ ա՟ծ և կատարեալ մարդ. երկնիւք չափ հեռի եմք թէ 'ի Նեստորի բաժանմանէն և թէ յեւտիքեայ շփոթմանէն. ը՟որում ասեմք 'ի հանգանակի վս՟ քս՟ի, թէ ‖ էառ զմարմին, զհոգի, և զմիտս (ապա և զկամս, և զներգործութիւնս նոցին, զի հոգի մարդկային առանց մտաց և կամաց և ներգործութեց նոցա՝ ո՛չ գոյանայ) , և զամ՟ որ ինչ է 'ի մարդ , ճշմարտապ՟ և ո՛չ կարծեօք || ։ Առաւել ևս որոշ բառիւք բացատրին այս ամ՟ յԸնդհանրականն շնորհալւոյն մեր յէր · 90 · 118=140 , և այլուր յաճախ · ուստի աւելորդ է մզ՟ այսր նիւթոյ խօսել և ևս , կամ պահանջել ինչ աւելի ։

§· 101· Եկդ՟ մզ՟ բղխման հոգւոյն սբ՟յ՝ ո՛չ զօրեմք ճառել լիուլի · զի ուսումն մեր դեռ ո՛չ հասանէ յայդ աստիճան · եթէ յաջողութ՟ տ՟ն տպեսցի Է̃ արձակ ածաբանութին յօրինել 'ի դասատուէն մերմէ 'ի Միքայել ծայրագոյն Վարդապետէ Սալլանթենց, անդ ուսանիմք մեք և ամ՟քն զլիակատարն խնդրոյս, առժամս կարեմք սակաւ ասել , զի թէ դաւանութ՟ եկեղեցւոյս մերոյ ամենևին համաձայն է Նախ՝ բանից քն՟, որ ասաց պարզապ՟ || հոգւոյն ճշմարտութ՟՝ որ 'ի հօրէ ելանէ (յովհ · ժե · 26) ։ Եկդ՟՝ համաձայն է երից հանդանակաց , զի առաքելոց կարծելոց , ժողովոյն նիկիոյ, և ժողովոյն կոստանդնուպօլսոյ, զորս 'ի պէտս հակոց յառաջ բերէ պատուելի հայրն միրտիչ 'ի վարս սբ՟ց , հտ · Ե · եր · 428 · 429 ։ Երրդ՟՝ համաձայն է հանդանակին նոյն իսկ լատին եկեղեցւոյն մինչև ցտասն երրդ՟ դարն սովորելոյ , զի ցամ՟ տ՟ն 983 , յորում ժամանակի փոխեցին նք՟ զհանդանակն , յաւելլով յայն զբառդ՝ և յորդւոյ · որպ՟ յառաջ բերէ հայրն գաբրիէլ (Քրմք · Լրմն · Եր · 778) · և թէ այն անթիւ քրիստոնեայք 'ի մէջ տասն դարուց՝ չասելով զբառսդ՝ 'ի հօրէ և յորդւոյ դատապարտեցան , թող մեր հայք ևս դատեսցին մզ՟ այսր · բայց մեք գիտեմք թէ անթիւ սբ՟ք հայոց , յունաց , լատինաց , եւ՟ , առանց այդց բառից արժանացան արքայութ՟ , ապա և այժմ մեր հայք կարեն արդարանալ չասելով զբառսդ ։ Արդ՝ ո՞վ է որ ստիպէ զեկեղեցին Հայոց փոխել զհանգամանս իւր, ահա վերագոյն ապացուցաք, թէ Հայր՟պտն Հռովմայ չէ՛ և չէ՛ գլուխ եկեղեցւոյն Հայոց, չունի իրաւունս 'ի վ՟ր Հայոց, ո՞ կացոյց զնա իշխան և դատաւոր Հայոց, ա՛ղէ՝ ասասցեն. զիա՞րդ ապա կարէ նա հարկադրել զհայս 'ի փոխել զհին հաւատս իւրեանց. ցուցաք թէ եկեղեցին Հայոց 'ի հիմնարկու՟էն մինչև ցայսօր ազատ է և ինքնագլուխ. ինքն գիտէ, կամի՝ փոխէ, չկամի՝ ո՛չ փոխէ զիւրն. մանաւանդ թէ այս իսկ է գովու՟թն ն՟ր, զի ո՛չ բնաւ փոփոխէ զնախնի հաւատս իւր. և ուր այլք անդադար փոփոխեն նորասիրու՟թ զա՟մ ինչ, նա անփոփոխ կայ յառաջին ընկալեալսն. և փոխանակ զի պարտին լատինք երկնաչափ գովել զհայս վ՟ս անփոփոխ պահելոյն, վրէժխնդի՞ր կամին լինել նմա, թէ ընդէ՞ր ո՛չ փոխէք զձերն, ո՟պ մեք փոփոխելով փոխեցաք զմերն փոփոխանակու՟թ. ուստի՞ է ն՟ց իրաւունքդ ։ Հինգե՟րդ՝ լատինք և լատինացեալ հայք ուստի՞ կարեն ապացուցանել մեզ զբղխումն հոգւոյն ս՟բյ՝ նաև յորդւոյ. ահա յառաջադէմն 'ի Մխիթարեանս հայրն գաբրիէլ յատուկ Ճառ յօրինեալ է վ՟ս այդր 'ի վախճան բացատրուե՟ն շարականաց, սակայն բոլոր բանք ն՟ր և ջանք ոչինչ յաղթահարեն զլուսաւոր միտս 'ի տալ հաւանու՟ե. զի հիմնեալ են 'ի վ՟ր աւաղոյ. այնու՝ զի փոխանակ պարզ վկայուե՟ց ա՟ծաշունչ գրոց՝ յորս միայն հաստատի հաւատք քրիստոնէին, նա 'ի բանս վրդ՟պտց ապաւինի, և փոխանակ ասելոյ թէ ա՟ծաշունչն զայս ո՛չ ուսուցանէ, զկարծեցե՟լ կամակորու՟ե հակառակողաց բամբասէ (յէջ. 725). բայց ո՞վ այնչափ յանդուգն իցէ, զի

Հակառակ ած̃ային բանից խօսեսցի, միայն Թէ յայտնի լիցեն բանքն և ոչ ծամածռեալ, ոպ̃ հնարին լատինք առնել ըն̃ ասելն սբ̃ գրոց՝ հոգի որդւոյ, հոգի ք̃սի, վ̃ն զի այդ յատկացուցիչք միԹէ ցուցանե՞ն ըզ բղխումն հոգւոյն ՚ի ք̃սէ. ընդարձակ քերականութիւն գերապատիւ Դասատուին մերոյ ուսոյց մեզ օրինակօք, Թէ իր ինչ յատկանայ այլում բղխ̃ եղանակաւ, ո̃ր 1 վ̃ն ունելոյ, ստանալոյ, ժառանգելոյ, ո̃պ ասի, հոգի մարդոյ, հոգի աշխարհի, տուն քո, հանդերձ իմ, ևն̃ : 2 բանիւ արարչական պատճառի, ո̃ր գործք ա̃յ, որդի պետրոսի, ևն̃ : 3 վ̃ն համաբնութե̃, էակցութե̃, համագոյութե̃, ո̃ր սիրեսցես զընկեր քո, ևն̃ : 4 վ̃ն առնչակցութե̃ ո̃ր տէր իմ, կին քո, հայր նորա : 5 վ̃ն արենակցութե̃, ո̃ր քոյր պօղոսի, եղբայր յովհաննու, ևն̃ : 6 բանիւ մասին և բոլորին, ո̃ր դուռն տան, մատունք ձեռին, ևն̃ : 7 վ̃ն պարունակելոյ, ո̃ր ձկունք ծովու, գետ հայաստանի, ևն̃ : 8 վ̃ն յենողութե̃, ո̃ր սեւու̃ի տեղւոյ, գիտու̃ի պետրոսի : 9 վ̃ն յարադրութե̃, ո̃ր զգեստ իմ, զէնք նորա : 10 վ̃ն երևեցուցման, ո̃ր ո՞յր է պատկեր այս, կայսեր, ևն̃ : 11 վ̃ն բարեկամութե̃, ընկերութե̃, սիրոյ, քաղաքակցութե̃. կենակցութե̃, ևն̃. ո̃ր բարեկամ իմ. մարդ ա̃յ, ևն̃ : Արդ՝ որովհետև իր ինչ այսչափ և այլ ևս բղխ̃ եղանակաւ յատկանայ այլում, զի՞նչ ինչ բռնադատէ զմեզ, զի զասելն սբ̃ գրոց (Հռովմ. ը. 9 : Գործ. ժզ. 7 : Գաղ. դ̃. 6 : Ա. Պետր. Ա. 8) հոգի որդւոյ կմ̃ ք̃սի, իմասցուք միայն ըն̃ արարչական պատճառի, և ոչ ըն̃ համաբնութե̃, էակցութե̃, ունողութե̃, կամ յենողութե̃, ևն̃, ոպ̃ և ասեն սբ̃ գիրք հոգի մարդոյ, հոգի աշխարհի, այ̃ն զոր ունի մարդն, աշխարհն, ևն̃ : Ապա այս փաստ պապականաց ոչինչ յաղ

Թահարէ, և սոքին ոչնչանան ամ՟ վկայութիք, զորս հայրն գաբրիէլ յառաջ բերէ 'ի յիշել ճառիդ 'ի թիւսն լե՟․ ժգ՟․ ժդ՟․ և այլուր ։

§․ 102․ Փաստն եկդ՟ 'ի պապականաց յառաջ բերեալ 'ի բանէն Քի՟ (յովհ․ ժե․ 26 ։ ժզ․ 7) առաքեցից զհոգին ճշ՟ || նոյնպ՟ ոչինչ բռնադատէ․ մի՝ զի ըստ խոստովանելոյ նոցին իսկ պապականաց ('ի բաց առեալ զյոյժ թանձրամիտսն), այս առաքումն որովհետև է գործ այ՟ առ արտաքս, հասարակ է երից անձանց, վ՟յ և ոչ ապացուցանէ զյւ՟նկն բղխումն հոգւոյն սբյ՝ 'ի յորդւոյ, թէպ՟ և նք՟ վայրապար յաւելուն՝ առաքման ենթադրել զբղխումն ։ և միւս՝ զի են բազում վրդպտք, որ զայդ բան մեկնեն վս՟ ընկերակցուէ՟ բնուէ՟ կմ՟ բնութենակցուէ՟․ և որովհետև հայրըն գաբրիէլ միայն 'ի վկայութիս վրդպտց ապաւինի ('ի թիւն, լդ՟․ լա՟) լուիցէ ապա և զբանս այլոց վարդապետաց ։ Ամբրոսիոս իւրեանց մր՟՝ գրէ || վս՟ զի
» ասէ որդին, հոգին մր՟ 'ի հօրէ ելանէ ։ սակայն վս՟
» ընկերուէ՟ և միուէ՟ բնուէն՝ յորդւոյ առաքի (գր․ յղ․
» հանգանակ․ գլ․ ծ) ։ Հերոնիմոս ասէ || հոգին մր՟՝ որ
» 'ի հօրէ ելանէ, և վս՟ ընկերուէ՟ բնուէն առաքեալ
» լինի (մեկն․ եսայ․ գլ․ ծէ) ։ Հիլարիոս || 'ի հօրէ ելա-
» նէ հոգին ճշմարտուէ՟, բայց սակայն յորդւոյ առա-
» քի և 'ի հօրէ (գր․ ը․ երր․ 20․ յղ․ երրորդուէ՟)։ Յուսկ
ապա օգոստինոս գրէ || բանն՝ զոր ասէ տէրն զոր ես
» առաքեցից ձեզ 'ի հօրէ․ ցուցանէ զհոգին մր՟ լինել և'
» հօր և' որդւոյ․ վս՟ զի և յասելն զոր առաքեցից ձեզ,
» յաւել՝ յանուն իմ ։ Բայց սակայն ոչ ասաց՝ զոր առա-
» քեսցէ հայր յինէն, որպէս ասացեալ էր զոր ես առաքե-
» ցից ձեզ 'ի հօրէ, այ՟ առ 'ի ցուցանել՝ թէ բովանդակ

» ա՟ծայնուն , կամ եթէ լաւ ևս ասել , ա՟ծուն՝ սկիզբն
» է Հայր (Գր · Դ · ԺԳ · Եր՟գուն · Գլ · Ի) ։ Յաւելցուք և զբանն ոսկեբերանին || եթէ լուիցես զասելն՝
» [illegible] յէղ զհոգէն ո՜է , մի՛ ը՟ս ա՟ծունն կարծիցես,
» վ՟ն զի ա՟ծ ոչ առաքի · քանզի են այդոքիկ զգործո-
» ղութիւն նշանակիչք (Ճառ · յԳ · Հոգ · [illegible]) · զնոյնն ասէ և օգոստինոս (Գր · Գ · յԳ · [illegible]) · և կիւրեղ աղեքսանդրացի (Գր · յԳ · Հ[illegible]) և այլք ։ Յաւել և զայն զի ը՟ս վկայելոյ աթանասի ([illegible]) հերետիկոսք այդու վկայութ՟բ հաստատէին թէ հոգին ս՟բ է ստեղծեալ յորդւոյ ։ Արդեամբ այդ բնաբան ոչ ապացուցանէ զբղխելն հոգւոյն ս՟բ՟յ՝ և յորդւոյ ։

§. 103. Նամին պապականք իբր փաստ առնուլ ինքեանց և զփչելն ք՟ի յառաքեալսն , ասելով , առէ՛ք հոգի ս՟բ (յօհ · Ի · 22) , զոր յառաջ բերէ և հայրն գաբրիէլ 'ի թիւն , լ՟ղ · լ՟է · և զուն գործէ նովին հաստատել զբղխելն ք՟ի զհոգին · բայց չիմանամք՝ գիտութ՟բ թէ անգիտութ՟բ՝ սխալ հաւաքաբանէ ը՟դէմ կանոնաց տրամաբանութ՟ն , զի ասէ || ք՟ս փչեաց զհոգին , ապա ուրեմն բղխէ զնա || · սխալ է այս հետևութ՟ի · զի 'ի փչելոյն ոչ հետևի բղխելն , այլ միայն ունիլն և տալն · իբր զի որ փչէ զշունչ յընկերն՝ ցուցանէ թէ ունի և տայ զշունչ , բայց թէ զիարդ ունի զշունչն՝ յինքենէ՞ ստեղծեալ թէ յայլոց 'ի փոխ առեալ , այս ոչ ապացուցանի 'ի փչելոյն , այլ այլուստ խնդրելի և հաստատելի է ։ Ը՟ս այսմ լատին քահանայն 'ի մկրտելն զերախայն փչէ յերեսս ն՟ր , 'ի նշան տալոյ զհոգին ս՟բ · բայց ոչ հետևի յայսմանէ թէ քահանայն բղխէ զհոգին , այլ թէ տայ՝ զոր կարծէ ունել ։ Ըստ այսմ ևս ասի (Ծնն · Բ · 7) թէ ա՟ծ փչեաց յերեսս ադամայ զհոգի բանական. արդ՝ փչելս այս յայտ է թէ ոչ նշանակէ զարարչական պատճառն հոգւոյն, այլ միայն զիրական տուօղն և զտալն. բայց ոչ ամ՟ տուօղ՝ է ևս արարիչ տուեալ իրին, զի հնար է ևս այլուստ առնուլ զիր ինչ և տալ այլում. ուստի ը՟ այսոցիկ փչելն ք՟սի զհոգին՝ ցուցանէր միայն զայս թէ ք՟ս ունէր զհոգին և իրա՟ւ ետ. բայց թէ զի՞արդ ունէր, իբր յինքենէ՞ բղխելով թէ ՚ի հօրէն ը՟ մր՟դկուե՟ն ընկալե՟լ, այս ոչ ապացուցանի ՚ի փչելոյն և ՚ի տալոյն, այլ այլուստ հաստատել պարտին լատինադաւանք. Ցայսցանէ յայտնի երևի թիւրու՟ի այսր հաւաքաբանութե՟ լատինաց || Որ փչէ զհոգին՝ բղխէ զնա. ք՟ս փչեաց զհոգին, ապա բղխէ զնա ||. մեծ նախադասու՟ին է բոլորովին սուտ. զի ոչ ամ՟ որ փչէ, բղխէ ևս զայն: ը՟ հակառակն մեք ուղիղ հաւաքաբանեմք այսպ՟ || որ փչէ զհոգին՝ ցուցանէ թէ ունի և իրապէս տայ զհոգին. արդ՝ ք՟ս փչեաց զհոգին յառաքեալսն. ապա եցոյց թէ ունէր զհոգին և իրօք ետ զայն առաքելոց ||: Զանց առնեմք աստանօր ընդդէմ վկայուե՟ց ՚ի գաբրիէլ վրդ՟պտէ յառաջ բերելոց՝ հանել զվկայու՟իս այլոց վրդ՟պտց. զի ասացե՟լքս շատ են ՚ի ցրել զա՟մ անհիմն փաստս նորա:

§. 104. Առաւել ևս բազմախառն է այն փաստ պապականաց զոր կազմեն ՚ի բանից ք՟սի (յովհ. ժզ. 13=16). զոր հարկ է աստ ամբողջ օրինակել, զի պայծառ իմասցին բանք ն՟ց և մեր: || Յորժամ եկեսցէ նա հո- » գին ճշմարտութե՟, առաջնորդեսցէ ձեզ ամ՟ ճշմար- » տու՟բ, զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսեսցի, այլ զոր » լուիցէ՝ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ: Նա » զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու՝ և

» պատմեսցէ ձեզ: Ամ ինչ զոր ունի Հայր, իմ է,
» վն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնու-
» ցու և պատմեսցէ ձեզ ||: Զայս բան քսի՝ կրկնակի խոտոռնակեն լատինք · ոմանք զասելն՝ յինձ ունեցեալ փոփոխեն յայս՝ յինէն ունեցեալ · Որոում և Հայրն գաբրիէլ առնէ (յէջ, 754 · 380 · Նա) · բայց այս սխալանք դոցա և ոչ իսկ պատասխանւոյ է արժանի · զի յայտնի թիւրեն զիմաստս և զբառս քսի, օտարանալով ՚ի բառական կազմուէ խօսից նր: Նուն լատինք այլազգհեւաման ՚ի քսէ · զի յասելոյ նր, ամ ինչ՝ զոր ունի Հայր, իմ է, կազմեն զայս թիւր հաւաքաբանուն || զոր ինչ ունի Հայրն՝ ունի որդին · իսկ արդ՝ Հայրն ունի բղխել զհոգին, ապա և որդին ունի բղխել զհոգին ||· ուր տեսանի զի եզրակացութդ և փոքր նախադասութդ ամենևին օտար է ՚ի մտաց և ՚ի բառից քսի· զի ՚ի բանս նր եզրակացուն է այս » հոգին առնու յիմմէ » յոր իբր մեծ նախադասուն յարէ զայս » զամ ինչ՝ զոր ունի Հայր իմ է » իսկ փոքր նախադասութն լռելեայն կայ՝ այսպս » հոգին առնու յամէ՝ զոր ունի Հայրն » զորս թէ շարակարգես յարուեստական ձև, ծնանի այս ուղիղ հաւաքաբանութիւն ·

զամենայն՝ զոր ունի Հայր, իմ է ·
իսկ արդ՝ հոգին առնու յամէ, զոր ունի Հայր ·
ապա ուրեմն հոգին առնու յիմմէ ·

ուր տեսանեք, զի բանն՝ » զամ զոր ունի Հայր » է միջնորդ եզր, զոր թէ վն պարզաբանուե փոխեսցուք (ներողուե քերթողաց, զի չունիմք զայլ բառ) յայս ձայն » ունեցեալքն հօր » ՚ի յայտ գայ այս դիւրիմանալի հաւաքաբանութիւն ·

ունեցեալքն հօր՝ են իմ, են ունեցեալք ի·

այլ արդ՝ հոգին առնու յունեցեալ իրաց հօր ·
ապա հոգին առնու յիմմէ, յունեցեալ իրաց իմոց ։

Ահա ուղիղ շարաբանու՟ի ք՟նի, յորում մեծ նախադասու՟ին և եզրակացու՟ին ը՟ բառիցն իսկ նոյն են ը՟ ասացելոց ՚ի ք՟նէ · զիա՞րդ ապա համարձակին պապականք հի՟մ ՚ի վեր տապալելով զբանս ք՟նի՝ կազմել զվերջեդե՟լ թիւր հաւաքաբանու՟ի իւրե՟նց, որոյ ո՛չ փոքր նախադասու՟ին և ո՛չ եզրակացու՟ին ամենևին ո՛չ պարունակին յասացուածս ք՟նի, այլ բռնի ը՟դէմ մը տաց ն՟ր ՚ի ներքս մուծեալ են յումպէտս ։ Թերևս թախանձեսցեն զմեզ լատինք ՚ի մերս եզրակացու՟է, զի՞նչ է այն՝ զոր հոգին առնու յունեցե՟լ իրաց որդւոյն · բայց տակաւին ո՛չինչ օգտին, զի թէ՛և դիցուք թէ այն իցէ էու՟ին կ՟մ անձն հոգւոյն ս՟բյ, սակայն ուղիղ իմաստն լինի այս || աղբիւրն այն՝ յորմէ հոգին առնու զէու՟ի իւր, է ի՛մ, վ՟ն զի է հօրս կ՟մ հայրական || և եթէ այն աղբիւր վ՟ն այնորիկ է ք՟նի, վ՟ն զի է հօր, հարկաւ ո՛չ լինի ք՟նի անձնաւորի՟ · զի աղբիւրն այն իրօք նոյն է ը՟ անձին հօր, և ո՛չ կարէ նոյնանալ ը՟ անձին որդւոյն · ուստի մ՟նայ միայն ասել, թէ աղբիւրն այն անուանի ք՟նի՝ ո՛չ վ՟ն այլ ինչ պատճառի, բայց եթէ վ՟ն ընկերակցու՟ե բնու՟ե կ՟մ վ՟ն բնութիւնակցու՟ե ։ Ապա այս փաստ ևս մի՟ գրոց բնաւ ո՛չ ապացուցանէ զկարծիս լատինաց ։

§· 105· Զանց արարեալ վ՟ն համառօտութե՟ զայլ վկայու՟իս մի՟ գրոց, զորս լատինք ը՟ օրինակի եդելոյդ բռնաձգեն յիւրեանս, հարկ համարիմք ծանուցանել, թէ այն ա՟մ վկայու՟իք վ՟րդպտց հայոց՝ զորս հայրն գաբրիել յառաջ բերէ ՚ի յիշե՟լ ճառիդ, ամենևին ո՛չինչ ապացուցանեն առ մեզ վ՟ն երկուց պատճառաց ․ մի՝ զի չէ՛ հնար հաւատալ , թէ հայրն գաբրիէլ կմ՟ ընկերք նր՟՝ տպեալ իցեն զայնս հարազատութբ՟ առանց խարդախութե՟՝ և առանց փոփոխելոյ՝ պակասեցուցանելոյ կմ՟ յաւելլոյ զօտար ինչ ․ զի այս արուեստ սովորական է Մխիթարենց , որում յայտնի ապացոյց է նախ ժամագիրքն 'ի նոցանէ տպե՟լ , յորում 'ի քմաց յաւելեալ են զբառդ՝ Ն — յորդորոյ յերգս արևագալին և յառաւօտ լուսոյն ։ Եր՟կդ՝ խորհրդատետրն պատարագի երիցս տպեալ առ Նս՟ , յորում տեսանի ինչ ինչ փոփոխե՟լ , ինչ ինչ յաւելե՟լ , և քանի ինչ 'ի բաց բարձեալ ։ Եր՟րդ՝ հանգանակն հաւատոյ 'ի 1807 տպե՟լ ուր ը՟ղէմ հաւատարմութե՟ 'ի հաւատամքն եկեղեցւոյս մերոյ յաւելե՟լ են զբանդ » որ 'ի հօրէ և յորդւոյ բղխի ։ Չ՟րդ՝ եթէ յայսպիսի մատեանս 'ի մեր հայոց բազում անգամ հրապարակե՟լս՝ յանդգնեցան Նք՟ առնել զայդչափ օտար այլայլութի՟ս , կրճատմունս , և յաւելուածս , զիա՟րդ կարելի է հաւատալ , թէ Նք՟ 'ի ձեռագիր մատենից նախնե՟ց յառաջ բերցեն բանս առանց կրճատելոյ , փոփոխելոյ և ը՟ քմաց զօտար ինչ մուծանելոյ ։ Միւս ևս , զի չէ՛ հնար նոյնպ՟ հաւատալ , թէ հին վրդպտք 'ի քերականութե՟ կամէին ուսուցանել մանկանց զանճառելի խորհուրդս սբ՟ երրորդութե՟ ․ զի ո՞վ ոք յողջամտաց կարէ կարծել թէ մովսէս քերթող , ստեփաննոս սիւնեցի , մխիթար գօշ , և այլ նմանք 'ի ճառեն տղայոց զվանկս , զհոլովս , զնախադրութի՟ս , կմ՟ զկեղծեալ առակս՝ 'ի մէջ մատուցեալ իցեն զանըմբռնելի ճշմարտութի՟ս հաւատոյ , որոց և փիլիսոփայացեալ միտք կատարելոց ո՛չ զօրեն հասու լինել ։ Իսկ զուղիղ լուծումն բանից այլոց վարդապետաց մերոց 'ի հօրէն գաբրիէլէ յիշատակելոց՝

գտցեն ընթերցօղք յածաքանուն Պասատուխս մեր ։ Նոյնչափ առ ժամս յաղագս բղխման Հոգւոյն սբյ , որով ցուցանի անարատ ուղղափառութի մերս Հայաստանեայց եկեղեցւոյ ըստ նախնի անփոփոխ դաւանութե , յորմէ չէ՛ արժան ումեք բաժանիլ ։

§. 106. Մի երկուց այլ պատճառաց տարաձայնութե , որ վն քաւարանի և վերջին օծման , զորս յիշէ տետրակն [illegible] ըստ խմբագրութեան լատինաց և լատինացել հայոց , առանձին ճառեսցուք յայլում աւուր , զի բազում ինչ ունիմք ասել վն այդոցիկ , զորս չէ հնար զետեղել յայսմ համառօտութե ։ Յասացելոցս ցայսվայր կարծեմք թէ շատացել իցեն միտք ձեր և ամ ողջամտաց վն ուղղափառութե Հայաստանեայցս եկեղեցւոյ , յորում չի՛ք ինչ նշան հերետիկոսութե և մոլորաձայն հաւատոց . որպ զուր պարտաւորեն զմեզ լատինք . և չէ ինչ զարմանք , զի նք զամ քրիստոնեայս որք ոչ հնազանդին պապին հռոմայ , միով ձայնիւ կոչեն հերետիկոս, մոլորահաւատ , աղանդաւոր , ևն . բայց յոլովակի այդ անուանք առաւել նց պատշաճին իրօք քան մեզ , որպ լուսաւոր ուղղադատութին բացայայտ ուսուցանէ ։

[illegible]

§. 107. Լուեալ է մեր ուրեք , զի ասեն ոմանք յառողջամիտ պապականաց , թէ՝ և եկեղեցին կմ ազգըն հայոց չիցէ ճշմարտիւ հերետիկոս , սակայն հնար է ասել , թէ արդարև է հերձել կմ հերձուածօղ , ըստ որում բաժանել է ՚ի գլխոյն եկեղեցւոյ , որ ՚ի հայրապետէն հռոմայ , և ՚ի միաբանելոյ ընդ հռոմէական եկեղեցւոյ ևն ։

Պատասխանողք.

§· 108· Այդ զրպարտու՟ն ևս վ՟ն հայոց ամենևին անիրաւ է և պտուղ չարախօս լեզուի և եղբայրատեաց սրտի. վ՟ն զի ը՟ս ածաբանից՝ հերձուածն (ը՟ս յուն, «սխի՛սմա») է յանդուգն և յամառ կարծիք հակառակ արտաքին ծիսից՝ ը՟հանուր եկեղեցւոյ համաձայնու՟բ ընկալելոց. ը՟ս որոյ հերձեալն յամառու՟բ բաժանի և զատանի թէ՛ ՚ի գլխոյ և թէ՛ յայլոց անդամոց ը՟հանրական եկեղեցւոյ, թէպէտ պահիցէ ուղղափառ հաւատըս, որով և մեղանչէ ը՟դէմ միուե՟ եկեղեցւոյ և եղբայրսիրուե՟ ։ Իսկ արդ՝ եկեղեցին և ազգն հայոց ո՛չ է բաժանել ՚Նախ ՚ի յաներևոյթ գլխոյն եկեղեցւոյ ք՟ի ՚ի ք՟սէ, ը՟որում միացեալ է ուղիղ հաւատով, յուսով և սիրով ։ Երկ՟դ՝ ո՛չ է բաժանեալ և յերևելի գլխոյ եկեղեցւոյ, ք՟ի յընդհանրական ժողովոյ եպ՟սց, զի ը՟ունի զսահմանս երից առաջին ը՟հանուր ժողովոց, ք՟ի նիկիոյ, եփեսոսի և կոստանդնուպօլսոյ, և եթէ գտանիցէ ուղղափառ լինելն սահմանադրուե՟ց այլոց ը՟հանրական ասացել ժողովոց, պատրաստ է ը՟ունել զայնս. յօժար է ևս ՚ի լինել նոր ը՟հանուր ժողովոց յեպ՟սց ամ՟ ազգաց քրիստոնէից՝ կոչեցեալ միանալ ը՟ ն՟ս յուղղափառութե՟ ։ Եր՟դ՝ եկեղեցին հայոց ո՛չ է բաժանել և յայլ անդամոց ը՟հանուր եկեղեցւոյ, ք՟ի յուղղափառ եկեղեցեաց զանազան ազգաց քրիստոնէից, զորս ս՟բ բաղձանօք սիրէ և պատուէ, աղօթէ ը՟ ն՟ս և վ՟նց, հաւատայ և յուսայ ը՟ ն՟ս, ՚ի պահանջել հարկին թղթակցի՝ կենակցի և հ՟որի ը՟ ն՟ս ։

§· 109· Այսպիսի է՝ միաբանըն եկեղեցւոյն հայոց՝ ը՟ գլխոյն և ը՟ անդամոց ը՟հանրական եկեղեցւոյն, և այս է ուղի՟ղ բարոյական միութի՟ն եկեղեցւոյ. վ՟ն զի

զայսպիսի միութ՟ին նկարագրէ և պահանջէ ա՟ծաշունչ
գիրքն, ը՟ այոց || եղիցին մի հօտ և մի հովիւ (յ՟հ· ք՟ա)․
Եւս || Փութայ պահել զՄիութ՟ին Հոգւոյն՝ յօդիւ խա
» ղաղութ՟ն, Մի մարմին և Մի հոգի, որպէս և կոչեցա
» րուք 'ի Մի յոյս կոչման ձերոյ, Մի է Տ՟ր, Մի հա
» ւատք, Մի մկրտութ՟ի, Մի ա՟ծ և հայր ամ՟ցն (եփես·
» դ՟) . . . . բազումքս Մի մարմին եմք 'ի ք՟ս, այլ
» իւրաքանչիւրքս միմեանց անդամ եմք (հռովմ· ժբ· 5)
» . . . . զի Մի հաց Մի մարմին եմք բազումքս, զի
» ամենեքին 'ի Միոջէ հացէ անտի վայելեմք (ա· կոր՟ն
» ժ · 17) . . . . Միով հոգւով մեք ամենքին 'ի Մի մար
» մին մկրտեցաք, եթէ հրէայք՝ եթէ հեթանոսք,
» ամենքին զՄի հոգի արբաք (անդ · ժբ · 13)։ Նոյնո-
քին և այլ նման բանք են, որովք պատկերագրէ ս՟բ
գիրքն զմիութ՟ին եկեղեցւոյ ի՟ ը՟հանուր քրիստոնէից,
թէ՛ ը՟ միմեանս, և թէ՛ ը՟ գլխոյն ք՟ի և պաշտօնէ-
ից ն՟ր հովուաց եկեղեցւոյ, որոց յայտնեց ք՟ս թէ ||
Որ Ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զՁեզ անարգէ, զիս
» անարգէ . . . . ոչ վ՟ս ն՟ց միայն աղաչեմ, այլ և վ՟ս
» ամ՟ հաւատացելոց Բանիւն ն՟ց յիս. զի ամենքին Մի
» իցեն . . . . զի իցեն Մի, որպէս և մեք մի եմք. ես
» 'ի ն՟մ և դու յիս, զի Եղիցին կատարեալք 'ի մի ||։
Ցայսոսիկ բանս ս՟բ գրոց տեսանի, զի ք՟ս տէրն մեր
առաջի առնէ՝ ոչ զանհատական միութ՟ին միոյ ուրումն
հովուի, որպէս պապականք ուսուցանեն վ՟ս հայր՟պտին
հռովմայ, այլ միայն զհաւաքական կամ զժողովական
միութ՟ին հովուաց, զի յոգնակի են բառքս, ձեզ, զձեզ,
բանիւ ն՟ց. ամենքին մի իցեն, եղիցին, եւ՟. ուստի ամե-
նեքին առանց հիման ս՟բ գրոց խօսին պապականք առե-
լով, թէ որ ոչ հնազանդի հայր՟պտին հռովմայ, է

հերձեալ, ո՟պ և առնէ գաբրիէլ անդղյան (Ճառ. յղ. հատոր. գլ. գ. յօդ. 3). ուր փոխանակ բանից ս՟բ գրոց՝ զվկայու՟թիս լատին վր՟դպտց իւրոց 'ի մէջ մատուցանէ. զի գիտէ թէ ս՟բ գիրք ո՛չ ուրեք և ո՛չ երբեք ուսուցանեն զայդպիսի ստու՟թի: Ապա թէ ո՛չ՝ ապացուսցեն մեզ լատինք բանիւք ա՟ծաշունչ գրոց, թէ առ 'ի չհամարիլ հերձեալ՝ հարկաւոր է և միանալ ը՟ ե՟պսին հռովմայ՝ ևս և արտաքին ծխիւք. և յայնժամ միանայ ը՟ նո՟ եկեղեցին հայոց. բայց սակայն մինչև ցայժմ ո՛չ կարացին պապականք ցուցանել մեզ զայդպիսի վկայու՟թիս ս՟բ գրոց, և ո՛չ յայսմհետէ կարասցեն յաւիտեան, ցորչափ ա՟ծաշունչն մնայ անփոփոխ:

§. 110. Իսկ վ՟ն միու՟ե ծխից և արարողու՟եց եկեղեցւոյ՝ չէ հարկ բնաւ և խօսել իսկ. մի՝ զի ս՟բ գիրք ո՛չ ուրեք հրամայեն զմիու՟թի ծխից. միւս ևս՝ զի ուսուցանեն եկեղեցական պատմու՟թք (որք վ՟ն անբաղդու՟ե ազգիս ո՛չ գտանին 'ի հայոց լեզուի և ո՛չ մի) թէ անդստին 'ի հիմնարկու՟է եկեղեցւոյ մինչև ցայսօր՝ 'ի բիւր տեսակս փոփոխեցան ծէսք՝ գո՛նէ ը՟ պատահականացն, ո՟պ 'ի մէջ անթիւ հեղինակաց՝ գեղեցիկ ճառէ յովսէփ պինկհամ 'ի մետասան քառածալ հատորս (տպեալ 'ի 1751. 'ի հալէ): Ապա ուրեմն միու՟թի ծխից և զանազանու՟թի՝ ամենևին ո՛չ վերաբերի յուղղափառու՟թի կ՟մ 'ի հերձուած. վ՟յ և եկեղեցիս հայոց միացե՟լ լինելով ը՟ գլխոյ և անդամոց ը՟հանրական եկեղեցւոյն, ո՛չ է և ո՛չ կոչի հերձեալ, ո՟պ և ո՛չ՝ հերետիկոս:

§. 111. Արժան լիցի մեզ աստանօր յաւելուլ և զայս, թէ շնորհօքն ա՟յ յազգէ հայոց չէ՛ և չէ՛ եղ՟ել հերետիկոսապետ ոք 'ի սկզբանէ մինչև ցայսօր. այլ ամ՟ հերետիկոսք և աղանդաւորք ծնե՟լ են կմ՟ յազգէ յունաց, կմ՟ յասորւոց, և կամ առաւել ևս 'ի լատինաց. որ ապացուցանի և մակածու՟բ։ Նոյնպ՟ ազգաւ յոյն էին հերետիկոսքս, մարկիոն. մոնդանոս. նոյետոս. պօղոս սամոստացի. Թէոդոտոս բիւզանդացի. փոտինոս գաղատացի. մակեդոն. եւտիքէս. ապողինար. մեմնոն. այետիոս. եւնոմիոս. եւդոկսիոս. Թէոդորետոս մոպսուեստացի. սեւերիանոս. տիմոթէոս ելուրոս. պետրոս մոկկոս. յովհաննէս հեմուլա. պետրոս Թափիչ. յուլիանոս աղիկառնացի. փոտ կմ՟ փոտիոս պատրիարգ. լեոն իսաւրացի և կոստանդին կոպրոնիմոս և անաստաս կայսերք. Եւս աղանդաւորքն կոչեցեալք, բարաղամեանք. նեստորականք. հանդըստականք. անապականադաւանք. ածաչարչարք. պատկերամարտք. որդեգրականք. պօկոմիլեանք. անդըլուխք. միակամադաւանք. փալամիդեանք. և այլ բազումք, զորոց Չառեն եկեղեցական պատմիչք։

Յազգէ ասորւոց և եգիպտացւոց կմ՟ աֆրիկեցւոց էին հերետիկոսքն, կերտոն. բարդեզան. դատիանոս. պասիլիտէս. կարպոկրատէս. վաղենտինոս. արտեմոն. սաբէլ. արիոս. հերակէս. աւդէոս՝ յորմէ մարդակերպեանք. նեստոր. բարծումա. տոնադոս. յակոբ ծանծալոս. յովհաննէս ասկունակ. յակոբիկեան և նեստորեան աղանդաւորք, ևն։

§. 112. Յազգէ լատինաց (որով իմանամք զամ՟ եւրոպացիս, զիտալացիս, զգերմանացիս. զգաղղիացիս, ևն) ծագեցան հետագայ հերետիկոսք և դատապարտեալք 'ի ժողովոց. որք են, լիպերիոս պապ. ոնորիոս ա՟ պապ. նովատիանոս. պրիսկիլիանոս. պեղագիոս. եղիփանտոս և փելիկս և ատալպերտ եպ՟սք.

լեւդարտոս · ռոսկելինոս · կղեմէս · հերիպերտոս · լիտոյոս · պերենկարիոս · վեկլինոս · առնալտոս · հելվետիոս · յովլինիանոս · փրանկիսկոս փուչիոս · յովհաննէս փոքրիկ · մատթէոս կրապոն · մարտին լուտեր · յովհաննէս կալվին · ամալրիկոս · պետրոս պըրոյս · եկիտիոս երգիչ · իլտենիսէն · եւն , եւս 'ի պապականաց ուղղափառք կոչեցեալքն , վալտենեանք · ալպիացիք · պեղինարեանք · վիգլեֆեանք · հուսսեանք · լուտերականք · կալվինականք · մեննոնեանք · սոկինեանք · գուաքերեանք · անածք · փաղակինենք · քափուտիատեանք · առաքելականք · հանգստականք · քադարոսք · անձնաձաղկիչք · կաքաւիչք · դեմփլարեանք · պեկհարտեանք · ալպատեանք կամ սպիտակազգեացք · յանսենեանք · մոլինայանք · արմինիանենք · ադամեանք · լոլհարտեանք · դուրլուբինեանք · թաբորականք · եւ այլ զանազան աղանդաւորք եւ հերձեալք (secta)· յորոց բազումք կան մինչեւ ցայսօր յեւրոպիա · եւ ունին եկեղեցիս եւ համարձակ կատարեն զպաշտամունս , զի ազատութի̃ է անդ ամենայն կրօնից ։

§· 113· Իսկ յազգի մերում՝ ոպ̃ ասացաք՝ ո՛չ երբեք գտան այսպիսի մոլորեալք · եւ ո՛չ ոք 'ի մեր հայոց դատապարտեցաւ երբեք 'ի ժողովի ուրեք · եւ թէ պէտ փոտ պատրիարգ յունաց՝ յիշէ (Գր · ա · Ընդդէմ Մանիքէանց) զպօղոս ոմն յազգէ հայոց հեղինակ լեալ աղանդաւորաց՝ պօղոսեան կամ պօղիկեան (pauliciani) կոչեցելոց · սակայն 'ի հարազատ պատմութե̃ ազգիս մերոյ քաջայայտ է , թէ պօղոսն այն ո՛չ էր հայ · այլ գուցէ ասորի կամ յոյն բնակե̃լ 'ի հայաստան · զորմէ տե՛ս 'ի պատմութե̃ չամչեան հտ · ա̃ · եր · 765 · եւն ։ Միայն աղանդն թոնդրակեցւոց բուսաւ եւ չորացաւ 'ի մէջ

Հայոց . զորոց գրէ բազմավաստակ Հայրն Միքայէլ Չամչեան ։ Ապա ուրեմն յայսցանէ կարէ ամ՟ աննախանձ քրիստոնեայ ճանաչել, թէ ազգն և եկեղեցին Հայոց ոչ հերետիկոս է և ոչ հերձուածող, այլ կատարեալ ուղղափառ ։ Վկայ են ուղղափառութեն մերոյ նաև պապքն Հռովմայ Լուսիոս, Ուրբանոս Ե, և պիոս Ե (զորոց զգովութեն բանս տես ՚ի պատմութեն Չամչեան հտ. Գ. եր. 142=144. 355. և 525=527). որոց առաջինն գրելով առ Գրիգոր Կթղկս և ամ՟ եպսունս Հայոց յամի տն իբր 1486, այսպ խօսի վն Հաւատոց նց || վն և դուք՝ եղբարք սիրեցեալք և որ-

» դիք, որ . . . յօդեալ էք յԱմենայն Ճշմարտութի և
» յամ գործս բարեաց, աղաչեցէք զբարերարութին
» նյ . . . և թէ որում խոստովանիք զԱմենայն Ու-
» ղիղ Դաւանութի Հաւատոյ, ինչ՝ որ թերի է ՚ի կար-
» գաց՝ ուղղեցէք . . . . փայլեք պայծառ ՚ի մէջ անօ-
» րինաց ՚ի Հաւատս . . . . զձեզ յԱմբիծ Հաւատոդ՝
» զոր Ունիք՝ ողջագուրեմք մեծաւ սիրով . . . . զի
» մեծանայք և բազմանայք (դուք) Հաւատով և խաղա-
» ղութբ ոպ լուաք զամ՟ գործոց ձեր Ճշմարտութի. Լնռ || ։

Իսկ երկրդն՝ ուրբանոս պապ յամին իբր 1365 գրէ
» առ Հայս || պատուական եղբարց մերոց արքեպսց և
» եպսց . . . . ՚ի համդէս Ուղղափառութեն համօրէն
» ծաղկելոց ՚ի Թգրութեն Հայոց՝ ողջոյն . . . . ուխ-
» տիւք ցանկամք Ուղղադաւան այդմ Ժողովրդեան
» Հայկազեանդ տէրութե էլս գտանել, Լնռ || և որով

հետև զկնի այդց Թուականաց եկեղեցին Հայոց ոչ փոխեաց զդաւանութի իւր, վն ոպ յայնժամ, նոյնպ և այժմ Հաւատք Հայոց է Ամբիծ և Ուղիղ, և չունի ինչ բիծ հերետիկոսութեան.

Հարցանող.

§. 114. 'Ի խօսից սիրելի եղբարցդ մակաբերի թէ կամիք ասել, որովհետև եկեղեցին հայոց ոչ հերետիկոս է և ոչ հերձեալ, ապա հայք մնալով յիւրեանց եկեղեցւոջ կարող են փրկիլ և արժանանալ արքայութե՟ն ա՟յ : բայց ի՞ւ հաստատէք զայդ, զի մեր լուեալ է զասել պապականաց, թէ արտաքոյ եկեղեցւոյ չի՛ք փրկութի՟. ուր եկեղեցի ասելով զհռովմէականն իմանան, և այնպ՟ քարոզեն ամենեցուն, ևն :

Պատասխանող.

§. 115. Թէ պապականք եկեղեցի ասելով` զհռովմէականն միայն իմանան, այդ պտուղ է սնափառութե՟ և իշխողասիրութե՟ նց՟. և երևի թէ հող և ջուր և կլիմայ երկրին հռովմայ ազդէ յոգիս և 'ի սիրտս բնակչացն զայդ սէր իշխողութե՟ և տիրողութե՟. զի ո՞չ յուշ ք՟ զք՟ն կռապաշտ իշխանք քաղաքիդ աշխատ եղեն մարմնաւոր թգրութ՟ տիրել բովանդակ աշխարհի, նոյնպ՟ ևս զկնի ք՟սի հայրապետք տեղւոյդ նովին ոգւով ըղձեալք զուն գործեն հոգևոր թգրութ՟ իշխել ամ՟ քրիստոնէից աշխարհականաց և եկեղեցականաց. բայց մեք վարժեալք յա՟ծաշունչ գրոց` հաւատամք, թէ եկեղեցին ք՟սի է Ընդհանրական, կմ՟ յունական բառիւ Կաթողիկէ. և այս ընդհանրութի՟ մտածի ըս՟ տեղւոյ, ըս՟ ժամանակի, և ըս՟ անձանց : Ըստ տեղւոյ, զի եկեղեցին ոչ ամփոփի 'ի միում քաղաքի կամ գաւառի, ոչ յեր՟մ, ոչ 'ի հռովմ, և ոչ յայլ քաղաքս անձկանայ, այլ ը՟արձակ տարածի յամ՟ մասունս աշխարհի. յամ՟ թգրութիս, յամ՟ նահանգս, 'ի վիճակս, և 'ի գեօղս. ըստ բանին ք՟սի » երթա՛յք յԱշխարհ Ամենայն : Ըստ անձանց, զի եկեղեցին ոչ է սահմանել վ՟ն միոյ ազգի, հայոց, յունաց, լատինաց, ասորւոց, ևն, այլ ամ՟ ազգք բնակեալք յաշխարհի կարեն լինել անդամ և մասն նորին, ը̄ հրամայելոյ նորին ք՟սի » քարոզեցէ՛ք զաւետարանն Ամենայն արարածոց (բանականաց)։ Իսկ ը̄ ժամանակի, զի ո՛չ գոյ սահման տևողութ՟ն ն՟ր, այլ ձգի մինչև 'ի վախճան աշխարհի, ը̄ այնմ || Ես ը̄ ձեզ եմ զամ՟ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի։ Եւ վ՟ն այսց պատճառաց՝ նախնի ս՟բ հայրապետք և ժողովք եդին 'ի յիշեալ յերիս հանգանակս թէ || Հաւատամք 'ի մի միայն յԸնդհանրական և յառաքելական եկեղեցի || · բայց ընդէ՞ր ո՛չ գրեցին || Հաւատամք 'ի հռովմէական եկեղեցին ||, յայտ է՝ վասն այն, զի հաւատային նախ թէ Ընդհանրական եկեղեցին է բոլոր, իսկ հռովմէականն, հայկականն, յունականն, ևն, են մասունք կամ անդամք այդր բոլորի։ Ե՟րկդ հաւատային, թէ ո՛րևիցէ անհատ անձն քրիստոնեայ՝ կալով 'ի մասնաւոր ինչ յեկեղեցւոջ՝ կայ ևս 'ի մէջ ը̄հանրական եկեղեցւոյ, և այսու օրինակաւ կարող է հասանել փրկութ՟ն յաւիտենից։ Ապա ը̄ այսուցիկ՝ հայ ոք կալով հնազանդ լուսաւորչական եկեղեցւոյ՝ կայ ևս 'ի ծոց ընդհանրական եկեղեցւոյ, և ստուգիւ արժանի լինի փառացն արքայութ՟ն.

§· 116· Բայց սակայն՝ որովհետև պապականք և լատինահայք բազմապատիկ օրինակաւ չփոթեն զտկար խղճմտանս ժողովրդականաց մերոց · և առ 'ի փոխել զն՟ս յեկեղեցի իւրեանց՝ ստութ՟բ քարոզեն, թէ մնալով 'ի մէջ եկեղեցւոյ հայոց՝ ո՛չ կարէք փրկիլ, այլ պարտաւոր էք միանալ ը̄ հռովմէական եկեղեցւոյ, ևն, մեք յայսմ վայրի յանձն առնումք անջրելի փաստիւք ցուցանել զստութ՟ այդց բանից, և ամ՟ն առանց նենգութե՟ ապացուցանել. Նախ՝ թէ հայք մնալով 'ի ծոց լուսաւորչական եկեղեցւոյն, ո՟ր միանալով ը՟ հայրապետաց աթոռոյն էջմիածնի, կարի քաջ կարող են արժանանալ արքայութե՟ն ա՟յ ։ Երկրորդ՝ թէ ամենեւին չէ՛ հարկաւոր բաժանիլ և հեռանալ 'ի լուսաւորչական եկեղեցւոյն ։ Երրորդ՝ թէ ամենեւին չէ՛ արժան հայոց գնալ միաբանիլ ը՟ այժմեան լատինական եկեղեցւոյն և ը՟ հայրապետացն հռովմայ ։

§. 117. Զառաջին ճշմարտութի՟ մեր, ո՟ր զայն՝ թէ հայք մնալով 'ի լուսաւորչական եկեղեցւոջ՝ կարօղ են փրկիլ, ապացուցանեմք երկու փաստիւք, իմն վկայութ՟բ ածաշունչ գրոց, և վկայութ՟բ նոյն իսկ պապական վրդ՟պտց ։ Իբր զի նախ՝ ածաշունչ գիրք յայտնի ուսուցանեն, թէ որևիցէ մարդոյ՝ որ փափագի յետ մահուանն միանալ ը՟ ա՟յ, միայն երկու միջոցք կ՟ն գործիք սահմանեալ են յա՟յ. մի՝ ուղղափառ հաւատով դաւանիլ զմիութի՟ ա՟յ և զե՟րրդութի՟ անձանց ն՟ր. միւս ևս՝ գործով կատարել կ՟ն պահպանել զպատուիրանս ա՟յ, և զհրամանս եկեղեցւոյ իւրոյ, ըստ այնց ‖ Ապաշխա-
» րեցէ՛ք և հաւատացէ՛ք յաւետարանն (Մարկ. ա. 15).
» . . . որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ, և որ ոչն հա-
» ւատայ՝ դատապարտեսցի (անդ. ժզ. 16) . . . Եթէ
» կամիս 'ի կեանս յաւիտենականս մտանել, պահեա՛
» զպատուիրանս (Մտթ. ժթ. 17) . . . , Եթէ Եկեղեց-
» ւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և
» զմաքսաւոր (անդ. ժը. 17) . . . որ Ձեզ լսէ՝ ինձ
» լսէ, և որ զՁեզ անարգէ զիս անարգէ . . . . ուն-
» կընդի՛ր լերուք Առաջնորդաց ձերոց և հպատակ կա-
» ցէք ն՟ց, զի ն՟ք տքնին վ՟ս ոգւոց ձերոց (Եբր. ժգ. 17)
Ապա ուրեմն՝ եթէ հայ ոք մնայ յիւրում եկեղեցւոջ

և կատարէ զերկու զայդ. Թէու՛նող, որ եթէ ուղիղ հաւատայ ՚ի միու՟ին ա՟յ և յերրորդու՟ին անձանց ն՟ր, և զոր ինչ հաւատալի քարոզեն ա՟ծաշունչ գիրք, եթէ աշխատ լինի երկիւղիւ տ՟ն պահել զտասն պատուիրանըս ա՟յ և զհրամանս եկեղեցւոյն Հայոց, անտարակոյս զկնի մահուանն արժանի լինի տեսութեան ա՟յ. զի աւելի ինչ ք՟ զայդ ոչ պահանջեն ա՟ծաշունչ ս՟բ գիրք. Հրամանք կ՟մ պատուիրանք եկեղեցւոյն Հայոց առ սիրելի ժողովուրդս իւր՝ են այսոքիկ. ա՟, խոստովանիլ զա՟մ մեղս իւր գիտուն քահանայի՝ գոնէ միանգամ ՚ի տարւոջն ։ բ՟, հաղորդիլ ՚ի մարմնոյ և յարենէ ք՟ի գոնէ միանգամ ՚ի ս՟բ զատկին ։ գ՟, պահել զծոմս և զպահս յա՟մ հրամայեալ աւուրս, որ ՚ի քառասնորդական աղուհացս, ՚ի շաբաթապահս և երկիցս յա՟մ շաբաթու ։ դ՟, տեսանել զամբողջ պատարագ յա՟մ աւուրըս կիրակէից. և յայնպիսի տօնս՝ յորս պահի կիւրակէ ։ ե՟, զտասանորդս ընծայից՝ տալ եկեղեցւոյ և եկեղեցական սպասաւորաց ։ զ՟, ոչ պսակիլ ը՟ մերձաւոր ազգականս մինչև ցեօթն աստիճան ։ է՟, ոչ կոծել զմեռեալս նման հեթանոսաց ։ ը՟, օրինաւ՟ պսակելոց՝ ոչ երբէք բաժանիլ ՚ի միմեանց մինչև ՚ի մահ ։ թ՟, չառնել հարսանիք և պսակ յարգելեալ աւուրս։ Այս պատուիրանք հրամայեալ լինին ՚ի հայրապ՟ց և ՚ի ժողովոց ս՟բյ եկեղեցւոյս մերոյ, որք գտանին ՚ի կանոնագիրս Հայոց. որ վ՟ն զի դեռ չէ տպագրու՟բ տարածեալ առ ժողովուրդս (բայց յուսամք թէ ս՟բ աթոռն էջմիածնին տպեսցէ զայն, զի ազգն մեր գիտասցէ զպարտաւորու՟ի իւր), հնար է ը՟ մասին գտանել զայնս ՚ի պատմու՟ե Հայոց. հտ. ա՟. եր. 419. 441. 511. 647 ։ հտ. բ՟. եր. 16. 237. 346. 393.

441 · 686 ։ և հտ. դ. եր. 180 · 227 · 310 · 628 ։

§. 118. Օայս ճշմարտութի մեր հաստատեմք և վկայութ լատինադաւան հայոց, եկեղեցականաց և աշխարհականաց, որք ըունին և տօնեն զբազում նըս՝ յազգի և յեկեղեցւոջ հայոց 'ի լուսաւորչէն մինչև ցամն տն 1200 պայծառացեալս. որպ է տեսանել 'ի տօնացոյցն և յօրացոյցս 'ի վենետիկ տպեալս. եւս. 'ի պատմութ հայոց և 'ի վարս նըց 'ի մխիթարեանց տըպեալս. որք անտարակոյս տօնելի նք քարոզեն զըզմ անձինս յազգէս հայոց, զորս աստանօր դասակարգեմք ըստ թուականին՝ յորում համարին ննջեցեալ կամ՝ մարտիրոսացեալ ։

Ննջեցեալ կամ Վկայեալ
յամի տեառն մեր

336	· Գրիգոր Լուսաւորիչ ·
338	· արիստակէս որդի նորա · { դուխտ ·
341	· տրդատ թգր · աշխէն տիկին · խոսրովի ◡
342	· գրիգորիս աղուանից կաթուղիկոս ·
356	· վրթանէս որդի լուսաւորչին ·
362	· յուսիկ հայրապետ ·
363	· ստեփաննոս ուլնեցի ·
380	· խադ եպիսկոպոս ·
381	· մելետիոս եպիսկոպոս հայ ·
384	· ներսէս պարթև ·
440	· սահակ պարթև ·
441	· մեսրոպ վարդապետ ·
449	· ատոմեանք զօրավարք ·
450	· թաթուլ · վարոս · թովմաս ·
451	· վարդանանք զօրավարք ·

454 · ղևոնդեանք ·
458 · շուշան դուստր վարդանայ ·
461 · աբրահամ և խորէն երիցունք ·
480 · եղիշա վարդապետ ·
482 · մովսէս խորենացի ·
490 · դաւիթ անյաղթ փիլիսոփայ ·
693 · դաւիթ դունեցի ·
737 · վահան գողթնացի ·
786 · սահակ և համազասպ արծրունիք ·
808 · սահակ և յովսէփ կարնեցի նահատակք ·
853 · ատովմեանք զօրականք ·
1003 · գրիգոր նարեկացի ·
1030 · պետրոս կաթուղիկոս գետադարձ ·
1105 · գրիգոր վկայասէր ·
1165 · գրիգոր պահլաւունի ·
1173 · ներսէս շնորհալի ·
1198 · ներսէս լամբրոնացի ·
1201 · գրիգոր ապիրատ՝ կաթուղիկոս ·

Արդ. զայս ամ՟ անձինս՝ որովհետև իբր զճշմարիտ ո՟րս հայոց ընդունին և տօնեն ամ՟ պապադաւան հայք, արժան է հարցանել ցնս՟, ո՞չ ապաքէն ամ՟ երանելիքդ այդոքիկ հայ էին ազգաւ · ո՞չ ապաքէն ամ՟քին դոքա ծնան՝ սնան՝ կատարեցան և ն՟ք եղեն 'ի ծոցի եկեղեցւոյս հայոց · ո՞չ ապաքէն զայն հաւատս, զայն դաւանութի՟ և զայն հանգանակ խոստովանեցան դոքա, զոր և այժմ մեք ունիմք · մի՛թէ եկեղեցին հայոց փոխեա՞ց զհաւատս և զհանգանակ իւր զկնի արանցդ այդոցիկ · մի՛թէ օտար և հերետիկոսական ինչ բան յաւե՞լ աթոռն էջմիածնի 'ի հաւատս իւր, կա՟ պակասեցո՞յց 'ի հաւատոցն յետ այդր վերջին թուականի · ո՞չ ապաքէն այսօր իսկ զայն հաւատս քարոզեմք և դաւանեմք մեք՝ զոր ն՟քդ այդոքիկ յանձին կալան ՚ի բովանդակ կեանս իւրեանց . միթէ այդ ամ՟ ն՟ք աստացի՞ն ՚ի հանգանակի || հաւատամք ՚ի ն՟ր հոգին՝ որ ՚ի հօրէ և յորդւոյ բղխի . . . հաւատամք ՚ի հռովմէական եկեղեցին , ՚ի հայրապետն հռովմայ , ՚ի քաւարանն ննջեցելոց . ևն || . միթէ ջուր խառնեցի՞ն դոքա ՚ի ն՟ր բաժակն . ո՞չ ապաքէն զայն հաւատս և զայն ծէսս ունէին , զոր և այժմ ունին ամ՟ հայք ը՟ աթոռոյն էջմիածնի միացեալք . զիա՞րդ ապա քարոզեն այժմ լատինահայք թէ ՚ի հայոց եկեղեցւոջ չէ կարելի ն՟ր լինել և փրկիլ յարքայութե՟ երկնից . ո՞չ ապաքէն այդ լեզու ն՟ց հակառակ է գործոց իւրե՟նց, զի գործով՝ այն է՝ տօնելով զյիշատակն ն՟քսդ , քարոզեն թէ յայժ կարելի է յեկեղեցւոջ հայոց ն՟ր լինել, իսկ լեզուաւ հակառակ իւրեանց խօսին, յասելն թէ հայք ո՞չ կարեն փրկիլ , ևն ։

§. 119. Բայց բե՛ր առաւել ևս ՚ի նեղ արկցուք զբաժանեալ պապական եղբարս մեր՝ վկայու՟թ պապասէր մկրտիչ վրդ՟պտի մխիթարեանց . իբր զի սա ինքըն ՚ի գիրսն իւր , վարք ն՟րց , հտ . ժբ՟ . և ՚ի ծաղիկն վարուց ն՟րց , իբր զն՟ք և զմարտիրոս ընդունի և այլոց քարոզէ զբազում անձինս ՚ի մէջ հայոց եկեղեցւոյ պայծառացեալս , զորս յայսմ վայրի շարակարգեմք նոյնպ՟ ը՟ ամաց տեառն ։

Ննջեցեալ կամ վկայեալ
յամի տեառն ԷԷՐ

354 . զուխթա քահանայ .
380 . սահակ աբեղայ .

470 · *խաչիկ վարդապետ հոգետես ·*
601 · *սմբատ բագրատունի մարզպան ·*
853 · *գէորգ ակէացի և խոսրով գաբեղեան ·*
854 · *ստեփաննոս կոն ·*
855 · *սմբատ սպարապետ ·*
889 · *աշոտ թագաւոր բագրատունի ·*
897 · *մաշտոց կաթուղիկոս ·*
914 · *սմբատ թագաւոր նահատակ ·*
947 · *դաւիթ և գուրգէն գնունիք ·*
977 · *աշոտ թագաւոր ողորմած ·*
1012 · *մակար եպիսկոպոս ·*
1016 · *սիմէոն միայնակեաց ·*
1050 · *դաւիթ սքանչելագործ ·*
1113 · *գէորգ վարդապետ մեղրիկ ·*
1136 · *գոհարինեանք ·*
1150 · *թէոդորոս աբեղայ ·*
1170 · *գէորգ աչիկայ և գրիգոր ·*
1170 · *յովսէփ դունեցի ·*
1200 · *վարդենի կոյս ·*
1204 · *թէոդորոս կեսարացի ·*
1251 · *ստեփաննոս արտամետցի ·*
1252 · *վանական յովհաննէս վր̃դպտ տաւուշեցի ·*
1387 · *ստեփաննոս եպ̃ս սեբաստիոյ է̃ վր̃դպտօք ·*
1390 · *աւագ բաղիշեցի ·*
1391 · *եղիսաբէթ արճիշեցի ·*
1396 · *զաքարիա կաթուղիկոս աղթամարայ ·*
1398 · *թամար վկայուհի ·*
1399 · *խոսրով գանձակեցի ·*
1403 · *մելքիսեդ և կարապետ վանեցիք ·*
1403 · *յովհաննէս քահանայ չմշկածագեցի ·*

1417 · իսահակ պորոսիկ դավրիժեցի ·
1418 · յիմար վկայուհի վանեցի ·
1421 · վարդան դատվանեցի ·
1494 · շնորփոր վկայուհի բաբերդացի ·
1652 · խաչատուր ամդեցի ·

Օ այսոսիկ գրեթէ զամ՟սին ը՟ունի ևս հայրն միքայել չամչեան 'ի պատմութե՟ իւրում, և յաւելու յայնս (Հտ · Գ · Էր · 651) նաև զհետագայ նահատակս ,

1642 · Նիկողայոս ամդեցի ·
1655 · սիրուն գնունեցի ·
1656 · աւետիս և մխիթար ·
1676 · գրիգոր տաթևացի ·
1682 · գրիգոր կարնեցի ·

§· 120· Արդ՝ հարցանեմք զպատուելի մխիթարեանս , այդ ամ՟ յիշատակելի ս՟բք յինքեանց ընկալեալք՝ ո՞չ ապաքէն հայ էին ազգաւ և կրօնիւ · ո՞չ յեկեղեցւոջ հայոց ծնեան , հայոց հաւատով սնեալ եղեն և հայոց դաւանութե՟ ս՟բ կամ մարտիրոս եղեն · ո՞ր հաւատք էր այն՝ որ արժանացոյց զդոսա արքայութե՟ն երկնից · կ՟մ թէ դոքա ամ՟քեան հնազանդեցա՞ն և միացա՞ն ը՟ եկեղեցւոյն և հայրա՟պտին հռովմայ · ո՞չ ապաքէն ճշմարիտ է թէ բազումք 'ի ս՟րցդ՝ մանաւանդ գոհարինեանք , վարդենի , աւագ , եղիսաբէթ , թամար , շնոհփոր , աւետիս , ևն , և ո՛չ իսկ յերազի լուեալ կ՟մ տեսեալ էին զհայրա՟պտն հռովմայ , և ո՛չ իսկ 'ի միտս ն՟ց անկեալ էր երբէք , թէ կայցէ գլուխ եկեղեցւոյ բաց 'ի կաթուղիկոսէն հայոց , մանաւանդ ն՟ք , որք զկնի 1200 թուականիդ ս՟բ եղեն · զի որովհետև զկնի այդր թուոյ 'ի բառնիլ թ՟գրութե՟ հայոց 'ի կիլիկեցւոց՝ բոլորովին դադարեցաւ այն վճռասակար հաղորդակցութի՟ Հայոց ը՟ եպ՟սին Հռովմայ (որ եղև մի միայն պատճառ, զի օսմանեանք ջնջեցին իսպառ ըզձիւղ Թ՟գրութե՟ մերոյ ըս՟ ԹղԹակցութե՟ սոյ ը՟ Հռովմայեցւոց . ուր ը՟ հակառակն՝ եԹէ Թ՟գրք մեր հնազանդեալ էին տաճկաց հարկատուութե՟ , գոյէ մինչև ցայսօր հանապազորդէին յայնմ՝ տէրութե՟ , ո՟պ ցուցանեն օրինակք յոյն պէյից 'ի վալաքիա և 'ի մոլտավիա) ըս՟ այն և եկեղեցականք կ՟մ աշխարհականք Հայոց բնաւ իսկ մոռացան զանուն և զյիշ՟ատակ Հռովմայեցւոց , զոր առաւել ևս հաստատեն վարք եկեղեցական ա՟զգ , ո՟րք են Թէոդորոս աբեղայ վր՟դպտ , ստեփաննոս եպ՟ս սեբաստիոյ ը՟ երկուց վր՟դպտց , զաքարիա կաԹուղիկոս և յովհաննէս քահանայ . զի ո՟ք միԹէ միաբանեցան ը՟ եպ՟սին Հռովմայ , գրեցի՟ն առ նա Թ՟ղԹ հնազանդուԹե՟ , յիշեցի՟ն զանուն նր՟ 'ի պա՟տրագի , ևն՟ , յայտ է Թէ ոչ բնաւ . ուրեմն զիարդ կարողացան սուրբ և տօնելի լինել ։

§· 121. Պապականք (մանաւանդ քօլլեճցի և լիբանանցի ասացեալ աբեղայք) 'ի բռնակալ փաստիցս կոչկոճեալք՝ պատրաստ լինին 'ի հմայութիս և 'ի մնոտի կեղծիս . զի ոմանք ո՟պ Թէ սրտագէտ իցեն զօրէն ա՟ծոյ՝ պատասխանեն , Թէ դոքա Թէ՟պ և արտաքուստ ոչ միաբանեցան ը՟ հայրապ՟ետին Հռովմայ , սակայն 'ի ներքուստ պատրաստ էին սրտիւ և սիրով յարիլ 'ի նա (ո՟պ պնդէ անդրյան ըս՟ մելետոսի եպ՟սին) ։ Այլք ոմանք զի մի՛ երևեսցին ափիբերան կորագլխեալ , և զի ունիցին ինչ տալ իբր պատասխանի՝ ասեն , Թէ դոքա ո՟ք եղեն միայն ըս՟ հեղլոյ զարին իւրեանց յանուն Ք՟ի մարտիրոսական մահուամբ , ևն՟ ։ Բայց սա կայն եթէ ո՛չ խաբիմք՝ ասեմք, լաւ է վիժածն քան ծնեալն այդց անալի բանից · վ՟ն զի բաջայայտ է թէ մարտիրոսու՟ն առանց ուղիղ հաւատոց՝ ո՛չինչ օրինակաւ արդարացուցանէ · և ը՟ առաքելական առածին՝ առանց (ուղիղ) հաւատոց՝ անհնար է հաճոյ լինել այ՟ · զի եթէ՝ օրինակի աղագաւ՝ արիոսեան կ՟մ նեստորական ոք նահատակէր յայլազգեաց, պապականք ը՟ունէի՞ն զնա իբր զս՟բ մարտիրոս · կամ եթէ ոք յայժմեան լուտերականաց և 'ի կալվինականաց հեղոյր զարիւն իւր վ՟ն ք՟սի, ը՟ունէի՞ն զնա լատինք իբրև զս՟բ · յայտ է թէ ո՛չ բնաւ (որում օրինակ են յովհաննէս հուս և հերոնիմոս փրակեցի, զորս պապականք կենդանւոյն հրով այրեցին, բայց լուտերականք կոչեն զն՟ն Վկայս Ճշմարտութե՟ն) ։ Ապա ուրեմն այնու զի մխիթարեանք զյիշեալ անձինս ը՟ունին իբրև ըզս՟բս հայոց, անտարակոյս քարոզեն թէ ն՟ք ունէին զուղղափառ հաւատս քրիստոնէութե՟ն · և եթէ ն՟ք ուղղափառ էին, ապա և այժմեան հայք ուղղափառ են · զի և սոքա զնոյն հաւատս ունին՝ ը՟ յիշե՟լ ս՟բցդ, ըստ որում նոյն լուսաւորչական եկեղեցւոյ որդիք են թէ՝ ն՟ք և թէ՝ այժմեան հայք · և զի զկնի վերջին թուականին 1682, յորում նահատակեցաւ բեռնակիրն գրիգոր կարնեցի 'ի կոստանդնուպօլիս (տե՛ս առ չամչեան · հտ · գ · էր · 656) եկեղեցին հայոց ո՛չ յաւել, ո՛չ կրճատեաց և ո՛չ փոփոխեաց ինչ 'ի դաւանութե՟ն հաւատոց իւրոց ։ Ո՛չ կարեն լատինահայք խլրտել կ՟մ դիմախօսել ինչ ը՟դէմ ապացուցութե՟ցդ, ապա թէ ո՛չ, այս՟պ թախանձեմք զն՟ն վերստին ; Արդ յիշատակելի ս՟բք կ՟մ ուղղափառ էին հաւատով, կ՟մ հերետիկոս և հերձուածօղ ։ Եթէ հերետիկոս էին կամ հերձեալ, չէ՛ր արժան Մխիթարեան իմաստուն վարդապետաց ը՟ունիլ և այլոց քարոզել զայնս իբրև ըզ ս՟րս ա՟յ (մանաւանդ՝ զի բազմավաստակ Հայրն Մկրտիչ՝ աւելորդատանջ խղճիւ զամ՟ գրեալսն իւր զվարուց ս՟րց արկանէ ը՟ դատաստանաւ առաքելական գահին Հռովմայ հտ. ճէ. էջ. 5, որ երբեք լինել անշահ մտածութ՟ և թարմատար խղճմտութ՟) ։ Իսկ եթէ ուղղափառ էին ն՟ք 'ի հաւատս, ո՟պ գործով և գրով ուսուցանեն Մխիթարեանք ը՟ ճշմարտութ՟, ապա յայտմանէ ուղիղ մակաբերելին երկու ևս այլ ճշմարտութ՟ք ։ առաջին՝ թէ ուրեմն և այժմեան ազգն Հայոց միացեալ ը՟ եկեղեցւոյն էջմիածնի՝ ոչ հերետիկոս է և ոչ հերձեալ, այլ անսխալ ուղղափառ ։ վ՟ն զի զնոյն հաւատըս. զնոյն դաւանութ՟ և զնոյն ծէսս ունի և պահէ, զոր ս՟րքդ այդօքիկ ունէին մինչև ց1682 ամ՟ ք՟սի ։ Նաև երկ՟դ՝ թէ ուրեմն այժմեան և ապագայ Հայք կալով մ՟նալով 'ի ծոցի լուսաւորչական եկեղեցւոյն էջմիածնի՝ կարող են փրկիլ, արքայութ՟ արժանանալ և ս՟ր լինել, թէ ոչ տօնելի կամ յիշատակելի 'ի վ՟ր աշխարհի և 'ի մէջ եկեղեցւոյ, գէթ տօնելի առաջի ա՟յ և 'ի մէջ հրեշտակաց յերկինս ։ և այս շատ է մեզ և ամենայն քրիստոնէից ։

§. 122. Նու 'ի բժշկել զամ՟ խղճահար միտս մերոց՝ ածեմք ևևս, թէ Հայք կարեն սրբանալ ոչ միայն կալով 'ի մէջ եկեղեցւոյ իւրեանց և լոկ եղբայրսիրութ՟ միայն միանալով ը՟ Հռովմայ, այլ և եթէ ոք 'ի մերոցս վ՟ն արդար պատճառի ունիցի ինչ ներհակութ՟ կամ հակառակութ՟ ը՟ եպ՟սին և եկեղեցւոյն Հռովմայ, տակաւին կարող է ս՟ր և տօնելի լինել՝ եթէ պահեսցէ զվերոյգրեալ զերկուս թէութիւնս ։ Ո՟պ զի մ՛

ոք երկբայեսցի ընդ այս բան, հաստատեսցուք օրինակօք անժխտելի ։ Առաջին օրինակ և վկայ այսր ճշմարտու՟ն է ս՟բն մելետիոս եպ՟ս անտիոքայ, հայրենեօք և ազգաւ հայ․ զորոյ զբովանդակ կեանս և անցս յառաջ բերեն պատմիչք, թէոդորետոս (գր․ ե՟)․ սոկրատ․ սոզոմենոս․ փլեօուի․ և այլք բզ՟մք․ յորոց ընդ սակաւս հաւաքէ և հայրն մկրտիչ (վրք․ ս՟րց․ հտ․ բ․ եր․ 287=317)․ արդ՝ ընդարձակ պատմու՟ն վարուց ս՟բյս այսորիկ յայտնապ՟ տեսանի, թէ նա ՚ի բոլոր կեանս իւր ոչ միայն չունէր ինչ հաղորդակցու՟ի ընդ պապիցն փելիկսի և դամասոսի, այլ և ա՟մ զօրու՟բ ընդդէմ եկաց ն՟ց և կողմնակալաց նոցին, պաւլինոսի, հերոնիմոսի և այլոց պապականաց․ բայց սակայն իբր զս՟բ տօնեն զմելիտոս ա՟մ քրիստոնեայք, հայք, յոյնք և նոյն իսկ լատինք․ վ՟յ գաբրիել անդոյան չունելով զայլ ինչ դիմադրել այսմ, կեղծէ զպատրաստու՟ի կամաց ն՟ր ՚ի միաբանիլ ընդ հռովմայ ։ Երկ՟դ վկայ է ս՟բն կիպրիանոս եպ՟ս կարթագինոյ, որ ՚ի բովանդակ կեանս իւր գործով և գրով հակառակ եկաց ստեփաննոսի պապին հռովմայ, և ո՟պ մեղմելով դրէ հայրն մկրտիչ (վրք․ ս՟րց․ հտ․ դ․ եր․ 83) օտարանայր ՚ի նոցանէ բա- » նիւ և գրով՝ կրկին մկրտու՟ն կարօտ առդնելով զմկր- » տեալսն ՚ի հերձուածողաց . . . ընդ նմին և յայլ ինչ » ինչ սովորու՟ս հռովմայեցւոց Ստգիւս արկանէր՝ » ձայնակցու՟բ փիրմիլիանոսի եպ՟սին կեսարու կապա- » դովկացւոց . . . նմին իրի և հռովմայեցիք (ո՟յ պապք » հռովմայ) պատճառս խնդրէին յընդվայր հալածանել » զափրիկեցիս (իմա՛ զկիպրիանոս և զընկերս ն՟ր)։ Այսպէս նուաղեցուցանէ հայրն գաբրիել զծանր երկպառակու՟ի և զհակառակու՟ի կիպրիանոսի․ զի այդպէս վայել էր վկայագրի · բայց առ իմանալ զիսկու՟ն անցիցն՝ հա՛րկ է ընթեռնուլ զո՟մ Թուղթս կիպրիանոսի և զժողովս նո՟ր, յորս տեսանի թէ զի՞արդ կշտամբէ նա զպապս Հռովմայ և հակառակ կայ փառասիրութն՟ց (զորոյ զբանս երկար լինէր յառաջ բերել աստ). և սակայն զայր այդպիսի իբր զս՟բ տօնեն նոյն իսկ լատինք 'ի 26 և 14 սեպտ ։

§. 123. Ե՟րրդ վկայ բանիցս է յիշեալդ փիրմիլիանոս եպ՟ս, որ միաձայն գոլով ը՟ կիպրիանոսի՝ միշտ հակառակ եկաց պապին Հռովմայ, մանաւանդ ստեփանոսի, առ որ և գրեաց նամակ յանդիմանութ՟ե, զորոյ զհատուածն եդաք 'ի վերոյ §. 75 ։ որ և 'ի Թուղթն 75 առ կիպրիանոս գանգատի զդժնդակ բարուց ստեփաննոսի պապին, որ տմարդու՟բ և քրիստոնէի անվայել եղանակաւ վարեալ էր ը՟ եպ՟սունս եկեալս յափ-
» րիկոյ, այն՟պ ‖ Զի ոչ միայն առ սովորական խօսակ-
» ցու՟ն չէր ընկալեալ զն՟ս, այլ և հրամայէ ը՟հանուր
» եղբարց, զի եկելոցն մի՛ տացեն ոչ միայն զխաղա-
» ղու՟ն և զհաղորդակցու՟ն, այլ և ոչ զտուն բնակու՟ե
» և ոչ զհիւրընկալու՟ն ‖ ։ Նա և զայս փիրմիլիանոս իբր զս՟բ ընդունին լատինք ։

§. 124. Չ՟րդ վկայ ճշմարտու՟ես լինի յովհաննէս պահացօղ պատրիարգն կոստանդնուպօլսի, որ կոչեցաւն Տիեզերական պատրիարգ հակառակ կամաց պապին Հռովմայ, և զորոյ զժողովն, զգործսն և զանունն՝ պապն գրիգոր կոչեաց սնոտի, ամբարտաւան, պիղծ, նեռական, դիւական, եւն, ո՟պ ցուցաք 'ի §. 60 ։ Ընդ երկար և խիստ հակառակու՟ք եղեն 'ի մէջ ն՟ր և պապին վ՟ն բառիդ տիեզերական կամ ընդհանրական եպ՟սի, զորմէ ընթեռնուլ արժան է զնիկեփորոս (Գիրք. 18.

Գլ. 34) և զայլ եկեղեցականս պատմիչս. այլ սակայն Զյովհաննէս իբրև զմ՟ տօնեն Հայք և յոյնք 'ի 2 սեպտ՟ տե՛ս վարք ս՟րբց. հտ. ժբ. եր. 285։ Արդ՝ զանց արարեալ զայլ ևս բզ՟մ օրինակս և զվկայս այսր իրի, 'ի վ՟ր ածեմք զայս կարևոր հետևութի՟. եթէ չորեքին ե՟պսունքդ այդոքիկ՝ ոչ միայն չմիաբանելով, այլ և հակառակ կալով պապին հռովմայ՝ կարողացան ս՟ք և տօնելի լինել, վ՟ն է՞ր պատճառի մեր հայոց եկեղեցականք և աշխարհականք ոչ կարասցեն սրբութե՟ և արքայութե՟ երկնից արժանանալ, որք ոչ միայն չունին ինչ ներհակութի՟ ը՟ հռովմէականս, այլ և ս՟ր սրտիւ սիրեն զն՟ս և պատուեն, միայն թէ ն՟ք մի՛ բամբասեսցեն ըզմեզ հերետիկոս և հերձեալ կոչելով սուտ՟ք. և մի՛ դարձուսցեն զժողովուրդ մեր յեկեղեցի իւրեանց. ք՟զի այդպիսի արտաքին միաբանութի՟ ը՟ լատինս, ը՟ յոյնս, և՟ն, ամենևին չէ հարկաւոր առ 'ի փրկութի՟, այլ շատ է ներքուստ միայն սիրել և միաբանիլ ը՟ ամենայն քրիստոնեայս, որպէս 'ի վերոյ ասացաք։ Այսչափ առ ժամս 'ի հաստատութի՟ առաջին ճշմարտութե՟ մերոյ (§. 117)։

§. 125. Երկ՟ ճշմարտութի՟ այն, թէ չէ հարկաւոր հայոց բաժանիլ յեկեղեցւոյն էջմիածնի, ոչ կարօտի այժմ բզ՟մ ապացուցութե՟ց. զի թէ ըստ 'ի մօտոյ ասացելոցդ՝ հայք մնալով յիւրեանց եկեղեցւոջ կարեն փրկիլ և սրբանալ, զի՞ ևս հարկաւոր է թողուլ զօրինաւոր ծնօղն իւր և գնալ յարիլ յօտարս. մանաւանդ՝ զի պատուիրանն ա՟յ և ք՟սի հրամայէ մեզ ‖ պատուեա՛ զհայր քո և զմայր, զի քեզ բարի լինիցի ‖ որ ոչ միայն վ՟ն մարմնաւոր ծնողաց է ասացեալ, այլ ևս առաւել վ՟ն հոգևոր ծնողաց, այն է՝ վ՟ն եկեղեցւոյ և հայրապետաց ս՟րց, որք ծնանին զմեզ մկրտու՟բ և քարո-

ղութ · Նոյնպ՟ և առաքեալն հրամայէ || զիւրաքան-
» չիւրոք՝ ոպ՟ և կոչեաց ած՟ , այնպ՟ գնասցէ · և այսպ՟
» ըն՟ ամ՟ եկեղեցիս պատուէր տամ · Թլփատեալ (ըս՟ ազ-
» գաւ Հրէայ) ոք կոչեցաւ , մի՛ ցանկասցի անթլփա-
» տութե՟ · յանթլփատութ՟ (ըս՟ ՚ի յունաց) ոք կոչեցաւ ,
» մի՛ թլփատեսցի . . . իւրաքանչիւր ոք յոր կոչումն
» կոչեցաւ , ՚ի նմին կացցէ առաջի այ՟ (ա՟ Կորնթ · է՟)։

Այսպիսի ածատուր պատուիրանաց ունել և նախնի սբ՟ Հայրպտք՝ ամ՟ ումեք պատուիրեցին կալ մնալ և միանալ ըն՟ յատուկ եկեղեցւոյ և եպսի իւրում · և ըն՟ այսըմ սբ՟ն Իգնատիոս գրէ || որ զԻւր եպսն պատուէ ,
» յայ՟ պատուեսցի · Նոյնպ՟ նա որ գաղտ յեպսէն կամ
» Ընդդէմ կամաց նր՟ գործէ ինչ , սատանայի ծառայեսցէ (ԹՈՒՂԹ ԱՌ ԶՄԻՒՌՆԱՑԻՍ) · Նա կիպրիանոս սահմանելով զեկեղեցին ասէ || եկեղեցին է ժողովուրդ ըն՟
» քահանային միացեալ , և հօտ ըն՟ Իւրոյ հովուին շաղ-
» կապեալ · վսյ՟ պարտիս գիտել , թէ եպսն է յե-
» կեղեցւոջ և եկեղեցին է յեպսն , և նք՟ որ չեն ըն՟
» եպսին , ոչ են ՚ի մէջ եկղցւոյ (ԹՂԹ· 69· ԱՌ ՓՈՒՊԻԱՆ)։

§· 126· Առ այս վախճան և բազում ժողովք կանոնօք սահմանեցին , զի եկեղեցականք և աշխարհականք միաբան և հնազանդ կացցեն իւրեանց եպսի և պատրիարգի · և մի՛ դիմեսցեն բողոքարկութ՟ առ այլ պատրիարգունս , նա և ոչ իսկ առ Հայրպտն Հռովմայ · և զայս յայտ յանդիման ուսուցանէ մեզ եկդ՟ ժողովն միլեւիդանու յափրիկէ ՚ի ժամանակս օգոստինոսի · որ ՚ի կանոնն իբ՟ այսպ՟ խօսի || Հաճոյ թուե-
» ցաւ · զի քահանայք , սարկաւագք և այլ ստորին
» կղերիկոսք , ՚ի դատս՝ զոր ունիցին , եթէ գանգատ
» ունիցին զդատաստանէ եպսյն իւրեանց · մօտաւոր

» եպսքն լուծցեն զնա՟, և զինչևիցէ 'ի մէջ նցա՟ վճարեսցեն
» . . . եւ եթէ 'ի նոցանէ բողոքել կամիցին,
» մի' այլուր բողոքեսցեն, բայց եթէ առ ժողովն
» ափրիկոյ կամ առ նախագահս նահանգաց իւրեանց.
» Իսկ որք յայնկոյս ծովու (այ՟ առ հռովմայ եպսն)
» բողոքել կամին, յոչ ումեքէ 'ի հաղորդակցութի՟ ընկալեալ
» լիցին (այնպիսիքն) 'ի մէջ սահմանաց ափրիկոյ
» ||. և զայս կանոն բզմ՟ այլ ժողովք ևս հաստատեցին յայլևայլ ժամանակս. Այլ արդ եթէ ը՟դ սոր բազան կանոնաց՝ եկեղեցականաց իսկ չէ արժան թողուլ զիւրե՟նց ծնող եկղ՟ցին և ե՟պսն, և գնալ յարիլ առ այլ ե՟պսունս, ո՟րչափ ևս առաւել ժողովրդականաց չէ արժան առնել զայդպիսի անկարգութի՟ս. բայց եթէ գուցէ յայնպիսեաց ոք իցէ, զորոց հոգին սբ՟ կանխաւ գուշակեաց, թէ || յաւուրս յետինս եկես-
» ցեն ժամանակք չարք, զի եղիցին մարդիկ անձնա-
» սէրք. հպարտք. ամբարտաւանք. անհաւանք ծնո-
» ղաց . . . . գտիչք չարեաց. զծնողս անարգուք.
» ուխտադրուժք. Առ՟ (Բ Տիմոթ. Գ: հատուած. ա) յորոց պահեսցէ զմեզ տէր.

§. 127. Մատիցուք արդ 'ի հաստատել զերրդ՟ ճշմարտութի՟ մեր, զոր յիշեցաք 'ի վերոյ, զորոյ զապացուցութի՟ս այսպ՟ կազմեմք. Չէ արժան հայոց յարիլ կմ՟ միանալ ը՟դ այժմեան եկեղեցին հռովմայ. որոյ պատճառն է, զի այն եկեղեցի հակառակ նախնի սբ՟ պարզութե՟ն արար զբզմ՟ փոփոխութի՟ս, յաւելուածս և կրճատումունս 'ի նիւթս հաւատոյ և ծիսից, որովք և ետ մեզ բազում իրաւացի առիթս բաժանելոյ 'ի նմանէ և յետս կալոյ 'ի հաղորդակցութէ՟ նր՟. Քննեսցուք աստանօր զայդոսիկ առիթս բաժանման, բայց համա ռօտ, զի ոչ են մեզ կամք երկար վիճել զայնցանէ, ը՟ որում ընդարձակ ածաբանութեան է անկ լինել խօսել զնոցունց ։

Առաջին առիթ բաժանման մերոյ է այն, զի եկեղեցին Հռովմայ զրկէ զժողովուրդն 'ի հաղորդութե՟ ս՟բ արեանն ք՟սի, տուել ն՟ց միայն զս՟բ մարմինն ։ Այս սովորութի՟ հաստատեցաւ առ ն՟ս նախ առաջին յամի տ՟ն 1414, 'ի ժողովն կոստանդիոյ, նիստ, ժգ. ապա 'ի ժողովսն պազիլիոյ և դրետենդինոյ. զի յառաջ քան զայդ Թուական՝ ա՟մ լատինք համաձայն այլոց քրիստոնէից տային ժողովրդեն և զս՟բ զարիւնն, ո՟պ խոստովանին ա՟մ պապականք ։ Առ 'ի մուծանել զայս ծէս՝ ժողովքդ բերեն պատճառս մնոտիս, ո՟պ թէ կայցէ վտանգ թափելոյ զս՟բ արիւնն 'ի տալն ժողովրդեն կամ 'ի տանելն առ հիւանդս, քացախելոյ 'ի պահելն, ժանկելոյ սկհոյն, սառնլոյ, ե՟ն ։ Այսպս այդ վտանգըք յայտնի է թէ կային և յառաջագոյն միշտ. բայց զգուշութե՟ սպասաւորաց եկեղեցւոյ խափանել լինէին, որոյ վ՟ս ոչ ոք 'ի նախնի ս՟րբ հայրպ՟տոց 'ի միջոցի 1400 ամաց զմտաւ եած արգելուլ զժողովո՟րդն յըմպելոյ զարիւնն, վ՟սկ և ոչ իսկ հայրպ՟տոց Հռովմայ արժան էր առնել զայդ. վ՟ս զի ածաշունչ գիրք յայտնի հրամայականս բայիւ պատուիրեն ա՟մ մարդկան թէ՛ ուտել զմարմինն և թէ՛ ըմպել զբաժակն, ը՟ այնց || առէ՛ք,
» կերա՛յք, Արբէ՛ք 'ի դմանէ Ամենեքին (Մտթ., ԻԶ) . .
» . . և արբին 'ի նմանէ Ամենեքեան (Մարկ. ԺԴ) . . .
» զայս Արասջի՛ք առ իմոյ յիշատակի (Ղուկ. ԻԲ) . . .
» որ ուտիցէ զհացս կամ Ըմպիցէ զԲաժակս տ՟ն անար-
» ժանութե՟, պարտական եղիցի մարմնոյ և Արեան տ՟ն,

» փորձեսցէ մարդ զանձն իւր , և ապա 'ի հացէ անտի կերիցէ և 'ի Բաժակէն Արբցէ . . . . քանիցս » անգամ Թէ ուտիցէք զհացս զայս և զԲաժակս Ըմ» պիցէք , զմահն տ՟ն պատմեցէ՛ք , Մինչև եկեսցէ » Նա (Ա Կորնթ. ԺԱ) : Համաձայն այսց պատուիրանաց և նախնի հայրպ՟տք հրամայեն ամ՟ցն Թէ՛ զմարմինն և Թէ՛ զարիւնն Ճաշակել , ո՟պ իգնատիոս (Թղթ առ Փիլադելֆ) . ոսկեբերան (Ճառ . ԺԲ . Ա Կորնթ : Ճառ . ԻԴ . Ա Կորնթ) . հերոնիմոս (առ Ա Կորնթ . ԺԱ) . օգոստինոս (Մեկն, Սաղմոսաց . ԾԷ : Ճառ . ԻԶ . Յոհն :) . կիպրիանոս 'ի բզմ տեղիս (Գր . Է . Թղթ . Գ . Գր . Ա . Թղթ . Է . ԿԳ) . ամբրոսիոս (Յղ . Խորհրդ . Գր . Դ . Գլ . Ե : Ճառ . Ա Կորնթ . ԺԱ) և այլ բզմ՟ք , զորոց զբանս ոչ յառաջ բերեմք վ՟ն համառօտութե՟ . միայն յիշեսցուք զայնց՝ որք ծանր մեղս համարեցան ոչ Ճաշակել և յարենէն : Ըստ այսմ լեւոն մ՟ծ պապ խօսելով զմանիքեցւոց ասէ || անարժան » բերանով զմարմին ք՟սի ընդունին, իսկ զարիւն փրկութե՟ » մերոյ Ճաշակել ամենեւին հրաժարին . . . . որոց սըր » բապիղծ կեղծաւորութի՟ն 'ի յայտ եկեալ , քահանայական » հեղինակութե՟ նշաւակեալ և արգելեալ արտաքսին յըն» կերակցութե՟ ս՟բց (Ճառ . Դ . Աղուհացից): Գելասիոս պապ վ՟ն նոյնպիսեաց ասէ || հասու եղեաք , Թէ ոմանք ընկա» լեալ միայն զմասն սբ՟ոյն մարմնոյն , 'ի բաժակէ ս՟ր » արեանն հրաժարին , որք անտարակոյս կամ զբո» լոր խորհուրդն ընկալցին , կամ 'ի բոլորէն յետս » կացցեն . վ՟ն զի բաժանելն զմիևնոյն խորհրդն՝ առ» անց ծանր սրբապղծութե՟ ոչ կարէ լինել (Հրովարտ . » Յղ . առ Եպսկ . Լուկ . Է . Գլ . ԺԲ) . զայլ բազում վկայութիս նախնեաց մատենագրեն վոսսիոս . մոլինէոս . խամերոս . և այլք : Բազում ինչ ընդդէմ այսց բաղբա զեն լատինք, բայց դիւրին է պատասխանի ամ՟ցն. և գէ՛թ այս ինչ ճշմարիտ մնայ, թէ այդ ծէս լատինաց հակառակ է սահմանադրութ՟են ք՟նի և գործածութ՟են հին եկեղեցւոյ 'ի չորեքտասան ամբողջ դարս. իսկ սովորութ՟ի մերս եկեղեցւոյ ո՛չ միայն համաձայն է թէ՛ ք՟նի թէ՛ նախնի եկեղեցւոյն, այլ և յապահով յոյժ, անվտանգ ա՟միւ, և յոյժ գովելի վասն հնութ՟են։

§. 128. Միայն յիշեսցուք զճարտարութ՟ին հօրն գաբրիէլի, որ 'ի գիրսն հայելի ուղղափառութեան կամելով արդարացուցանել զլատինս՝ ասէ, թէ ահա և հայոց եկեղեցին ո՛չ առնէ ըստ հրամանին ք՟նի, զի նա ասաց » ուտեցէ՛ք » և առաքեալն ասէ » ընդունել » իսկ հայք տան (ըստ աշխարհիկ ձայնին) թաթախելով միայն, որ ո՛չ է ընդունել. Բայց սակայն չիմանամք զիա՞րդ ո՛չ զգուշացաւ անձին իմաստունդ 'ի գրելն զայդ, գուցէ կամեցաւ միայն իւեիցէ զաչս սրմաքեշ մանուկելին խտտղել. ապա թէ ո՛չ, զիա՞րդ կարելի էր ընդդէմ հայոց առարկել զայդ, ո՞չ թէ ասել » հայք սակաւ տան զարիւնն, ապա ընաւ իսկ ո՛չ տան » վա՜շ ծաղրական հետևութ՟են. Թո՛ղ ասասցեն տրամաբանք՝ միթէ 'ի սակաւութ՟է քանակութ՟ե հետևի՞ չգոյութ՟ի գոյացութ՟ե. սակաւ տայ այժ՟ հայոց եկեղեցին, բայց իրօք տայ զի՟ր զարիւնն, թէ շատ իցէ, թէ սակաւ ըստ քանակութ՟են. իսկ լատինն ընաւ իսկ ո՛չ տայ, ո՛չ շատ և ո՛չ սակաւ, ո՛չ ըստ գոյացութ՟են և ո՛չ ըստ քանակութ՟են. որ է ուղղակի հակառակ սահմանադրութ՟են ք՟նի։ Իսկ թաթախելով տալն հայոց վ՟ն այն է յոյժ գովելի, զի ո՛չ միայն գոյացապէս տայ 'ի ն՟բ արեանէն ք՟նի, այլ և զի այդ է վաղնջական սովորութ՟ի պաշտեալ ևս յեկեղեցւոջ թէ յունաց թէ լատինաց, զի զհնութ՟ի այդր ծիսի 'ի սկիզբն հինգե՟րդ դարու 'ի ժամանակս ոսկեբերանին 'ի վեր հանեն իմաստունք , մանաւանդ Լադինիոս (Ռողբ տո . [illegible]) և Սերկոդիոս (յղ . հնչ՟նի . գր . գ . գլ . ծգ)։ Գտանի յիշատակ ծիսից և 'ի ժողովն Պրաքարենայ յամի տ՟ն 563 . և պապն ուրբանոս եկ՟դ 'ի ժողովն կլարամոնտանայ յամին 1095 հրամայեաց զհիւանդս և զայլս իսկ թաթախեալ ճաշակել , զի մի՛ վտանգ լիցի հեղման բաժակին ։ Նոյնպ՟ և ժողովն Տուրոնայ յամին 567 հրամայէ քահանայից պահել զսրբատուփ. յորում դիցեն զմարմինն ք՟ի թացեալ յարեան ն՟ր, ո՟րպ պատմէ Իվոն (Տոմն . է . գլ . ժբ)։ Իսկ յեկեղեցւոջ անգղիացւոց այնչափ զօրացեալ էր այս սովորութ՟ի հաղորդելոյ զժողովուրդն թաթախել զմարմինն ք՟ի յարեանն , զի արնոլփոս ե՟պս ռոփենսայ յամի տեառն 1120 երկարագոյն նամակաւ պաշտպանէ զայն , ո՟րպ յառաջ բերէ ղուկաս տաղերոս (սպիցիլեգ . հտ . գ) թէպ՟ և յետոյ փոխեցին զայն անգղիացիք ։ Իսկ եկեղեցին յունաց 'ի սկզբանէ և այսր հաղորդէ զժողով՟րդն թացեալ կամ թաթախել զս՟բ մարմինն յարեան և դրգալով , ո՟րպ յայտնի է ամենեցուն ։

§. 129. Եկ՟դ պատճառ բաժանման մերոյ է փոխելն լատինաց զհանգամանսն հաւատոյ , յաւելլով յայն զբառդ՝ և յորդւոյ , զոր չէ՛ր արժան ն՟ց առնել . մի՝ զի ա՟ծաշունչ գիրք ոչ ուսուցանեն զայդ որոշակի , ո՟րպ կանխաւ ասացաք . միւս ևս՝ զի չորք ե՟ն հանրական ժողովք բացայայտ արգելին ամ՟ն , զի մի՛ լիցի փոփոխումն կամ յաւելուած ինչ 'ի հանգամանսն կոստանդնուպօլսոյ ա՟ ժողովոյն ։ Ո՛չ յառաջ բերեմք աստ զկանոնսդ , որ ոք կամի՝ կարէ գտանել զայնս 'ի ժողովսն ա՛ կոստանդնուպօլսոյ · [illegible] · Ղ ։ քաղկեդոն · [illegible] · Ե ։ եկդ կոստանդն · [illegible] · Ղ · և երդ կոստանդնու · ԳՈՐԾ · ԺԷ ։ Ընդդէմ բողոքէ հայրն գաբրիէլ 'ի յիշեալ գիրսն իւր · թէ ահա և հայոց եկեղեցին բազում բառս յաւելեալ է 'ի հանգանակին կոստանդնուպօլսոյ , ընդէ՞ր ապա տրտնջէ զլատինաց , ԼԱ · բայց յայտնի է նմա պատասխանի մեր · Թէ այլ ինչ է յաւելուլ բառս 'ի բացայայտութի՛ ընկալեալ խորհրդոյ ինչ հաւատոյ · և այլ ինչ է յաւելուլ զնոր նիւթ և զօտար խորհուրդ հաւատոյ ։ Իսկ թէ յաւելուածն լատինաց ո՛չ իցէ նոր և օտար , պարտին նքա ապացուցանել 'ի սբ գրոց , զոր դեռ ո՛չ կարացին մինչև ցայժմ ։ Առ լաւ իմանալ զճշմարտութի՛ մեր ընթեռնուլ պարտ է զյատուկ գիրս վն այսր խնդրոյ յօրինեալս յերկաքանչիւր կողմանց · որք են մանաւանդ , երեմիա պատրիարգ յունաց (ՊԱՏԱՍԽՆԷ ԱՌ Ե · ԳԼ) · մետրոփանէս (ԴԱՒԱՆ · ՈՒՂՂԷՐ · ԳԼ · Ժ) եղիա մենիադայ ([illegible] · ԳՐ · Է · ԳԼ · 2) ադամ զէրնիկավ (ՃԱՌ [illegible]) · պետրոս մոկիլա (ՈՒՂՂԷՐ · ԴԱՒԱՆ · [illegible]) · գեորգ վալքի (ՊԱՏՄ · ՎԷՃԻ ՅՈՅՆ · և ԼԱՏ) · պետաւիոս (ԳՐ · Է · ԳԼՈՒԽ · 3) և այլ բազումք ։

§· 130· Երդ առիթ բաժանման 'ի լատինաց այն է , զի նքա սխալանօք ուսուցանեն թէ սբ առաքեալն պետրոս էր միապետական տէր ամ քրիստոնէից , ամ եպսց և պատրիարգաց , և ամ եկեղեցեաց · և թէ յաջորդն պետրոսի եպսն հռոմայ՝ հաւասար պետրոսի ունի զամ իրաւաբանութիս և զհեղինակութիս նր · և առաւել անտանելի է այն , զի ոմանք յիտալացի վարդապետաց , որպ անդրյան ԼԱ , իշխեն ևս ասել թէ այս բան է մասն հաւատոյ (est de fide) ա̃ծային հաւատով հաւատալի, և որ ոչ հաւատայ՝ է հերետիկոս և հերձեալ, ն̃ա ։ Ուստուն̃ այդր յառաջ ապացուցաք բան իւք ա̃ծաշունչ գրոց և վկայութ̃ վրդպաց, բայց ներեսցէ ձերդ եղբայրուն̃, կարճառօտել մեզ յայսմ մասին, զի առաւել պայծառասցի ճշմարտուն̃ մեր ։ Բովանդակ դատողուն̃ պապիցն հիմնի 'ի կարծեցեալ միապետուն̃ ս̃րբյն պետ̃րսի ․ իսկ միապետուն̃ն պետրոսի հիմնի յերկուս վկայուն̃ս աւետարանին, որք են մատթ․ ժզ̃ ․ 18=20 ․ յովհ ․ ի̃ա ․ 15=18 ․ զորոյ զառաջինն յայսմ վայրի վերադլխութ̃ կրկնեմք ։ Նախ՝ յառաջին բանի՝ ք̃ս ոչ անուանեաց զպետրոս Հէֆ̃, այլ Կէֆ ․ ոչ ասաց նմա » դու ես հիմն » այլ թէ » դու ես վէմ » իսկ հէֆ̃ և կէֆ բազմօք զանազանին 'ի միմեանց ․ զի թէպ̃ ա̃մ հիմն է և վէմ, բայց ոչ ա̃մ վէմ է հիմն ․ ը̃ս որում 'ի քարակերտ շինուածի ինչ (յորմէ առնու ք̃ս զփոխաբերուն̃ իւր) դնին բազ̃մ վէմք, բայց ոչ ա̃մքին կոչին հէֆ̃, այլ այնք՝ որ մասնաւոր ինչ դիրիւք և ձևով յանկիւնս կան, և անմիջապ̃ 'ի վ̃ր հողոյ արկանին, և յորոց վ̃ր շարին այլ վէմք ․ ո̃պ յայտ է ա̃մցն ․ ուստի ճիշդ մեկնութ̃ բանից ք̃սի պետրոս ոչ է կոչելի Հէֆ̃, այլ միայն Կէֆ ։

§․ 131․ Երկ̃դ՝ յասելոյն ք̃սի » 'ի վ̃ր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ » չէ՛ հնար նոյնպ̃ լօճիգական ճշդութ̃ մակաբերել՝ թէ պետրոս իցէ հիմն եկեղեցւոյ, վ̃ն զի և զերկրորդական և զերրորդական վիմաց 'ի վ̃ր հիման արկելոց՝ մարթ է նոյնպ̃ ուղղութ̃ ասել, թէ 'ի վ̃ր այնց շինի տունն կամ եկեղեցին ․ վ̃նկ թէ՛ նախընթաց և թէ՛ այս բան ոչ ապացուցանեն խստիւ թէ հնար իցէ զպետրոս կոչել հէֆ̃ ․ այլ անփոփոխ պահելի էր քա՛ղիր անունն վէՏ ։ Բայց որովհետև բաղումք 'ի նախնի վր՟դպաց հիմն իմացեալ և անուանեալ են զպետորոս , տացուք լատինաց ներողութեամբ զայդ ես ։

§. 132. Նորոգ՝ ընկալեալ ես թէ մ՟բն պ՟տըս իցէ հիմն , մնայ եւս որոնել , թէ ո՞ր յատկութ՟ի հիման պատշաճեսցի արդեօք պետորոսի . վ՟ն զի ը՟ս խոստովանելոյ ամ՟ցն՝ հիմն ունի զերկուս զանազան յատկութ՟իս կամ զօրութ՟իս . մի՝ առաջնութ՟ի , միւս եւս՝ ամբրապահութ՟ի և վերամբարձութ՟ն ։ Առաջին յատկութ՟ին քաջայայտ է , զի հիմն նկատմամբ այլոց քարանց ունի զառաջնութ՟ի երրակի , այն է՝ Ըստ տեղւոյ , զի դնի յառաջին տեղւոջ ։ Ըստ ժամանակի՝ զի յառաջ քան զայլ վէմն արկանի և կանխէ ք՟ զայնս ժամանակաւ , Ըստ կարգի՝ զի առաջին է 'ի կարգի անդ քարանց և սկիզբն է շարին , ո՟րում ինքն սկսանի զկարգն վիմաց 'ի վ՟ր իւր շարելոց . և ահա նկատմամբ այսց եռատեսակ առաջնութ՟ց՝ բառս Հիմն 'ի մ՟ջ և յոչ մ՟ջ խօսս և 'ի գիրս 'ի գործ ածի փոխանակ բառիցս , Սկիզբն , Սկսուած , Նախասկիզբն , Առաջին , եւն . ըստ այսոցիկ և բայքս , հիմն լինել՝ եղանիլ ('ի չէզոք և 'ի կրաւորական միտս) . հիմն արկանել , հիմնել , հիմնարկել , հիմն դնել՝ առնել , եւն ('ի ներգործական միտս) նշանակեն , սկիզբն լինել , սկսանիլ , առաջին լինել , սկզբնաւորել , առաջին ձեռն 'ի գործ արկանել , եւն . իբր զի ո՟պ յերկրագործութ՟ն՝ առաջին է սերմանել և տնկել , նոյնպ՟ 'ի ճարտարապետութ՟ն առաջին և սկսուած է հիմնարկութ՟ին ։ Հաստատի այս նշանակութ՟ի և օրինակօք . յասեն || միւսանգամ հիմն արկանել ապաշխարութ՟ն (Եբր . Զ . 1) նշանակէ՝ սկիզ-

բըն առնել ապաշխարութ՟ն, նոր սկսանիլ ապաշխարել։ և ասելըն || Իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եդի, բայց այլ է որ շինէ (ա. կորնթ. գ. 10) նշանակէ, ես սկիզբն արարի քարոզել ձեզ զհաւատս. ես եղէ առաջին քարոզիչ հաւատոյ 'ի մէջ ձեր. ևն։ Յայտնագոյն ևս երևի 'ի բանիս || Իբրև արկանիցէ հիմն և ո՛չ
» կարիցէ կատարել (զաշտարակն), ամենեքին սկսանի-
» ցեն ծաղր առնել զնա և ասել, թէ այր այս սկսաւ
» շինել և ո՛չ կարաց կատարել (ղկ. ժդ. 29). ուրանօր առաջին բայն արկանիցէ հիմն 'ի վերջոյ բացայայտի բայիւս սկսաւ շինել, զի հիմնարկելըն փոխաբերութ՟բ ցուցանէ սկսանիլ զշինուածն, առաջին լինել 'ի շինել։ Տե՛ս ևս զբանն հռովմ. ժե. 20. ևն։ Իսկ եկղ՟ յատկութ՟ի հիման է հաստատութ՟ի և ամրութ՟ի տալ բոլոր շինուածոյն, պինդ և անշարժ պահել զայն, 'ի վեր ունիլ զայլ մասունս, յիւր վ՟ր ամբառնալ զծանրութ՟ին, ազդել և ներգործել 'ի նա զկայունութ՟ի և ըզյարատևութ՟ի, ազատել զշինուածն 'ի կործանմանէ 'ի գետոց և 'ի հեղեղաց (ղկ. զ. 48)։

§. 133. Զայսուիկ գիտացեալ՝ քննելի է, թէ ո՞ր յերկուց յատկութ՟ցդ յարմարի արդեօք ս՟բյն պետրոսի։ Յայտնի է ը՟ս ինքեան՝ թէ եկղ՟ յատկութ՟իդ ո՛չ իւիք ընծայի ո՛չ պետրոսի և ո՛չ այլոց առաքելոց. վ՟ս զի այդպիսի զօրութ՟ի միայնոյ ք՟յ է յատուկ, զոր և ը՟դունին ա՟մ պապականք. ո՟պ և հայրն գաբրիէլ 'ի մեկն. պօղ. հտ. ա. եր. 630. հտ. բ. եր. 533. և այլուր. Ապա ուրեմն մնայ ասել, թէ միայն առաջին յատկութիւն հիման, այն է՝ առաջնութիւն կ՟ա առաջին լինելն՝ պատշաճի ս՟բյն պետրոսի (ո՟պ և 'ի վերոյ §. 9=14 բազմօք ապացուցաք). ը՟ս որոյ բանն ք՟ի,

|| ՚ի վ՟ր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ || փոխածել յայս հաւասարազօր նախադասութ՟ի » դու եղիցիս հիմ՟ն շինու՟ծ եկեղեցւոյս » որոշակի արտայայտէ զայս իմաստ || դու եղիցիս սկիզբն, դու սկսանիցիս ՚ի հաւաքել զքրիստոնեայս . . . . դու լիցիս առաջին ՚ի քարոզել զհաւատս քրիստոնէութ՟ե . . . . նախ առաջին քո միջնորդութ՟բ վարեցայց ՚ի ժողովել զհաւատացօղս ինձ (շինեցից զեկեղեցի իմ) . . . . որովհետեւ դու նախ առաջին դաւանեցար զիս որդի այ՟, վ՟նկ եւ ես քեզ տաց զառաջնութ՟ի, այ՟ զպատիւն սկսանելոյ կ՟մ ըզ պաշտօնն առաջին լինելոյ ՚ի քարոզութ՟ե աւետարանին || եւս։ Նպաստէ այսմ մեկնութ՟ե եւ բնագիրն յունաց, յորում բանն » ՚ի վ՟ր այդր վիմի » այսպ՟ եդեալ կայ » ἐπὶ ταύτῃ τῇ πέτρᾳ » ուրանօր նախադրութ՟ին ἐπὶ՝ հանդերձ տրական խնդրով՝ նշանակէ եւ ՚ի ձեռն, միջնորդութեամբ, որպ՟ թէ ասել » միջնորդութ՟բ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ » Հանդոյն այնըմ՝ որ ասի (Փիլիպ. գ. 9) ἐπὶ τῇ πίστει, ուր նոյնպ՟ տրական խնդրով նշանակէ » արդարութ՟ին՝ որ ՚ի ձեռն հաւատոց || ։

§. 434. Այլ արդ՝ առաջին լինելն պետրոսի ՚ի հիմնարկութ՟ե եւ ՚ի կառավարութ՟ե եկեղեցւոյ՝ յայտ է թէ ոչինչ օրինակաւ նշանակէ, թէ նա իցէ գլուխ եւ տէր կ՟մ միապետ այլոց ընկերացն. որպ՟ եւ օրինակք իրացդ ապացուցանեն. զի եւ ՚ի բազմութ՟ե անդ սինկղիտոսաց (զոր ռուսք լատին բառիւ սէնատօր կոչեն), մի ոմն առաջին է միշտ պատուով՝ աթոռով եւ ձայնիւ. սակայն վ՟ն այդորիկ ոչ է գլուխ եւ միապետական տէր այլոց սինկղիտոսաց. զի ամէքն ունին զհաւասարաչափ իրաւունս. եւ ոչ ոք է հպատակ կամ ստորադրեալ այլում ․ Ը՟ այսմ էր և ն՟քն պետրոս 'ի ժողովի անդ առաքելոց ․ ո՟պ բազում փաստիւք հաստատեցաք 'ի վերոյ §․ 16=86 ։ Արդ՝ եթէ ն՟քն պետրոս միայն արտաքին պատուով և աթոռով 'ի վերոյ էր քան զայլ առաքեալս , ապա ուղիղ հետևի , թէ և յաջորդք ն՟ր (ո՟պ կարծին) եպ՟ունքն հռովմայ՝ լոկ արտաքին պատուով ունին առաւելութ՟ն ք՟ զայլ եպ՟ս , որք միօրինակ են և կոչին յաջորդք առաքելոց ․ և զայս առաւելութ՟ն պատուոյ հաստատեցին նաև յետագայ հայրապետք և ժողովք՝ ո՛չ միայն վ՟ր եպ՟սին հռովմայ , այլև վ՟ր այլոց եպ՟ց զանազան քաղաքաց ինչ ինչ արտօնութ՟ք պայծառացելոց ․ ո՟պ ասացաք 'ի վերոյ §․ 97 ․ թէ ժողովն նիկիոյ սահմանեաց զանկախութ՟ն պատրիարգացն աղեքսանդրիոյ , հռովմայ , և անտիոքայ ․ յետ ժամանակաց նոյնպ՟ անկախ պատրիարգ անուանեցան եպ՟սքն եփ՟մ և կոստանդնուպօլսի , նա 'ի պատիւ տնօրինական տեղեացն ք՟սի ․ և սա 'ի պատիւ կայսերական գահին , որ 'ի հռովմայ անդ փոխեցաւ ։

§․ 135․ Նշանաւոր է այն , զի եպ՟սն և եկեղեցին կոստանդնուպօլսի անդստին 'ի վաղ ժամանակաց՝ պատուով և իրաւամբք հաւասարեցաւ հռովմայ ։ Այսպէս կայսրն յուստինիանոս որ նստաւ 'ի 528 'ի հրովարտակս իւր՝ զմենաս , զեպիփան և զանթեմիոս եպ՟սունս տեղւոյն՝ կոչէ Տիեզերական պատրիարգ (Նօրահրամ․ է․ ճղ․ խբ)․ Նոյնպ՟ և լևոն կայսրն զայդ անուն ընծայէ ստեփաննոսի եպ՟սին (Նօրահրամ․ 2=12)․ Նոյն յուստինիանոս ասէ թէ եկեղեցին կոստանդնուպօլսի է Գլուխ այլ ա՟մ եկեղեցեաց (Տփ․ Գր․ ա․ տիտղ․ Բ․ Գլ․ Իդ)։ Ըստ այսոցիկ և հայրապետք առաջին Ը՟հանրական ժողովոյն կոստանդնուպօլսի յամի 381 ․

վճռեցին զայս ե՟րդ կանոն || ե՟պսն կոստանդնուպօլսի
» ունիցի զաւաջին պատուոյ բաժինս զկնի ե՟պսին
» հռովմայ . վ՟ն զի և սա է նոր հռովմ || ։ Զայս կանոն
տուեալ ևս ընդարձակեցին հայր՟պտք ժողովոյն
քաղկեդոնի յամի 451 . յասելն 'ի Ի՟Ը կանոնին || Հետևելով
» (մեր) վճռոց ս՟բց հարց, և զարդի ընթերցե՟լ
» զկանոնն՝ ճանաչելով հարիւր և յիսուն ա՟յ ամենասիրելի
» եպ՟ց (լինել), զնոյնն ևս և մեք վճռեմք և
» սահմանեմք վ՟ն արտօնութե՟ց ամենա՟սբ եկեղեցւոյն
» կոստանդնուպօլսի նորոյ հռովմայ, վ՟ն զի հին աթոռոյն
» հռոմայ՝ իրաւամբք զարտօնութի՟ ընծայեցին հարքըն
» , զի քաղաքն այն հրամայեր ։ Եւ նովին միտածութ՟բ
» հարիւր և յիսուն ա՟յ ամենասիրելի եպ՟սունք
» շարժեալք, նորոյ հռովմայ ամենա՟սբ գահին զհաւասար
» արտօնութի՟ս ընծայեցին . ուղղութ՟բ դատելով
» թէ քաղաքն՝ որ կայսերութ՟բ և սինկղիտոսաւ պատուեալ
» եղև, վայելեսցէ ևս յիրաւունս հաւասարըս
» հին թագուհւոյն հռովմայ նաև յԻրս Եկեղեցականս
» , և ո՛չ Պակաս ինչ ք՟ զայն բարձրասցի և
» մեծասցի բ՟ գոյաւորութե՟ն զկնի այնր . ո՟պ զի և մետրապօլիտք
» նահանգացն պոնտոսի, ասիոյ և թրակիոյ,
» ևս և ե՟պսունք ասացեալ նահանգացդ՝ 'ի վերոյիշե՟լ
» գահէդ ամենա՟սբ եկեղեցւոյն կոստանդնուպօլսի
» ձեռնադրեսցին, Լ՟Ա || ։ Զայս կանոն քաղկեդոնի ո՛չ
կամեցան ը՟ունել նուիրակք պապին 'ի ժողովի անդ,
և անչափ աշխատ եղեն 'ի քայքայել զայն, սակայն
հարք ժողովոյն ո՛չ ինչ միտ եդեալ փառասիրութե՟ ն՟ց՝
վերստին ընթերցան զայն 'ի նիստն Ժ՟Զ . և ամե՟քն միաբան
հաւանութ՟բ ընկալան և ստորագրեցին . զնոյն վերստին
հաստատեցին և հարք վեցե՟րդ ը՟հանրական

ժողովոյն 'ի կոստանդնուպօլիս 'ի կանոնին լզ̃. յամի տ̃ն 681. զոր և կայսրն յուստինիանոս հաստատեալ էր (Նորահրա. Ճլա. գլ. 2) Ընթեռնուլ պարտ է վ̃ն այսր զեկեղեցական պատմիչս յունաց զպալսամոն, զզոնարաս, և զայլս :

§. 136. Զայսոսիկ կանոնս ը̃հանրական ժողովոցդ յայն սակս 'ի մէջ մատուցաք աստանօր, զի քաղեսցուք յայնցանէ զհետագայ ճշմարտութ̃ինդ, որոց Առաջինն է այն, թէ հարք ժողովոցդ զառաջին պատիւն և զարտօնութ̃ին տուեալ են եպ̃սին հին հռովմայ ոչ վ̃ն այսր պատճառի, թէ նա իցէ յաջորդ պետրոսի կմ̃ ունիցի զաթոռն պետրոսի. այլ թէ || զի քաղաքն այն հրամայէր || բոլոր աշխարհի՝ մարմնական իշխանութ̃բ. ապա ուրեմն ը̃ միաց հայրպ̃ցդ՝ արտօնութ̃ին եպ̃ց հին հռովմայ ոչ էր աստուածային իրաւամբք սահմանեալ, այլ մարդկային վճռով տուեալ 'ի կայսերաց և 'ի ժողովոց : Երկ̃դն է այն, թէ այդչափ բազմաթիւ հայրապետք երից ժողովոցդ (զորս նոյն իսկ լատինք իբրև զս̃բ ը̃ունին). և եկեղեցականք և աշխարհականք ժամանակիդ՝ բնաւ ոչ ճանաչէին զեպիսկոպոսն հին հռովմայ իբր զմիապետական գլուխ և տէր ամ̃ եկեղեցեաց և ամ̃ քրիստոնէից. զի թէ այդպիսի ճանաչէին զնա՝ զիարդ կարելի էր թէ զեպ̃ն կոստանդնուպօլսոյ հաւասարէին նմա յամ̃ արտօնութ̃իս և 'ի հեղինակութ̃իս. մի թէ հն̃ար էր զերկուս միապետ գլուխս կարգել միոյ եկեղեցւոյ ք̃նի. ապա ուրեմն հայրպ̃տքդ բանիւ և գործով քարոզեն ամ̃ցն, թէ եպ̃ն հռովմայ չէ՛ միապետական գլուխ, և չունի ինչ աւելի իրաւաբանութ̃ի և իշխանութ̃ի առաւել քան զայլ եպ̃ունս որևիցէ ազգի կամ քաղաքի, և

թէ ամ՟ եպ՟սունք ուր և իցեն՝ ունին զհաւասար հեղինակութի՟ 'ի վ՟ր հօտին ք՟նի ։ Զայդ բացայայտ բան իւք յառաջ քան զհայրապետսդ ուսոյց հերոնիմոս , ասացեալ ‖ Եթէ հեղինակութի՟ խնդրի՝ տիեզերացն
» մեծ է ք՟ զմիոյ քաղաքի ։ Ուրանօր և կայցէ եպ՟ս
» ոք , եթէ 'ի հռովմ՟, թէ յեւկուպիա , թէ 'ի կոս-
»տանդնուպօլիս, թէ 'ի հռէկիէա, թէ յաղէքսանդրիա,
» Նա ․ զնոյն արժանաւորութի՟ և զնոյն քահանայութի՟ ու-
» նի ։ Կարողութի՟ հարստութե՟ց և գծծութի՟ աղքատութե՟ ոչ
» առնէ զեպ՟սն բարձրագոյն կամ նուաստագոյն ․ զի
» ամ՟քին են յաջորդք առաքելոց (ՆԱՄԱԿ ․ ՃԷ ․ ԱՌ-
ԵՒԱԳՐ) ։ Զի՞նչ ինչ յայտնագոյն ք՟ զայս հնար էր ումեք խօսել վ՟ս հաւասար լինելոյ եպ՟սց , մանաւանդ եպ՟սին հռովմայ՝ ը՟ այլոց եպ՟սց եւս յիրաւաբանութե՟ և յարժանաւորութե՟ ․ կա՟ զիա՞րդ կարեն ձիկ հանել պապականք յետ լսելոյ զայսպիսի սուր վճիռ հերոնիմոսի , զոր ոչ միայն տօնեն իբրև զս՟բ , այլ և կարգեալ են զնա 'ի դասս չորից առաջին վրդ՟պաց , որք 'ի վեր ունին զամպհովանի աթոռոյն հայրապետին հռովմայ յեկեղեցւոջ ս՟բյն պետրոսի ։

§․ 137․ Բայց տեսցուք եւս թէ ո՜րչափ ողբալի է անզգուսպ կիրք և փառասիրութի՟ մարդկան , և ո՜րչափ դժուարին է բարձրացելոյ 'ի նախագահութի՟ ինչ՝ 'ի չափու ունել զանձն կա՟ չձեռնարկել յինչ առաւել քան զարժանաւորութի՟ իւր ․ տեսցուք զայդ առաւելա՟պ 'ի հետագայ եպ՟սունս հռովմայ , որոց բզմ՟ք մոռացեալ զչափ անձին և զպատուիրանս ս՟բ գրոց և վրդ՟պաց՝ իշխեցին խորհել և խօսել , նա՝ գործել իսկ զանվայելս ։ Այսպիսի եղև նախ առաջին պապն գրիգոր եօթներորդ ․ որ նստաւ 'ի 1073 ամի տ՟ն , և սկիզբն արար միապետել ոչ միայն եկեղեցականաց, այլև աշխարհականաց, թ՟գրց և կայսերաց, ո՟պ զկայսրն Հենրիկոս չո՟րդ՝ յանիրաւի բանադրեաց և զրկեաց յաթոռոյն · չարաչար կագ և կռիւ յարոյց ընդ կայսերացն Հենրիկոսի դ՟ · և Ե՟ · ը՟ն թ՟գրցն գաղղիոյ և բրիտանիոյ · ը՟ն ժղվ՟րդց և եկեղեցեաց Մետիոլանու, գերմանիոյ, լեհաստանոյ, բրիտանիոյ, վալտենեանց, մոկունդինոյ, ևն · և ոչ այսոքիւք շատացեալ՝ ալար ժողովակ ինչ անվաւեր ՚ի սակաւ եպ՟ց իւրոց կարդակցաց ՚ի բենետիկդեանց, յորում սահմանեաց զյետագայ 27 վճիռս կամ առածս (dictatus) ՚ի լինել հիմն և խարիսխ պապական միապետու՟է իւրոյ և յաջորդացն ։ Ահա ծաղրական վճիռք ն՟ր ։ 1 Հռովմէական եկեղեցին յ՟յ միայնոյ է հիմնարկել ։ 2 միայն Հռովմայ քահանայապետն իրաւամբք կոչի Տիեզերական ։ 3 նա միայն կարող է զրկել զե՟պսունս յիշխանու՟է կ՟մ հաշտեցուցանել ։ 4 նուիրակն պապին՝ ևս ՚ի փոքր աստիճանի (ո՟պ սարկաւագ, կիսասարկւգ ևն) ամ՟ եպ՟սցն նախագահ է ՚ի սինհոդոսի, և կարէ տալ զվճիռ զրկելոյ զե՟պսունս յիշխանու՟է ։ 5 պապն կարող է ընկենուլ յաստիճանէ և զբացակայս ։ 6 ը՟ն բանադրելոց ՚ի պապէն՝ չէ պարտ ումեք բնակիլ ՚ի նմին տան ։ 7 միայն պապին կարելի է՝ ը՟ս ժամանակին հարկաւորու՟ե՝ զնոր օրէնս սահմանել · զնոր ժողովուրդս հաւաքել . . . . զհարուստ եպ՟սունն բաժանել, և զաղքատս՝ միացուցանել ։ 8 միայն պապն կարող է ՚ի գործ ածել զկայսերական պատուանշանս (ո՟ք են արքունի թագ · գաւազան, կնիք, ևն) ։ 9 միայնոյ պապին զոտս պարտին համբուրել ամ՟ իշխանք ։ 10 պապին միայնոյ անունն յիշեսցի յամ՝ եկեղեցիս ։ 11 մի՛ միայն անուն կայ 'ի մէջ աշխարհի, այ͞ն անուն պապին ։ 12 պապին արժան է զկայսերս աթոռազուրկ առնել ։ 13 'ի ստիպել հարկին՝ պապն կարող է փոխադրել զեպիսկոպոսունս յայսմ՝ աթոռոյ յայն աթոռ ։ 14 առանց հրամանի պապին՝ ոչինչ սինհոդոս պարտի անուանիլ ը͞ն հանրական ։ 15 պապն միայնակ կարող է զվճիռս այլոց ամ͞ցն նանրացուցանել, իսկ զվճիռ պապին ոչ ոք պարտի ոչնչացուցանել ։ 15 պապն յոչ ումեքէ պարտի դատիլ ։ 17 մի՛ ոք իշխեսցէ դատապարտել զնա՝ որ բողոքէ յառաքելական աթոռն (այ͞ն հռովմայ) ։ 18 ծանր վճիռք որևիցէ եկեղեցւոյ առ առաքելական աթոռն պարտին մատուցանիլ ։ 19 հռովմէական եկեղեցին ոչ երբեք սխալեցաւ, և ոչ սխալեսցի 'ի յաւիտեան, ը͞ս վկայելոյ ս͞բ գրոց ։ 20 քահանայապետն հռովմայ՝ եթէ ը͞ս կանոնաց ձեռնադրեսցի, արդեամբք ս͞բյն պետրոսի՝ առանց ա͞մ երկբայութե͞ն՝ եղանի ս͞բ, ը͞ս վկայելոյ Ենն ։ 21 որ ոչ միաձայնի ը͞ն հռովմէական եկեղեցւոյն, ոչ է ուղղափառ (catholicus) ։ 22 պապն կարող է զհպատակս անիրաւ իշխանաց արձակել յերդմանէ հաւատարմութե͞ն ։ ('ի բաց թողումք զայլ վճիռս) ։ Գտանին այս վճիռք 'ի մատենի նամակաց Ն͞ր Գր · Է · նամակ · 55 · և նմա սեփհական համարին ա͞մ եկեղեցական պատմիչք, բարոնիոս · հտ · ժ͞ա · առ 1076 ա͞մ ։ քրիստիան, լուփոս, հտ · Ե ։ նատալ, աղէք հտ · Ղ · ձռ · Դ · և այլ բազումք · թէ͞պ են և ոմանք, որ կամին արդարացուցանել զնա յայդոսիկ, զորոց չէ մեզ փոյթ · զի գիտեմք թէ ա͞մ գործք առնդ այդորիկ համաձայն են աւածիցդ · ո͞պ ստուգէ լիակատար վարք նորա ։

§. 139. Նոյնպիսի էին և գրեթէ ամ՟ յետագայ ե͞պսունք Հռովմայ, ո͞րում յայտնի քարոզեն խօսք և գործք նոցա 'ի պա͞պ դէպս։ Ըստ այսմ Վոնիփակիոս Ը պապ, որ նստաւ 'ի 1294 ամին, իշխեաց հրատարակել զայս ծիծաղական վճիռ || Բացայայտեմք, ասեմք, » վճռեմք, և սահմանեմք, թէ հնազանդ լինելն 'ի » ներքոյ իշխանութե͞ պապին՝ ամենևին հարկաւոր է ա͞մ » մարդկեղէն ստեղծուածոց հարկաւորութ͞ փրկութե͞ » (Էքստրավակ․ յղ․ Մեծա–րէան․ գլ․ 5)․ կամի ասել, թէ որ ո՛չ հնազանդի պապին Հռովմայ, ո՛չ կարէ փրկիլ և արքայութե͞ արժանանալ։ Բենեդիկտոս Ժ͞Դ պապ գրէ || Իսկութե͞ն միապետական կառավարութե͞, » զոր Ք͞ս սահմանեաց յեկեղեցւոջ իւրում, երևի » թէ պահանջէ, զի աղբիւրն և սկիզբն բովանդակ » եկեղեցական իրաւաբանութե͞ լիցի յերևելի գլխոյ » նորին, որ է հայ͞րպետն Հռովմայ, և 'ի նմանէ բղխես» ցէ յայլ անդամս (յղ․ Ժղվյ․ Գր․ Ա․ Գլ․ Դ)։ 'Ի բաց թողեալ զայլս ևս անթիւ սոյնպիսի ծաղրական բանս պապից, զայն ևս տեսանեմք, թէ ն͞ք ո՛չ միայն խօսիւք, այլ և գործով իշխեցին ցուցանել զբռնաւորութի͞ն իւրեանց 'ի միապետել թ͞գրց և ժողովրդոց, որոյ յոյժ բզ͞մ են օրինակք։ Նոյնպ Իննովկենտիոս Գ͞ զթագաւորութի͞ն անգղիոյ աւանդե͞ց թ͞գրին գաղղիոյ։ Յովհաննէս Ի͞Բ զտէրութի͞ն գերմանիոյ կամեցաւ փոխել 'ի թ͞գրս գաղղիոյ. և զլուտովիկոս Դ͞ կայսրն յաթոռոյն զրկեաց։ Յուլիոս Բ͞ բանադրանօք արգել ազատ ժողովրդ͞ց, զի մի՛ իւիք օգնութ͞ մատուսցեն այնց՝ որոց ը͞դդէմ պատերազմել կամէր ինքն, և զն͞ս՝ որք օգնեսցեն Լուտովիկոսի ԺԲ͞ թ͞գրին գաղղիոյ, յա͞մ պատուոյ և յիշխանութե͞ զրկել վճռեաց։ Գրիգոր Թ, յանիրաւի բանադրեաց զկայսրն փրետերիկ Բ., մ՟ն յապաղելոյն ն՟ր գնալ յազատութ՟ի ս՟բ երկրին ։ Բոնիփակիոս Ը. նանրացոյց զդաշինս, զոր ը՟ն այլոց իշխանաց արարեալ էր փիլիպպոս Թ՟գր գաղղիոյ, զհպատակըս ն՟ր ելոյծ յերդմանէ հաւատարմութե՟, և սպառնացաւ նմա զրկել զն՟ա 'ի տէրութ՟է, թէ ոչ գնասցէ յազատութ՟ի եէմյ ։ Իննովկենտիոս Դ. զորդին փրետերիկոսի կայսեր եհան 'ի ժառանգութ՟է հայրենական բարեաց ։ Պասքաղէս (Բ. յարու՟ն) է զորդի կայսերն հենրիկոսի Դ. անպարտ կացոյց յերդմանէն, ո՟պ զի ը՟ն դէմ հօրն կարասցէ ապստամբել ։ Զանց առնեմք զայլ անթիւ օրինակս ․ զի հնար է ընթեռնուլ զայնս առ կղոդէոսի Փլէօռի, և առ այլ ճշմարտախօս պատմիչս ․ և զայս սակաւաւոր բանս և զգործս պապիցդ՝ յայն սակս 'ի մէջ բերաք, զի ծանիցեն ընթեցողք, թէ յետին հայ՟ապետք հռոմայ ո՞րչափ հեռացեալ օտարացան ոչ միայն 'ի խրատուց ս՟բ ժողովոց և վարդապետաց, այլ և 'ի բանից փրկչին մերոյ ք՟սի, որ միայն զառաջնուն ժամանակի, զառաջնուն կարգի և զառաջնուն արտաքին պատուոյ ետ ս՟բյն պետրոսի, և ոչ եթէ զծայրագոյն իրաւաբանութ՟ի կամ զմիապետութ՟ի ․ մ՟նկ հակառակ ս՟բ աւետարանին մեղանչեն վարդապետք պապական հայոց, որք սխալ մեկնելով ըզբանս ս՟բ գրոց՝ զհարազատ որդիս աթոռոյն էջմիածնի բաժանեն 'ի մօրէն և որդեգրեն օտար ծնողի, յոր չէ արժան հայոց յարիլ, մ՟ն զի նա եթող զճանապարհս առաքելոց, և հակառակ նոցա նորութ՟ս օտարս եմոյծ յեկեղեցի ։

§. 140. Չորրորդ պատճառ բաժանելոյ մեր կ՟մ չմիաբանելոյ ը՟ Հայրապետին հռովմայ այն է, զի ն՟ք արգելուն ժողովրդոց ընթեռնուլ զա՟ծաշունչ գիրս, կամ թարգմանել զայն 'ի ռամիկ լեզու այլեայլ ազգաց. և զայս առնեն միայն այսու ծածուկ պատճառաւ (թէպէտ և ինքեանք զայլ սուտ պատճառանս կցկըցեն) զի ժողովուրդն կոյր և տգէտ մնասցէ, մի՛ լուսաւորեսցի 'ի ս՟բ գրոց՝ զի մի՛ 'ի յայտ եկեսցեն պ՟ղ սխալմունք պապին և այլոց եկեղեցականաց ։ Բայց սակայն այդ գործ դոցա ամենևին դէմ՝ ընդդէմ՝ հակառակ է ա՟յ և պատուիրանաց ն՟ր. որ յանթիւ տեղիս ս՟բ գրոց բանիւ և օրինակաւ հրամայէ ա՟մ մարդկան եկեղեցականաց և աշխարհականաց, արանց և կանանց ընթեռնուլ, մտածել և քննել զա՟ծաշունչ գիրս ։ Երկար լինէր մեզ մի ը՟ս միոջէ գրել աստանօր զայդպիսի հրամանս ա՟յ և զօրինակս, շատ լիցի նշանակել զտեղիսն, զի ընթերցօղք ինքնին տեսցեն և քննեսցեն զճշմարտութ՟ին, որք յայտնի գտանին. ելից. ի՟դ. 7 ։ բ՟. օրին. զ՟. 7, 8 ։ ժ՟է. 19 ։ լ՟ա. 11 ։ դ՟. թ՟գր. ի՟գ. 2 ։ երեմ. լ՟զ. 6=23 ։ բարուք. ա՟. 3. 14 ։ ամբակ. բ՟, 2 ։ մտթ. ի՟բ. 29 ։ է՟. 15 ։ ի՟դ. 15 ։ մրկ. ժ՟բ. 10. 26 ։ յովհ. ե՟. 39 ։ ի՟. 31 ։ գործ. ը՟. 28=32 ։ ժ՟է. 2. 11 ։ բ՟. կորնթ. ա՟. 13 ։ եփես. գ՟. 4 ։ կողոս. դ՟. 16 ։ ա՟. թեսաղ. ե՟. 21. 27 ։ յայտն. ա՟. 3 ։ գործ. ժ՟գ. 15 ։ ժ՟ե. 21 ։ ա՟ տիմոթ. դ՟. 13 ։ ղկս. ի՟դ. 45 ։ հռովմ. ժ՟ե. 4 ։ բ՟. տիմոթ. գ՟. 16 ։ բ՟ պետրս. ա՟. 19=21 ։ սաղմ. ա՟. 1 ։ ճժ՟ը. 2 ։ 34. 69. 115 ։ ղկս. զ՟. 46 ։ ժ՟ա. 33 ։ ա՟. յովհ. դ՟. 1 ։ եսայ. ը՟. 20 ։ ղկս. ժ՟զ. 29 ։ եփես. զ՟. 17 ։ և յայլ անթիւ տեղիս, յորս բանիւ և օրինակաւ հրամայէ ա՟ծ և ս՟բ մարգարէք և առաքեալք ն՟ր. զի ա՟մ ժողովուրդք, արք և կանայք, ծերք և տղայք, եկեղեցական և աշխարհական անձինք՝ ընթերցցին, քննեսցեն, լուիցեն և խորհեսցին զպատգամն ա՟յ, և՟ն. բայց սակայն եպիսկոպոսունք հռովմայ ո՛չինչ միտ եդեալ այսչափ հրամանաց ա՟յ՝ յայտնի արգելլին հասարակ ժողովրդեն, զի մի՛ ընթերցցին զա՟ծաշունչ գիրս:

§. 141. Առաջինն՝ որ սկիզբն արար այսպիսի անօրէն արգելման, եղև յիշեալդ գրիգոր Է պապ. որ իշխանին պոհեմաց ուրատիսլաւայ և հպատակաց նորա արգել նամակաւ իւրով ընթեռնուլ զս՟բ գիրս (ԹՂ՛Թ. ԼԷՈՊՈԼՏՈ. ԳՐ. Է. ԳԼ. ԺԷ): Յետ այնորիկ ինոսկենտիոս Գ որ նստաւ 1199, ը՟հանրական թղթով ը՟դէմ վալտենեանց, արգել ա՟մ աշխարհականաց ընթեռնուլ զս՟բ գիրս (ԴԷՔՐԷՏ. ԳՐԷԳ). ապա ժողովն թուլուզայ 'ի 1229 ամին՝ հրամանաւ գրիգորի Թ պապին սահմանեաց զայս անիրաւ ժ՟բ կանոն. «Արգելումք ևս, զի մի՛ թոյլ տուեալ լիցի աշխարհականաց ունել կամ պահել զմատեանս հին և նոր կտակարանաց. բայց եթէ գուցէ զսաղմոսարանն կա՟մ ըղ»ժամագիրս, կամ զաղօթագիրս մարիամայ կուսին »կամիցի ոք վ՟ն ջերմեռանդութ՟ե ունել. Բայց զի մի՛ »և զյիշեալ գիրսդ յաշխարհաբառ լեզու փոխեալս ու»նիցին, սաստկա՟պ արգելումք (տե՛ս 'ի Մանսի. հտ, »իա. եր. 296): Ժողովն դրետենդինոյ յամին 1563 երկուցեալ 'ի գանգատանաց իւրոյն և լուտերականաց, կամօք պիոսի պապին Դ ('ի կան, Դ. արգելեալ գրոց) շնորհեաց հրաման ընթեռնլոյ զա՟ծաշունչ գիրս յաշխարհական լեզու, բայց հինգ թեուիք այնպէս սեղմեաց զայն, զի ամենևին անօգուտ և անկարելի եղև աշխարհականաց ընթեռնուլն. (նոյն ժողովն հաստատեց և կանոն, զի միայն լատին թարգմանութ՟ին Վուլկատա ասացել՝ վաւերական համարեսցի, 'ի բաց ընկեցեալ զեբրայական և զյունական բնագիրս)։ Բայց և զայդ անշահ հրաման 'ի բաց խըլեաց պապն Կղեմէս Ը, որ յամին 1595 վերստին տըպեալ զցանկն, ուր 'ի Դ կանոնն 'ի շարս արգելեալ գրոց դասի և ածաշունչն յաշխարհիկ լեզու (որպ՟ գաղղիացւոց, գերմանացւոց, սպանիացւոց, ևն) կրկին հրամանաւ արգել ամ՟ մեծաւորաց չտալ հրաման աշխարհականաց ընթեռնուլ զածաշունչն։ Առաւել ևս դժուարալուր է սահմանադրութ՟ին գրիգորի ԺԵ պապին, նստեալ յամի տ՟ն 1621, որ զամ՟ հրամանս 'ի նախընթաց պապից տուեալս առ 'ի ընթեռնուլ զս՟բ գիրս յաշխարհիկ լեզու՝ բոլորովին յետս նահանջեալ ոչնչացոյց։ Պապն Կղեմէս ԺԱ, յամի տ՟ն 1715 հռչակաւոր սահմանադրութ՟բն՝ որ սկսանի Ունիգէն, 'ի թիւն 59, զայս նախադասութ՟ի Յարուէ գուէսնելի ‖ Ընթեռնուլն զածաշունչ գիրս վ՟ն ամ՟ մարդոյ է (հարկաւոր) ‖, դատապարտեաց իբրև զհերետիկոսական հայհոյութ՟ի։ (երկար գրեն վ՟ն այսր նիւթոյ՝ քեսլինկ. լէտազմա. լէանտէր վանէս. յակոբ ուսսերի. փրետերիկոս Փուրի. լէպէր. հեկելմեր. ոնիմոս։ յովհ, փոդկիտէր։ յովհ, եակէր։ յովհ, Փրի քիոյ։ փրետ, ենիղէն, և այլ բզ՟մք)։ 'Ի մեր իսկ աւուրս պապն պիոս Է նորոգ կոնդակաւ (29 յունիսի, 1816 ամին) առ արքեպ՟սն կնեզնայ 'ի լեհաստան, և այլով կոնդակաւ (3 սեպտ. 1816 ամին) առ արքեպ՟սն մոհիլովայ՝ զընթերցումն ածաշունչ գրոց վերստին արգել. զընկերութ՟ին տարածելոյ զածաշունչն՝ ժանտախտ (pestis) անուանելով։ Յաջորդ դորին պապն լեոն ԺԲ (որ այժմ 'ի 29 յունվարի 1829 տարւոյս վախճանեալ է) նոր շրջաբերական կոնդակաւ առ պատրիարգս և եպ՟ունս, գրեալ 'ի 3 մայիսի 1824 ամի, վերստին հաստատեաց զերկու զայն կոնդակս նախընթացին իւրոյ՝ առ 'ի խափանել զժանտախտն զայն (ո՟պ ինքն խօսի), այ՟ զընկերութիւն տարածանելոյ զա՟ծաշունչ գիրսն 'ի ձեռս ամենայն մարդկան։

§. 142. Յայդց բանից պապիցդ ստոյգ տեսանի, թէ ն՟ք երկու ինչ արգելուն․ մի՝ թէ աշխարհիկ անձինք ամենեքին մի՛ ընթեռնուցուն զա՟ծաշունչ գիրս, բաց 'ի սաղմոսացն դաւթի․ միւս ևս՝ թէ ա՟ծաշունչն մի՛ թարգմանեսցի 'ի գործածական ռամիկ լեզուս աշխարհականաց զանազան ազգաց, այ՟, գաղղիացւոց, գերմանացւոց, եւ՟․ այլ միայն լատին լեզուաւ մնասցէ․ և երկու իսկ արգելմունքդ յայն նպատակ ուղղե՟լ են․ զի հասարակ ժողովուրդն տգէտ և անուսումն լիցի, և մի՛ լուսաւորեսցի ճշմարտուե՟ ա՟ծային բանից, որ է բուն գործ օրինականաց (ղկս․ ժա՟․ 52)․ զորոց ասաց ք՟ս, թէ թագուցանէք զփականս գիտուե՟, դուք ո՛չ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք․ վ՟ս զի զընթերցումն ա՟ծաշունչ գրոց ո՛չ միայն նոյն ինքն ա՟ծ և ք՟ս տ՟րն մեր հրամայեաց, ո՟պ վերոյիշեալ բանք ս՟բ գրոց ծանուցանեն, այլև ամ՟ նախնի վարդ՟պտք յայտնապէս պատուիրեն արանց և կանանց ընթեռնուլ, մտածել, քննել, ուսանիլ, և գործով կատարել զգրեալսն 'ի ս՟բ գիրս։ Այդ՟պ հրամայէ ոսկեբերան յերկար բանիւք (ճառ․ 4․ վղազարուէ)․ հերոնիմոս (էպը․ առ լէտա) որ և պատմէ (Ջտգվ․ ա․ ընդդէմ ռուփինի) թէ պամփիլոս ոմն ո՛չ միայն պահէր զա՟ծաշունչ գիրս յիւր պէտս, այլև

՚ի փոխ տայր արանց և կանանց առ ՚ի ընթեռնուլ ։ Կիւրեղ աղեքսանդրացի (Գր. Դ. ընդդէմ Յուլեան. Գլ. Բ) որ ասէ թէ ուրացօղն Յուլիանոս նախատէր զքրիստոնեայս և վ՟ն այսր, զի թոյլ տան կանանց և մանկանց իսկ ընթեռնուլ զս՟բ գիրս ։ Մեծն բարսեղ (Ճառ. ՚ի ԿԷ. ԾԲ. սաղմ. եւ ՚ի չափաւ. ՏԿՆԲ). և այլ բազումք յոյժ ՚ի նախնի հայր՟պտց · զորոց զվկայութիւն ՚ի մի հաւաքեցին Ճերհարտ (տեղիք ա՟ծբն. ա՟. գլ. 23. եւ քառասն. շաղղէս. գր. է. յօք. ա՟. գլ. 2) · պայերոս (ա՟ծբն. պտմկն) · և առաւել քան զդոսա փրետերիկ վալքի (յղ. գործած. ս՟է գրոց. ՚ի մէջ հեթ. քրիստոնէից)։

Իսկ թարգմանել զա՟ծաշունչ գիրս ՚ի բզմ՟ այլազան լեզուս թէ ո՛րչափ յաճախել էր առ նախնիս, ուսուցանեն մեզ Եւսեբիոս (պտրստ. աւետրն. գր. ԺԲ. գլ. ա՟. եւ ներբող կոստանդն. գլ. ԺԷ) · Ոսկեբերան (Ճառ. ա՟. ՚ի յովհն) · Թէոդորետոս (Ճառ. Ե. յղ. հելլէց ախտ) · ուր յիշէ և թարգմանութիւն ՚ի հայոց լեզու · Հերոնիմոս (յառջբն. աւետրն. առ դամաս) · Օգոստինոս (նամկ. 98. առ վինկենտ) · և այլ բազումք ։ Պատմէ ևս գէորգ աղեքսանդրացի, թէ ս՟բ ոսկեբերանն յաքսորելն ՚ի կոկիսոն քաղաք Հայոց ‖ եգիտ զոմանս տեղ-
» եակս յունաց լեզուի, և պատրաստեաց զն՟ս, զի զնոր
» կտակարանն և զսաղմոսն թարգմանեսցեն յաշխար-
» հիկ լեզու (Հայոց) · զի ստասցին (Հայք) զծանօթութի՟
» ա՟ծային գրոց (՚ի վարս ոսկեբերան. Բ. 59) ։ Ընթեռնուլ պա՛րտ է վ՟ն ա՟մի այսոցիկ զ յակոբ ուսսերիոս (յղ. ա՟ծաշնչն. թրգմն) · զ յովհաննէս վալդոն (յառջբն) · զպրիան միլլիոս (յառջբն. նոր կտկրն) · զհենրիկոս հոդգինկեր (յղ. թրգմն. ա՟ծաշնչ) · և զայլս ՚ի նորոց ։ Լուեալ զայս ա՟մ բարեսէր ընթերցօղք մեր, դատ

արասցեն, թէ զի՞նչպիսի համարումն արժան իցէ ունել զհայր՟պաց հռովմայ, որ արգելուն ժողովրդեն ընթեռնուլ զբանս այ՟, և ո՟պ թէ փակեն զբերանն քսի՟, զի մի՛ խօսեսցի ընդ ժողովրդեան զբանս կենաց յաւիտենականաց ։

§. 143. Պապունք հռովմայ և ամ՟ եկեղեցականք նո՟ց ունին և զայս զգուշութի՟. զի նզովիւք և բանադրանօք արգելուն ամ՟ ժողովրդականաց (ո՟պ լուեալ եմք). զի մի՛ ընթեռնուցուն ամենեւին զգիրս հերետիկոսաց, մանաւանդ զայն գիրս՝ որք ճառեն զհաւատոց. իսկ հերետիկոս ասելով իմանան զայն ամ՟ քրիստոնեայս, որք ոչ հնազանդին պապին և եկեղեցւոյն հռովմայ, ը՟ որոյ և պապական հայ աբեղայք մահուչափ մեղօք արգելեալ են հայ ժողովրդեն, զի ոչ միայն ոչ ընթեռնուցուն, այլև զի բնաւին և ոչ իսկ 'ի տան իւրեանց պահեսցեն զգրեանս 'ի մեր հայոց հակառակ նո՟ց գրեալս, մանաւանդ զգիրսն պարտավճար, հարցմանց տաղթևացւոյն, վէմ հաւատոյ, պօղոս տարոնացի, դրախտ ցանկալի, վիճաբանութիւնք միխլայիմի, և այլ նմանք. զուցէ և այս ճառ մեր դասեսցի 'ի նոցանէ 'ի շարս հերետիկոսական գրոց. զի այս ամենայն գիրք՝ որ խօսին զճշմարտութիւն, ատելի է նոցա ։

§. 144. Բաց 'ի վերագրելոցդ՝ են ևս իբր տասն այլ առիթք ոչ միաբանելոյ մեզ ը՟ այժմեան աթոռոյն հռովմայ, բայց զի կարճուն ասուրս ոչ ներէ մեզ ճառել զայնս, թողցուք այլում դիպող ժամու, և զայսչափս կնքեսցուք զոհութի՟ մատուցեալ գերապատիւ Վարդապետիս և բազմերախտ Հոգեւոր հօրս մերում ։

Յաւելցին աստանօր քանի քերթողական բանաստեղծութիւնք 'ի շնորհս մանկահասակ քերականաց, և որոց սիրեն կամ յարգեն զայսպիսիս ։

1 .

Յարարատեան՝ դաշտ զուարթնոց՝ էջ մի անձին ,
զհետ նորին՝ յերկնից փառօք՝ էջ միածին ,
անդ շինեցաւ՝ աթոռն հայոց՝ էջմիածին ,
'ի նոր պճնել՝ զայն փառօքդ այժմ՝ է՛ջ մի՛ածին ։

2 .

Յատեան կոչեցաւ՝ ոմն իմաստասէր
վկայել , անդ զայս՝ սուղ իմաստ ասէր ,
դատաւոր՝ զոսոխն՝ իմա՛ ստասէր ,
չէ՛ այլ քեզ պիտոյ՝ գալ իմ՝ աստ ասէր ։

3 .

Որ զանթիւ չարիսդ՝ դու 'ի կատար ած ,
'ի բանտ պատժանաց՝ զդա կա՛ տա՛ր ա՛ծ ,
և զի ծուխք աղմուկք՝ ասցեն կատարած ,
մի՛ յամեր՝ զպատուէրս՝ փոյթ 'ի կատա՛ր ած ։

4 .

Ընթերցաւ առ մեզ՝ նոր ոմն բանաստեղծ
զիւր տող՝ զոր գոդցես՝ առ ժամն ստեղծ ,
ցնծա՛՝ ընկերիս՝ ասացի անդ ես ,
տե՛ս թ' 'ի հայաստան՝ ևս գոյ բանաստեղծ ,
վա՛շ վա՛շ՝ սխալիս , ասաց ցիս՝ ընկերս ,
դա չէ՛ բանաստեղծ , զի զայն բան աստ ե՛ղծ ։

5 .

Երբ հաւատացեալ՝ մինչեւ յայս երկիր ,
'ի չար մոլութեանց՝ սորին նախ երկի՛ք ,

բարի գործք և մեղք՝ յաստիս են երկ իր ,
նոցա զհետ է՛ր , զայս մ՚՚ առցես 'ի չէր ։

6 .

Յայս մեր Ճեմարան՝ մանուկ՝ եթէ գաս
պար բոլորեսցես՝ և դու 'ի Պառնաս ։

7 .

Բազմին յոսկի գահ ոյք զիմաստութեան
զուսումն սիրեն 'ի տիս մանկութեան ։

8 .

Գանձ է բազմարդիւն՝ քանքար մեծ տաղանդ ,
գիտունք են թանգ՝ քան քար անդամանդ ։

9 .

Ո՛վ քաղցր բանաստեղծ՝ մուզայից հանճար ,
յանհեթեթ յիմ տաղս՝ զելս ցո՛յց՝ հա՛ն ճար ։

10.

Քերթողք 'ի մատեանս՝ ուսուցին թէ նէ ,
ու , Ըէան են մասնիկ՝ ածանցիչ բառի ։

11.

Նուրբ գիտունեց գէղ՝ արփէան քերթողաց
վէճ է գէղարփէան՝ 'ի միջի բազմաց ։

12.

Զօրս տասունք են քա— —սուն կոչի Տառք
ունէր քերդող ումն՝ իւր բանիւ հաստատ ։

13.

Յայս տաճար դու Նէ եղէցէ գոչեմ ,
կամք քո տէր օրհնեալ այժմ և առյապա ։

14.

Յեկեղեցւոջ շուրջ ուր փիլոն ե՛րէց ,
կան պատկերք սրբոց՝ խորհուրդք մեծամեծ ։

Լանց ամբողջ տար
Վարքա՛յն այսօր հաս

Շատակե՛ր է սա
ծակ է, ո՛չ գիտէ

Որ առնէ միշտ ճար
սա ձևէ, նոքա

Տե՛ս ահա ճարտաղ
բայց ո՛չ դրէ քաջ

Խափ եանց յիս եար
այրէ զհոգիս տա

Օրինուորին երգէ տաղ
ասէ ցընկերին պատ

Խաէ առնեմ զվաճառ
իսկոյն լինիմ նաւ

Ո՛չ յիշեցեր ինչ
եթէ յերկինս քո

Գիտե՞ս՝ հի՞մ կոչի
զի ծնի, նա՝ միշտ

Որ զիս լոկ ուտէ՝
բայց առանց ինձ զայլ

15.
ՏանէՏ զաւուրս բարկ,
տանէլ 'ի բանտ արկ.

16.
ճար կոչեմ դու զայն,
ասել բաւական.

17.
ճէն է կամ դերձիկ,
կարեն լուռ մնջիկ.

18.
Էտ մեզ զփետուր իւր,
Թէ 'ւ յարդարես բիւր.

19.
հարտ քո սիրոյդ,
տաս տանս հուր փոյթ.

20.
տուր թէ առնու,
տա առ քեզ զինու.

21.
աճան պատուական,
տանէլ մարդկան.

22.
մարդասպան ճայէն,
դատաւոր ճայ Լան.

23.
այդ թուչուն ծիծառն,
է նստած 'ի ծառն,

24.
միշտ յՈ.Ո բիւր դիմէ,
նիւթ ո՛չ ոք չուտէ.

25.

Ես պահել կարեմ՝ զգանձս զգաղտնիս,
բայց երեխայն է՝ զօրաւոր Բանն զիս ։

26.

Միշտ ցանկամ ջրոյ՝ բայց շատ ոչ առեմ,
որչափ շատ ըմպեմ՝ սաստիկ գօղանջեմ,
յորժամ ջուր ունիմ՝ ըղ գինի ըմպեմ,
ջուրս երբ ցամաքի՝ անդ լոկ ջուր ըմպեմ ։

27.

Թէ Գիւլթ ես գիտեմ, զի՞նչ է որ ասէ,
թէ՝ որ զիս շինէ՝ ոչ վասն իւր պահէ,
որ ոք զիս գնէ, ոչ առնու 'ի կիր,
և որ զիս գօղի, զիս ոչ ճանաչէ ։

28.

Թէ միտք մեր իբրու հուր է երկնային,
գլուխ մեր լինի նորին վառարան.
բայց զի՞նչ գիտունիք մեր իցեն չնչին,
թէ ոչ յարդ և փայտ եղեգն անպիտան ։

29.

Թէ խնդրես ըղձայր՝ գեղեցիկ բերրի,
գտցես կամ 'ի տան՝ կամ ես յանտառի ։

30.

Միշտ. սիրէ ասէ պատուէ պատժէ Ան
զբարին զչարն զարդար զանօրէն ։

31.

Աբգար և մեսրոպ հայկ լեռն անյոյս
զՓրկիչն ըղձիւս զազգ մեր զգահոյս
դաւանեաց եգիտ հիմնեաց և կորոյս ։

ՀՍԽՀ [illegible]

32.

Ամենայն կամուրջ   միշտ ամուր լինի ,
յորժամ երկու ծայր   նորին կրճատի ։

33.

Թէ հատանես զիմ՝   գլուխ նաեւ զոտն ,
տե՛ս յինէն ծնցի՝   ը՟ առողջ բազմոտն ։

34.

Հատի զայս փետուր   ՚ի ծայրիցն երկու ,
զայլ բառ ո՛չ գրեաց   բայց զայս թէ ետ՟ ։

35.

Ո ամենայն Տատեա՛ն   դու մանուկ սիրեա՛ ,
թէ ՚ւ այնք կողազուրկ՝   գոչեն քեզ տէ՛ր ։

36.

Թէ գայ հիւր առ քեզ՝   դիմա՛չ զերեսօքն ,
՚ի վե՛ր առ զեզերսն   եւ չՏ՟ զո՛վ ոքն ։

37.

Իմ նախկին վանկ՝ ծաղկանց եղեւ՝ պերճ՛ թագուհի ,
զերկրորդ մասնիկս՝ քերթողք կոչեն՝ պակասաւոր ,
ինե պանծայ՝ պսակ ՚ի գլուխ՝ քաջ տարփողի ,
նահատակ վերջ՝ ա՟ մահ վկայ միշտ փառաւոր ։

38.

Աթռ թռչնՈց   վանկՍ առաջին ,
ուր գեղգեղեն՝   յառաւօՏին ,
երկրորդս նշԱՆ   ցուցանելոՅ ,
իսկ գումարս է՝   տու՝Ն ապրելոյ
տեղ ՃանՃին ,   որ ուսոյց մեզ
՚ի պէտս մեր՝   գործել բեհեզ ։

39.

Քաջ ես թէ գտցես՝   զոր ինչ քեզ հարցից ,
բայց խելօք ասա՛   փաստիւ իմաստից ,
ո՞վ յառաջ ծնաւ ,   մօրո՞ւք թէ մարդն ,
յայդմ է յետին ,   յառաջ է այծն ։

40.

Ասա ինձ՝ գե՛ղեցիկ՝ հաճի՞ս դու
տեսանել Յականէ՝ զերկրորդ դու,
արի՛ կա՛ց՝ նազելին՝ յիմ հանդէպ
յիս տեսցես՝ զքեզ ինքն՝ եւ զքո կերպ։

41.

Ըե՛ր յիւրաքանչիւր՝ Ազգաց մի մի մարդ,
խօսեցայց է այնս՝ Ձայնիւ պարզ և հարթ,
զհարդ աստ Գոչեմ՝ կրկնի տար իմ ձայն,
՚ի լսել իմ աստ Գաղի և անդ բան։

42.

Աստանօր առցէ՝ մեր այս խաղ աւարտ,
զի առ մեզ բանքդ են՝ սին զերդ խաղաւարտ։

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Վախճան։

Օ[illegible] [illegible] [illegible] [illegible] ընթերցողք ներեսցեն,
որ վասն այլևայլ պատճառաց չեղև մեզ հնար նշանակել
զայն [illegible]։

425